К художественно-тектонической можно отнести церкви монастыря Спасителя (XIV в.) в Богатом, Георгия (XIV в.) в Феодосии, Креста (XVII в.) во Львове, св. Каэтана (XVIII в.) в Тысмеце, Непорочного зачатия Богородицы (XVIII в.) в Бережанах, Непорочного зачатия Богородицы (XVIII в.) в Городенце, Успения Пресвятой Богородицы (XIII-XV в.) в Белгород-Днестровском, часовня Блажевских (XIX в.) в Язловце, Аствацин (XIV в.) во Львове, св. Николая (XIX в.) в Евпатории, Григория Просветителя (XIX в.) в Черновцах, Покровскую (XIX в.) в Нижней Ореанде, Успения Пресвятой Богородицы в Лисце.

Встречаются храмы, в которых комбинируются несколько типов пластики объема. Храм Саркиса в Феодосии изначально (XI в.) носит характер функционально-конструктивной пластики объема. А колокольню и пристройку с северной стороны можно отнести к художественно-тектоническому типу. Подобный принцип, в котором в основе функционально-конструктивная пластика объема с элементами художественно-тектонической прослеживается в церквях Сурб Ншан (XIV в.) монастыря Сурб Хач возле Старого Крыма, Архангелов Гавриила и Михаила (XV в.) в Феодосии.

Церковь Сурб Аствацацин (XVI в.) в Язловце построена по художественно-тектоническому принципу формирования объемной пластики, в тоже время западный фасад и колокольня имеют детали декоративно-символической пластики. Подобный прием встречается в церквях Непорочного зачатия Богородицы (XVIII в.) в Жванце, Непорочного зачатия Богородицы (XVIII в.) в Кутах, Успения Пресвятой Богородицы (XIX в.) в Снятине, св.Николая (XIV в.) в Каменце-

<sup>9</sup> Тиц А., Воробьева Е. *Пластический язык архитектуры*, М.: 1986, С. 9-44.

Подольском, Репсима (XIX в.) в Ялте, Непорочного зачатия Пресвятой Девы Марии (XVIII в.) в Ивано-Франковске.

Во всех перечисленных храмах преобладает структурная пластика фасадов, состоящая из порталов, оконных обрамлений, карнизов, пилястр, фронтонов, ниш, уступов с элементами орнаментальной и тематической. Орнаментальная пластика применяется в основном для усиления структурной пластики порталов (церквей Архангелов в Феодосии, Сурб Аствацацин во Львове, Репсима в Ялте), оконных проемов (церквей Репсима в Ялте, Аствацацин во Львове), аркад (церковь Репсима в Ялте), карнизов (церквей Репсима в Ялте, Григория Просветителя в Черновцах), отдельно нужно выделить нижний ярус колокольни церкви Саркиса в Феодосии. К тематической пластике можно отнести встроенные надгробные плиты (церкви Саркиса, Архангелов в Феодосии, Сурб Аствацацин во Львове, Благовещения в Каменец-Подольском), надписи (монастыре Сурб Хач возле Старого Крыма, церквях Параскевны в Топольевке, Черновцах, Белгород-Днестровском, Сурб Аствацацин во Львове, Саркиса в Феодосии), хачкары (церквях Иоанна Богослова в Феодосии, Саркиса в Феодосии, Ялте, Евпатории, монастыре Сурб Хач возле Старого Крыма), изображение Богородицы с младенцем (Архангелов в Феодосии), птиц (церковь в Ялте), гербов (церквях Сурб Аствацацин во Львове, в Жванце, Саркиса в Феодосии), розеток (церкви 12 апостолов и Параскевны в Судак), скульптур (церкви св. Николая в Каменец-Подольском, Сурб Аствацацин во Львове).

Рассмотрим более подробно основные элементы системы декорирования фасадов.

Главным акцентом архитектурной пластики, которому уделено значительное внимание – является портал.

В Армении дверные проемы перекрывались перемычками или аркой, или тем и другим одновременно. Перемычки, начиная с IV века, начали украшать резьбой. Вокруг входного проема начинает формироваться интересная композиция портала с обеих сторон по одной или две пилястры, на них ставится общая капитель, украшенная орнаментом, продолжением служит арка с богатым резным оформлением. Пластика портала в основе носит структурный характер, который со временем усиливается орнаментальной пластикой, а иногда и тематической.

На территории Украины указанной традиции оформления порталов придерживались в основном армянские зодчие Крыма X – XVI веков. С XIV века конструкция портала меняется, перемычка из цельного куска камня заменяется собранной из нескольких камней с замковым камнем, но сам художественный принцип остается. Можно выделить такие типы обрамления порталов:

- профилированное обрамление без арки (монастырь Сурб Хач около Старого Крыма, церкви в Старом Крыму, Саркиса, Архангелов, Иоанна Богослова в Феодосии);
- профилированное обрамление с аркой на консолях (церкви в Судак, Стефана, Иоанна Богослова в Феодосии, церкви Саркиса и Параскевны в Топольевке);
- с добавлением полуколоннок (монастырь Сурб Хач возле Старого Крыма, Ялта – церковь Репсима).

С XVIII в. конструкция портала значительно трансформируется под влиянием разных стилей, но все еще просматривается основной принцип – «пере-

мычка с аркой». В церкви в Керчи над указанной схемой расположен треугольный фронтон на консолях. Можно предположить, что прототипом послужили порталы наподобие портала старой церкви в Воскипаре или бокового входа в Эчмиадзинском соборе. За тем же принципом, в более чистом виде построен портал монастыря Спасителя в Богатом XIV в.. Портал указанного типа имеет выступающее обрамление с двускатной кровлей. Отдельно нужно выделить порталы церкви Репсима в Ялте начала XX века. За счет того, что он находится под колокольней, обрамление арочного проема колокольни на фасаде служит продолжением декора главного портала церкви. Арочный проем подчеркивается профилированной аркой на четырех полуколоннах с капителями над каждой. Над аркой размещен резной хачкар с двумя розетками по бокам. Вся композиция завершается ступенчатым прямоугольным обрамлением с резным орнаментом, подобный принцип обрамления можно увидеть, например, в Санаине. Заслуживает внимания портал церкви Сурб Ншан монастыря Сурб Хач возле Старого Крыма XVI века. Лучковый проем обрамлен прямоугольной профилированной «рамой», над которым расположена арка с плетеным орнаментом на консолях с резьбой в виде сталактитов. В нише, которую обрамляет арка, изображение Богородицы с младенцем. С двух сторон прямоугольного обрамления размещены полуколонны с украшенными резьбой капителями. Над аркой три медальона в центральном изображении святого Агнца. Вся композиция окаймлена стрельчатым профилированным обрамлением. В нижней части портала имеются вырезанные хачкары.

Таким образом все перечисленные порталы носят в основе структурный характер, которые со временем стали усиливаться орнаментальной пластикой в виде плетения (церковь Архангелов в Феодосии, арка портала церкви Сурб Ншан монастыря Сурб Хач около Старого Крыма), а также тематической – в виде хачкаров (церкви Иоанна Богослова, Иоанна Предтечи в Феодосии, Репсима в Ялте, монастыря Сурб Хач около Старого Крыма); надписей (монастырь Сурб Хач возле Старого Крыма, церковь Архангелов в Феодосии); рельефных изображений Богородицы (монастырь Сурб Хач возле Старого Крыма, церковь Архангелов в Феодосии); розетками (церковь Архангелов в Феодосии, монастырь Сурб Хач возле Старого Крыма, армянский собор во Львове).

Архитектура храмов других регионов Украины больше подвергались влиянию, это было связано в первую очередь с принятием унии с католической церковью, влиянием архитектурных стилей, господствующих в то время, требований, которые выдвигала местная власть к архитектуре.

В декоре храмов преобладало влияние стилей ренессанса (Городенка, Львов, Окопы, Бережаны, Лисец, Тысменец, Каменец-Подольский) и барокко (Ивано-Франковск, Снятин, Куты, Жванец). В Крыму влияние ренессанса можно проследить на храмах в Евпатории и Керчи.

В западной Украине порталы повторяющие древний принцип встречаются в храме Луцка и армянском соборе во Львове, они обрамлены прямоугольной профилированной «рамой». К типу «перемычка и арка» можно отнести порталы церквей в Снятине, западный и северный порталы армянского собора во Львове, портал церкви Креста во Львове (над прямоугольным проемом размещена стрельчатая ниша). Появляются новые типы порталов – арочные (в церквях Каменец-Подольского, Бережан, Черновцов, Тысменца). Порталы церкви в Городенке можно считать производной основных двух типов. Главный портал прямоуголь-

ный с перемычкой над ним размещены лучковая арка, а на месте ниши окно. Портал на балконе лучковый. Оба портала обрамлены профилированной «рамой». Порталы церквей в Тысменце и Бережанах подобны группе порталов в Богатом и Керчи. Арочный проем с пилонами по бокам и треугольным фронтоном над ним с простыми профилированными карнизами. Перечисленные порталы можно отнести к типу структурной пластики.

Отдельно нужно отметить портал церкви в Жванце – лучковой формы, обрамленный профилированной «рамой» в прямоугольной нише, имеющий с двух сторон пилоны с капителями и фронтоном в барочных формах. В барочных формах сделан фронтон в церкви Ивано-Франковска – прямоугольный проем обрамлен профилированной «рамой» в нише лучковой формы, с двух сторон по две колонки с капителями коринфского ордера, на них опирается профилированный карниз с разорванным арочным фронтоном. Таким образом порталы армянских храмов в стиле барокко также в основе носят структурный характер, с элементами декоративно-символической объемной пластики фронтонов (Жванец, Ивано-Франковск), усиленные тематическими элементами – растительным орнаментом, геральдикой (Жванец).

Обрамление окон в Армении было выполнено в виде бровок или полностью на всю высоту окна. В Украине обрамление окон было нескольких типов и имело в основе структурную пластику:

- без обрамления (Львов, Жванец, Каменец-Подольский, Окопы, Бережаны, Ивано-Франковск, Тысменец, Феодосия, Судак, Тополевка, Солнечная Долина);
- повторяющее по стилю и форме пластику портала (Евпатория, Керчь, Старый Крым, Бережаны, Тысменец, Городенка, Снятин, Окопы, Ивано-Франковск);
- в классической армянской традиции (церковь Сурб Аствацацин во Львове и Ялте).

В свою очередь последний тип обрамления окон имеет несколько подтипов: без декора (Снятин), с усилением элементами орнаментальной пластики и с усилением тематической пластики в виде хачкаров, птиц, розеток (Ялта). Также тематически усилены хачкарами некоторые проемы церкви Иоанна Богослова в Феодосии.

В интерьерах пластика ограждающих поверхностей в основном носит, также как и фасадов, структурный характер. Структурная пластика в некоторых храмах усиливается орнаментальной. Так пилоны и карнизы церкви Сурб Аствацацин во Львове, карнизы церквей в Ялте, Богатом, Иоанна Предтечи в Феодосии, ниши (монастырей в Богатом, Сурб Хаче около Старого Крыма), киворий (церкви Иоанна Богослова и Архангелов в Феодосии).

Тематическая пластика интерьеров, может носить плоскостной (рельефное изображение) так и объемный характер (скульптура). Сюжеты рельефов интерьеров – это розетки с изображением святого Агнца (церкви Саркиса в Феодосии, в Богатом, монастыре Сурб Хач возле Старого Крыма), хачкары (церкви Сурб Аствацацин во Львове, Белгород-Днестровского, монастырь Сурб Хач возле Старого Крыма), надписи (церкви Белгород-Днестровского), богородицы с младенцем (монастырь Сурб Хач возле Старого Крыма), святых (церкви в Богатом, Иоанна Крестителя в Феодосии), Иисуса Христа (церковь в Богатом), потолок (кессонный в церкви Сурб Аствацацин во Львове). Указанные элементы могли располагаться на стенах, пилонах, пилястрах, сводах, в апсидах. Скульп-

тура же размещалась в основном в алтарной части или перед ней (церкви в Ивано-Франковске, Бережанах, Кутах, Сурб Аствацацин во Львове). Отдельным элементом тематической пластики нужно выделить напольные могильные плиты (Старый Крым, Килия, Каменец-Подольский, Феодосия и др.).

На основе проведенного анализа установлена некоторая закономерность архитектурно-пластического решения сакрального зодчества армян-переселенцев. Крымским армянским храмам в большей мере свойственен функционально-конструктивная объемная пластика с художественно-тектоническими элементами. Однако встречаются храмы построенные полностью по художественно-тектоническому принципу (церкви в Богатом, Евпатории и Георгия в Феодосии). В тоже время полностью отсутствуют приемы декоративно-символической пластики.

Храмы западных регионов Украины построены по принципу художественно-тектоническому. Исключение составляет церковь Благовещения в Каменец-Подольском, построенная по функционально-конструктивному принципу. В период XVII-XIX веков в архитектурной пластике указанного региона появляются элементы декоративно-символической пластики армянских церквей, построенных в стиле барокко.

В тоже время пластика поверхности, как интерьеров, так и фасадов в основе имеет структурный характер, который может усиливаться орнаментальной, и дополняться тематической пластикой.

## ՈՒԿՐԱԻՆԱՅԻ X-XIXԴԴ. ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՊԼԱՍՏԻԿԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՍԻՋՈՑՆԵՐԸ

\_\_\_ *Անփոփում* \_\_\_

\_\_\_ *Մ. Արսենյան* \_\_\_

Ուկրաինայի տարածքում X-XIXԴԴ. ժամանակահատվածում կառուցվել են բազմաթիվ ճարտարապետական սրբազան կոթողներ, որոնցից միայն 124 եկեղեցիների, 30 վանքային համալիրների մասին կան տեղեկություններ: Դրանցից պահպանվել են միայն 26 եկեղեցիներ և 7 վանքեր, որոնցից 9 եկեղեցիներն ու 5 վանքերը՝ փլատակների ձևով: Այսպիսով, կարելի է պնդել, որ հայկական եկեղեցական ճարտարապետությունը նշանակալի դեր է կատարել Ուկրաինայի ճարտարապետության պատմության մեջ: Ուկրաինայի տարածքում հայկական ճարտարապետության ձևավորման ուսումնասիրության կարևոր ոլորտներից է ճարտարապետական պլաստիկ լուծումների վերլուծությունը, որը կարող է նպաստել այդ հուշարձանների բնորոշման, ժամանակագրական տվյալների և հայկական շինարարությանը դրանց պատկանելության ճշգրտմանը:

### Сведения об авторе

*Арсенян Мария Юрьевна* - Национальная академия изобразительных искусств и архитектуры, кафедра Теории истории архитектуры и синтеза искусств, аспирантка,  
E-mail: m.arsenyana@gmail.com

## Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ԶԱՐՄԱՅՐ ՆԱՀԱՊԵՏԻ ԵՎ «ՔԱՂԴԵԱՅԻՈՑ» ԱՐՔԱՅԱՅԱՆԿԻ ՇՈՒՐՁ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ հայոց Ջարմայր նահապետը հիշատակված է որպես Տրոյական (Եղիական, Իլիական) պատերազմի մասնակից: Նրա վերաբերյալ այնտեղ ասվում է. 1. «Ջարմայր. սա օգնական Պրիամու ի Տեւտամայ առաքեալ ընդ եթովպացի զօրուն՝ մեռանի ի քաջացն Հելլենացոց»:<sup>1</sup> 2.«Թէ Եղիական պատերազմն առ Տեւտամաւ. եւ մեր Ջարմայր ընդ եթովպացի զօրուն լինել սակաւութ, եւ ի նոյն մահ»:<sup>2</sup> 3.«Եւ մեր Ջարմայր ի ծառայութեան Ասորեստանեայց սակաւութ ընդ եթովպացի զօրուն օգնական Պրիամու, եւ անդ ի քաջացն Հելլենացոց վիրաւորալ մեռանի»:<sup>3</sup> Ինչպէս տեսնում ենք, Մովսես Խորենացին հայոց Ջարմայր նահապետին համարում է ոչ միայն Տրոյական (Եղիական) պատերազմի մասնակիցը, այլև Ասորեստանի Տեւտամոս թագավորի հպատակը: *Տեւտամոս* անունը բերված է նաև նրա հիշատակած «Քաղդէացոց» արքայացանկում: Հայտնի է, որ մեր պատմահայրը Շամիրամի մահվանը հաջորդած դեպքերը շարադրում է ըստ անհայտ հեղինակի գործ «Պիտոյից հյուսման պատմության» («ի Հիւսման պատմութենէ Պիտոյից»-Ա, Ժթ), իսկ Եբրայեցվոց և Քաղդացվոց արքայացանկերը բերում է գերագանցապէս Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն»-ից:<sup>4</sup>

Արևելագետներին վաղուց հայտնի է, որ *Տեւտամոս* անունով թագավոր Ասորեստանը չի ունեցել, իսկ *Տեւտամոս*-ը առհասարակ ասորեստանյան արքայերենով ստուգաբանվող անուն չէ: Այսուհանդերձ, կարծում ենք, որ իրավացի էր ակադեմիկոս Ս.Երեմյանը, երբ Տրոյական պատերազմին հայերի մասնակցության մասին ավանդության մեջ պատմական հենք էր տեսնում: Նա գրում է. «Համաձայն այդ ավանդության, Ջարմայրը տրոյացիներին օգնության է ուղարկվել Ասորեստանի թագավոր Տեվտամի կողմից: Այս վկայությունը հիշեցնում է հունական այն վերսիան, որի համաձայն՝ տրոյացիների դաշնակիցներից մեկն էր Մեմնոնը... Այս Մեմնոնին Պրիամոսին օգնության էր ուղարկել Տեվտամը, որին անորոշ ձևով անվանում են Ասորեստանի կամ Ասիայի թագավոր... Ուշագրավ է, որ Պրիամոսի դաշնակից պելասգյան առաջնորդները նրան օգնության էին եկել տրոյական Լարիսայից և Տեստամի թոռներն էին»:<sup>5</sup> Մեր կարծիքով, «Ասորեստանի կամ Ասիայի

<sup>1</sup> «Մովսիսի Խորենացու պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ *Խորենացի*), Եր., 1981, գիրք Ա, գլ. 1:

<sup>2</sup> Նույն տեղում, Ա, 1բ:

<sup>3</sup> Նույնը:

<sup>4</sup> *Мовсес Хоренаци, История Армении, перевод с древнеармянского языка, введение и примечания Г.Саркисяна, Ер., 1990, С. 228, пр. 130, 131.*

<sup>5</sup> *Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, թիվ 2, էջ 42:*



թագավոր» անվանված Տևտամուր իրականում եղել է խեթական դարաշրջանի արևմտյան Փոքր Ասիայում (որին էր միայն նախապես վերաբերում *Սսիա* անունը)<sup>6</sup> իշխած սեպագրային Ասուվա երկրի թագավորը, որի սեպագիր *Aššua* (կարդա՛ր՝ *Assua*) անունը հետագայում է իր տեղը զիջել ավելի հանրածանոթ *Սսիա* (՝*Ἀσία*) և *Սսորեստան* ( հուն. *Ἀσσυρία*/\**Assuria*) անուններին:<sup>7</sup>

Խեթ թագավոր Թուդխալիա IV-ի (մ.թ.ա. 1265-1235թթ.) օրոք խեթերին հպատակված Ասուվան ընդգրկում էր 22 մանր երկրներ՝ ներառյալ *Taru(u)ša*-ն և *Šilušija*-ն, որոնք համարվում են Հումերտի «Իլիական»-ից հայտնի *Տրոյան* և *Իլիոն*/*Իլիոսը*:<sup>8</sup> Խեթական արձանագրություններից պարզվում է, որ հարևան Ասուվայում գերիշխելու գործում խեթերի հակառակորդը եղել է Ախիյավան (արքայացիների՝ միկենյան հույների պետությունը):<sup>9</sup> Ախիյավան և իր դաշնակիցներն են եղել *Տրոյան* կործանողները,<sup>10</sup> իսկ նրանց հակառակորդ խեթերը, բնականաբար, օգնել են Ասուվային (տրոյացիներին), և օգնողների մեջ է եղել Զարմայր Նահապետը: Տրոյական պատերազմում տրոյացիներին՝ հայերի ցուցաբերած օգնության մասին հայկական ավանդության պատմականությունը կողմնակիորեն հաստատվում է խեթական սեպագիր արձանագրությունների այն տվյալների միջոցով, որոնցում խոսվում է խեթական բանակում ծառայած հայասացիների ու Հայկական լեռնաշխարհի բնակիչ մանդա, սալա, խեմուա և այլ ցեղերից հավաքագրված վարձկան կառավարտիկների մասին:<sup>11</sup> Խեթ թագավոր Մուրսիլի II-ի վկայությամբ, երբ Հայասա-Ազիի դեմ ձեռնարկած արշավանքի ժամանակ խեթական բանակը մոտեցել էր ազիական Դուկամա քաղաքին, այս քաղաքի ավագները դիմավորել էին իրեն և ասել. «Մեզ, մեր տեր, հավաքվածներիս վերցրու և մեզ ուղարկիր Խաթթուսաս քաղաք, մեզ դարձրու հետիոտն զինվորներ և կառավարտիկներ»:<sup>12</sup> Մրանք պատահական ասված խոսքեր չեն: Դուկամայի բնակիչներին քաջ հայտնի է եղել, որ խեթ թագավորներն իրենց բանակների շարքերը համա-

<sup>6</sup> *Անգամ վաղմիջնադարյան հայ մատենագրության մեջ կարելի է հանդիպել Սսիա-ի (Սսիաստան ձևով) այդպիսի ընկալման (տե՛ս «Սերեռսի եպիսկոպոսի պատմություն», Եր., 1939, էջ 8-9-ում՝ երիցս- Մ.Պ):*

<sup>7</sup> *Պետրոսյան Ս., Պատմականը Զարմայր Նահապետի մասին ավանդագրություն, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր», պրակ 2, Գյումրի, 2009, էջ 28-32:*

<sup>8</sup> *Герци О., Хетты, М. 1987, С. 37, 52-53: Քոսյան Ա., Խեթական տերությունը և Ախիսիյավան (Տրոյական պատերազմը), Եր., 1977, էջ 26-27:*

<sup>9</sup> *Герци О., նշվ. աշխ., էջ 51-52, Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 23-27:*

<sup>10</sup> *Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 30-32:*

<sup>11</sup> *«Հայ ժողովրդի պատմություն», ՀՄՄՀ ԳԱ հրատ., հ. I, Եր., 1971, էջ 199: Խեթ թագավորներին ծառայած Հայկական լեռնաշխարհի բնակիչ կառավարտիկներին ի նկատի առնելով է Բ. Գյակոնովը գրում. «Ձիակառքերի միջոցով մարտ վարելու արվեստը Փոքր Ասիա կարող էր թափանցել նաև շրջանցելով խուրիներին, օրինակ, «Մանդա ցեղի» կամ «Մալա ցեղի» նման ինչ-որ վարձկան զորքի միջոցով» (Дьяконов И. Предыстория армянского народа, Ер., 1968, С. 43):*

<sup>12</sup> *“Keilschrifttexten aus Boghazköi (Wissenschaftliche Veröffentlichung der Deutschen Orient Gesellschaft),” Leipzig-Berlin, 1916-1926, IV, 4, III, 22-23; «Հայ խողովրդի պատմության քրեստմատի», հ. I, Եր., 1981, էջ 11:*

լրում էին նաև Հայկական լեռնաշխարհի բնակիչ հետիոտն զինվորներով և կառավարտիկներով:

Ասորեստանի Թիզլաթփալասար I թագավորի վկայությամբ, իր գահակալումից (մ.թ.ա. 1115թ.) 50 տարի առաջ «Խեթերի երկրի անհնազանդ մարդիկ (զինվորները)» մուշկերի հետ միասին գրավել էին Արևմտյան Տիգրիսի ձախափնյա, իսկ իր ժամանակ՝ նաև աջափնյա բնակավայրերը:<sup>13</sup> Որ այդ «անհնազանդները» եղել են Հայկական լեռնաշխարհի բնակիչներ, ցույց են տալիս նրանց անվանումները <sup>KUR</sup>Urmaia<sup>meš</sup> և <sup>KUR</sup>Kaškaia<sup>meš</sup>, այսինքն՝ «ուրումեացի, Ուրումու երկրի բնակիչ» և «կաշկացի, Կաշկու երկրի բնակիչ»: Մրանցից երկրորդների դեմ խեթ թագավորների ձեռնարկած արշավանքներից պարզվում է, որ սրանք բնակվել են Արևելապոնտական լեռնաշղթայում,<sup>14</sup> իսկ առաջինների հայրենիքը գտնվում էր Հայկական Տավրոսում՝ կենտրոն ունենալով Մասնա լեռների «Ներքին Ուրումու» երկիրը:<sup>15</sup> Հետազոտողների կողմից անհրաժեշտ ուշադրության չարժանացած «անհնազանդ» որակումը ցույց է տալիս, որ Ուրումու և Կաշկու երկրների զինվորները Խեթերի երկրում ծառայելիս ապստամբել էին խեթական թագավորի դեմ:

Խեթական բանակում ծառայած հայկական ցեղերից երեքի ներկայացուցիչների վերաբերյալ նշելով, որ դրանք վարձկան կառավարտիկներ էին և նախապես ազատված էին հարկերից, Ի.Դյակոնովն ավելացնում է. «Մանդա ցեղը չի տեղորոշվում: Ինչ վերաբերում է Սալային (Սալուա) և Խեմնուվային (Խիմուա, Խիմմե և այլն), ապա այդ երկու ցեղերը (կամ մարզերը) պետք է որոնել Հայկական լեռնաշխարհում Եփրատի և Վանա լճի միջև, հնարավոր է նաև ավելի արևելք»:<sup>16</sup> Դյակոնովի կողմից այս տողերի գրվելուց առաջ Գր.Ղափանցյանը և Ա.Խաչատրյանը ցույց էին տվել, որ հայ նախարարական Մանդակունի տոհմը ծագում է մանդա ցեղից,<sup>17</sup> իսկ նախարարական այս տոհմի ժառանգական տիրույթը Արշամունիք գավառն էր, որը նույնպես գտնվում էր Եփրատի և Վանա լճի միջև: Ընդ որում, Գր. Ղափանցյանը շեշտում է, որ այդ Մանդա և Սալա ցեղերը եթե միասին են հիշատակված խեթական կողեքում, ապա նրանցից սերած Մանդակունի և Սաղկունի/Սլկունի նախարարական տոհմերն էլ միասին են հիշատակվում թե՛ Վաղարշակ թագավորի կողմից նախարարություններ հաստատելու ժամանակ (Խորենացի, Բ, ք), թե՛ Գահնամակում (զբաղեցնելով համապատասխան

<sup>13</sup> *Дьяконов И.* Ассиро-вавилонские источники об истории Урарту (այսուհետև՝ *АВВИУ*), М., 1960, NN 10-13.

<sup>14</sup> *Хачатрян В.* Восточные провинции Хеттской империи, Ер., 1971, С. 87-90.

<sup>15</sup> *АВВИУ*, N 23: *Երևմյան Ս.*, Հայերի ցեղամիությունը Արմե-Շուպրիա երկրում, «Պատմաբանասիրական հանդես», 1958, թիվ 3, էջ 62:

<sup>16</sup> *Дьяконов И.* Предыстория армянского народа, С. 53.

<sup>17</sup> *Ղափանցյան Գ.*, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961, էջ 45-46: *Խաչատրյան Ս.*, Հայաստանի սեպագրային շրջանի քննական պատմություն, Եր., 1933, էջ 223-225: *Երևմյան Ս.*, Հայաստանը քսոս «Սշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 40:

նաբար 47-րդ և 48-րդ գահերը), թե՛ Ջորանամակում («Արևմտյան դռան» նախարարությունների շարքում՝ համապատասխանաբար 14-րդ և 15-րդ տեղերում):<sup>18</sup>

Մովսես Խորենացու բերած «Համեմատութիւն ծննդաբանութեան ազգիս մերոյ ընդ Եբրայեցոցն և ընդ Քաղդեացոցն մինչև ցՄարդանապարտ...»<sup>19</sup> կոչվող գուգահեռ արքայացանկերից «Քաղդեացոց»-ի վերջին անունը՝ *Սարդանապարտ*-ը հունական աստվածաշնչային ձևն է Ասորեստանի Աշուրբանիպալ (մ.թ.ա. 665-635թթ.) թագավորի անվան: Այս պատմական անձը, բնականաբար, ասորեստանյան անուն է կրում, որը Ասուվայի հետ կապ չունի: Բայց ի տարբերություն նրա *Սարդանապարտ/Աշուրբանիպալ* անվան, Զարմայրի ժամանակակից «ասորեստանցի» թագավորի *Տեւամոս* \*teut-am-os անունը ասուրական (աքադական) ծագում չունի: Այս արքայանվան հիմքային *Տեւա*- բաղադրիչի մեջ (սրան հավելված են -am- վերջածանցը և հունական անուններին բնորոշ -os վերջավորությունը՝ ուղղ. հոլ.) մենք տեսնում ենք *h.-ե. \*teutā «ժողովուրդ»* նախաձևի ժառանգորդը՝ պահպանված թրակյան *Τιοῦτα, Τιοῦτη, Τουτα*,<sup>20</sup> գալլական *Toutonos* անձնանուններում և հին բարձր գերմ. *diot «ժողովուրդ»*, օսկ. *touto «համայնք»*, լիտվ. *tautā «ժողովուրդ»*, գոթ. *þiudans «արքա»* («<ժողովրդապետ») և այլ բառերում:<sup>21</sup> Տեսամոսին հաջորդած թագավորի *Տեւտնու* \*teut-ē-os անունը<sup>22</sup> ևս պարունակում է \*teut- հիմքը, որին հավելվել են -ē- վերջածանցը (հանդիպում է «Քաղդեացոց» արքայացանկի այլ անուններում ևս) և -os վերջավորությունը: Քանի որ հիշյալ անուններով Ասորեստանի (ինչպես նաև Քաղդեա//Բաբելոնի) թագավորներ գոյություն չեն ունեցել, ուստի իրավամբ կարելի է մտածել, որ ոչ միայն Տեսամոսի և Տեւտնուի, այլև «Քաղդեացոց» կոչված արքաներից շատերի դեպքում գործ ունենք Ասուվայի իրարահաջորդ արքաների կամ նրա տարբեր շրջաններում (միաժամանակյա՞) իշխած ցեղապետ-արքաների հետ: Վերջին դեպքում ուշագրավ է հունական աղբյուրների հաղորդումները Տրոյայի թագավոր Պրիամոսի դաշնակիցների թվում փոքրասիական *Լարիսա քաղաքից եկած Տեսամոսի (Τεσσαμος) թոռների մասին: Ի դեպ, սրանց պապի անունը գրեթե նույնական է նաև հունական*

<sup>18</sup> *Адонц Н. Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, С. 249-250, 251-252, Ղափանցյան Գ., նշվ. աշխ., էջ 46: Տրոյական պատերազմին մասնակցած գորամասը պետք է բաղկացած լիներ ոչ թե «եթովպացի»-ներից, այլ հայ կառամարտիկներից և կառավարներից՝ \*etiop-ներից, որոնք լինելով խեթական ծառայության մեջ, խեթ թագավորներին ենթակա Ասուվայում (Տրոյան և Բլիոնը ներառյալ) խեթերի և հոմերոսյան տրոյացիների հետ միասին կռվել են հույն արքայացիների՝ Ախիլլայի դեմ (տե՛ս Պետրոսյան Ս., Պատմականը Զարմայր Նահապետի մասին ավանդազրույցում, էջ 28-32):*

<sup>19</sup> *Խորենացի, Ա, ժթ:*

<sup>20</sup> *Չահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները (այսուհետև՝ ՀՀՀԼ), Եր., 1970, էջ 75:*

<sup>21</sup> *Гамкрелидзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ИЯИ), т. I-II, Тб., 1984, т. II, С. 743.*

<sup>22</sup> *Խորենացի, Ա, ժթ:*

ուրիշ ավանդագրույցներում հիշատակված և թեսալական Լարիսայում երբեմն իջիած Տևտամիսի (Τευταμης, Τευταμιδας) անվան հետ:<sup>23</sup>

Դժվար չէ նկատելը, որ «Քաղղէացոցն» արքայացանկի անուններից շատերը առաջին իսկ հայացքից բացահայտում են աքաղերենին խորթ, բայց հնդեվրոպական լեզուներին հարազատ իրենց բնույթը: *Տևտամիս* և *Տևտևոս* անունները մասնացույց են անում նախ և առաջ այդ երկու անուններին ծնունդ տված լեզվի պատկանելությունը թրակա-պելասգյան ընդհանրությանը: Մա պատահական լինել չի կարող, երբ ի նկատի ենք առնում ինչպես թրակերենի և պելասգերենի մերձավոր կապերը,<sup>24</sup> այնպես էլ այն իրողությունը, որ «Տրոյայի պատմության մեջ ևս կարևոր դեր է խաղացել թրակյան տարրը»,<sup>25</sup> որ Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքն ավելի վաղ բնակեցրել էին պելասգները:<sup>26</sup> Ստորև կբերենք «Քաղղէացոց» արքայացանկից ուրիշ մի շարք անուններ,<sup>27</sup> որոնք ևս բացահայտ հնդեվրոպական՝ մանավանդ թրակա-պելասգյան ծագում ունեն:

3. *Առալիոս* <\*aral-i-os արքայանվան մեջ առանձնանում է \*aral- հիմքը, -i- վերջածանցը և -os վերջավորությունը: Մրա հիմքի տարբերակներին կարելի է հանդիպել հնդեվրոպական տարբեր լեզուներում «արծիվ» նշանակությամբ: Դրանցից են թրակ. \*orol- (Ολορος, Oroles անձնանուններում), հին պլավ. orilū, հրգ. aro, հին իռլ. irar, լիտվ. arēlis, erēlis, լատիշ. ērglis, պրուս. arelis, իւեթ., պալ. *haraš* և այլն:<sup>28</sup> Հ.-ե. \*or- արմատից ծագած այս բառերի շարքն է դասվում նաև հայ. *ուրուր* «ցին» բառը:<sup>29</sup> Կարծում ենք, որ սրանց արմատակիցն է լինելու նաև առասպելական թևավոր շների՝ շնարծիվների, *արալէզ* <\*արալ-էզ (տարբերակը՝ *աղէզ*) անունը: Նախկինում արված ստուգաբանությունները մերժվել են Հ.Աճառյանի կողմից:<sup>30</sup> *Առալիոս* արքայանվան իմաստը լինելու էր այնպիսին, ինչպիսին է հայ. *Արծուի* (<\*արծիվ-ի) անձնանվան իմաստը:

4 և 5. *Բաղէոս*, *Բաղէոս* <\*bal-ē-os, որտեղ bal-ը արմատ է, -ē-ն վերջածանց, -os-ը վերջավորություն: Հ.-ե. \*bhel- «փայլել» նախածնից ծագած \*bal- արմատը հաճախակի է հանդիպում թրակյան անձնանունների, ցեղանունների և դիցական մակդիրների մեջ. հմմտ. Βαλας, Βαλης, Balius, Βαλιος (թրակյան Ջևս/Յուպիտերի մակդիրն էր), Βαλις (թրակյան Դիոնիսոսի մակդիրն էր):<sup>31</sup> Հիշյալ անձնանունների տերերը դրանցով, ըստ երևույթին, համարվել են Ջևսի և Դիոնիսոսի պաշտամունքին առնչվող անձինք:

<sup>23</sup> Томсон Дж. Исследования по истории древнегреческого общества. Доисторический Эгейский мир, М., 1958, С. 259.

<sup>24</sup> Георгиев В. Исследования по сравнительно-историческому языкознанию (*այլուհետև*՝ Георгиев), М., 1958, С. 140-141, ՀՀՀԼ, էջ 47, 83:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 141, ՀՀՀԼ, էջ 44:

<sup>26</sup> ՀՀՀԼ, էջ 82:

<sup>27</sup> *Խորենացի*, Ա, ժթ:

<sup>28</sup> Георгиев, С. 121, ИЯИ, т. II, С. 538.

<sup>29</sup> Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան* (*այլուհետև*՝ ՀԱԲ), հ. III, Եր., 1977, էջ 618:

<sup>30</sup> ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 260-261:

<sup>31</sup> ՀՀՀԼ, էջ 52, 55, 70, 79:

6. *Բաղոտոռէս*<\*bal-o-tor-ēs արքայանվան առաջին բաղադիրչը նույնական է թրակյան հիշյալ անձնանունների, ցեղանունների և դիցանվանական մակդիրների համապատասխան՝ հ.-ե. \*bhel- «փայլել», արմատից ծագած բաղադրիչների հետ: Այս արքայանվան երկրորդ բաղադրիչը հողակապ է, իսկ երրորդ բաղադրիչը՝ -tor-ը, հավանաբար, «տուրք» է նշանակում: Հմմտ. թրակ. *տարաս* բառը և համապատասխան բաղադրիչները *Βελι-տարας*, *Βου-տարας* անձնանուններում և *Συρο-τερης* դիցանվան մեջ: Դրանք բխեցվում են հ.-ե. \*dō- «տալ» (որից՝ \*do-ro-, \*dō-ro- «նվեր, տուրք») արմատից:<sup>32</sup> Հմմտ. մանավանդ նույնարմատ բառերից բաղկացած նույնիմաստ *Բաղո-տոռ-էս* արքայանունը և թրակյան *Βελι-տար-ας* անձնանունը: Այսպիսով, *Բաղոտոռէս* արքայանվան իմաստը կամ «Ջևսի տված, Ջևսատուր» (Ջևսի *Βαλις* մակդիրից), կամ «Դիոնիսոսի տված, Դիոնիսատուր» (Դիոնիսոսի *Βαλις* մակդիրից) է: Իմաստի տեսանկյունից հմմտ. հին իրան. *Bagadāta* (>հայ *Բագարատ*>*Բագրատ*), *Քրիստոսատուր*, *Աստվածատուր*, *Խաչատուր*, *Տիրատուր*, սլավոն. *Bogdan* և այլն:

7 և 8. *Ղամպարիտէս*<\*lamp-ar-it-ēs, *Ղամբարիս*<\*lamb-ar-is արքայանունները «Քաղղէացոց» արքայացանկում կրում են երկու տարբեր անձինք: Այս անունների \*lamp-//\*lamb- հիմքը նույնական է պելասգյան ծագում ունեցող հունարեն *λαμπάς* «ջահ»<sup>33</sup> բառի հետ: Վերջինիս -ar վերջածանցով \*lamp-ar//\*lamb-ar ձևից փոխառյալ է (միջնորդավորմամբ) հայ. *լամպար*//*ղամբար*//*ղամպար* «ջահ, ճրագ, լույս, բոց» բառը, որից ունենք անգամ բարբառային (Քղի) *ղամբարուն* «հրաբորբոք» բառը:<sup>34</sup> Եթե *Ղամբարիս*//\*Lambaris-ը ուղղակի կարող է «ջահ» կամ «լույս» նշանակել, ապա *Ղամպարիտէս*//\*Lamparitēs-ը (կազմված -it վերջածանցով) պետք է որ «լուսակիր» կամ «ջահակիր» նշանակեր:

9. *Դեռլիդոս*<\*der-kul-os: Այս անվան երկրորդ բաղադրիչի համար հմմտ. թրակյան *Κουλα*, *Κουλια*, *Κουλιος* անձնանունները՝ ծագած հ.-ե. \*geu-l- «այրվող ածուխ» նախածանցից:<sup>35</sup> Իսկ արքայանվան առաջին՝ *դեռ*-//\*der-, բաղադրիչը նույնն է թրակյան *Δερζειλας*, *Δερζελας*, *Δερζαλας*, *Derzenus* անձնանունների առաջին բաղադրիչների հետ: Ի դեպ, սրանցում առկա է ոչ թե *Derz-*, այլ *Δερ-* բաղադրիչը. հմմտ. *Der-zen-us* և *Diu-zen-es* (վերջինս ունի իր հուն. *Διο-γέν-*ից գուգահեռ, որոնցում թրակ. -zen-//հուն. -γέν-<հ.-ե. \*g'enēs-):<sup>36</sup> Արքայանվան \*der- բաղադրիչը կարող էր ծագել հ.-ե. \*dher- «պահել, բռնել» արմատից, որից է փռյուգ. *δαρειος* «պահպանող» բառը:<sup>37</sup> Այս դեպքում *Դեռլիդոս*//*Derkulos* արքայանվան իմաստը լինում է «կրակ պահող, կրակ պահպանող, կրակապահ»՝ քուրմ-արքաների բն-

<sup>32</sup> ՀՀՀԼ, էջ 51:

<sup>33</sup> *Георгиев, С. 103; ՀՀՀԼ, էջ 94:*

<sup>34</sup> *ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 262-263:*

<sup>35</sup> ՀՀՀԼ, էջ 55:

<sup>36</sup> *Георгиев, С. 120, 133.*

<sup>37</sup> ՀՀՀԼ, էջ 108:

րոշ մի անուն: Այս առթիվ հիշենք Ատրպատականի թագավորության հիմնադիր և անվանադիր Ատրպատի անունը,<sup>38</sup> որը «կրակի պետ» է նշանակում:

10. *Պեռիտիադէս*<\*peri-ti-as (-adēs): Այս արքայանվան երկրորդ բաղադրիչը նույնական է թրակյան *Τι-τορμος*, *Τι-τορμυς* անձնանունների առաջին բաղադրիչների հետ, որոնց հիմքում տեսնում են հ.-ե. \*dei- «փայլել, շողալ» արմատը (այն հիմքն է նաև հայ. *տի* «օրվա լույս մասը, ցերեկ» բառի):<sup>39</sup> Հմմտ. թրակ.-դակ. *Δι* «աստված, Ջես», պալ. *Τιϋαζ* «Արևի աստված, արև», փոյուզ. *τιος* «աստծու»:<sup>40</sup> Արքայանվան առաջին բաղադրիչը նույնական է թրակյան *Παρις*, *Παρος*, *Πορις* անձնանունների հիմքային մասի և թրակյան հետևյալ անձնանունների երկրորդ բաղադրիչների հետ. *Deos-por*, *Zi-par-us*, *Zi-per*, *Muca-por*, *Nato-por-us* և այլն: Մրանք ծագում են հ.-ե. \*puer- (կամ \*pouer-) նախաձևից, որից են նաև դակ. *per* «որդի», լատին. *puer* «տղա, որդի, պատանի» բառերը:<sup>41</sup> Հնդեվրոպական բերված նախաձևերի հիմքում էլ հ.-ե. \*per- «ծնել» արմատն է:<sup>42</sup> Ուրեմն, *Պեռի-տիասս* (-դէս) արքայանունն ունի «որդի լույսի, ծնունդ լույսի, լուսածին» իմաստը:

11. *Ղաւոսթենիս*<\*lauo-sten-is անվան առաջին բաղադրիչի հիմքում հ.-ե. \*laHyo- «ժողովուրդ, զորք», «արշավանք» արմատն է. հմմտ. հուն. *λαῖFός* «ժողովուրդ», միկեն. հուն. *ra-wa-ke-ta*/\*lāwāgetās «զորավար»/փոյուզ. *lawagetai*:<sup>43</sup> Փոյուզիայի Միդաս թագավորի *Λαοαλταει* «ժողովրդասեր» (ըստ Պ.Կրեյմերի)<sup>44</sup> մակդիրում ևս *Λαο-* նշանակում է «ժողովուրդ» (հմմտ. իլյուր. *lav-* «ժողովուրդ»):<sup>45</sup> Եթե *Ղաւոսթենիս* անունը «ժողովրդասուն» է նշանակում, ապա նրա երկրորդ՝ -*սթեն*, բաղադրիչը կարելի է արմատակիցը համարել հայ. *ստին-ք*, *սան*, *սին*, *սուն* և հուն *στίνιον* «կուրծք» (ըստ Հեսիքիոսի) բառերի՝ ծագած հ.-ե. \*psen-/\*pson/\*psn- (ավելի նախնականը \*pstēn-)<sup>46</sup> նախաձևից: Անվան բուն իմաստի պարզաբանման տեսանկյունից ուշադրավ են հայ. *սան* «իբր զավակ, ձեռքի տակ սնուցած ու մեծացրած տղա» և *սին*, *սուն* «պահել, սնուցանել, մեծացնել» բառերը:<sup>47</sup>

12. *Աղտադոս*<\*alt-ad-os: Այս արքայանվան առաջին բաղադրիչը նույնական է թրակյան *Ζει-αλθ-ης* անձնանվան երկրորդ բաղադրիչի հետ, որը բխեցվում է հ.-ե. \*alt- (<\*al-t-) «աճ(եցն)ել, սնել» նախաձևից:<sup>48</sup> Անվան երկրորդ՝ -ad-, բաղադրիչը, հավանաբար, թրակա-պելասգյան զուգահեռն է մակեդոն. *ἀδῆ* «երկինք»,

<sup>38</sup> *Strabo*, XI, 13, 1 (*Մտրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, Եր., 1940, էջ 47*): Հմմտ. նաև *ավեստ. āθravan-* «քուրմ», *հին հնդկ. ātharvā* «քուրմ-կախարդ», որոնց հիմքում տեսնում են «կրակ» (*ավեստ. ātar-*) նշանակող բառերը (*ИЯИ, т. II, С. 788, стр. 4*):

<sup>39</sup> ՀՀՀԼ, էջ 55:

<sup>40</sup> *Георгиев, С. 128, 147; ՀՀՀԼ, էջ 66, 108, 116, 138:*

<sup>41</sup> *Георгиев, С. 122, 128.*

<sup>42</sup> ՀՀՀԼ, էջ 56:

<sup>43</sup> *ИЯИ, т. II, С. 740.*

<sup>44</sup> ՀՀՀԼ, էջ 115:

<sup>45</sup> ՀՀՀԼ, էջ 21:

<sup>46</sup> ՀՄԲ, հ. IV, Եր., 1979, էջ 274-275:

<sup>47</sup> ՀՄԲ, հ. IV, էջ 170-171, 251:

<sup>48</sup> ՀՀՀԼ, էջ 69, *Георгиев, С. 126.*



ἀδραία «պայծառ երկինք» և հուն. αἰθήρ «էթեր, օդ, երկինք» բառերի<sup>49</sup> արմատի՝ ծագած հ.-ե. \*aidh- (<\*ai- «այրել, լուսավորել») նախածնից: Վերջինից է Գ.Ջահուկյանը բխեցնում նաև հայ. այգ «ատավոտ» բառը:<sup>50</sup> Այս դեպքում, ասուվական արքայանունը նշանակում է «երկնքի սնած, աճեցրած»//«երկնքի աստծու սնած, աճեցրած»:

13. *Սուսարիս* <\*Su-sar-is արքայանունը, մեր կարծիքով, ուղղակի կերպով առնչվում է խոզի հնագույն պաշտամունքին: Եվրոպայբնակ հնդեվրոպական ցեղերից շատերի համար այս կենդանին հազարամյակներ շարունակ մնում էր պաշտելի տոտեմ և աստվածներին մատուցվող սրբազան զոհ: Խոզը (վարագ, խոճկոր) հին հռոմեացիների «խոզ-ոչխար-ցուլ» և «խոճկոր-գառ-հորթ» զոհաբերվող կենդանիների դասական եռյակի մեջ առաջինն էր:<sup>51</sup> Եթե թրակա-պելասգյան ցեղերի համար էլ խոզը պաշտելի տոտեմ և զոհաբերության սրբազան կենդանի էր, ապա Մովսես Խորենացու ավանդած «Քաղդէացոց» արքայացանկի \*Su-sar-is արքայանվան մեջ դժվար չէ տեսնել \*su- «խոզ» բառը՝ արմատակիցը պելասգ. սնց «խոզ»,<sup>52</sup> հուն. ὄζ, լատին. sūs, հին բարձր գերմ. sū, ավեստ. hū նույնիմաստ<sup>53</sup> բառերի: Այս բառերի արմատակիցն է լինելու մակերոն. (թրակյան ծագումով) սոննո «վարագորսի կարճ նիզակ» բառի ս- բաղադրիչը:<sup>54</sup> Այս արքայանվան –*սար*– բաղադրիչը, ըստ երևույթին, ծագում է հ.-ե. \*kér- «աճել, սնել» արմատի ստորին \*kr-, ձայնդարձից: Սրանց տարբերակներն են առկա ազգակից լեզուների այնպիսի բառերի հիմքում, ինչպիսիք են հայ. *սեր, սերմն*, հուն. κόρος «ընձյուղ, մատղաշ ձյուղ», լատին creber «խիտ աճած, թավ», լիտվ. šerti «սնուցել», լատին. Ceres «հողագործության հովանավոր դիցուհին» և այլն:<sup>55</sup> Եթե թրակա-պելասգյան ցեղերի համար ևս խոզը պաշտամունքի առարկա տոտեմ է եղել, ուրեմն, *Սուսարիս* արքայանունը կարող էր ունենալ «խոզի սնած, խոզասուն» իմաստը:

14 և 15. *Մամիթոս* և *Մամիդոս* (<\*Mam-ith-os, \*Mam-id-os): Երկու անձինք են կրել այս անունները: Հավանաբար, դրանք միևնույն արմատից –ith- և –id- վերջածանցներով կազմված անձնանուններ են: Սրանց \*mam- արմատը գալիս է մանկական թոթովանքի \*mama (<հ.-ե. \*ma-ma «մայրիկ»․ հմմտ. հայ. *մա, մամա, մայր, մամ* «տատ») բառից, որն են տեսնում նաև թրակյան *Μαμα*, *Mama* իզական և *Μαμαῖος*, *Μαμοξίς*, *Μαμοσγης*, *Mamutzis* արական անձնանունների հիմքում:<sup>56</sup> Ըստ երևույթին, այս անձնանունների \*mam- բաղադրիչների տակ հասկացվել է թրակացիների Մայր դիցուհին, որը *Mā* (հ.-ե. \*ma, որից՝ \*mā-tēr «մայր») անունով

<sup>49</sup> *Георгиев, С. 72.*

<sup>50</sup> ՀՀՀԼ, էջ 35:

<sup>51</sup> *ИЯИ, т. II, С. 597.*

<sup>52</sup> *Георгиев, С. 94.*

<sup>53</sup> *ИЯИ, т. II, С. 593.*

<sup>54</sup> ՀՀՀԼ, էջ 118:

<sup>55</sup> ՀՄԲ, հ. IV, էջ 204, 206:

<sup>56</sup> ՀՀՀԼ, էջ 73:

պաշտվել է նաև Փռյուզիայում և Փոքր Ասիայի այլ երկրներում:<sup>57</sup> Այս դեպքում ասուվական *Մամիթոս* և *Մամիդոս* արքայանունների մեջ արտացոլված է լինելու նրանց կրողների՝ Մայր դիցուհու պաշտամունքին առնչված լինելու իրողությունը (որպես քուրմ-արքաների<sup>60</sup>): Հմմտ. *Դեմետրա* դիցուհու անվան նույնպիսի կիրառումը *Դեմետրիոս*, *Դեմետր*՝ արական անձնանունների տեսքով և *Արտեմիս* դիցուհու անվան նույնպիսի կիրառումը:

16. *Մասքաղէոս* <\*mas-khal-ē-os արքայանվան մեջ առկա են *Մաս*- և -քաղ- արմատները և -է- վերջածանցը: Անվան առաջին բաղադրիչը, ըստ երևույթին, «մեծ» է նշանակում՝ ծագած հ.-ե. \*meǵa- «մեծ» արմատից: Սրանից են ծագում նաև հայ. *մեծ*, հին հնդկ. máhi, ավեստ. maz-, միջ. պարս. mas, հուն. μέγας, այբ. maθ նույնիմաստ բառերը:<sup>58</sup> Սրանց շարքն են դասվում նաև իլյուր. maz- «մեծ» բառը և թրակ. Μαζαιος, Μεζαναια, Μεζηνλις, Μανι-μαζος, Πατου-μασης անձնանունների նույնիմաստ բաղադրիչները:<sup>59</sup> Արքայանվան -քաղ- բաղադրիչի համար հմմտ. հուն. χηλή բառը, որը նշանակում է «ցուլի, այծի երկձյուղ ոտք», «գայլի ճիրան, թռչունի մագիլ», «ճանկաձև գործիք կամ արքան», «նետի ծայրի երկձյուղ մասը» և այլն:<sup>60</sup> Քանի որ հուն. χηλή բառի հին արտասանությունը եղել է \*khēlē, ուստի ճիշտ է լինելու նրա և հայ. *քեղի* <*քեղ*-ի բառի զուգադրումը (բայց ո՛չ հայերենը հունարենից փոխառյալ լինելու, այլ հ.-ե. \*sqel- «կորացնել, ծոել» արմատից ծագած լինելու տեսանկյունով): *Քեղի* «ղեկ, ղեկի վերին փայտը կամ ջրի մեջ մխված մասը» բառի և հուն. χηλή բառի կապի առթիվ Հ.Աճառյանը գրում է, որ հունարեն բառի «նշանակությունները բավական են ցույց տալու համար թե փոքրասիական հունարենի մեջ բառս ուներ նաև «ղեկ» կամ նման մի առում»:<sup>61</sup> Այս դեպքում չի բացառվում, որ բառն ունենար փոքրասիական ծագում՝ հունարենին անցած Փոքր Ասիայի արևմուտքի թրակա-պելասգյան ինչ-որ բարբառից: Կարծում ենք, որ *Մասքաղէոս* արքայանունն ունեցել է «մեծ ղեկավար» նշանակությունը՝ «մեծ»-ի (հմմտ. հայ. *մեծ*՝ նաև «շատ, զորեղ, իշխանավոր», այբան. maθ «մեծ», իսկ maθi «մեծն»)<sup>62</sup> և «ղեկավար»-ի փոխաբերական իմաստներով:

17. *Մպարեթոս* <\*spar-eth-os: Սրա առաջին բաղադրիչը թրակերեն *σπαρ* «նիզակ» բառն է՝ առկա թրակյան *Σπαρρα-δοκος* և *Σπαρ-τακος* // *Spar-tac-us* անունների մեջ:<sup>63</sup> Վերջինս լատինական ձևն է Հռոմում գլադիատորների և ստրուկների ապստամբությունը գլխավորած հանրահայտ Մպարտակի: Սրանց շարքն է դասվում նաև մակեդոնական *Σπορ-ακ-ης* անունը:<sup>64</sup> Թրակերեն *σπαρ*- բառի հետ միասին հիշյալ անձնանունների համապատասխան մասերը արմատակիցներն են լա-

<sup>57</sup> *Георгиев, С. 131, ՀՀՀԼ, էջ 112:*

<sup>58</sup> *ՀԱԲ, հ. III, էջ 295:*

<sup>59</sup> *ՀՀՀԼ, էջ 61:*

<sup>60</sup> *ՀԱԲ, հ. IV, էջ 569:*

<sup>61</sup> *Նույնը:*

<sup>62</sup> *ՀԱԲ, հ. III, էջ 295:*

<sup>63</sup> *Георгиев, С. 122.*

<sup>64</sup> *ՀՀՀԼ, էջ 75:*

տին. *sparus, sparum* «կարճ նիզակ» և գերմ. *Speer* «նիզակ» բառերի:<sup>65</sup> Ասուվական *Մպարեթոս* արքայանվան մեջ \**spar-* հիմքին հավելվել է *-eth-* վերջածանցը և *-os* վերջավորությունը: *Մպարեթոս* նշանակում է «նիզակավոր, նիզակակիր»: Ի նկատի առնենք, որ հնում նիզակը նաև պաշտամունքի առարկա էր և ցեղային առաջնորդների կարգավիճակի նշանակ:

18 և 19. *Առմամիթոռնու* < Առմա-Միթոռնու < \**arma-Mithrēos*: Այս արքայանվան երկրորդ բաղադրիչի հետ նույնական արքայացանկի *Միթոռնու* անունը հիմք է տալիս *Առմամիթոռնու* անվան այսպիսի բաղադրիչների բաժանման: Սրանցից *առմա-*ն նույնանում է հին հուն. *ἄρμα* «ձիակառք, մարտակառք»<sup>66</sup> բառի հետ, որն այդպիսի իմաստներով կարող է փոխառյալ լինել փոքրասիական լեզուներից. հմմտ. միկ. հուն. *a-mo* «անիվ» (= \**armo*)՝ հին հուն. *ἄρμα-ի* (*harma*) դիմաց: Ազգակից լեզուների արմատակից բառերից հմմտ. նաև հին հուն. *αρμοζ* «կցվածք, հավելված», լատին. *arma* «հարմարանք, զործիք, զենք», հին հնդկ. *arā-* «անվի ճառագայթ», *aram* «հարմար, բավական», ավեստ *arəm* «հարմար, համապատասխան», հին սլավ. *jarimŭ* «լուծ» և հայ. *յարմար*:<sup>67</sup> Վերջինս նախորդների նման *h.-ե.* \**ar-* արմատից է՝ «կազմված յ նախդիրով, մ աճականով և *-ար* մասնիկով» (Հ.Աճառյան):<sup>68</sup> Սրա միջոցով կարելի է հասու լինել *Զարմայր* անձնանվան բուն իմաստին, նրանում տեսնելով հնագույն հայերենում ևս գործածված \**արմա* «կառք, մարտակառք» բառը: Վերջինիս և *այր* «տղամարդ» բառի զուգորդմամբ (հմմտ. *այրեւծի/այրուծի*)<sup>69</sup> ունեցել ենք \**արմայր* «կառամարդ»/«կառավար, կառամարտիկ» բառը, որին *q* սաստկականի հավելումով՝ *զարմայր*, այսինքն՝ «կառամարտիկների պե՞տ»: Սրանից էլ անձնանվանական կիրառմամբ (կամ ընկալմամբ)՝ *Զարմայր*:<sup>70</sup>

*Առմամիթոռնու* անվան երկրորդ բաղադրիչի և *Միթոռնու* < \**mithr-ē-os* անվան մեջ կարելի է առանձնացնել \**միթոռ-* հիմքը և *-ē-* վերջածանցը: Ըստ երևույթին, այս անվան բուն իմաստը «միթոռավոր» է: Եթե ի նկատի առնենք \**միթոռ-*ի հետ համահունչ հուն. *μίτροα* «արևելյան խույր, փաթեթոց» և լատիներենից (որի աղբյուրը հունարենն է) փոխառյալ համարվող հայ. *միտր* «պսակ, խույր», *միթր* «լատին ոճով եպիսկոպոսական կամ քահանայական թագ» բառերի<sup>71</sup> նախնական իմաստները, ապա *Միթոռնու* նշանակելու էր «թագավոր»՝ փոքրասիական քուրմ-արքաներին վայել տիտղոս կամ գահանուն: Հ.Աճառյանը, կասկածի տակ առնելով հուն. *μίτροα*

<sup>65</sup> *Георгиев, С. 122.*

<sup>66</sup> «*Древнегреческо-русский словарь*», составил И.Х. Дворецкий, т. I-II, М., 1958, т. I, С. 236; ИЯИ, т. II, С. 723.

<sup>67</sup> ՀԱԲ, հ. III, էջ 387-388:

<sup>68</sup> ՀԱԲ, հ. III, էջ 380: Հայ. *յարմար* < *յ-արմ-ար* բառը ուշագրավ է ինչպես հնդեվրոպական նախաձևին մոտ իր նշանակությամբ, այնպես էլ իր *յարմ-* մասով հուն. *ἄρμα//harma* «մարտակառք» բառի հնչյունական կողմի հետ ունեցած նմանությամբ:

<sup>69</sup> ՀԱԲ, հ. I, էջ 173:

<sup>70</sup> Այս դեպքում պետք է հրաժարվել *Զարմայր* անվան \**զարմ* մասին տրված «ցեղ, սերունդ» ստուգաբանությունից:


<sup>71</sup> ՀԱԲ, հ. III, էջ 320:

բառը *μίτος* «թել» արմատից բխեցնող տեսակետը, գրում է. «բայց չէ ստույգ. և հավանաբար Փոքր-Ասիականից փոխառությունն է».<sup>72</sup> Ըստ երևույթին, *Առնամիթոնու* <*Առնա-միթոնու* և *Միթոնու* արքայանուններում արտացոլված է անվանակիր անձանց գահակալության բնույթը: Եթե երկրորդ անունը բնորոշ է եղել քրմական գործառույթներով օժտված գահակալին, ապա առաջինը բնորոշ էր լինելու զինվորական գործառույթներով օժտվածին՝ կառավարտիկների վերնախավի ներկայացուցիչ գահակալին: Դա է շեշտել նրա անվան *Առնա-* բաղադրիչը՝ *Առնա-միթոնու*: Ամենայն հավանականությամբ, նույնպիսի երևույթի հետ գործունենք նաև մեր նահապետի և իր *Ջարմայր* <*\*q-արմ-այր* անվան դեպքում:

### Հավելված



Նկ. 1



Նկ. 2

Խեթական բանակի բազմացեղ կազմի խոստուն վկաներն են եգիպտական պատկերաքանակները: Դրանցից բերված նկար 1-ում գերի խեթական մարտիկները:

<sup>72</sup> ՀԱԲ, հ. III, էջ 320:

րը ներկայացուցիչներն են եվրոպոիդ ռասայի արմենոիդ մարդաբանական տիպի (թերևս ծագումով Հայկական լեռնաշխարհից լինեն), նկար 2-ում պատկերված մարտիկները հիշեցնում են նույն ռասայի եվրոպարնակ տիպերը (թերևս ասուվացիներ լինեն):<sup>73</sup>

## ВОКРУГ ПАТРИАРХА ЗАРМАЙРА И “ХАЛДЕЙСКОГО” ЦАРСКОГО СПИСКА

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *С. Петросян* \_\_\_

В хеттском кодексе законов XIV в. до н.э. племена манда и сала упоминаются как хеттские подданные, ранее освобожденные от повинностей. О представителях этих племен говорится как о колесниках. Потомки манда и сала в виде нахарарских родов Мандакуни и Салкуни древней Армении выступают вместе как в труде Мовсеса Хоренаци (II, 8), так и в “Тахнамаке” (47-е и 48-е листы) и “Зоранамаке” (14-е и 15-е листы). Близость обоих этих родов имеется и по местожительству. Мандакуни – владетели области Аршамуник, а Салкуни когда-то жили южнее Аршамуника в области Тарон. Предки этих родов также жили совместно в этих местах (к северо-западу от озера Ван). Что манда и сала были родственными племенами, вызывают особый интерес этнонимы Manda и Sala, которые этимологизируются на индоевропейско-армянской почве.

По Мовсесу Хоренаци, во время Илионской (Троянской) войны на помощь троянскому царю Приаму отправился служивший ассирийскому царю Тевтамосу армянин Зармайр (I, 20; I, 32). По всей вероятности, в греческом источнике этого рассказа первоначально речь шла не о стране Ассирия, а малоазийской стране Ассува, так как имя *Тевтамос* индоевропейского (фракийско-пеласгского) происхождения. Такого происхождения также большинство имен “Халдейского” царского списка. Такое заключение основывается на фактах, наиболее яркими из которых являются следующие имена: Aralios, Balēos, Balotorēs, Lamparitēs, Lambaris, Derkulos, Peritias (-adēs), Lauostenis, Altados, Susaris, Mamithos, Mamidos, Maskalēos, Sparethos, Mithrēos, Armamithrēos.

### Տեղեկություններ հեղինակի մասին

*Պետրոսյան Սարգիս Գարեգինի* - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի առաջատար գիտաշխատող,  
Մ.Նալբանդյանի անվ. ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն,  
Email: [Yahe1996@mail.ru](mailto:Yahe1996@mail.ru)

<sup>73</sup> *Sté u Герни О.*, նշվ. աշխ., էջ 128-129 ներդիրի նկ. 5 և 6: *Նուևի Gurney О.*, *Hetyci, Warszawa, 1970*, էջ 131, նկ. 13 և էջ 261, նկ. 56:

## Արկաղի ԱԿՈՊՈՎ

### ՏՄՅՔՅԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ «ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ» ՀԱՐՅԻ ՇՈՒՐՉ

Մեծ Հայքի XIV աշխարհի Տայքը վրաց պատմագիտության մեջ ներկայացվում է իբրև վրացական հարավային ծայրագավառ՝ «Տառ-Կլարջեթի» անվանմամբ, իսկ նրա ողջ մշակութային շերտը վերագրվում է բացառապես վրացական էթնոսի ձեռքբերումներին: Վրացագիտության մեջ ընդունված է այն համոզմունքը, որ Տայքն իր տարածքում եղած բոլոր հնագույն պետական կազմավորումներով հանդերձ (Դայաենի, Դիաուխի, տաոխներ) հնուց ի վեր բնակեցված է եղել քարթվելական ցեղերով: Ք.ա. III դարում Տայքը վրաց Փառնավազ թագավորի ստեղծած «համավրացական» պետության բաղկացուցիչ մասն էր: Ք.ա. II դարում Հայոց արքա Արտաշեսը, օգտվելով վրացական պետության առժամանակ թուլությունից, միացնում է Տայքը Հայաստանին: Հենց այդ ժամանակաշրջանի հետ է կապվում հայկական տեղանունների առաջացումը Տայքում<sup>1</sup>: Ցավոք, վրաց հեղինակները անտեսում են Ստրաբոնի այն հաղորդումը, որ Արտաշես I-ի արշավանքներից հետո «միավորված Արմենիայի մեջ բոլորը միալեզու էին»<sup>2</sup>, բնականաբար խոսում էին ոչ թե վրացերեն, այլ հայերեն:

Տայքի պատմության IV-VIII դդ. շրջանը ևս վրացագիտության մեջ ներկայացվում է Վրաստանի պատմության համատեքստում: Այստեղ հատկանշական է այն մոտեցումը, որ Տայքի տերերը՝ Մամիկոնյանները, ներկայացվում են իբրև վրացական ծագմամբ նախարարական տոհմ, որոնք գերիշխող դիրք ունեին հայոց արքունիքում: Այս առթիվ վրացի ակնավոր գիտնական Ս. Ջանաշիան գրում է. «Հայ ազնվականության առաջին շարքերն անցած Տառի Մամիկոնյանների իշխանական-ֆեոդալական տոհմը իր ծագումով պատկանում էր վրացական ճան ցեղին, ինչպես այդ խոստովանում և հատկապես հիմնավորում է հայկական նորագույն պատմագրության խոշորագույն ներկայացուցիչ պրոֆ. Ն. Ադոնցը»<sup>3</sup>: Իրականում Ադոնցը երբեք չէր պնդել, որ ճաները վրացական էթնոսի մաս են կազմել: Ջանաշիան փորձում էր իրողությունը ներկայացնել այնպես, կարծես թե հենց Ադոնցն էր Մամիկոնյաններին վրացական ծագում վերագրողը:

Վրաց գիտնականների կարծիքով, հայոց Արշակունյաց պետության կազմում և հետագա շրջանում Տայքը մշտապես եղել է բնակեցված վրացական էթնիկական տարրերով. «Ճշմարիտն այն է, որ բնակչության հիմնական զանգվածը Տառ-Կլարջեթի երկրամասում ի սկզբանե ըստ լեզվի և մշակույթի եղել է վրացական, մինչ հայերը, եթե միայն որևէ տեղ նրանք եղել են, հանդիսացել են վերաբնակիչներ: ... Հարավային Տառ այդ վերաբնակիչները եկել են որպես գաղթողներ, այդտեղ ապահով ապաստան որոնելու: Այդ տեղի է ունեցել հայերի համար ան-

<sup>1</sup> *Նեոլոգիա* 3., *Մենջելոս* 3., *Երևան-Վանաձոր*, 2006, թիվ 19.

<sup>2</sup> Տե՛ս *Ստրաբոն*. *Օտար աղբյուրները հայերի մասին*, հ. 1, Եր., 1940, էջ 54-57:

<sup>3</sup> *Джанашия С.* *Об одном примере искажения исторической правды*, Тб., 1947, С. 19.



տանելի ծանր ժամանակներում՝ պարսիկների և արաբների տիրապետության օրոք՝ V-VII դարերում: Նրանց ձուլմանը վրացիների հետ օժանդակում էր այն հանգամանքը, որ եկողները թվական առումով քիչ էին երկրի բնիկների համեմատ: Այս անվիճելի իրողության համար ենթադրել մի այլ, խելքի մոտ բացատրություն, կատարելապես անհնար է»<sup>4</sup>:

Տայքի պատկանելության շուրջ բանավիճելը վրացագիտության մեջ անընդունելի է: Ս. Ջանաշիան հետևյալ կերպ էր հիմնավորում տայքյան հուշարձանների վրացապատկան լինելը, որը գիտական առումով անհիմն է. «Մինչև հիմա հաշվվում էր, որ Տառ-Կլարջեթի ճարտարապետությունը հանդիսանում է վրաց ճարտարապետության օրգանական մասը»<sup>5</sup>: Տայքի հայկական անցյալի վերաբերյալ յուրաքանչյուր տրամաբանական և փաստարկված պնդում վրաց գիտնականների կողմից ընդունվում է սվիններով: Մեր կողմից, իհարկե, կասկածի տակ չի դրվում Տայքում՝ վրացական պատրիարքությանը ենթակա թեմերի գոյությունը<sup>6</sup>, այսուհանդերձ մենք կփորձենք քննել նահանգի բնակչության և ճարտարապետական հուշարձանների ազգային պատկանելությանը վերաբերող հարցերը:

Տայքը հնուց ի վեր բնակեցված է եղել հայալեզու էթնիկական խմբերով և մշտապես եղել է հայկական պետականության մի մասնիկը<sup>7</sup>: Ք.հ. առաջին դարերում նահանգը դարձել է Դիմաքսյան և Մամիկոնյան նախարարական տների հայրենական կալվածքը:

Տայքի բավականին վաղ քրիստոնեացման մասին են վկայում այն տեղեկությունները, որոնց համաձայն՝ Գրիգոր Լուսավորիչն է եպիսկոպոսներ նշանակում այնտեղ, որոնք կոչված էին ոչ միայն տեղի հոգևոր հոտը ղեկավարելու, այլ նաև՝ դեռևս հեթանոս մնացած ազգաբնակչությանը քրիստոնյա դարձի բերելու: Տայքի եպիսկոպոսներից մեզ են հասել Բասոս, Կիրակոս, Տաճատ և այլ եպիսկոպոսների անուններ: Հիշատակվում է նաև Հովսեփ Վայոցձորեցի կաթողիկոսին հաջորդած Գյուտ կաթողիկոսը, «որ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արահեզայ, այր լի գիտութեամբ հայրվս և առաւելեայրունին, յորդասաց բանիւ և առատաբուղիս վարդապետութեամբ»<sup>8</sup>:

VI դարում ինչպես Գուգարքի, այնպես էլ Տայքի տարածքում ձևավորված կիսանկախ իշխանությունները, որոնք վրացական աղբյուրներում հայտնի են «էրիսթավություններ» անունով, հոգևոր առումով ենթարկվում էին հայոց կաթողիկոսին: Այս պնդմանը համակարծիք է նաև վրաց ականավոր պատմաբան Ի. Ջավախիշվիլին<sup>9</sup>:

<sup>4</sup> *Джанашиа С.*, նշվ. աշխ., էջ 18-19.

<sup>5</sup> *Նույն տեղում*, էջ 31.

<sup>6</sup> *ԵՊՄԻՍՏՅԱՆ Զ.*, *ՅԵՆՅԵԼՈՅ Զ.*, *ՇՅՈՒ-ՅԼՈՐՉՂԵՇՈՒ*, ՅՅ 19, 94.

<sup>7</sup> *Арутюнян Б.* *К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н.э.*, *ՊԲՀ*, 1998, 1-2, էջ 233-246:

<sup>8</sup> *Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն հայոց, թուրթ առ Վահան Մամիկոնեան*, Եր., 1982, էջ 264:

<sup>9</sup> *Տէ՛ս չճջածօմջօլօ օ.*, *յնրօջլօ յրօն օնՇօրօ*, Բ. 1, օմ., 1960, ՅՅ. 300. Համաձայն *Ի. Ջավախիշվիլու՝ 506թ. եկեղեցական ժողովին մասնակցել է Տայքի Ատատե եպիսկոպոսը, իսկ Հովհաննես Բ Գաբեղենցու կաթողիկոսության տարիներին (VI դարի երկրորդ կես) որպես Տայքի եպիսկոպոս է հանդես գալիս Ստեփանոսը:*



591 թ. պարսկաբյուզանդական հաշտությունից հետո, երբ Հայաստանի մեծագույն մասն անցավ Բյուզանդական կայսրությանը, Մավրիկիոս (Մորիկ) կայսրը ձեռնամուխ է լինում կայսրության նոր տարածքների վարչական համակարգի ստեղծմանը: Նա բարեփոխում է Հուստինիանոսի սահմանած վարչական բաժանումները: Տայքը և Գուգարքի սահմանակից մասերն ստանում են Խորագույն Հայք անունը<sup>10</sup>: Նույն 591 թ. Ավանում ստեղծվում է քաղկեդոնական կաթողիկոսություն՝ ի հակակշիռ Դվինի առաքելական կաթողիկոսության: Ավանի քաղկեդոնական կաթողիկոսությունն ուներ հետևորդներ ինչպես հասարակ բնակչության, այնպես էլ բարձրաստիճան հոգևորականության շրջանում, այդ թվում Հայաստանի արևելյան մասում: 602-603 թթ. պարսից Խոսրով արքան գրավում է Հայաստանը և վերացնում Ավանի կաթողիկոսական աթոռը: Դվինում Աբրահամ կաթողիկոսի պահանջով եկեղեցու հայրերը բանադրանքի են ենթարկում Քաղկեդոնի ժողովը: Եկեղեցական գործիչների այն մասը, որոնք չկատարեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի պահանջը, ստիպված հեռացան Տայք, որը, լինելով սահմանակից Բյուզանդիային, լոյալ էր քաղկեդոնական բնակչության հանդեպ<sup>11</sup>:

Իսկ ինչո՞ւ Տայքի առաքելական հայության շրջանում լայն տարածում գտավ քաղկեդոնականությունը: Թերևս պատճառներն ավելի շատ են, քան դրանք երևում են առաջին հայացքից: Եթե V-VI դարերում հայերի շրջանում քաղկեդոնիկ դավանանքին հարելը Պարսկաստանին հակադրելու դրսևորում էր, ապա VII դ. կեսերին՝ արաբական առաջին արշավանքների ժամանակաշրջանում, հայության մի մասի մեջ սկսեց գերիշխել հունական եկեղեցու հետ միանալու տեսակետը՝ պայմանավորված մահմեդական արաբների դեմ Բյուզանդիայի աջակցությունը ստանալու ցանկությամբ: Այս միտումը բնորոշ էր սահմանամերձ շրջաններում բնակվող հայությանը, որը, հայտնվելով ազգապահպանման համար անբարենպաստ պայմաններում, կրոնափոխ լինելուն գերադասել է դավանափոխ լինելը՝ ընդունելով հարևան հզոր քրիստոնյա պետության դավանանքը:

Տայքը մեծապես տուժեց արաբական դժնդակ տիրապետության ժամանակաշրջանում: Արաբական պատժիչ ջոկատները ավարի ու ավերի ենթարկեցին նահանգը: VIII դարի հակաարաբական ապստամբությունների ընթացքում Տայքը հաճախ դառնում էր հայկական ուժերի հավաքատեղին, որտեղից էլ կառավարվում էին հակաարաբական ելույթները: Տայքի ռազմավարական նշանակությունը գիտակցելով՝ արաբները մի քանի պատժիչ արշավախմբերի միջոցով ավարի ու ավերի ենթարկեցին նահանգը, որի արդյունքում Տայքի բնակչության մի մասն արտագաղթեց, մյուսը ապաստանեց անմատչելի վայրերում: Այն հայ հոգևորականները, ովքեր վերապրեցին արաբական արշավախմբերի սպանող, գլխավորապես անցան Բյուզանդիա: 775 թ., երբ ճնշվեց հայոց հուժկու ապստամբությունը, Մամիկոնյանները Տայքը հանձնեցին իրենց հետ խնամիական առնչություններ ունեցող Բագրատունիներին: Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին Տայքում

<sup>10</sup> *Տե՛ս Լեռ, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1947, էջ 224:*

<sup>11</sup> *Арутюнова-Фидания В. Повествование о делах армянских (VII век) Источник и время, М., 2004, с. 183, 250.*

կառուցեց Կադամախի ամրոցը: Տայքի հյուսիսային հարևանը՝ Կղարջքը, անցավ 774-775 թթ. հակաարաբական ապստամբության ղեկավարներից մեկին՝ Վասակ Բագրատունուն<sup>12</sup>, որի թոռ Աշոտն իր հերթին ստեղծեց մի նոր իշխանություն՝ Արտանուջ կենտրոնով: Հաստատվելով Վրաստանին սահմանամերձ շրջանում՝ Աշոտը խնդիր ուներ ամրապնդելու իր իշխանությունը, ապահովագրելու այն արաբական ոսնձգություններից: Ուստի նրան անհրաժեշտ էր սոցիալական լայն հենարան և ուժեղ պետության հովանավորություն՝ Տփղիսի արաբական ամիրայության դեմ պայքարում: Այդպիսի հենարան Աշոտ իշխանը տեսնում էր արաբական իշխանություններից դժգոհ վրացիների մեջ: Հակաարաբական պայքարում ամենամեծ օգնությունը կարող էր նրան ցույց տալ Բյուզանդական կայսրությունը: Շահելու համար այդ երկու ուժերի համակրանքը՝ Աշոտին անհրաժեշտ էր ընդունել քաղկեդոնական դավանանքը: Այդ հարցում Աշոտը չհապաղեց. նա և իր մերձավորները մկրտվեցին քաղկեդոնական ծեսով, որից հետո ձեռնամուխ եղան նորաստեղծ իշխանության ամրապնդման աշխատանքին: Աշոտ Բագրատունին կայսեր կողմից կյուրապաղատի տիտղոս է ստանում, որը կայսեր կողմից ոչ այնքան Աշոտին սիրաշահելու, այլ ուղղակի արաբներին հակակշիռ ստեղծելու նպատակ էր հետապնդում: Այսպես Կղարջքում տեղի ունեցավ կյուրապաղատության առաջացումը, որը X դարում ընդարձակվեց գերազանցապես Տայքի տարածքների հաշվին: Բնակչության մեծամասնությունը իշխող վերնախավի նման հարեց քաղկեդոնականությանը: Նորահավատ բնակչության հոգևոր պահանջումների բավարարման համար Վրաստանից մեծ թվով հոգևորականներ եկան Տայք և Կղարջք, որտեղ նրանք, չբավարարվելով արդեն իսկ քաղկեդոնական մեծամասնության առկայությամբ, բազմապատկեցին հոգևորությունը: Ինչ խոսք, վրաց հոգևորականության հետևից Տայք ներթափանցեցին նաև վրացական էթնիկական խմբեր, որոնք Տայքի բնակչության ազգային կազմի վրա ազդեցություն չունեցան:

Ո՞րն է պատճառը, որ հայաբնակ բնակավայրերում հայերի կողմից կառուցված հրաշալիքները՝ Չորդվանքը, Օշկվանքը, Խախուն, Իշխանը, Բանակը և այլն, սեփականացվել էին վրացիների կողմից, և այսօր դրանք ներկայացվում են իբրև միջնադարյան վրացական մշակույթի գլուխգործոցներ: Վրացական կողմն ունի մի շարք փաստարկներ՝ արձանագրությունները եկեղեցիների վրա, Դավիթ Կյուրապաղատի հատած դրամները վրացերեն մակագրություններով, Տայքի եկեղեցիներում գրված բազմաթիվ վրացերեն ձեռագրերը, Տայքում վրացական պատրիարքությունը ենթակա թեմերի գոյությունը: Ինքնըստինքյան, այս բոլոր փաստարկները խոստում են, բայց երբ կատարում ենք սկզբնաղբյուրներում առկա պատմական փաստերի համակողմանի և անաչառ վերլուծություն, ապա ստանում ենք մեզ հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները:

Տայքի անցյալի վերաբերյալ մեծագույն բացահայտումները կատարվել են ակնանավոր գիտնական ակադեմիկոս Ն. Մառի կողմից: Մառը գտնում էր, որ

<sup>12</sup> Վասակ և Մմբատ Բագրատունիների հայրն էր հայոց սպարապետ Աշոտ «կույր» Բագրատունին, որը 748-750 թթ. Հայաստանում հակաարաբական ապստամբության ղեկավարներից էր:

«վրացի» տերմինը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ուներ դավանաբանական նշանակություն, որով բնութագրվում էին Տայքի հայ քաղկեդոնականները<sup>13</sup>: Վերջինիս կարծիքով, հայ ժողովրդին հսկայական վնաս հասցրած հայ քաղկեդոնականների ապագայնացման գործընթացն է պատճառը, որ Վրաստանը հարևատացավ Տայքով և Կղարջքով<sup>14</sup>: Մատի պնդմամբ, Մ. Տայքի վրացի հոգևորականությունը շրջապատված էր թեև հավատակից, սակայն այլազգի հայ ազգաբնակչությամբ: Երկիրը վրացական անվանելը նրանք հիմնավորում էին լոկ նրանով, որ եկեղեցիներում ժամերգությունը տեղի էր ունենում վրացերեն<sup>15</sup>: Մեծանուն ակադեմիկոսը պնդում էր նաև, որ վրացերենը տարածաշրջանում եղել է միայն ու միայն եկեղեցական լեզու և ժողովրդի մեջ լայն տարածում չունեի<sup>16</sup>: Մնացած գրեթե բոլոր պարագաներում նրանք օգտագործում էին հայերենը: Օրինակ, Տայքի քաղկեդոնիկ հայերից Գրիգոր Բակուրեանը, որը 1083 թ. Բուլղարիայում հիմնադրեց Պետրիցիոնի վանքը, վանքի կանոնադրությունը հեղինակելիս իր անվան դիմաց ստորագրել է հայերենով և անգամ հունարեն նշել, որ իր ստորագրությունը հայերենով է արված<sup>17</sup>: Համաձայն Պետրիցիոնի կանոնագրքի 182-րդ հոդվածի՝ հայերը քաղկեդոնական եկեղեցիներում պաշտոնական ժամերգությունը պիտի կատարեին վրացերեն<sup>18</sup>: Քանի որ հայ քաղկեդոնական համայնքի եկեղեցիներում, իր ժամանակի սահմանված կանոնով, արարողությունը կատարվում էր վրացերեն, դրանից ելնելով էլ այդ նույն եկեղեցիների պատերին գրանցվող արձանագրությունները կատարվում էին վրացերենով:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Տայքի որոշ եկեղեցիների արձանագրությունների լեզուն չի որոշում Տայքի հուշարձանների ոճային և ազգային պատկանելությունը: Առավել ևս, որ որոշ դեպքերում այդ արձանագրությունները կատարվել են ուղղագրական լուրջ սխալներով: Պետք է նշել, որ հայ քաղկեդոնականների գլխավոր եկեղեցիների արձանագրությունները գրվել են անթերի, քանի որ այդ եկեղեցիներին կից եղել են գրչության կենտրոններ, որտեղ գրվել են բազմաթիվ վրացական ձեռագրեր: Խոսքը վերաբերում է գյուղական բնակավայրերի եկեղեցիներին, որոնց արձանագրությունները ներկայացված են վրացագիտական աշխատություններում: Այսպես, էքեք (Այգեկ) գյուղի եկեղեցու վրացերեն և հունարեն արձանագրությունները Է. Թաղաիշվիլին բնութագրում է իբրև անգրագետ և ավելացնում, որ այդ արձանագրությունների հեղինակը վատ էր տիրապետում

<sup>13</sup> *Март Н. Ани. Книжная история города и раскопки на месте городища. Л.; М., 1934, С. 131. Վ. Ստեպանենկոյի մեկնարանությամբ՝ քաղկեդոնականությունն այս դեպքում վրացական տարրերակով ուղղափառության ընդունումն է, որը զուգակցվում է եկեղեցիներում վրացերեն ժամերգությամբ: Տե՛ս **Степаненко В.** Торники и Тарониты в Византии (к вопросу о существовании т.н. Тайкской ветви Торникянов), *Античная Древность и Средние века*, 1999, N 30, С. 35.*

<sup>14</sup> Տե՛ս *Март Н.* Аркаун, монгольское название христиан связи с вопросом об армянах халкедонитов, *ВВ*, XII, СПб., 1906, С. 6.

<sup>15</sup> Տե՛ս *Март Н.* Георгий Мерчуле, *Житие Григория Хандзтийского*, СПб., 1911, С. 123.

<sup>16</sup> *Նույն տեղում*, էջ XVI.

<sup>17</sup> Տե՛ս *Март Н.* Аркаун ..., С. 20:

<sup>18</sup> *Մարության Տ.*, Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Եր., 2003, էջ 244-245:

ինչպես հունարենին, այնպես էլ վրացերենին: Էքեքյան արձանագրությունը, ըստ Թադախիշվիլու, պետք է որ կատարված լիներ 1006-1007 թթ., այսինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ «Տառ-Գլարջեթյան Քարթվելական թագավորությունը» իր մշակութային ծաղկման ժամանակաշրջանում էր: Բնականաբար դժվար է դառնում հավատալ նրան, որ «վրացական ազգային մեծամասնություն ունեցող Տառյում վրացի հոգևորականների կողմից» նման անգրագիտություն դրսևորվեր տաճարի պատերին: Մեր այս պնդմանը, իհարկե, կցանկանան հակադրվել՝ պնդելով, որ այդ արձանագրությունները կատարողը վրացի չի եղել, և դրանով են բացատրվում այն բազմաթիվ ուղղագրական սխալները, որոնք առկա են արձանագրության մեջ: Մակայն չնոռանանք, որ վրացագիտության մեջ գերիշխող տեսակետի համաձայն՝ Տայքի թե՛ բնակչությունը և թե՛ հոգևորականությունը վրացիներ էին, ուստի դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող էին վրացի հոգևորականներն ու բնակչությունը հանդուրժել տառասխալներով արձանագրություններ: Այս ամենն ունի ընդամենը մի բացատրություն, որ ո՛չ Էքեքի հոգևորականությունը և ո՛չ էլ բնակչությունը քաջատեղյակ չէին վրացերենին, այսինքն՝ վրացիներ չէին, այլ քաղկեդոնական հայեր: Իսկ որ Տայքում հայերը հնուց ի վեր ապրել և արարել են, վկայում են ինչպես եկեղեցիների վրա հանդիպող հայատառ թվագրումները (Իշխան, Խախու և այլն), այնպես էլ միջնադարյան հեղինակների աշխատությունները:

Տայքի քաղկեդոնական ազգաբնակչության հայախոս լինելու վերաբերյալ պահպանվել են մի շարք տեղեկություններ: Դրանցից առաջինը վերաբերում է X դարին: Ականավոր գիտնական Ներսես Ալիկյանի կողմից հայտնաբերվեց «Պղնձե քաղաքի» պատմության վերաբերյալ փաստաթուղթը, որով հավաստվեց Դավիթ կյուրապաղատի ազգությամբ հայ լինելը, նրա պալատականների և ժողովրդի հայախոս հայեր լինելը և, այդպիսով, Տայքի կյուրապաղատության հայկական լինելը<sup>19</sup>: Մեզ են հասել նաև Տայքում գրված բազմաթիվ ձեռագրեր, որոնք պահպանվում են Մատենադարանում<sup>20</sup>: Տայքի քաղկեդոնական հայության վերաբերյալ ամենաուշագրավ տեղեկությունները թերևս հաղորդում է XVII դարի հայ հեղինակ Հակոբ Գարնեցին, որը հաղորդում է հետևյալը. «Եւ կայ ի մէջ ձորոյն մեծամեծ վանորայք Վրացի գուղն Խախու, Ոշկ և Իշխան, որ յար և նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբն Սոփի ի Կոստանտնուպոլիս:...Եւ էին բնակիչք երկրիս կէսն Հայք և կէսն ազգաւ և կրօնիւք Վրացի, բայց Հայի լեզուաւ խօսէին...»<sup>21</sup>:

Վերջապես, Տայքում առկա բազմահազար հայության մասին մեզ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում XVI դարի վերջի թուրքական «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարը» հարկացուցակը: Այս հարկացուցակում ներկայացված են Չըլդըրի (Ախալցխայի) նահանգի հարկման ենթակա բնակավայրերն ըստ ընտանիքների, որտեղ առկա են նաև այդ ընտանիքների ղեկավարների անունները, ներկայացված են գանձվող հարկերի չափերը: Այս հարկացուցակը կազմվել է

<sup>19</sup> Ներսես վ. Ալիկյան, *Չրոյց Պղնձե քաղաքի*, «Հանդէս ամսօրեայ», 1958, 1-4, էջ 30-48:

<sup>20</sup> Տե՛ս Մատենադարան, *Ձեռագիր N 3223*, էջ 326բ, 8624, էջ 96բ, 8064, էջ 20բ, 22ա:

<sup>21</sup> *Թակուր Գարնեցի*, *Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ*, 1903, էջ 18:

1595 թ. և արտացոլում է մինչև Տայքի քրիստոնյաների զանգվածային մահաբերականացումն ընկած վիճակը: Հետևաբար այն, ըստ վրացի հետազոտողների, պետք է որ ցույց տար Տայքի բնակչության մեջ վրացական էթնոսի գերակշռությունը: Սակայն, որքան էլ որ հարկացուցակը թարգմանած Ս. Ջիքիան փորձում էր «Հովհաննեսներին» ներկայացնել իբրև «Իվանե» և «Գրիգորներին» իբրև «Գրիգոր», այսուհանդերձ Փանակի լիվայի բնակավայրերում (Տայքի Բերդացիոր գավառ և Ճակքի արևելյան հատված) մեծամասնություն (մոտ 2/3) էին կազմում հայկական և հայերի շրջանում լայն տարածում ունեցող անուններով մարդիկ, մինչդեռ վրացական անուններով մարդիկ շատ քիչ են հանդիպում: Ամենատպավորիչ օրինակը, որը ցույց է տալիս հայ քաղկեդոնականների առկայությունն այստեղ, դա Ջատգերակ գյուղի բնակիչ «գյուրջի Տեր Հակոբն» է<sup>22</sup>:

Այսպիսով, Տայքը վաղնջական շրջանից եղել է հայկական աշխարհի մի մասնիկը: Զարգացած միջնադարում մեծասամբ հարելով քաղկեդոնականությանը՝ տայեցի հայը չի ասիմիլացվել վրացական էթնոսին: Ընդհակառակը, Տայքում առկա վրացական փոքրամասնությունն առօրյայում ընդօրինակել է հայերենը՝ հայերին փոխանցելով վրացերենը միայն ու միայն իբրև եկեղեցական ժամերգությունների լեզու: Քաղկեդոնիկ հայերի կողմից իրենց իսկ համար կառուցված հուշարձանները չեն կարող որակվել իբրև վրաց ազգի ձեռքբերումներ, իսկ Տայքի պատմության ուսումնասիրությունը Վրաստանի պատմության համատեքստում գիտականորեն սխալ է և անընդունելի:

## О ВОПРОСЕ “ПРИНАДЛЕЖНОСТИ” ТАЙКСКИХ ПАМЯТНИКОВ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ А. АКОПОВ \_\_\_

XIV область Великой Армении - Тайк с древнейших времен являлся частью армянской государственности и издревле был населен армянами. Об этом свидетельствуют армянские и греческие источники. В X веке край вошел в состав курапалатства, которое было основано еще в IX веке в соседнем Кгарчке, под предводительством Багратидов. Дабы получить поддержку со стороны Византийской империи в борьбе с арабами, тайкские Багратиды приняли халкидонитство, а в Тайке появилось грузинское духовенство. Однако халкидонизация не подразумевало грузинизации армян. Грузинский стал лишь церковным языком тайкских армян, о чем свидетельствует академик Н.Марр. Ошкванк, Банак, Хаху, Чордванк и другие памятники архитектуры, построенные армянами-халкидонитами не могут рассматриваться в качестве грузинских, а изучение истории Тайка в контексте истории Грузии научно не обосновано.

### Տեղեկություններ հեղինակի մասին

Ակոպով Արկադի Արտյոմի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, E-mail: [arkadone@mail.ru](mailto:arkadone@mail.ru)

<sup>22</sup> Գլուքոստանի շրջանի մասին, Բ. 2, Երևանի լեզվաբանական ինստիտուտի տարգմանիչ, 1941, թ. 345.

## Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ՕՐՈՆՏԵՍ-ԵՐՎԱՆԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ

Հայաստանի նախկին սատրապ Օրոնտես-Երվանդը, լինելով մոտ 200-ամյա դադարից հետո Հայաստանի անկախությունը վերականգնած և անկախ պետության հիմնադիր դարձած անձ, չէր կարող տեղ գտած չլինել հայ ավանդական պատմագրության մեջ: Այսուհանդերձ, իր այդ հայտնի անունով նա բացակայում է մեր պատմիչների երկերում, երբ նրանց հայտնի է այդպիսի մի կերպար՝ ավանդական Վաղարշակը (ըստ Մովսես Խորենացու) կամ Արշակը (ըստ Անանուն պատմիչի), որին նրանք, հայ Արշակունիների արքայատոհմի հիմնադիրը համարելով հանդերձ, համարում են նաև մակեդոնական նվաճողների ժամանակակիցը՝ նրանց դեմ պայքար մղած և հաղթած Հայոց թագավոր: Մեր պատմիչները Արշակունի են համարում ոչ միայն պարթև Արշակունիների հայկական ճյուղի ներկայացուցիչներին, այլև նախորդ հայկական արքայատոհմերի ներկայացուցիչներին: Գ.Սարգսյանը, Մար Աբաս Կատինային ի նկատի առնելով, գրում է, որ նրա «պանարշակունիական» կոնցեպցիան ելակետ է հանդիսացել Խորենացու, Անանունի և Պրոկոպիոս Կեսարացու համանման հայեցակարգերի համար<sup>1</sup>:

Նույնպիսի մտեցմամբ, Վաղարշակին հայ Արշակունիների նախնին համարող տեսակետը պատճառ է դարձել, որ մեր պատմաբանների աշխատություններում նրա պատմական նախատիպերից առաջինին՝ Օրոնտես-Երվանդին վերաբերող գործունեությունը ևս վերագրվի Արշակունի տարբեր թագավորների: Այսպես, ավանդական Վաղարշակի պատմական նախատիպ համարվում է կամ հայ Արշակունի արքայատոհմի հիմնադիր Տրդատ 1-ինը (Արտաշիսյան արքայատոհմի հիմնադիր Արշակունի համարված Արտաշես 1-ինի հետ միասին)<sup>2</sup> կամ միայն Տրդատ 1-ինը (52-80)<sup>3</sup> կամ նրա ավագ եղբայր, պարթևական արքայիցարքա Վաղարշ 1-ինը<sup>4</sup> կամ թե՛ մեկը, թե՛ մյուսը<sup>5</sup>:

<sup>1</sup> **Սարգսյան Գ.**, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 63, 133:

<sup>2</sup> **Периханян А.** Древнеармянские востаники, “Вестник древней истории”(այսուհետև՝ ВДИ), 1956, N 2, С. 51, прим. 3.

<sup>3</sup> **Адонц Н.** Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 432-433: **Բասմաճեան Կ.**, Բսկական պատմություն Հայոց, Վ. Պոլիս, 1914, էջ 100-102: **Սամուելյան Խ.**, Հին հայ իրավունքի պատմություն, հ. I, Եր., 1939, էջ 181, 264, 328: **Դանիելյան Է.**, Պարթևական պետության պատմության որոշ դրվագներ Մովսես Խորենացու լուսաբանությամբ, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1976, թիվ 3, էջ 168, 169: **Պետրոսյան Ս.**, Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան և հյուսիսային հարևանները հայ-հռոմեական փոխհարաբերությունների ոլորտում (I դ. Երրորդ քառորդ), Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1979, թիվ 4, էջ 61-64:

<sup>4</sup> **Աբեղյան Ս.**, Հայ ժողովրդական առասպելները Մ.Խորենացու Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 489, ծան. 1:

Առավել համոզիչ են Գ.Սարգսյանի մոտեցումները: Ըստ նրա՝ Վաղարշակը հավաքական անձ է՝ բաղկացած Արտաշես Ա-ի, Տրդատ Ա-ի և այլ հայ իշխողների առանձին գծերից,<sup>6</sup> «Վաղարշակի՝ որպես բարեփոխիչ թագավորի կերպարը, փաստորեն, հավաքական, *հայոց մի շարք թագավորների* գծերն ու գործունեությունը արտահայտող կերպար է»<sup>7</sup>: Այո՛, Վաղարշակի կերպարը հավաքական-համադրված կերպար է: Բայց ընդգծված բառերը չեն բացառում այդ կերպարում նաև Օրոնտես-Երվանդի՝ մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանի անկախությունը վերականգնած անձին բնորոշ գծերի առկայությունը: Նախ և առաջ նրան, քան թե Արտաշես 1-ինին կամ առավել ևս Տրդատ 1-ինին կարելի է համարել այդպիսի անձնավորություն, որովհետև վերջիններս «պետության կազմավորման ուղղությամբ» առանձին ջանքեր թափելու կարիք չէին զգում. կազմավորված պետություն՝ անկախ Մեծ Հայքի թագավորությունը, գոյություն ուներ Օրոնտես-Երվանդի ժամանակներից սկսած:

Ինչո՞ւ մենք պետք է անվերապահորեն ընդունենք Վաղարշակին պարթև Արշակունի համարող մեր պատմիչների որդեգրած տեսակետը, բայց հավատ չընծայենք նրանց, երբ նրանք Վաղարշակին համարում են մակեդոնական նվաճողների ժամանակակիցը:

Իսկապես էլ, Վաղարշակի մասին մեր պատմիչների հաղորդած տեղեկությունների մանրագնին քննությունը ցույց է տալիս, որ դրանց մի զգալի մասը վերաբերում է մ.թ.ա. 4-րդ դարի վերջերին: Ըստ Մովսես Խորենացու՝ Վաղարշակը «ընդդեմ լեբինն Կալկասայ կողմնակալ հիւսիսայ կարգէ գմեծ եւ զհօր ազգն, եւ նահապետութեանն անուն կարդայ բոլեշխ Գուգարացոց, որ էր լեալ ի գաւակէ Միհրդատայ՝ Դարեհի նախարարի. գոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի Վերիացոց ազգացն...»<sup>8</sup>: Դարեհի//Դարեհ 3-րդ Կողոմանոսի (մ.թ.ա. 336-330թթ.)՝ Աքեմենյան վերջին արքայից արքայի և Ալեքսանդր Մակեդոնացու վկայակոչումը այստեղ պատահականության արդյունք լինել չի կարող: Ըստ երևույթին, Աքեմենյան աշխարհակալության գոյության վերջին տարիներին հետագա Վիրքի տարածքում կառավարիչ նշանակված Միհրդատը պարտականություն է ունեցել հսկել Դարիալի լեռնանցքը՝ թույլ չտալով հյուսիսկովկասյան բարբարոս ցեղերի թափանցումը հարավ: Ուրեմն, Վաղարշակը նրա որդի Միհրդատին նշանակել էր Գուգարաց բոլեշխ և նրան վստահել նույն պարտականության կատարումը:

Ինչպես տեսնում ենք, վրացական պետության՝ *Վիրք (Իրերիա, Քարթլի)* կոչվածի մասին խոսք անգամ չկա: Եվ չէր էլ կարող լինել, որովհետև Դարեհի և

<sup>5</sup> *Адоиц Н.* նշվ. աշխ., էջ 432: Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), ՀՄՄՀ ԳՍ հրատ. հ. I, Եր., 1971, էջ 746-747:

<sup>6</sup> ՀԺՊ, հ. I, էջ 674: Նույն կարծիքն է պաշտպանում նաև Ա.Փերիխանյանը (*Периханян А.*, նշվ. աշխ., էջ. 51, ծան. 3):

<sup>7</sup> *Սարգսյան Գ.*, Մովսես Խորենացին և նրա «Հայոց պատմությունը», ՊԲՀ, 1973, թիվ 2, էջ 57:

<sup>8</sup> Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Քննական բնագիրը Մ.Արեղյանի և Ս.Հարությունյանի (աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ.Մալխասյանի), Եր., 1981, Բ, ք:



Ալեքսանդրի ժամանակ այն դեռևս գոյություն չունեի (այն ստեղծվել է մ.թ.ա. 3-րդ դարի 70-ական թվականներին): Այն գոյություն չունեի նաև Վաղարշակի ժամանակ, որն այստեղ կարգեր էր հաստատում և կողմնակալ նշանակում: Ուրեմն, Վաղարշակի նախատիպն այս դեպքում չէր կարող լինել ո՛չ Արտաշես 1-ինը, ո՛չ Տրդատ 1-ինը (կամ նրա եղբայր Վաղարշ 1-ինը), ո՛չ էլ հայ Արշակունի Վաղարշ 2-րդը: Նրանց բոլորի ժամանակ կար, գոյություն ունեի Կուր գետի և Դարիայի լեռնանցքի միջև տարածված Վրաց թագավորությունը: Այսպիսով, վրաց պետականության ստեղծմանը նախորդած ժամանակաշրջանում հիշյալ տարածքում ռազմավարական գործունեություն ծավալած Հայոց թագավորը կարող էր լինել միայն Երվանդունի արքայատոհմի ներկայացուցիչ Օրոնտես/Երվանդը՝ ավանդական Վաղարշակի պատմական առաջին նախատիպը<sup>9</sup>:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի ընթացքում և դրան հաջորդած ժամանակաշրջանում տեղի ունեցած դեպքերն իրենց արտացոլումն են գտել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Ա գրքի լա գլխում: Հայկազանց վերջին իշխողի՝ Վահեի վերաբերյալ այնտեղ կարդում ենք. «Մա ընդվզեալ՝ մեռանի յԱղեքսանդրէ Մակեդոնացոյ: Յայսմ հետէ մինչև ցթագաւորութիւնն Վաղարշակայ ի Հայս՝ ոչ ինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ. քանզի շփոթ իմն ամբոխից լեալ՝ այր զարամբ ելանէին տիրել աշխարհիս»<sup>10</sup>: Դժվար չէ կռահելը, որ եթե հաղորդման առաջին մասում արտացոլված է Ալեքսանդրի արշավանքների ժամանակաշրջանը, ապա հաղորդման երկրորդ մասի մեջ իր արտացոլումն է գտել դիադոքոսների պայքարի ժամանակաշրջանը: Ուրեմն, եթե Գավգամելայի ճակատամարտում Ալեքսանդր Մակեդոնացու բանակի դեմ էլած աքեմենյան բանակի կազմում գտնվող երկու հայ զորավարներից Օրոնտես/Երվանդը պատմական նախատիպերից մեկն է մակեդոնացիների դեմ հաղթական պատերազմ մղած խորենացիական Վաղարշակի<sup>11</sup>, ապա Միթրաուստես/Միհրվահիշտն էլ իր հերթին պատմական նախատիպ կարող էր ծառայել Ալեքսանդր Մակեդոնացու և Դարեհի ժամանակակիցը համարված մեկ ուրիշ հայի կերպարի՝ ճակատամարտում Ալեքսանդրի դեմ հանդես եկած և զոհված Վահեի: Նրա վերաբերյալ Լ.Շահինյանը նկատում է, որ Վահե անունը Վահագն դիցանվան տարբերակն է, իսկ Բրանում սրա իմաստային համարժեքն էր Միթրա/Միհր-ը՝ լույսի, արևի և կրակի աստծու անունը: «Այս ամենից հետևում է, -գրում է Լ.Շահինյանը, որ Վահեն ստուգաբանորեն, իրոք, Միթրա-Միթրաուստեսն (Միհրվահիշտը - Լ.Պ.) է, որ հավանական է, Վահեին պարսիկները, որոնց զորաբանակի կազմում նա կռվում էր, կոչել են այդ անվան իմաստային տարբերակով՝ Միթրա և այն Միթրաս, Միթրես, Միթրաուստես ձևով անցել է հույներին»<sup>12</sup>:

<sup>9</sup> Պետրոսյան Լ., Ավանդական Վաղարշակի պատմական ու վիզյակական նախատիպերի շուրջ, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. V, Գյումրի, 2002, էջ 136-142:

<sup>10</sup> Խորենացի, Ա, լա:

<sup>11</sup> Նույնը, Բ, դ, Բ, է:

<sup>12</sup> Շահինյան Լ., Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Վահեի մասին, ՊԲՀ, 1973, թիվ 4, էջ 175:

Միանգամայն ընդունելի դատողություն է: Բայց Լ.Շահինյանը կարծում է նաև, որ Վահե//Միհրվահիշտ//Միթրաուստեսը ոչ թե Փոքր Հայքի կառավարիչը, այլ «համայն հայոց թագավորն է եղել»<sup>13</sup>, իսկ Օրոնտես//Երվանդը ոչ թե Մեծ Հայքի կառավարիչն է եղել, այլ Փոքր Հայքի կուսակալ կամ լավագույն դեպքում թագավոր» կամ «Վահե-Միթրաուստեսին (Միհրվահիշտին) ենթակա կուսակալ և առաջնորդ, որը ավելի հավանական է»<sup>14</sup>: Հայագետի այս կարծիքը հակասում է Արիանոսի վկայությանը: Վերջինս հիշատակում է Գավգամելայի ճակատամարտի մասնակից հայ կառավարիչ-գործարարականատարներից նախ Օրոնտես//Երվանդին, ապա Միթրաուստես//Միհրվահիշտին: Պարզ է, որ Օրոնտես//Երվանդը ավելի հեղինակավոր դեմք էր, քան Միթրաուստես//Միհրվահիշտը<sup>15</sup>: Ուրեմն, կասկած լինել չի կարող, որ Գավգամելայի ճակատամարտում Օրոնտեսը ներկայացրել է Մեծ Հայքը, իսկ Միթրաուստեսը՝ Փոքրը: Այժմ կարելի է պնդել, որ սրանցից առաջինը Երվանդ սատրապն է՝ ավանդական Վաղարշակի առաջին նախատիպը, իսկ երկրորդը՝ Միհրվահիշտը, պատմական նախատիպն է խորենացիական Վահեի: Ըստ այդմ, Միհրվահիշտը Փոքր Հայքի թագավորությունը վերականգնած լինել չէր կարող: Իսկ Օրոնտես-Երվանդը դարձել էր Հայաստանի մեծ մասի կառավարիչ՝ ներառյալ նաև Փոքր Հայքի այսբեփրատյան շրջանները:

Մակեդոնական նվաճումների շրջանում Հայաստան էր ներխուժել Մենոն գորավարը, որը հասել էր, հավանաբար, Փոքր Հայքի վրայով մինչև Ճորոխի ավազանում գտնվող Սպերի ոսկեհանքերի շրջան<sup>16</sup>: Սրա դեմ պետք է ձեռնարկված լինե՞ր Վաղարշակի առաջին արշավանքը: Պատմահայրը գրում է. «Միաբանե եւ Վաղարշակ գօր բագում յԱտրպատականէ եւ ի Հայոց, որ ի միջոցի աշխարհիս, արս անուանիս եւ քաջս... Հասանէ ի միջոց աշխարհիս, վերագոյն քան գակունս մօրին Մեծի, յափն Երասխայ, մօտ յԱրմաիր, որ ասի բլուր. արուրս շատս առնելով անդ... Եւ աստի միաբանեալ զբոլոր կողմանս աշխարհիս՝ հասանէ առ սահմանօքն Խաղտեաց»<sup>17</sup>: Նախապես Վաղարշակի հրամանատարության տակ մեր աշխարհի կես մասի, այսինքն՝ միայն Մեծ Հայքի ուժերն են եղել, ինչպես էլ իրականում եղել է Օրոնտես-Երվանդի դեպքում: Միայն երկրի կենտրոնում հաստատվելուց հետո է, որ նրա մոտ գումարվում են մեր աշխարհի բոլոր կողմերի ուժերը, որոնք բաղկացած էին լինելու թե՛ Մեծ Հայքի, թե՛ Փոքր Հայքի գորամասերից: Ըստ երևույթին, Փոքր Հայքի ուժերը Երվանդի գործին էին միացել Միթրաուստեսի՝ Խորենացիական Վահեի զոհվելուց հետո:

Շարունակության մեջ Մովսես Խորենացին մանրամասնորեն արդեն խոսում է մակեդոնացիների դեմ Վաղարշակի սկսած պատերազմում ռազմական գործողությունները Փոքր Հայքի տարածք փոխադրելու մասին<sup>18</sup>, չանելով Խաղ-

<sup>13</sup> Շահինյան Լ., նշվ. աշխ., էջ 176:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 177:

<sup>15</sup> Arrian, III, 8, 5 (Ալեքսանդր Մակեդոնացի, Եր., 1987, էջ 97):

<sup>16</sup> Strabo, XI, 14, 9 (Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, Եր., 1940, էջ 61):

<sup>17</sup> Խորենացի, Բ, դ:

<sup>18</sup> Պետրոսյան Լ., Օրոնտես-Երվանդի հակամակեդոնական գործունեության արտացոլումը Մովսես Խորենացու երկում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազ-

տիքի սահմանների մոտ ծավալված իրադրությունների նկարագրությունը: Այդ բացթողումն է լրացնում Ստրաբոնի հաղորդումը՝ Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Հայաստան ուղարկված մակեդոնացիների կրած անհաջողության և Մենոնի սպանության մասին. «Կան ոսկու հանքեր Միսպիլիտիսի մեջ՝ Կաբալայում, ուր ուղարկվեց Մենոնը Ալեքսանդրի կողմից գորքով, բայց խեղդամահ եղավ բնակիչների կողմից»<sup>19</sup>: Անկասկած, Մենոնի գլխավորած գորքը պարտություն էր կրել և նահանջել՝ գերի թողնելով իր հրամանատարին: Պատմահոր շարադրմամբ հետևենք Վաղարշակի կողմից մակեդոնացիների դեմ ծավալված հաջող ռազմական գործողությունների ընթացքին, որոնք, մեր կարծիքով, արտացոլումներն են վերոհիշյալ անցուդարձերի: Խորենացին գրում է. «Քանզի Ղազիկայ, Պոնտոս, Փոնիգիայ, Մաժաք եւ այլք, ոչ զիտելով զհամբաւ պատերազմին Արշակայ առ Մակեդոնացոց պետութիւնն զմիաբանութիւն դաշանցն հաստատուն պահէին: Վասն որոյ ոմն Սորփիլոյիկէայ միաբանեալ զասացեալ կողմանս զասոսիկ, եւ զրգոյ ի պատերազմ ընդ Վաղարշակայ: Բայց պատահեն միմեանց առ բարձրաւանդակի միոջ բլրով քարագագաթնիւ, որ այժմ ասի Կողոնիայ. եւ մօտեայք առ միմեանս ձիգ ասպարիսօք միջոցացն՝ ամրանան կողմանքն երկոքին բովանդակ աւուրս»<sup>20</sup>:

Պարզ երևում է, որ մակեդոնացիներին հաջողվել էր հպատակեցնել Փոքր Ասիան, որից հետո նրանք գրավել էին Փոքր Հայքը: Այստեղ էր գտնվում Կողոնիա/Կոլոնիան (այժմ՝ Կոյլի-հիսար)<sup>21</sup>: Այստեղ էլ տեղի ունեցած ճակատամարտում մակեդոնացի զորավարն սպանվում է, նրա գորքը՝ ջախջախվում, «Եւ յայնմ հետէ դադարեալ խաղաղէր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ, եւ մակեդոնացոցն դադարէր գոռն»<sup>22</sup>: Հանձին Սորփիլոյիկէսի փորձ է արվել տեսնել մ.թ. 1-ին դարի 50-ական թվականներին Հայաստանն ասպատակած հռոմեացի զորավար Կորբուլոնին<sup>23</sup>: Ընդ որում, այս դեպքում որպէս հիմնավորում բերվում էր *Սորփիլոյիկէս* և *Կորբուլոն* անունների հեռավոր հնչյունական նմանության հանգամանքը: Սակայն, *Սորփիլոյիկէս* անունը լեզվաբանական որևէ օրինաչափությամբ հնարավոր չէ բխեցնել *Կորբուլոն* (լատին. Corbulō) անունից, որովհետև հնչյունական տեսակետից դյուրարտասանելի լատինական անունը չէր վերածվի ավելի երկար ու դժվարարտասանելի այդպիսի անվան:

Սորփիլոյիկէսի դեմ տարած հաղթանակից հետո Վաղարշակը «Եւ այսպէս կատարեալ՝ կարգէ զկողմանս Մաժաքայ եւ զՊոնտացիս եւ զԵգերացիս»<sup>24</sup>: Վաղարշակի կողմից մակեդոնացիներից ազատագրված և կարգավորված երկրները հենց նրանք էին, որոնք հետագայում կազմում էին Պոնտական և Կապադովկիայի թագավորությունները: Թե՛ սրանց հպատակեցման մասին, թե՛ դրան

գային ութերորդ զիտական նստաշրջանի նյութեր (Գյումրի 22-24 հոկտեմբերի, 2010), Եր., 2010, էջ 71-78:

<sup>19</sup> Strabo, XI, 14, 9 (Ստրաբոն, էջ 61):

<sup>20</sup> Խորենացի, Բ, 7:

<sup>21</sup> Адоиц Н. նշվ. աշխ., էջ 60, 62, 89, 146:

<sup>22</sup> Խորենացի, Բ, 6:

<sup>23</sup> Адоиц Н., նշվ. աշխ., էջ 432:

<sup>24</sup> Խորենացի, Բ, 9:

նախորդած և մակեդոնացիների դեմ Վաղարշակի տարած հաղթանակների մասին մեր պատմահայրը խոսում է նախքան Վաղարշակի թագադրումը նկարագրելը<sup>25</sup>: Պարզ է, որ դրանք վերաբերում են Օրոնտես-Երվանդի գործունեության այն ժամանակաշրջանին, երբ մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտից հետո նա Հայաստանի ինքնիշխան կառավարիչ էր, բայց դեռևս թագավոր չէր օծվել:

Ըստ Անանունի, իր եղբայր Արշակից Հայոց թագավոր կարգված Վաղարշակը գահակալել է 42 տարի՝ «գոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհիս՝ ամս ԽԲ»<sup>26</sup>: Ըստ Մ.Խորենացու՝ արքայատոհմի հիմնադիր Վաղարշակը թագավորել է ոչ թե 42, այլ 22 տարի<sup>27</sup>: Ուրեմն, 42 տարիներից միայն 22-ում է Վաղարշակ-Երվանդը եղել ինքնիշխան սատրապ, ապա՝ թագավոր, իսկ նախորդ 20 տարիների ընթացքում նա եղել է Հայաստանի աքեմենյան սատրապը: Այս դեպքում պետք է ընդունել, որ նրա կարգավիճակի փոփոխությունը տեղի է ունեցել մ.թ.ա. 331թ., երբ Գավգամելայի ճակատամարտից հետո Աքեմենյան աշխարհակալությունը կործանվեց: Ըստ այդմ, դրանից 20 տարի առաջ և 22 տարի հետո իշխած Վաղարշակ-Երվանդի գահատարիները կլինեն՝ սկիզբը մ.թ.ա. 351թ. (331+20), իսկ ավարտը՝ մ.թ.ա. 309թ. (331-22), այսինքն Գ.Տիրացյանի նշած «մ.թ.ա. 4-րդ դարի երկրորդ կեսը»<sup>28</sup>:

Վաղարշակի իրականացրած պետական նշանակության բարեփոխումներից քչերը միայն կարելի է վերագրել Հայոց հետագա թագավորներին, որոնց թվում նաև՝ փառաբանված Արտաշես 1-ինին (մ.թ.ա. 189-160թթ.): Մովսես Խորենացին տարբեր բնութագրումներ է տալիս Վաղարշակի և Արտաշեսի (Արտաշես 1-ինի) դարաշրջաններին՝ առաջինին բնորոշ համարելով մեծամեծ արվեստներից ու գիտություններից զուրկ մնալը, իսկ երկրորդին՝ որ այս բոլորը սահմանվեցին Արտաշեսի ժամանակ: Վաղարշակը, որի նախատիպը այստեղ ևս Օրոնտես-Երվանդն է, դրանում որևէ մեղք չուներ, որովհետև զբաղված էր երկիրը մակեդոնական նվաճողներից պաշտպանելու, նրա պաշտպանունակությունն ամրապնդելու և նորանկախ երկրի պետական շինարարության հարցերով: Ընդ որում, պատմահայրը չի մոռանում նաև դրվաստանքի խոսքեր ուղղել Վաղարշակի հասցեին. «Ջի

<sup>25</sup> *Խորենացի*, Բ, գ:

<sup>26</sup> *Սերենոսի եպիսկոպոսի պատմություն, Բարդաստութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի և ծանոթութեամբք ի ձեռն Ստ.Մալխասեանց, Եր., 1939, գլ. Բ, էջ 10-11:*

<sup>27</sup> *Խորենացի*, Բ, ը:

<sup>28</sup> *ՀԺՊ, հ. 1, էջ 511: Յուստինոսի հաղորդումը Դարեհ 3-րդ Կողոմանոսի (մ.թ.ա. 336-330թթ.)՝ նախապես Հայաստանի սատրապը լինելու մասին (Юстин, Сочинения Помпея Трога "Historiae Pilippicae", ВДИ, 1954, N 2-4; Justin, X, 3, 3-5)՝ ժամանակի իրադարձություններին ավելի մոտ կանգնած պատմիչների կողմից չի հաստատվում: Ընդհանրապես, նրա աշխատությունը լի է չափազանցություններով և սխալներով (К.Зельин, Помпей Трог и его произведение "Historiae Pilippicae", ВДИ, 1954, N2): Դիոդորոսը Դարեհ 3-րդի մասին բավականին մանրամասն տեղեկություններ է հաղորդում (Diod., XVII, 5, 5-6, Դիոդորոս Սիկիլիացի, թարգմ. Բնագրից, առաջաբան և ծան. Ս.Գրկյաշարյանի, Եր., 1985): Ըստ նրա կարոսիների (կատիչների) դեմ մղած մարտում ցուցաբերած քաջության համար Դարեհ Կողոմանոսը Արտաքսերքսես 3-րդից մեծ պարգևների է արժանացել (XVII, 6, 1-2): Այսուհանդերձ, Դիոդորոսին, ի տարբերություն Յուստինոսի, ոչինչ հայտնի չէ այդ քաջության դիմաց Դարեհին Հայաստանի սատրապությունը պարգևելու մասին:*

թեպետ եւ այլն ամենայն, գոր յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն, կարգք եւ սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան ի Վաղարշակայ եւ յայլոց առաջնոց թագաւորացն...»<sup>29</sup>:

Այսպիսով, Վաղարշակ թագավորի ավանդական-հավաքական կերպարի մեջ պետք է տեսնել ոչ միայն պատմական Արտաշես 1-ինին, Տրդատ 1-ինին և Հայոց այլ գահակալներին, այլև Հայաստանի նախկին աքեմենյան սատրապ Օրոնտես-Երվանդին բնորոշ գծեր: Վաղարշակի հավաքական կերպարի պատմական առաջին նախատիպի դերին հավակնող Հայոց թագավորներից միայն նա է ավանդական Վաղարշակի նման եղել մակեդոնական նվաճողների ժամանակակիցը և նրանց դեմ պայքարած Հայոց գահակալը: Միայն նա՝ Գավգամելայի մ.թ.ա. 331թ. ճակատամարտի մասնակից Օրոնտես-Երվանդն է, որ ավանդական Վաղարշակի նման եղել է Հայոց անկախ թագավորության վերականգնողը:

## ОРОНТ/ЕРВАНД - ВОССТАНОВИТЕЛЬ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ

*Резюме*

*Л.Петросян*

В собирательном образе царя Валаршака, который известен из армянской традиционной историографии, наличествуют и характерные черты бывшего сатрапа Армении Оронт-Ерванда. Подобно Валаршаку именно он был восстановителем независимой Армении и современником македонских завоевателей. Те административные реформы, которые осуществлял Валаршак на севере соответствуют периоду правления Оронт-Ерванда, поскольку там еще не существовало грузинское царство Иберия. Во время правления его преемников /начиная с 270 годов до н.э./ на этой территории уже существовало это царство. Современником и соратником Оронт-Ерванда являлся Михрваишт/Митрауст, который, по мнению Л. Шагиняна, в свою очередь, мог бы служить прототипом для формирования образа Вахе, который, по Мовсесу Хоренаци, сражался и погиб в бою против Александра Македонского. Поэтому Михрваишт не мог стать восстановителем царства Малой Армении. Восточные регионы Малой Армении были объединены с Великой Арменией - под властью Оронт-Ерванда.

### Տեղեկություններ հեղինակի մասին

*Պետրոսյան Լուսինե Մարգարի* – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գյումրու Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության և իրավագիտության ամբիոն, E-mail: [Vahe1996@mail.ru](mailto:Vahe1996@mail.ru)

<sup>29</sup> *Մարգարյան Գ.*, նշվ. աշխ., էջ 229-230:

*Руслан КАНДОР*

**ЧЕРКЕСО-ГАИ (ЧЕРКЕССКИЕ АРМЯНЕ) В СИСТЕМЕ  
ОБЩЕСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ ЧЕРКЕСИИ  
(первая половина XIX в.) \***

Северо-Западный Кавказ – регион расселения западной группы черкесского этноса, отличается значительным разнообразием природно-географических условий, где на протяжении тысячелетий происходило формирование не только черкесских субэтносов, но и многих других народов. Культурная преемственность и непрерывность этнических процессов предопределили образование на территории Закубанья и Причерноморья этнического массива, который развивался в рамках единого происхождения, общего самосознания, психического склада и социально-экономических факторов развития. Этнические процессы в Западной Черкесии с изменением исторических условий постоянно трансформировались, являясь во многом уникальным явлением. Своеобразный баланс межэтнических отношений в сфере экономических и общественных отношений в XIX в. виден на примере черкесо-гаев (черкесских армян, «гай»–самоназвание армян), проживавших на территории Западной Черкесии.

С XI в. армяне, как этническая группа, обитавшая на Северо-Западном Кавказе среди проточеркесского этномассива, упоминается во многих источниках. В.В. Гудаков, представляя в своей работе картину межэтнических отношений на Северо-Западном Кавказе, затрагивает и некоторые аспекты интересующей нас проблемы<sup>1</sup>. Так, автор, сопоставляя различные доступные источники и используя, в частности, исследования французских учёных Ж. Дюмезеля<sup>2</sup> и Г. Шарашидзе<sup>3</sup>, констатирует, что в XI в. армяне были достаточно очеркешены (или, скорее, «окасожены») и составляли значительную мобилизуемую военную силу<sup>4</sup>. Они были уже к этому моменту интегрированы в систему общественных отношений народов Северо-Западного Кавказа, представляя собой вполне организованную структуру и в разных источниках их называли и армянами-касогами, и натухаевскими армянами.

Впрочем, надо сказать, что и в устных преданиях черкесов мы можем встретить сюжеты, в которых говорится об их контактах с армянами в прошлом. В качестве особенного примера можно взять одну из версий возникновения этнонима «бжедуг». Основные действия в ней разворачиваются в Армении, когда Крымский хан пытается захватить крепость Кызборен<sup>5</sup>. Возможно, что Кызбо-

---

\* Статья в качестве доклада была представлена на международной научной конференции «Историко-культурное наследие и современность», состоявшейся 4-6 октября 2013 г. в Гюмри.

<sup>1</sup> Гудаков В. Северо-Западный Кавказ в системе межэтнических отношений с древнейших времен до 60-х годов XIX века. СПб.: Изд-во С.-Петербургского ун-та, 2007. 565 С.

<sup>2</sup> Dumézil G. Contes et Légendes des Oubykhs. Paris. Institut d'Ethnologie. 1957.

<sup>3</sup> Charachidzé G. Une légende arménienne en oubykh. Revue des études georgiennes et Caucasiennes. № 5. 1989. P.34-48.

<sup>4</sup> Гудаков В. Указ. соч. С.151.

<sup>5</sup> Рукописный фонд библиотеки Адыгейского республиканского института гуманитарных исследований (далее – РФБ АРИГИ). Ф.1. П.49. Д.4. «qəzboren qətxanem zerihtagəzer» [«Как Крымский хан завоевал Кызборен»]. 1935 г.

рен-это искаженное название легендарной крепости Эрзерум, тем более, что Кыз-борен в этом предании назван армянским городом-крепостью, и в которой жили армяне. Ряд терминов в этом тексте мог быть искажён или подменён рассказчиками на понятные и известные их слушателям, но нет причин сомневаться в том, что события, описанные там, происходили в действительности. Это доказывается и тем, что черкесские фамилии считались подлинно дворянскими («орк»), если они упоминались в конце этого предания.

Крымский хан взял в этот поход по дружине от каждого из черкесских субэтносов, обитавших вдоль горной полосы Кубани. В составе этого войска был и небольшой отряд предков «бжедугов», которых в предании называют «адыгэ» (самоназвание черкесов – Р.К.). Между тем в ходе длительной осады крепости этот малочисленный отряд становится всё более и более похожим на окружавших их аборигенов оккупированной страны. Это послужило поводом для обидных упреков со стороны остальных черкесов, в том, что они уже не «адыгэ», а те кто «с чужими сливается и с кем слился живет»<sup>6</sup>. В ответ на это, оскорблённые предки бжедугов потребовали от Крымского хана выполнения одного из трех ультимативных требований: либо собрать их всех и отпустить домой, либо убить их всех или же дать им один день для битвы. Хан предоставил им один день для штурма крепости, отойдя с войском от крепости на расстоянии трех стоянок. И когда крепостная стража открыла ворота крепости, уверенная в том, что враг удалился, конный отряд бжедугов, по условному сигналу наблюдателя, ворвался через открытые ворота в крепость и захватил её. В конце предания говорится о том, что, возвращаясь домой, черкесы-бжедуги «из этого города много женщин чистой крови и мужчин взяли с собой»<sup>7</sup>. Таким образом, значительное количество армян благородного происхождения пришло вместе с черкесами на Северо-Западный Кавказ, и если происходил процесс смешения, то были и межэтнические браки, и формировались определённые политические союзные отношения между этими народами.

Одним из главных занятий черкесо-гаев была торговля, а соответственно контроль над внешней торговлей и внешними сношениями черкесских владений являлся устойчивым каналом усиления власти князей Черкесии. В этом смысле большое значение имело обеспечение транзитной торговли по Большой черкесской дороге, связывающей Анапу с Кабардой, важная роль в которой принадлежала черкесо-гайям и черкес-урумам. Черкесские князья и старшие дворяне охотно отдавали своих детей на воспитание черкесо-гайям. Так, по словам Р.К. Аракелова известный темиргоевский князь Джамбулат Болотоков был воспитанником семьи черкесо-гаев Джагуновых из Гяур-хабля, семья же Аракеловых была таким же образом связана с натухаевскими князьями Заноко, а черкесо-гаи Айвазовы воспитывали детей шапсугских дворян Абатовых<sup>8</sup>.

В первой четверти XIXв. темиргоевский большой князь («пшишху») Мишеост Болотоков (Айтечко) несмотря на обширность своего владения, на близость к границе Кавказской линии и частые взаимоотношения с Российским правительством, всю торговлю производил через черкесо-гаев находившихся под его

<sup>6</sup> РФБ АРИГИ. Ф.1. П.49. Д.4. Л.1.

<sup>7</sup> РФБ АРИГИ. Ф.1. П.49. Д.4. Л.2.

<sup>8</sup> РФБ АРИГИ. Ф.1. П.36. Д.46. «Ермэлхьабл» (рассказал Аракелов Рафаэль Каспарович). 1957г. Л.1-2.

покровительством. В августе 1819 года генерал Ермолов писал: «Армяне-же, напротив, как умный и предприимчивый народ, приучивши горцев с давних времен все произведения земли сбывать посредством их, не оставили и ныне употребить всех средств к удержанию за собой сей единственной их, можно сказать, промышленности. Успех их в том подвержен никакому сомнению, ибо нет почти ни одного в горах селения, в котором не находились бы несколько Армянских семей, занимающихся торговлею и чтобы владельцы тех мест не участвовали во всех с ними оборотах»<sup>9</sup>.

В начале XIX в. черкесо-гаи обитают в Абадзехском, Натухаевском и Шапсугском владениях, а также в Бжедугском, Махошевском и Темиргоевском княжествах Западной Черкесии. Кроме крепости Анапа, где была большая диаспора черкесо-гаев, в Темиргоевском княжестве был широко известен черкесогайский аул Гяур-хабль (Джаур-хабль) на р. Белой («Шахагуаше») и несколько черкесогайских аулов на левом берегу р. Лабы, а в Бжедугском княжестве находился черкесо-урумский (греческий) поселок при ауле Едесукай, где также проживали и черкесо-гаи. Небольшие поселки и отдельные семьи черкесо-гаев были разбросаны по всей территории Черкесии.

В 1813 г. на равнинном пространстве левобережья Лабы, рядом с аулами владетельного князя Мишеоста Болотокова (Айтечко) компактно располагались три армянских аула<sup>10</sup>. Один из них еще фиксируется российскими топографами в 1839 г. на левом берегу Лабы. В этом армянском селении было 47 сакель и проживало 325 душ обоюбого пола, а владельцем его был Карабет Татлюстен<sup>11</sup>.

После заключения Адрианопольского мирного договора в 1829 г. власть черкесских князей постепенно слабеет. Разрушение вассально-иерархической структуры господствующего сословия превращает покровительство князей, в том числе и над другими этническими группами в чисто символический акт, лишенный былого политического содержания. Некоторые черкесские князья, понимая необратимость упадка своей власти и авторитета, не хотели мириться с этим и выходили из подчинения российской военной администрации, переходя со своими подвластными к «немирным» черкесам.

В 1839 г. черкесо-гаевский аул Гяур-хабль переселяется на левый берег р. Кубань под прикрытием российских войск. Одновременно создаваемая российская Лабинская линия значительно ограничивает хозяйственное использование «мирными» черкесами земель по правобережью Лабы. Действительно, к декабрю 1840 г., от некогда обширного Темиргоевского княжества вновь построенная Лабинская линия отделяет ориентированных на Россию черкесов, черкесо-гаев и черкесо-урумов, расселенных по левому берегу р. Кубани, и, соответственно, выводит их из-под управления нового старшего князя Шеретлука Болотокова.

На р. Кубань вырастает Армянский аул (Ермэлыхабль, как его называют черкесы) позднее названный Армавиром, где к переселенцам из Гяур-хабля присоединяются и черкесо-гаи, выходцы из других черкесских владений. Вместе с Гяур-хаблем образуются в Армавирском ауле еще кварталы-хабли Еджеру-

<sup>9</sup> Акты, собранные Кавказской археографической комиссией (далее – АКАК). Тифлис, 1875. Т.6. С.451.

<sup>10</sup> Российский государственный военно-исторический архив (далее – РГВИА). Ф.846. Оп.16. Д.6723. Л.1.

<sup>11</sup> Государственный архив Краснодарского края (далее – ГАКК). Ф.347. Оп.1. Д.3. Л.52.



кай, Хатикуай, Хакучухабль, по названию черкесских субэтносов: темиргоевцев, егерухаевцев, хатукаевцев и хакучей, откуда пришли переселенцы. Причем, интересно, что в Армавире у старшины селения имелось четыре заместителя, по одному от каждого традиционного квартала-хабля<sup>12</sup>. В социальном отношении черкесо-гаи были равноправны между собой, их фамилии имели родовые черкесские тамги и по праву приравнивались к черкесскому дворянскому сословию, кроме того они владели крепостными крестьянами-черкесами.

С начала 50-х гг. XIX в. всё чаще из Абадзехского и Шапсугского владений Черкесии выходят под покровительство Российской империи отдельные семьи черкесо-гаев и черкес-урумов. От них российское командование получало сведения, в том числе, и о местах компактного проживания черкесских армян и греков. Например, о греческих аулах (в которых жили и армяне) в 7 верстах от Мехкеме Абадзехского владения Черкесии на р. Псекупс или о том, что более 1000 армян и греков проживали по всей Абадзехии<sup>13</sup>. А в 1860 г. отряд генерал-майора Бабича вывел из-за Кубани 23 семейства черкесо-гаев в числе 188 душ обоого пола, которые затем были поселены в Армавирском ауле<sup>14</sup>. Как видим, заметное количество семей черкесо-гаев ещё оставались среди населения горной Черкесии в конце Кавказской войны и возможно многие из них разделили трагическую судьбу своих собратьев черкесов.

Уже после окончания Кавказской войны в 1870 г. на р.Белой («Шахагуаше») был основан Бжедугхабль, в котором поселились черкесы, черкесо-гаи и черкес-урумы из Бжедугии. Инициатором этого переселения был черкесо-гай Бороко Асланов, долгое время находившийся на русской службе. Вместе с Аслановыми, Девтеровыми, Хачатуровыми, Ханжиевыми и Черачевыми из аула Едесукая I переселись более ста семей черкесов из Бжедугии. А в декабре 1870 г. жители только что поселившегося аула Бжедугхабль обращаются к российскому командованию с просьбой о разрешении принять к себе на жительство ещё 23 семьи греков из Урупского округа Кубанской области<sup>15</sup>.

Черкесо-гаи всегда остаются неразделимой частью черкесского сообщества, принимая живое участие в общественной жизни черкесов при любых меняющихся политических режимах, и сохранение этих добрых традиций взаимоотношений и осознания общности нашей исторической памяти очень важно для выживания и черкесского этноса.

<sup>12</sup> Аракелов Р. *Очерки топонимики Армавира и его окрестностей*. Армавир, 2004. С.26.

<sup>13</sup> ГАКК. Ф.261. Оп.1. Д.1432. Л.7об.-8.

<sup>14</sup> РГВИА. Ф.14257. Оп.3. Д.586. Л.1; 11.

<sup>15</sup> ГАКК. Ф.774. Оп.1. Д.542. Л.27; Л.43; Л.60.

ՉԵՐՔԵԶՈ - ԳԱՅԵՐԸ (ՉԵՐՔԵԶՅԱՆ ՀԱՅԵՐ) ՉԵՐՔԵԶԻԱՅԻ  
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
 (1800-1870 թթ.)

\_\_\_ Ամփոփում \_\_\_

\_\_\_ Ռ. Կանդոր \_\_\_

1839թ. չերքեզահայերի Գյաուր-խաբլ աուլը ռուսական զորքերի հովանու ներքո վերաբնակեցվում է Կուբան գետի ձախ ափին, որտեղ ստեղծվում է նոր հայկական աուլ (ըստ չերքեզների՝ Էրմել-խաբլ), որը հետագայում կոչվում է Արմավիր: Այստեղ Գյաուր-խաբլայի վերաբնակներին միանում են նաև չերքեզահայերը՝ չերքեզական այլ տիրույթներից եկած:

Արդեն 1870թ. Կովկասյան պատերազմի ավարտից հետո Բելի գետի ափին հիմնվեց Բժեղուգ-խաբլը, որտեղ բնակություն հաստատեցին չերքեզները, չերքեզահայերը և չերքեզ-ուռումները Բժեղուգից և Արմավիրից: Չերքեզահայերը մշտապես համարվել են չերքեզական հասարակության անբաժանելի մասը, և այդ բարի ավանդույթի պահպանությունը շատ կարևոր նշանակություն ունի նաև չերքեզական էթնոսի գոյատևման համար:

Сведения об авторе

*Кандор Руслан Султанович – к. ист. н., старший научный сотрудник*

*Адыгейского республиканского института гуманитарных исследований РАН,*

*E-mail: kandor.ruslan@mail.ru*

## Արդեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՅԻՆԵՐԸ 1877-1878 թթ. ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Ղրիմի պատերազմում կրած անհաջողությունից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը դարձավ միջազգային ասպարեզում խաթարված իր հեղինակության վերականգնումը: Ուրեմն և պատահական չէ, որ արդեն երկու տասնամյակ անց նա պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը: Ռազմական գործողությունները ծավալվեցին Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում:

Կովկասյան ճակատում ռուսների խնդիրն էր հնարավորինս թափով մխրճվել Արևմտյան Հայաստանի խորքերը: Ռազմաճակատի կենտրոնում՝ Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ տեղակայված էին գեներալ-համհարզ Մ. Լոռիս-Մելիքովի հիմնական ուժերը: Չախ թևում՝ Իզդիր-Բայազետ ուղղությամբ, գործում էր Երևանյան ջոկատը՝ գեներալ Ա. Տեր-Ղուկասովի գլխավորությամբ, իսկ աջում՝ Ախալցխա-Արդահան ուղղությամբ, Ախալցխայան ջոկատը գեներալ Դևելի գլխավորությամբ<sup>1</sup>:

Արդեն առաջին իսկ բախումների արդյունքում ապրիլի 18-ին Երևանյան ջոկատը գրավեց Բայազետը, ապա Դիադինը, Ալաշկերտը, իսկ հունիսի 9-ին պարտության մատնեց թուրքերին Դեպի բարձունքներում<sup>2</sup>: Այս ընթացքում գեներալ Դևելի Ախալցխայան ջոկատը մայիսի 5-ին գրավեց Արդահանը: Կենտրոնում՝ նախնական անհաջողություններից հետո, հոկտեմբերի 15-ին ռուսական զորքերը գեներալ Շերեմետևի գլխավորությամբ հաղթեցին թուրքերին Արջո-Առիճ (Ալաջա) լեռան ստորոտում, նոյեմբերի 6-ի լուսադեմին գեներալ Լազարևի գլխավորությամբ գրավեցին Կարսը, իսկ 1878թ. փետրվարի 8-ին՝ Էրզրումը<sup>3</sup>: Ռուսական զորքերի այս և Բալկանյան ճակատում տարած հաղթանակներն ստիպեցին սուլթանին 1878թ. հունվարի վերջին հաշտություն խնդրել:

Ռուս-թուրքական այս պատերազմը երկու պետությունների միջև XIX դ. ընթացքում թվով չորրորդն էր: Չորս անգամ Ռուսաստանը պատերազմել էր Թուրքիայի դեմ, չորս անգամ վերջինիս Ասիական հատվածը վերածել ռազմական գործողությունների թատերաբեմի, սակայն չորս անգամ էլ ճակատը համարվել էր երկրորդական՝ ուշադրություն շեղելու համար:

Պատմագիտական գրականության մեջ թյուր կարծիք է ձևավորվել, թե Կովկասյան ճակատում կատարված իրադարձությունները պատերազմների ելքի

<sup>1</sup> 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած ռազմական գործողությունների մասին մանրամասն տե՛ս *Русско-турецкая война 1877-1878гг. на Кавказе и в Малой Азии, составил генерал-майор Б.Коллюбакин, ч.1, СПб., 1906; Война в Турецкой Армении 1877-1878гг., соч. Генерального Штаба генерал-майора С.О. Кушмишева, СПб., 1884.*

<sup>2</sup> *Герои и деятели русско-турецкой войны 1877-1878гг., СПб., 1878, стр. 100-102.*

<sup>3</sup> *Маслов А., Год войны в Малой Азии, 1877-1878, СПб., 1879, стр. 24-33, 57-69.*

վրա էական ազդեցություն չէին ունենում, հետևաբար դրանց լուսաբանումն ուսուցողական բնույթ չէր կրում: Կարելի է մտածել, թե այս ռազմաճակատում մարտընչողը ռուսական բանակը չէր, կամ թե՛ Կովկասում կռվելն ուրախ զբոսանքի նման մի բան էր:

Մինչդեռ իրականությունն այլ է: Արդեն Արևելյան պատերազմի տարիներին (1853-1856 թթ.) գիտակցելով, որ եվրոպական տարածքների կորուստն ընդամենը ժամանակի հարց է, Թուրքիան հնարավոր բոլոր միջոցներով փորձեց բարձրացնել իր ասիական տիրույթների պաշտպանունակությունը: Այսինքն, եթե Բալկանյան ճակատում կռվելը թուրքերի համար ավելի շատ պատվի հարց էր, ապա Կովկասում՝ գոյության խնդիր: Ավելին, յուրաքանչյուր նոր ընդհարում Կովկասում սպառնում էր վերածվել մահմեդական աշխարհի հետ կրոնական պատերազմի (Չեչնիա, Դադստան): Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ Կովկասյան ճակատը երկու պետությունների համար էլ ուներ առաջնային նշանակություն: Վերջապես, թերագնահատելով այս ռազմաճակատի նշանակությունը, ռուսական պատմագրությունը առաջին հերթին նսեմացնում է Կովկասյան կորպուսի, ապա նաև Անդրկովկասի ժողովուրդների և մասնավորապես՝ հայ ժողովրդի ունեցած մեծ ներդրումը ռուսական բանակների տարած հաղթանակների գործում:

Ինչպես նախորդ պատերազմում, այս անգամ ևս Ալեքսանդրապոլի գավառն իր ուսերին վերցրեց ռազմական հոգսերի մի զգալի մասը: Ալեքսանդրապոլցիները գործուն աջակցություն ցուցաբերեցին ռուսական զորքերին՝ զինվորագրվելով ու պարեն մատակարարելով, հետախուզական աշխատանքներ իրականացնելով ու հանգանակություններ կատարելով:

Ռուս-թուրքական հարաբերություններում ի հայտ եկած լարվածության առաջին նշաններն այստեղ երևացին 1872թ., երբ թուրքական կողմը փակեց սահմանը՝ արգելելով ալեքսանդրապոլցի վաճառականներին Կարսից հացահատիկ ներկրել: 1873թ. սեպտեմբերին ռուսական Գլխավոր շտաբի կողմից Ալեքսանդրապոլում անցկացված լայնածավալ գորավարժություններն ստիպեցին թուրքերին կարճ ժամանակով սահմանը վերաբացել, սակայն 1874թ. մայիսի 29-ին այն վերջնականորեն փակվեց<sup>4</sup>:

1876թ. կեսերից սկսած ռուսական իշխանություններն սկսեցին նախապատրաստվել պատերազմի: Նախ ավարտին հասցվեցին Ալեքսանդրապոլի բերդի ամրացման աշխատանքները, ապա կրկնապատկվեց կայազորը<sup>5</sup>: 1876թ. դեկտեմբերի դրությամբ այստեղ տեղակայվեցին Կովկասյան հրետանային շարժապահեստը (պարկը), 39-րդ դիվիզիան, 42-րդ դիվիզիոնական թռչող հրետանային շարժապահեստը, Կովկասյան բանակի առաջնային հրետանային պաշարը<sup>6</sup>, Նո-

<sup>4</sup> *Մերո Հայաստանի*, 1874, N 24, 22 հունիսի, էջ 3:

<sup>5</sup> *Отчет о военно-инженерной деятельности в Восточную войну 1877 года, в районе действия и расположения Кавказской армии, вып. 2, Тифлис, 1878, стр. 66.*

<sup>6</sup> *Материалы для описания русско-турецкой войны 1877-1878гг. на Кавказско-Малоазиатском театре, с планами, составлен в Военно-историческом отделе Штаба Кавказского военного округа под редакцией генерал-лейтенанта Чернявского, т. 1, СПб., 1904, стр. 32-34.*

րին Կայսերական մեծության Երևանյան լեյբ-գվարդիական 13-րդ գունդը<sup>7</sup> և այլ զորամիավորումներ: Այդուհանդերձ, մինչև տարեվերջ իշխանություններին հաջողվեց Քուրայիսից Երևան սահմանի երկայնքով կենտրոնացնել միայն 30000 մարդ<sup>8</sup>: Սահմանի վրա մարդկային ուժի պակասը լրացնելու համար իշխանությունները, անցած պատերազմի օրինակով, ձեռնամուխ եղան տեղական բնակչությունից կամավորական ջոկատներ և միլիցիա ստեղծելու գործին: Համաձայն 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասին նյութերի ժողովածուի՝ «1876թ. նոյեմբերի 1-ից հետո՝ տասը ամիսների ընթացքում, կազմվեցին 200 հեծյալ և 85 հետևակային հարյուրյակներ՝ 39200 կամավորականներով»<sup>9</sup>: Հետագայում այս թիվը, անցնելով 42000-ն այնքան մեծ մասշտաբներ ընդունեց, որ իշխանությունները ստիպված եղան դադարեցնել կամավորականների հավաքագրումը<sup>10</sup>:

Առաջիկայում Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու լուրը հատկապես ուրախությամբ ընդունվեց Ալեքսանդրապոլում: Փոխարքային հասցեագրված իրենց դիմումի մեջ ալեքսանդրապոլցիները հայտնում էին, թե իրենք բոլորը եկել են այն երկրից, որտեղ դաժանորեն հալածվում է քրիստոնեությունը. «Մեր պապերն ու հայրերն իրենց մաշկի վրա են զգացել թուրքական լուծը, մինչդեռ մենք՝ նրանց որդիներն ու թոռները, հանգիստ ու ապահով ապրում ենք Ռուսական տիրապետության ներքո: Այժմ մենք բոլորս պատրաստ ենք միահամուռ ոտքի կանգնել ու փրկել մեր ազգակից եղբայրներին»<sup>11</sup>:

Երևանի նահանգի տարածքում կազմավորված կամավորական ջոկատների մեծ մասը հավաքագրվեց հենց Ալեքսանդրապոլի գավառում: Մինչև 1877թ. փետրվարի 1-ը ստեղծվեցին «Ալեքսանդրապոլյան» ու «Քրդական» հեծյալ «խռեզույյար» (ոչ կանոնավոր) զնդերը<sup>12</sup> և «Ալեքսանդրապոլյան հայկական հետևակային դրուժինան»<sup>13</sup>: Դրանցից առաջինը կազմված էր բացառապես հայերից: 1877թ. ապրիլի 12-ի դրությամբ գունդն ուներ 2 հեծյալ հարյուրյակ՝ 10 սպայով և 237 զինվորներով<sup>14</sup>: Մեկ ամիս անց հարյուրյակների թիվը հասավ 4-ի, իսկ կամավորականներինը՝ 400-ի<sup>15</sup>:

<sup>7</sup> Գ.Ուրի հիմնական մասը ծնունդ անցկացրեց քաղաքային բնակչության կողմից անվարձաձևատույց հատկացված բնակարաններում: Եվս երեք գումարտակներ տեղավորվեցին Իլյսիարի, Թափաղդակ, Դուզբյանդ և Փոքր Ղարաքիլիսա գյուղերում (Տե՛ս օրնացանքը боевой жизни в менушную войну 1877-1878 годов 13-го лейб-гренадерского Эриванского Его Императорского Величества полка, составил майор Д. Шабанов, Тифлис, 1881, стр. 166-167.)

<sup>8</sup> Պատերազմի նախօրեին Կովկասյան 70000 կորպուսից կանոնավոր զորքեր էին միայն 47000-ը (Տե՛ս Материалы для описания русско-турецкой войны 1877-1878гг. на Кавказско-Малоазиатском театре, ... стр. 40, 89.):

<sup>9</sup> Сборник материалов по русско-турецкой войне 1877-1878гг. на Кавказско-Малоазиатском театре, вып. I, СПб., 1903, стр. 2.

<sup>10</sup> Мегрелидзе Ш., Закавказье в русско-турецкой войне 1877-1878гг., Тбилиси, 1972, стр. 120; Նուրի, Грузия в русско-турецкой войне, Батуми, 1955, стр. 47.

<sup>11</sup> Тифлисский вестник, Тифлис, 1877, 4 января, N 1, стр. 2.

<sup>12</sup> Материалы для описания русско-турецкой войны 1877-1878гг., ... стр. 70.

<sup>13</sup> Русско-турецкая война 1877-1878гг., ... стр. 147.

<sup>14</sup> Материалы для описания русско-турецкой войны 1877-1878гг., ... стр. 174.

<sup>15</sup> Война в Турецкой Армении 1877-1878гг., ... стр. 460.

Գավառի տարածքում հավաքագրված երկրորդ հեծյալ զորաջոկատն ուներ երկու հարյուրյակ՝ կազմված բացառապես մահմեդականներից: Պայմանականորեն այն կոչվեց քրդական, թեև հավաքագրվել էր Շորագյալի և Փամբակի տեղամասերի քուրդ, թաթար, պարսիկ և եզդի ազգաբնակչությունից: Գունդը՝ «Ալեքսանդրապոլյան հայկական հետևակային դրուժինայի» հետ միասին, պատերազմի ամբողջ ընթացքում գործեց Երևանյան ջոկատի կազմում<sup>16</sup>: Ալեքսանդրապոլի գավառի սահմանամերձ գյուղերը քրդական հարձակումներից պաշտպանելու համար հուլիսի 2-ից 8-ն ընկած ժամանակահատվածում հետևակային հարյուրյակներ ստեղծվեցին Ջելաբկեչուտ (Ջրաձոր), Շիշթափա (Մեպասար), Ղազարապատ (Բսահակյան), Ղեղաչ և Բայանդուր գյուղերում<sup>17</sup>: Միլիցիայի ևս երկու հարյուրյակներ օգոստոսին կազմակերպվեցին Սոգուրթի (Սառնաղբյուր) ու Տավշանդշլաղ (Շիրակավան) գյուղերում<sup>18</sup>:

Ցավոք, ո՛չ պատերազմի ընթացքում գավառի տարածքում հավաքագրված կամավորական ջոկատների, և ո՛չ էլ դրանցում ընդգրկվածների ստույգ թիվը մեզ պարզել չհաջողվեց: Փաստ է միայն այն, որ երբ 1877թ. հոկտեմբերին «եղանակային վատ պայմաններին անպատրաստ» լինելու պատճառաբանությամբ ռազմաճակատում առկա բոլոր ոչ կանոնավոր զնդերն ու միլիցիայի ջոկատները կազմացրվեցին<sup>19</sup>, ամբողջ կազմով պահպանվեցին ու մինչև պատերազմի վերջին օրը կռվեցին միայն Ալեքսանդրապոլի գավառից հավաքագրվածները<sup>20</sup>:

Թուրքիային պատերազմ հայտարարելու մասին հեռագիրն Ալեքսանդրապոլ հասավ 1877թ. ապրիլի 11-ի կեսօրին: Հաջորդ առավոտյան ռուսական հիմնական ուժերը՝ երկու շարայուններով, անցան Ախուրյանը: Առաջին շարայունը, Ալեքսանդրապոլի գավառի Ջելաբկեչուտ և Շիշթափա գյուղերի մոտ հատելով սահմանը, բանակ դրեց Կարսի փաշայության Վարդանլի գյուղի մոտ: Երկրորդ շարայունը, այդ թվում նաև Ալեքսանդրապոլյան հեծյալ «խռեզույյար» գունդը, Ղազարապատ, Ղեղաչ, Տավշանդշլաղ և Բայանդուր գյուղերի մոտ անցնելով Ախուրյանը, բանակեց Կարսաչայի ափին՝ Փիրվալի գյուղի մոտ<sup>21</sup>: Ի դեպ, գետանցի ժամանակ տեղի ունեցավ չնախատեսված իրադարձություն: Ըստ գեներալ Քիշմիշնի՝ «հազարավոր ալեքսանդրապոլցիներ խմբվել էին Ախուրյանի ափին՝

<sup>16</sup> Русско-турецкая война 1877-1878гг.,..., стр. 147; Война в Турецкой Армении 1877-1878гг.,..., стр. 5.

<sup>17</sup> Сборник материалов по русско-турецкой войне 1877-1878гг.,..., стр. 17.

<sup>18</sup> Բաղայան Խ., Հայաստանը 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմում, Եր., 1959, էջ 75:

<sup>19</sup> Աշխարհագրորդ ցրելու համար կար մեկ պատճառ ևս: Իրենց լեռնային գյուղերը վերադարձած մահմեդականները, Հյուսիսային Կովկասով մեկ տարածելով թուրքերի կրած պարտության մասին լուրը, հետ կպահեին երկրամասը կենտրոնախույս ձգտումներից (Տե՛ս, Война в Турецкой Армении 1877-1878гг., стр. 389):

<sup>20</sup> 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ցուցաբերած քաջության համար Ալեքսանդրապոլի հեծյալ «խռեզույյար» զնդին Ալեքսանդր Գ կայսեր հատուկ կարգադրությամբ շնորհվել է դրոշակ: Այն Երևանի նահանգապետի կողմից զնդի կամավորներին է հանձնվել 1883թ. ապրիլի վերջին (Տե՛ս, Ներսիսյան Ա., Հայաստանի մասնակցությունը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Եր., 1958, էջ 122):

<sup>21</sup> Материалы для описания русско-турецкой войны 1877-1878гг.,..., стр. 94, 101.



բանակի գետանցումը դիտելու: Մահմանի մյուս կողմում նկատելով թուրքական փոքրիկ «Բաշ-Կորդոն» պահակակետը, նրանցից առավել համարձակները լողալով անցան գետն ու քանդեցին այն: Հաշված թուրքերի ընթացքում, գրում է ռուսական բանակի հայազգի գեներալը, -պահակակետի երկհարկանի շենքից կանգուն մնացին միայն պատերը, մինչդեռ այն կարելի էր օգտագործել նաև մեր կարիքների համար»<sup>22</sup>:

Ալեքսանդրապոլիցիներն իրենց մարտական մկրտությունն ստացան ապրիլի 17-ին: Մայր Ենիկոլոպովի գլխավորությամբ հեծյալ «խեզուլյար» գնդի երեք հարյուրյակները Խարաման Աղա, Տիկմա և Սոգյուբլի գյուղերի մոտ պարտության մատնեցին Կարսի կայազորի համար պարեն հայթայթող թուրքական ջոկատներին<sup>23</sup>: Հաջորդ բախումը տեղի ունեցավ մայիսի 4-ին Միցրա գյուղի մոտ: Գնդի երկու հարյուրյակ, շրջանցելով գյուղը, փորձեց թիկունքից հարձակվել Ղարադաղի ամրությունների վրա, սակայն հայտնվեց թուրքական հրետանու կրակի տակ, ապա ենթարկվելով 1000 հոգանոց հեծյալ զորաջոկատի հարձակմանը՝ երեք վիրավորներով նահանջեց դեպի Խալիֆ-օղլի: Օրվա երկրորդ կեսին դադստանյան 6 հարյուրյակների հետ հակահարձակման անցած ալեքսանդրապոլիցիները ստիպեցին թշնամուն նահանջել<sup>24</sup>: Երկու շաբաթ անց գնդի երրորդ և չորրորդ հարյուրյակները մասնակցեցին Բենգլի-Ահմեդի (1877թ. մայիսի 18) ճակատամարտին<sup>25</sup>, այնուհետև մինչև հունիսի 28-ը ապահովեցին Միցրա-Մելիքքոյ գծի անվտանգությունը<sup>26</sup>:

Այս ընթացքում ռազմաճակատի աջ թևում հեծյալ «խեզուլյար» գնդի երկրորդ հարյուրյակը՝ 126 մարդ, մայիսի 5-ին մասնակցեց Արդահանի գրոհին՝ ստալով 1 վիրավոր<sup>27</sup>, որից հետո իր ուժերով Ալեքսանդրապոլ տեղափոխեց գերեվարված ողջ հրետանին<sup>28</sup>:

Ալեքսանդրապոլիցիները հատկապես աչքի ընկան ռուսական զորքերի դեպի Կարս կատարած երկրորդ արշավանքի ժամանակ: Երբ սեպտեմբերի 20-ին գեներալ Լազարևի զորքերը Ղզըլթափայի մոտ գրոհեցին թուրքերի դիրքերը, «խեզուլյար» գնդի առաջին և երկրորդ հարյուրյակները մայր Սկոսարեսկու գլխավորությամբ ստիպեցին թուրքական 4 զումարտակների խուճապահար փախչել<sup>29</sup>:

Ալաջայի հայտնի ճակատամարտին (1877թ. հոկտեմբերի 15) մասնակցեց «խեզուլյար» գնդի 4 հարյուրյակ՝ 424 մարդ<sup>30</sup>: Գունդն ամբողջ կազմով՝ 4 հարյուր-

<sup>22</sup> Война в Турецкой Армении 1877-1878гг.,..., стр. 8, 122.

<sup>23</sup> Материалы для описания русско-турецкой войны 1877-1878гг.,..., стр. 114-116.

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 215-216:

<sup>25</sup> Война в Турецкой Армении 1877-1878гг.,..., стр. 124.

<sup>26</sup> Материалы для описания русско-турецкой войны 1877-1878гг.,..., стр. 252.

<sup>27</sup> Материалы для описания русско-турецкой войны 1877-1878гг.,..., приложение N13, стр. 233.

<sup>28</sup> Նույն տեղում, հավելված N 22, էջ 245:

<sup>29</sup> Война в Малой Азии в 1877 году, очерки очевидца Г.К.Градовскаго, СПб., 1878, стр. 11-12.

<sup>30</sup> Война в Турецкой Армении 1877-1878гг.,..., стр. 327.

յակ՝ 492 մարդ, գեներալ-մայոր Շերեմետևսկի հեծելազորի կազմում մասնակցեց նաև Կարսի գիշերային գրոհին<sup>31</sup>:

Ռուսական բանակի և միլիցիայի շարքերում կռվելուց զատ՝ հարյուրավոր ալեքսանդրապոլցիներ ծառայում էին իբրև ուղեկցողներ, սուրհանդակներ, բանագնացներ կամ հետախույզներ<sup>32</sup>: Այսպես, օրինակ՝ պատերազմի երրորդ օրը, Կարսում գտնվող ռուս դիվանագետներից լուրեր չստանալով, Մ. Լոռիս-Մելիքովը որպես բանագնաց այնտեղ է ուղարկում ալեքսանդրապոլցի Պետրոս Ձիթողյանի որդուն՝ Ավետիսին<sup>33</sup>: Վերջինս հաջողությամբ կատարում է հանձնարարությունը և վերադառնում կարևոր տեղեկություններով:

Պատերազմի առաջին օրվանից ռուսական զորքերին ցուցաբերած օգնությամբ աչքի է ընկնում նաև Ալեքսանդրապոլի հեծյալ «խոեզույար» գնդի շտաբ-կապիտան Դանիել Հարությունյանը: Նրան էր հանձնարարվել հետախուզության պատասխանատու գործը: Հրամանատարությունն այնքան է վստահել նրա միջոցով ստացված տեղեկություններին, որ զեկուցագիր կազմելիս վերջում միշտ շեշտել է. «...տեղեկությունները վստահելի են, որովհետև ստացվել են Հարությունյանի միջոցով»<sup>34</sup>: Փոխարքային ուղարկված մի զեկուցագրում Մ. Լոռիս-Մելիքովը Հարությունյանի մասին գրել է. «Դեռևս ապրիլի 17-ին հետևակի և հեծելազորի միջև կապ պաշտպանելու և թշնամուն հսկելու համար Խալիլ-օղլի գյուղից ուղարկվել է շտաբ-կապիտան Հարությունյանը, որից ես և գեներալ-մայոր իշխան Ճավճավաձեն ստանում ենք Կարսից դուրս եկել հակառակորդի տեղադրման և շարժումների մասին տեղեկություններ»<sup>35</sup>: Ի դեպ, շնորհիվ Հարությունյանի ռուսական զորքերն առանց դիմադրության հանդիպելու 1877թ. ապրիլի 24-ին գրավեցին Կաղվաճը: Քաղաքի հայ ազգաբնակչության շրջանում նրա ծավալած գործունեության արդյունքում կաղվաճիցիները ոչ միայն «աղ ու հացով» դիմավորեցին ռուսներին, այլև նրանց հանձնեցին քաղաքի զենքի և վառոդի պահեստները<sup>36</sup>: Հարությունյանի խմբի հետախույզներից 1877թ. մայիս-հունիս ամիսներին Բենգլի-Ահմեդում ծավալած իր գործունեությամբ հայտնի էր նաև ալեքսանդրապոլցի հայ քահանա Հարությունը<sup>37</sup>:

Պատերազմի ընթացքում ալեքսանդրապոլցիները ռուսական զորքերին օգնեցին նաև շինարարական աշխատանքներով ու տնտեսական միջոցներով: Օրինակ, երբ Ախուրյանն անցնելու համար Ալեքսանդրապոլի մոտ կամուրջ կառուցելու անհրաժեշտություն առաջացավ, ռուս սակրավորների հետ միասին այն

<sup>31</sup> Война в Турецкой Армении 1877-1878гг.,..., стр. 460:

<sup>32</sup> Մանրամասն տե՛ս, Կրբեկյան В. Г., Участие армян в русско-турецкой войне 1877-1878гг., Ер., 2004, стр. 26.

<sup>33</sup> Ի դեպ՝ վերջինիս Ալեքսանդրապոլի բնակարանը պատերազմի ողջ ընթացքում ռուսական զորքերի համար ծառայեց որպես ժամանակավոր հոսպիտալ (Տե՛ս, Кавказский путево́й дневник кн. В. Меуерского, СПб., 1878, стр. 167.)

<sup>34</sup> Война в Турецкой Армении 1877-1878гг.,..., стр. 122.

<sup>35</sup> Ներսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 53:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>37</sup> Կրբեկյան В., նշվ. աշխ., էջ 37:

կառուցեցին և փորձարկեցին տեղացի ատաղձագործները<sup>38</sup>: Երկրորդ կամուրջը՝ Բայանդուր գյուղի մոտ, կառուցվեց Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի պատգամավոր և առաջին կարգի վաճառական Աբրահամ Ունջյանի հովանավորությամբ<sup>39</sup>:

1876-1877թթ. ձմռան ընթացքում չորահացի պատրաստման համար, բացի քաղաքի 31 փոռից, բնակչության ամենագործուն մասնակցությամբ կառուցվեցին 32 մշտական և 50 դաշտային վառարաններ (Մինչև պատերազմի ավարտը Ալեքսանդրապոլի ռազմական ճամբարում գործում էին ժամանակավոր 83 խոհանոց, 7 փուռ և 89 վառարան)<sup>40</sup>: Սրանց անխափան աշխատանքն ապահովելու համար 1877թ. հունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում գավառի ազգաբնակչությունը միայն Ալեքսանդրապոլի բերդում պահեստավորեց 1000 սաժեն վառելիքայտ: Եւս 59 սաժեն վառելիքայտ և 132 խոր. մետր անտառանյութ ուղարկվեց ռազմաճակատ<sup>41</sup>: Ռազմաճակատ ուղարկվեցին նաև 500 սոմար ցորեն, 9000 սոմար գարի<sup>42</sup>, ինչպես նաև 2500 արծաթ ռուբլի արժողությամբ չորս ձիաբեռնասայլ (ֆուրգուն) և լծկան անասուններ<sup>43</sup>:

Պատերազմի ընթացքում ալեքսանդրապոլցիները բանակին հատկապես շատ օգնեցին անասնակերով: Կովկասյան ճակատի հրամանատարությունը 1877թ. օգոստոսի 17-ին դիմեց Երևանի նահանգապետին՝ խնդրելով Կովկասյան բանակի Ալեքսանդրապոլում տեղակայված ստորաբաժանումների համար նախապատրաստել 243000, իսկ Իգդիրում տեղակայվածների համար՝ 104600 փութ խոտ: Ալեքսանդրապոլի գավառի ազգաբնակչությունն անմիջապես արձագանքեց հրամանատարության դիմումին՝ բանակի համար հավաքելով 320000 փութ խոտ, 640000 փութ դարման և 24000 փութ գարի<sup>44</sup>:

Գործող բանակի մատակարարումն այս և այլ անհրաժեշտ ապրանքներով հիմնականում կատարվեց ալեքսանդրապոլցի փորձառու վաճառականներ Պիտոնի, Կորգանովի, Թաիրովի, Փորակովի, Սարգիսովի, Տեր-Հովհաննեսովի, Գուրգենբեկովի, Բասկովի, Միրզոնի, Տերտերովի, Ղազարովի և Կասուկի կողմից՝ տեղի սայլապանների միջոցներով<sup>45</sup>: Պատերազմի օրերին պետությանը մատուցած ծառայությունների համար բազմաթիվ ալեքսանդրապոլցիներ արժանացան կառավարական ամենաբարձր պարգևների: Օրինակ՝ Եգոր Խալաթովը գավառապետի միջնորդությամբ պարգևատրվեց արծաթե մեդալով՝ իր միջոցներով քաղա-

<sup>38</sup> Отчет о военно-инженерной деятельности в восточную войну 1877 года, в районе действия и расположения Кавказской армии, вып. IV, Тифлис, 1879, стр. 47-48; Тифлисский вестник, Тифлис, 1877, N 83, стр. 1.

<sup>39</sup> Պատերազմի ընթացքում կատարած իր բարեգործությունների համար Աբրահամ Ունջյանը պարգևատրվել է ոսկե մեդալով (Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 94, ցուցակ 1, գործ 157, թթ. 1-10):

<sup>40</sup> Отчет интенданта Кавказской армии с 1-го июня 1876 по 1-е июня 1878 года, составил генераль-лейтенант Шульман, СПб., 1880, стр. 41.

<sup>41</sup> ՀԱԱ, ֆոնդ 94, ցուցակ 1, գործ 83, թ. 22:

<sup>42</sup> ՀԱԱ, ֆոնդ 101, ցուցակ 1, գործ 76, թ. 101: հմմտ. Բաղայան Խ., նշվ. աշխ., էջ 87:

<sup>43</sup> Мезрелидзе III., Закавказье в русско-турецкой войне..., стр. 93.

<sup>44</sup> ՀԱԱ, ֆոնդ 101, ցուցակ 1, գործ 198, թ. 116-118:

<sup>45</sup> Отчет интенданта Кавказской армии с 1-го июня 1876 по 1-е июня 1878 года..., стр. 42.

քամիջից դեպի Կազաչի պոստի հոսալիտալներ տանող ճանապարհը բարեկարգելու համար, իսկ քյավթառեցի կաթոլիկ վարդապետ Տեր-Պողոսը՝ Մբ Աննայի ոսկե խաչով՝ ռուսական հեծյալ գնդին նյութական օգնություն ցուցաբերելու համար<sup>46</sup> :

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացում ռուսական զորքերին նյութական մեծ օգնություն ցույց տվեցին նաև գավառի ռուս աղանդավորականները՝ դուխոբորներն ու մոլոկանները, ովքեր հակառակ իրենց ուսմունքի պատվիրաններին («բոլոր մարդիկ եղբայրներ են», «պատերազմին օգնել չի կարելի»), ռազմաճակատ ուղարկեցին 4000 քառաձի բեռնասայլ՝ յուրաքանչյուրը 80-100 ռուբլի արժողությամբ<sup>47</sup> :

Հատկապես անգնահատելի է ալեքսանդրապոլցիների կողմից Կովկասյան կորպուսին և մասնավորապես նրա Ալեքսանդրապոլյան խմբավորման զորքերին ցույց տված բարոյական աջակցությունը: Հայրենի տանից հեռու՝ ռուս զինվորն այստեղ շրջապատվեց հոգատարությամբ, վիրավորներն ու հիվանդներն ստացան հնարավորինս բարձրակարգ բուժսպասարկում, ապահովվեցին սնունդով ու այլ պետքերով: Պատերազմի տասը ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլի գավառում Կարցևի գլխավորությամբ գործեց «Կարմիր խաչի» 20 հոսալիտալ (12-ը՝ քաղաքում, 8-ը՝ գավառի գյուղերում), որոնցում 1877թ. հոկտեմբերի դրությամբ բուժօգնություն ստացավ 4-5000 մարդ<sup>48</sup> : Եւս 17 վրանային հոսալիտալ՝ շուրջ 5000 հիվանդներով<sup>49</sup> , քաղաքում և հարակից գյուղերում գործեց տեսուչ գեներալ Ջեդերհոլմի գլխավորությամբ<sup>50</sup> : Երբ պատերազմի առաջին ամիսներին հոսալիտալներում վիրավորների մեծ թիվը դժվարություններ առաջացրեց, ալեքսանդրապոլցիները նրանց տեղափոխեցին իրենց տները՝ քաղաքի գրեթե բոլոր մեծ շենքերն անվարձահատույց վերածելով հոսալիտալների<sup>51</sup> : Վիրավոր զինվորներին օգնություն ցույց տվեց նաև տեղի եկեղեցին՝ ի դեմս քահանա Հովհաննես Տեր-Վարդանյանի<sup>52</sup> :

<sup>46</sup> Балакян О., Саркисян Г., Эвоян В. Помощь населения Армении русским войскам в русско-турецкой войне 1877-1878гг., Вестник архивов Армении, Ер., 1971, док.14, стр. 41.

<sup>47</sup> Меликсет-Бек Л., Из истории духоборов в Грузии (XIX век), Труды Тбилисского государственного университета, т. 78, серия исторических наук, Тбилиси, 1963, стр. 132.

<sup>48</sup> Кавказский путевой дневник, стр. 158.

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 164:

<sup>50</sup> Տրամադրված բարձրակարգ բուժօգնությամբ առավել հայտնի էին Դորպատի համալսարանի դոցենտ բժիշկ Ռեյերի N10 հոսալիտալը և Սանկտ Պետերբուրգում բնակվող հոլանդացիների՝ Կարմիր խաչի Ամստերդամի մասնաճյուղի հանգանակած միջոցներով հիմնված վրան-հոսալիտալը (Տե՛ս Կովկասский вестник, Тифлис, 1877, 28 октября, N 235, стр. 2-3.):

<sup>51</sup> Վիրավոր և հիվանդ ռուս զինվորներն անվարձահատույց բուժ սպասարկում, խնամք և սնունդ ստացան նաև Ալեքսանդրապոլի գավառի հայերով և ռուսներով բնակեցված գյուղական բնակավայրերում, այն դեպքում, երբ Այսրկովկասի գյուղական բնակավայրերում վիրավոր և հիվանդ զինվորներին խնամելու կարգի մասին օրենքով խնամելու և բնակարանավարձի համար նախատեսված էր օրական 50 կոպեկ (Տե՛ս Էլիզե Ռեկլիս, Ռուսական Հայաստան կամ Արաքսի ալագան, Ուրմիա լիճ եւ Առաջաւոր Ասիա, Վաղարշապատ, 1890, էջ 63: Меликсет-Бек Л., նշվ. աշխ., էջ 133):

<sup>52</sup> ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 204, թթ. 5-6:

Գավառի Մեծ Ղարաքիլիսա գյուղում, համաձայն Կովկասյան բանակի հոսպիտալների գրխավոր տեսուչ գեներալ-լեյտենանտ Մարենուչի զեկուցագրի, բնակիչներ Հովհաննես և Սահակ Աբունների, Հարություն Ամիրբեկովի, Գևորգ Պետրոսովի, Ղազար Աղաբաբովի և Կարապետ Նալբանդյանցի կողմից վառելափայտով, կահ-կարասիով և անկողնով ապահովված յոթ շինություն տրամադրվեց «Կարմիր խաչին»՝ անժամկետ ու անվարձահատույց<sup>53</sup>։

Մարդկային իրենց բարձր արժանիքներով աչքի ընկան հատկապես ալեքսանդրապոլցի կանայք և աղջիկները, ովքեր պատերազմի ընթացում՝ իբրև զբոսայան քույրեր, Մեծ իշխանուհի Օլգա Ֆյոդորովնայի գլխավորությամբ (վերջինս ողջ պատերազմի ընթացքում մնաց Ալեքսանդրապոլում) անվարձահատույց խնամեցին վիրավորներին ու հիվանդներին։ Նրանցից շատերն իրենց պարտքը կատարելիս ցրտից, տիֆից ու համաճարակային այլ հիվանդություններից մահացան<sup>54</sup>։

Կարսի գրավման նախօրեին (1877թ. հոկտեմբերի կեսեր) ռուսական բանակում հայտնված բժավոր տիֆի և ծաղկի հազվադեպ դեպքերը 1878թ. հունվարի սկզբներին վերածվեցին համաճարակի՝ ընդգրկելով Ալեքսանդրապոլի, Կարսի և Էրզրումի շրջանները մինչև Տրապիզոն<sup>55</sup>։ Դրությունը դարձավ անհուսալի, երբ Էրզրումի գրավումից հետո Ալեքսանդրապոլյան խմբավորման զորքերում տարածվեց նաև խոլերայի համաճարակ։ Իսկ երբ հրամանատարությունը փորձեց 170 հիվանդների Դիլիջանի վրայով ուղարկել Թիֆլիս, համաճարակը տարածվեց նաև փոխարքայության կենտրոնում<sup>56</sup>։ Այդ օրերին ռազմաճակատ ժամանած իշխան Մեջլերսկին Ալեքսանդրապոլն անվանել է «տանջանքների ու մահվան» քաղաք, որտեղ «ամեն ինչ ապրում, շնչում, շարժվում և մտածում է հանուն տանջանքների ու մահվան, որտեղ նույնիսկ երաժշտությունը հնչում է թաղման համար։ Հասկանալու համար, թե ինչ արհավիրք է իրենից ներկայացնում պատերազմը, գրում է Մեջլերսկին, -անհրաժեշտ է գոնե մեկ օր ապրել Ալեքսանդրապոլում, ուր օրդ անպայման կսկսվի ու կավարտվի հուղարկավորությամբ»<sup>57</sup>։

Բարեբախտաբար տիրող գաղջ մթնոլորտը երկար չչարունակվեց։ Զինվորական բուժանձնակազմի և տեղական ազգաբնակչության համատեղ գործողությունների շնորհիվ արդեն 1878թ. հունիսի վերջերից գավառում համաճարակային հիվանդությունները սկսեցին տեղի տալ։ Բժավոր տիֆով և ծաղկով հիվանդ 2000 զինվորները տեղավորեցին քաղաքից դուրս գտնվող վրանային 7 հոսպիտալներում<sup>58</sup>, իսկ Երևանյան լեյք-գվարդիական 13-րդ գնդի խոլերայով հիվանդ 600 զինվորները՝ գավառի Քյալալի գյուղում։ Երկու դեպքում էլ հիվանդները բուժում ստացան քաղաքային բնակչության կողմից կազմակերպված հանգանակություն-

<sup>53</sup> Балikian О., Саркисян Г., Эвоян В. *նշվ. աշխ., փաստ. 8, էջ 37*։

<sup>54</sup> Кавказский путевой дневник, *стр. 169*։

<sup>55</sup> Война в Турецкой Армении 1877-1878гг.,..., *стр. 501*։

<sup>56</sup> Кавказский путевой дневник, *стр. 127*։

<sup>57</sup> Նույն տեղում, *էջ 155*։

<sup>58</sup> Նույն տեղում, *էջ 164-165*։

ների միջոցներով<sup>59</sup>: Օրինակ, Ալեքսանդրապոլի թատերասերներն իրենց կազմակերպած համերգից ստացած ողջ հասույթը՝ 222 ռուբլի, տրամադրեցին հիվանդությունները հաղթահարելու գործին<sup>60</sup>:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: 1878-ի փետրվարի 19-ին ծովափնյա Սան Ստեֆանո ավանտում կնքված պայմանագրի 19-րդ հոդվածով Կովկասյան ճակատում Ռուսաստանին անցան Կարսը, Կադզվանը, Օլթի, Արդահանը, Բայազետը և Ալաշկերտը<sup>61</sup>: Ցավոք, Սան Ստեֆանոյին հաջորդած դիվանագիտական պայքարում ռազմական փայլուն հաղթանակներ տարած Ռուսաստանը պարտվեց: Կնքված պայմանագիրը վերանայելու համար Բեռլինում հրավիրված նոր վեհաժողովը արևմտակերպական երկրների ճնշման տակ Թուրքիային վերադարձրեց Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերի կողմից գրավված շրջանների մեծ մասը՝ բացառությամբ Կարսի<sup>62</sup>: Չարդարացան նաև արևմտահայության՝ թուրքական լծից ազատվելու սպասելիքները:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլին, ապա պատերազմից հետո վերջինս թեև կորցրեց սահմանային առաջնայնությունը, սակայն երբեք ստվերում չմնաց՝ վերածվելով ազգային արժեքների իսկական պահապանի:

#### АЛЕКСАНДРАПОЛЬЦЫ В РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЕ 1877-1878 ГГ.

Резюме

А. Айрапетян

Всего 20 лет спустя после неудачи в Крымской войне, Россия на протяжении 19-го века начала четвертую войну против Османской Империи. В результате военных действий, продолжавшихся 10 месяцев, русские войска на Кавказском фронте захватили большую часть Западной Армении.

Как и в прошлой войне, и на этот раз Александропольский гавар взяла на себя значительную часть военных нужд. Здесь была набрана большая часть добровольческих отрядов, сформированных на территории Ереванской губернии: конные «иррегулярные» (не регулярные) полки «Александропольская», «Курдская» и «Александропольская армянская пехотная дружина» и т.д. Кроме службы в рядах регулярной армии и милиции, александропольцы служили также

<sup>59</sup> Описание боевой жизни в мемуарную войну 1877-1878 годов 13-го лейб-гренадерского, ... стр. 140, 166.

<sup>60</sup> Тифлисский вестник, Тифлис, 1877, N 70, 7 апреля, стр. 1.

<sup>61</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Եր., 1972, էջ 91-92:

<sup>62</sup> Կարսի մարզը պաշտոնապես կազմավորվել է 1877թ. նոյեմբերի 1-ին՝ ռուսաց Ալեքսանդր Բ կայսեր բարձրագույն հրամանագրով, Ռուսաստանին անցած Կարսի սանջակի (գավառ), Չլդրի սանջակի մեծ մասի և Բասենի սանջակի մի փոքր հատվածի միավորմամբ: Հինգ օր անց ստեղծվել է նաև մարզային կառավարություն՝ զինվորական նահանգապետի գլխավորությամբ (Տե և Погосян А., Карская область в составе России, Ер., 1983, стр. 62-63):



в разведке. Вспомним Аветиса Дзитохцяна, штабс-капитана Даниеля Арутюняна или священника Арутюна.

В ходе военных действий особенно важное значение имела материальная и моральная поддержка, оказанная александропольцами русским войскам. В конце войны, когда Карс перешел к Российской Империи, хотя Александрополь утратил пограничную первичность, но никогда не оставался в тени – превратившись в настоящего хранителя национальных ценностей.

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Հայրապետյան Արմեն Մերգոլի – պ.գ.թ., դոցենտ, ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, Email: [armenani@mail.ru](mailto:armenani@mail.ru)*

*Наталья ДЕНИСОВА*

***М.Т. ЛОРИС-МЕЛИКОВ – ИСТОРИЧЕСКАЯ ЛИЧНОСТЬ  
В КОНТЕКСТЕ КОНЦЕПЦИИ ДИАЛОГА КУЛЬТУР\****

Проблема роли личности в истории всегда привлекала внимание исследователей, но разрешалась ими с разных (порой противоположных) методологических позиций. Цель данной работы – анализ деятельности Михаила Таризеловича Лорис-Меликова, выдающегося государственного и военного деятеля России второй половины XIX в.. Данный подход для современной российской действительности представляется весьма актуальным, а выбор личности М. Лорис-Меликова – вполне оправданным, так как, с одной стороны, вряд ли найдутся исследования, посвященные государственным, административным, военным проблемам второй половины XIX в., в которых не упоминалось бы его имя, с другой – высказываемые характеристики и оценки его деятельности в исторической литературе неоднозначны и далеко не всегда имеют под собой солидную источниковую базу. Вместе с тем, нельзя не признать, что влияние М. Лорис-Меликова на военные и социально-политические процессы в России рассматриваемого периода было велико, в том числе и по причине его особого управленческого стиля, основной чертой которого было умение и желание вести диалог с соратниками и оппонентами, носителями различных культур и политических взглядов, что было остро необходимо для России во все времена, в первую очередь, в периоды политических кризисов, каковыми являлись, в том числе, вторая половина XIX в. и, не в меньшей степени, конец XX – начало XXI вв. Востребованность личностей, способных вести диалог, в такие периоды особенно велика. Перефразируя известный тезис английского историка Арнольда Тойнби, можно утверждать, что именно такие деятели, составляющие интеллектуальное меньшинство того или иного народа, чутко улавливая и оценивая «общественно-политические вызовы», способны сформулировать адекватный им ответ, в виде изменения вектора внутренней и внешней политики. М. Лорис-Меликов оказался тем самым представителем российского интеллектуального меньшинства, которое и пыталось изменить ход российской истории в направлении привлечения общественных сил к реформированию страны через широкий общественно-политический и культурный диалог.

В личности М. Лорис-Меликова счастливым образом соединились врожденные и приобретенные способности к диалогу. Ему с момента рождения было предопределено диалогическое восприятие действительности и диалогический тип поведения и, впоследствии, руководства. Родился он на Кавказе в многонациональном по своей сути и роли Тифлисе, в армяно-грузинской семье. Изначально он соприкоснулся с носителями различных культур и политических взглядов, глубоко усвоив и приняв традиции и обычаи многоязычной, многоконфессиональной и полиэтнической кавказской цивилизации. Друзья в шутку называли М.Лорис-Меликова «грузинским армянином» или «двойным армяни-

---

\* *Статья в качестве доклада была представлена на международной научной конференции «Историко-культурное наследие и современность», состоявшейся 4-6 октября 2013г. в Гюмри.*

ном», имея в виду, что он «органически впитал в себя лучшие качества» кавказских народов». Необходимо отметить, что такая «культурная открытость» М. Лорис-Меликова помогла ему достаточно оптимально выстраивать свою систему управления, в основе которой – уважение к народным обычаям и традициям.

По факту своего рождения, военной и административной деятельности М. Лорис-Меликов – армянин и «истинный кавказец», по государственной службе («императорский распорядитель») – россиянин, хорошо знавший и любивший Армению, Кавказ и Россию. Особое отношение он, естественно, сохранил к Кавказу, о котором писал: «...Поскорее вырваться из ...Петербурга; тут не только климат не мой, а и все свычаи и обычаи ... столичной жизни; я, 25 лет сподряд проживши на Кавказе, привык к здоровой, правильной жизни...»<sup>1</sup>. Но, несмотря на это, М. Лорис-Меликов не переставал ощущать себя гражданином России, службе которой он посвятил всю свою жизнь.

На формирование его как личности, военного и государственного деятеля в числе прочих условий оказало влияние его кавказское окружение. На Кавказе он служил под командованием генерал-фельдмаршала князя М.С. Воронцова, человека «высокого государственного ума, сурового, но честного и твердого в своих убеждениях», и Н. Муравьева, которые достаточно быстро высоко оценили способности и личные качества 20-летнего офицера, «достойного и очень умного...». Уже тогда М. Лорис-Меликов стал известен военному министру России А.Чернышеву, а впоследствии всему военному и чиновничьему Санкт-Петербургу.

Кавказ, требуя совершенно особый тип управленцев, сам же, своей особостью, их во многом и формировал. Кавказские управленцы не только отличались от чиновников других российских регионов, но и нередко превосходили их в деловых качествах. Один из друзей М. Лорис-Меликова писал по этому поводу: «Я должен признать без всякого самоуничтожения, что в данном случае Кавказ покорил Сибирь, а не наоборот...»<sup>2</sup>. Кавказские военные и чиновники были весьма востребованы на российской военной и гражданской службе в Санкт-Петербурге. Большинство из них являлись высокообразованными людьми, с широким, поистине государственным кругозором. Не был исключением и М. Лорис-Меликов. По оценке Милютина, имевшего «превосходное университетское образование и профессорство в Академии Генерального штаба, долгая жизнь которого на министерском посту волей-неволей расширяла его панораму видения империи», М. Лорис-Меликов «отнодъ не смотрелся ни провинциалом, ни грубым армейским генералом. В суждениях был рассудочен и остроумен..., начитан и наделен недюжинным здравым смыслом», говорил «превосходным русским языком с печатью литературной обработки», прекрасно знал русскую литературу, «до последнего времени удерживал в памяти множество стихов Пушкина, Лермонтова, Некрасова и др. ..., любил приводить остроумные изречения Салтыкова», большим поклонником которого был»<sup>3</sup>.

Судя по отзывам, М. Лорис-Меликов получил прекрасное образование вначале в Тифлисском пансионе Арзановых, считавшимся одним из лучших учебных заведений Кавказа, затем в армянском Нерсесовском училище и Лаза-

<sup>1</sup> Графъ Мих. Тар. Лорисъ-Меликовъ в воспоминаніях К. Белоголоваго. 1878–1888 [Электронный ресурс] Режим доступа: <http://www.genocide.ru/lib/bhelp/i/i-36-loris-melikov.html>.

<sup>2</sup> Там же.

<sup>3</sup> Там же.

ревском институте. Главное, что он вынес из этих учебных заведений – знание языков: русского, французского, немецкого, арабского и турецкого. Как истинный армянин, он также свободно владел армянским, великолепно знал грузинский и татарский языки. Трудно представить, чтобы военный и чиновник с таким багажом не вписался бы в сложную, многоязыкую и многоконфессиональную кавказскую ситуацию.

Способность М. Лорис-Меликова успешно вести диалог с представителями различных политических сил проявилась достаточно рано – при допросе им Хаджи-Мурата (1851 г.). Именно знание языков и присущее ему личное обаяние, которое он неизменно проявлял, помогли М. Лорис-Меликову, тогда еще довольно молодому российскому офицеру, установить отношения доверия с предводителем горцев. И это был не единичный, «интуитивно найденный прием», а его специфический стиль деятельности как на военном, так и на гражданском поприще. Примеров тому было множество.

По свидетельствам современников, М. Лорис-Меликов был весьма доступен и прост в обращении. Сослуживцы и подчиненные высоко ценили его человечность, простоту и честность в отношениях. Однако его уступчивость оппонентам имела вполне зримые границы, она заканчивалась ровно там, где, по его мнению, начинали нарушаться российские государственные интересы. Охотно и спокойно выслушивая иные мнения, М. Лорис-Меликов оставался «на редкость устойчив в своих основных убеждениях», с которых его невозможно было «сбить». Такая позиция, по оценкам современников, «служила лучшим признаком той широты ума, которая и делала из него истинного государственного человека...»<sup>4</sup>. В связи с этим необходимо отметить еще одну, важную и привлекательную черту его характера – патриотизм, ценность которого в современной России ставится определенными силами под сомнение. Несмотря на то, что М. Лорис-Меликов «горячо любил свою кавказскую родину, ... первое ... место в нем занимала Россия как целое...»<sup>5</sup>.

Его твердость, а порой и жесткость в отстаивании государственных интересов уравновешивались необыкновенной способностью «выходить» (с наименьшими потерями и достоинством – Н. Д.) из затруднительных положений, придумывать комбинации, чтобы влиять на умы населения в направлении, которое ему представлялось верным. Так, в годы Крымской войны М. Лорис-Меликов сформировал и успешно командовал так называемым «иностранным легионом», состоявшим из армян, курдов, грузин и кавказских татар. Около 1300 османских курдов его усилиями впоследствии перешли на российскую службу. Будучи начальником Карсского пашалыка, М. Лорис-Меликов много внимания уделял местному населению, за что в июле 1856 г. турецкий султан наградил его орденом Меджлеса II степени, что было уж совсем необычно для международной практики.

Его способность влиять на умы людей, казалось, не знала границ. Во время военных действий на турецкой территории (1877–1878 гг.) М. Лорис-Меликов совершил весьма курьезный поступок. Он сумел убедить местное население принимать русские кредитные бумаги, на которые и вел всю войну, чем сэкономил

<sup>4</sup> Графъ Мих. Тар. Лорисъ-Меликовъ в воспоминаніях К. Белоголоваго. 1878–1888 [Электронный ресурс] Режим доступа: <http://www.genocide.ru/lib/bhelp/i/i-36-loris-melikov.html>.

<sup>5</sup> Там же.

значительную сумму»<sup>6</sup>. Это можно было бы назвать «восточной хитростью». Но вряд ли данное определение является адекватным. Скорей это – способность находить общий язык и умение убеждать людей.

М. Лорис-Меликов неоднократно подтверждал свою безупречную честность, никто не мог его заподозрить в присваивании государственных финансов и чужой славы. Так было во времена его военной и гражданской службы. В период ликвидации эпидемии «ветлянской чумы» благодаря решительным карантинным и санитарным мерам М. Лорис-Меликов быстро остановил ее распространение, причем из выделенных на эти цели 4 млн. руб. сэкономил 3 млн. 700 тыс. и вернул их в казну<sup>7</sup>.

Это был его моральный и нравственный капитал, позволявший смело реализовывать реформы, вести политический диалог и с достоинством держаться в кругу петербургской аристократии. Сам М. Лорис-Меликов об этом уже в конце жизни писал: «Будучи на вершине карьеры и почестей, я ничем не воспользовался от государства и остался по-прежнему с весьма... ограниченными средствами; русские же газеты недавно распространили известие, что я покупаю обширное поместье за границей; я имею претензию на репутацию хорошего полководца, потому что одержал несколько побед, вел целую военную кампанию и взял крепость Карс, которую считали неприступной, а вот Осман-бей оспаривает мои военные заслуги и уверяет, что Карс взял вовсе не я, а он – Осман-бей»<sup>8</sup>. Люди, знавшие М. Лорис-Меликова, считали, что в этом высказывании были достоинство и юмор, но напрочь отсутствовали горечь и сожаление.

Вся военная и гражданская служба подтвердила незаурядную способность М. Лорис-Меликова вести культурный и политический диалог, который, однако, прерывался, когда возникала угроза российским государственным интересам. Так, будучи начальником Терской области, М. Лорис-Меликов стремился, с одной стороны, заручиться поддержкой и доверием населения, «бережно относясь к народным обычаям», с другой – «любые попытки посягательств на государственные интересы пресекались им быстро и безжалостно»<sup>9</sup>.

В воспоминаниях о деятельности в Терской области М. Лорис-Меликов неоднократно отмечал, что горцами легко управлять, «если только бережно относиться к их народным обычаям»<sup>10</sup>. Его деятельность по управлению Терской областью, включавшей в этот период большую часть Северного Кавказа, была высоко оценена наместником Кавказа, который побывал здесь в 1865 г. с инспекционной поездкой. «Два года тому назад я благодарил вас за ваше поведение, –

<sup>6</sup> Лорис-Меликов Михаил Тариелович // Биографический словарь. М., 2000.

<sup>7</sup> Лорис-Меликов Михаил Тариелович – биография [Электронный ресурс] Режим доступа: <http://www.aphorisme.ru/about-authors/loris-melikov/?q=5014>.

<sup>8</sup> **Графь Мих. Тар.** Лорисъ-Меликовъ в воспоминаниях К.А. Белоголова. 1878–1888 [Электронный ресурс] Режим доступа: <http://www.genocide.ru/lib/bhelp/i/i-36-loris-melikov.html>.

<sup>9</sup> Докладная записка командующего войсками Терской области генерал-лейтенанта М.Т. Лорис-Меликова командующему Кавказской армией о деятельности Кундухова, о результатах его переговоров по переселению чеченцев в Турцию и о нецелесообразности их расселения близ границы с Россией [Электронный ресурс] Режим доступа: <http://abkhazeti.info/history/20050616162064428601.php>.

<sup>10</sup> **Ибрагимова З.** Деятельность М.Т. Лорис-Меликова на Кавказе (вторая половина XIX в.) [Электронный ресурс] Режим доступа: <http://www.zarema-ibragimova.ru/?STATMzI:Loris-Melikov>.

отмечал он, – радуюсь, что и в этот приезд могу повторить свою благодарность»<sup>11</sup>. Назвав М. Лорис-Меликова «достойным начальником области», наместник выразил ему «глубокую душевную признательность». С присущим ему достоинством Михаил Тариелович предпочел разделить благодарность с «сотрудниками и подчиненными»<sup>12</sup>.

Кавказ для М. Лорис-Меликова всегда оставался частью России. Поэтому его беспокоила «апатия» русского общества, которое не делало «решительно ничего, чтобы теснее привязать эту богатую окраину к России. М. Лорис-Меликов считал, что «правительство сделало все, что могло, оно силой оружия закрепило Кавказ за империей, но чтобы присоединение это обратилось в прочную, неразрывную связь, необходимо культурное влияние...», которое он понимал в самом широком смысле как политическое, экономическое, социальное. Его как русского подданного не могла не беспокоить пассивность российских «землевладельцев, промышленников и фабрикантов на фоне активизации иностранцев по освоению «непочатых богатств Кавказа...»<sup>13</sup>.

За свой стиль управления (привлечение общественных сил к выработке и реализации реформ и одновременное жесткое неприятие игнорирования государственных интересов России) М. Лорис-Меликов получил прозвища либерального, бархатного и парадоксального диктатора. Сам он, не обращая внимания на негативный подтекст, расценивал их как похвалу. Свои принципы М. Лорис-Меликов, наделенный чрезвычайными полномочиями, успешно реализовывал, кроме Кавказа, в Астраханской, Самарской, Саратовской и Харьковской губерниях. Особо сложная политическая ситуация сложилась в рассматриваемый период, как известно, в Харькове. Но и здесь, как отмечают современные исследователи, им был избран «единственно верный путь – привлекать на сторону власти оппозиционно настроенную общественность, а не отпугивать ее...». В результате успешной реализации этой линии М. Лорис-Меликов оказался единственным генерал-губернатором, не внесенным народолюбцами в список приговоренных к смерти.

Умение эффективно налаживать диалог и одновременно твердость в реализации задач государственной важности сыграли первостепенную роль при назначении М. Лорис-Меликова главой «Верховной распорядительной комиссии по охране государственного порядка и общественного спокойствия», когда репрессии «справа» и террор «слева» шли к своей критической черте. Вера Александра II в него была столь велика, что ему были предоставлены полномочия, которых до него не имел ни один имперский чиновник – представлять царя во всех делах, применять любые меры по охране порядка на всей территории империи и отдавать приказы представителям государственной власти любого ранга. Такие чрезвычайные полномочия могли бы породить и исключительно чрезвычайные меры. Но М.Т. Лорис-Меликов, прежде всего, обратился с воззванием «К жителям столицы», высказав твердое намерение «не останавливаться ни перед какими ме-

<sup>11</sup> Саракоев И.-Б. По трущобам Чечни (Жгучий и наболевший вопрос). Грозный, 1991. Владикавказ, 1913. С.19.

<sup>12</sup> Ибрагимова З. Деятельность М.Т. Лорис-Меликова на Кавказе (вторая половина XIX в.) [Электронный ресурс] Режим доступа: <http://www.zarema-ibragimova.ru/?STATMzI:Loris-Melikov>.

<sup>13</sup> Графь Мих. Тар. Лорисъ-Меликовъ в воспоминаніяхъ К.А. Белоголоваго. 1878–1888 [Электронный ресурс] Режим доступа: <http://www.genocide.ru/lib/bhelp/i/i-36-loris-melikov.html>.

рами для наказания преступных действий» (что звучало как предупреждение и предостережение), одновременно – «успокоить и оградить интересы благомыслящей части общества», на которое он возлагал большие надежды, призывая к этому и императора. Эти меры современники назвали политикой «лисьего хвоста». Однако как-то игнорируется тот факт, что именно они привели к спаду волны террора во второй половине 1880 г.

М. Лорис-Меликов настаивал на привлечении «общества к участию в разработке необходимых ... мероприятий», считая, что это и «есть именно то средство, какое и полезно, и необходимо для дальнейшей борьбы с крамолой». Вместе с тем, он предостерегал от двух опасностей, весьма актуальных и для современной России – «бездумного заимствования» западного опыта и возврата к «старинным» формам российского государства. К разработке реформ, которым М. Лорис-Меликов отдавал предпочтение перед революционными потрясениями, он предлагал привлекать «сведущих и благонадежных ... лиц, известных своими специальными трудами в науке или опытностью по той или другой отрасли государственного управления или народной жизни». Цель этих мер он видел в том, чтобы «дать правильный исход заметному стремлению общественных сил к служению престолу и отечеству», что «неминуемо внесет в народную жизнь оживляющее начало и предоставит правительству возможность пользоваться опытностью местных деятелей, ближе стоящих к народной жизни, нежели чиновники центральных управлений», а роль правительства – в поощрении постепенного развития общества и руководстве им в этом направлении.

Государственную деятельность М. Лорис-Меликова высоко оценивали зарубежные политики. Так Отто фон Бисмарк, признававший его выдающимся своим современником, считал, что его отстранение от власти после смерти Александра II не пошло на пользу России. Заграничные газеты сравнивали М. Лорис-Меликова с Мазарини, который сумел управлять Францией в самое смутное время при помощи примирительной и ловкой политики. «Вице-император», «великий визирь», «Мишель Первый», «диктатор», «ближний боярин», «полномочный повелитель» – таков далеко неполный перечень эпитетов, которыми окрестили Михаила Тариеловича современники.

М. Лорис-Меликов, без сомнения, был мудрым и дальновидным государственным деятелем, достойным сыном России, поистине уникальным государственным чиновником. В тяжелое для России время он, проявив гражданское мужество, не только взял на себя всю ответственность за судьбу страны, но и в сложной политической ситуации отдал приоритет либеральным реформам, не исключая, однако, строгости и твердости в проведении внутренней политики. Многие его предложения и методы решения возникающих в сложный переходный период проблем оказываются весьма актуальными и для современной России. Будучи человеком решительным, но осторожным и осмотрительным, М. Лорис-Меликов предпочитал реформы. Таковы были некоторые направления деятельности одного из известнейших государственных деятелей России – М. Лорис-Меликова, «либерального диктатора», значительно опередившего свое время и предвосхитившего будущее своей родины.



Մ. Տ. ԼՈՐԻՍ – ՄԵԼԻՔՈՎԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՀԱՏ  
ՄՇԱԿՈՒՑԹՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

— *Անփոփում* —

— *Ն. Դենիսովա* —

Անհատի դերի խնդիրը պատմության համատեքստում միշտ գրավել է ոուս հետազոտողների ուշադրությունը: Վերոնշյալ խնդրին տարբեր մեթոդաբանական մոտեցումներ են արվել: Հեղինակը փորձել է վերլուծել Մ. Լորիս-Մելիքովի՝ որպես 19-րդ դարի երկրորդ կեսի ոուսական պետական և ռազմական նշանավոր գործչի անցած ուղին՝ գտնելով, որ այս հայեցակարգը արդիական է ժամանակակից ոուսական իրականության համար: Լորիս-Մելիքով անհատին դիմելը, ըստ հեղինակի, արդարացվում է ինչպես օբյեկտիվ պատճառներով (նրա կյանքը և աշխատանքային գործունեությունը Ռուսաստանի տարբեր բազմաէթնիկ շրջաններում, ոուսական պետական ծառայությանը նրա անդամագրվելը երկրի համար քաղաքականապես վատթար ժամանակներում), այնպես էլ՝ սուբյեկտիվ պատճառներով (փորձ, ունակություն, ցանկություն առաջնորդելու քաղաքական ու մշակութային երկխոսությունը):

**Сведения об авторе**

*Денисова Наталья Николаевна – к.ист. н., доцент, завотделом славяно-адыгских культурных связей Адыгейского республиканского института гуманитарных исследований РАН, E-mail:deni162@rambler.ru*

ԱԼԵՔՊՈԼԻՅԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՄՇԱԿ»-ին 1872-1892 թթ.\*

«...այլ է պատիւը ուժի մշակին  
և այլ է յարգանք, մտքի զինուորին...»

Պետրոս Բերուբեան

19-րդ դարի երկրորդ կեսին հայ հասարակական միտքը թոթափեց առաջին դարակեսի «խումարը» և քաղաքական ընդհանրության տրամաբանությունը բնորոշ գիտակցական հասունություն ի հայտ բերեց, որը շողարձակեց մամուլում:

1872 թվականից Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» թերթի հրապարակախոսության լեզուն տևական ժամանակ դարձավ Ալեքսանդրապոլի անաչառ մտավորականության նախընտրելի արտահայտչամիջոցը:

«Մշակ»-ը մշտապես բարձրաձայնել է ալեքսպոլցի առևտրականի, արհեստավորի և գյուղացու հոգսերի մասին: Ալեքսանդրապոլի տնտեսական կյանքի կարևորագույն բաղադրիչի՝ առևտրի ճիշտ կազմակերպման և զարգացման հիմնախնդիրները, ապրանքների շուկայական գների տատանումները պատշաճ են ներկայացված պարբերականի նյութերում:

Ալեքսանդրապոլում առևտուրը շահութաբեր զբաղմունք էր, բայց օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ այն երբեմն կորցնում էր իր զրավչությունը: 1874 և 1875 թվականները ալեքսպոլցի առևտրականների համար դժվար տարիներ էին, ինչպես գրում է առևտրականի որդի, նոտար, բանահավաք Աղեքսանդր Ափրիկյանցը (Ափրիկեցի, Ափրիկացի, Տեղացի, Ա. Ա., Տ.). «Շատերը նոցանից սնանկացան, իսկ ավելի շատերը արդեն սնանկանալու վերայ են» (1875, №24): Ստեղծված իրավիճակն ըստ թղթակցի առևտրականների՝ «թուճարների»<sup>1</sup> ազահության, իսկացի վարչարարության պակասի, կրպակների բազմաքանակության և մանրավաճառների գործունեության հետևանք էր: 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը մոռացության մատնեց այդ զրկանքները, և «միլիոններ թափվեցին Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլը դրվեց քաղաքական զարգացման նպաստող պայմանների մեջ և նիթական բարգաւաճման ճանապարհի վրա» (1880, №80): Մոայլ պատերազմը, սակայն, թմրեցրեց բնակչության զգոնությունը: Դրամի փայլից շլացած՝ քաղաքացիներից ու գյուղացիներից շատերն ակամա փարվեցին ճոխությանը, տարվեցին անցողիկ հաճույքներով՝ հարբեցողությամբ և խաղամոլությամբ: Ճանապարհորդ Խ.Փ.Գ.-ն ավյունով բնութագրում է ստեղծված իրավիճակը. «Նոյն ամսի 17-ին (1879թ. դեկտեմբեր-Գ.Ա.) մտայ Ալեքսանդրապոլ: Ի՞նչ տեսայ. գողութիւն, լրբութիւն, շատ յաճախ քեթթակաբանութիւն, ամեն րօպէ անամօթ բառերով հայեոյանքներ ու կծու կծու յիշոցներ» (1880, №9): «Մշակ»-ի ալեքսպոլյան թղթակիցներն սկսեցին սթափության կոչեր հնչեցնել, սուր ասեղնե-

\* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2013թ. հոկտեմբերի 4-6-ը կայացած «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովում:  
<sup>1</sup> Թուճար (թուրք. tüccar)=առևտրական:

րով ծակել «բիրդանադա»<sup>2</sup> դարձածների «չաղացած սիրտը»: Լուսավորության ջանքերին նրանք պայքարում էին տգիտության դեմ:

Տնտեսական «առաջադիմությունը» շուտով զիջեց միապաղաղ առօրյային: Գործ չլինելու հանգամանքից դժգոհ փնթփնթան առևտրականներին շնորհալի հրապարակախոս Տեղացին տնտեսագիտական հասարակ կանոնով է պատասխանում. «Անցո՛րդ, մտիբ մեր քաղաքի մէկ ծայրից, դուրս արի միւս ծայրից, տներից շատ՝ դիքեան կը տեսնես: Այսպէս վաճառաշահ քաղաք է մեր քաղաքը: Յետոյ էլ ասում են՝ «առուտուր չըկայ». այսինքն՝ չի գործում առաջարկ-պահանջարկի սկզբունքը (1879, № 112: Հմմտ. 1882, №139): Մէկ ուրիշ թղթակցության մեջ նա անխնա գանակոծում է գրագիտությունն արհամարհող, ստախոս և շողոքոթ վաճառականներին՝ «ձկնկուլ», «ղարաչու խալի»<sup>3</sup> և «քեսախպքեար» կոչվածներին, որոնց կյանքի միակ նշանաբանը հարստանալն է (1879, №201): Նամակագիր Ավետիք Նայանցն էլ մերկացնում է Ալեքսանդրապոլում մեծ համբավ ունեցող ուխտավոր-վաճառականներին: Այդ հաջի-աղաները Երուսաղեմ ուխտագնացության ժամանակ տեսակ-տեսակ ապրանքներ էին գնում և վերադառնալուց հետո՝ «տեսածս լուսը վկայ», «համբուրածս վկայ», «գլխադիրը վկայ» սուտ երդումներով կրկնակի թանկ գներով վաճառում (1873, №24): «Մշակ»-ի աշխատակից Պողոս Բեբուրյանն (Պ. Բ., Շիրակեցի, Շ.). այդպիսի գիրուկ հարուստներին հակադրում է գործարար Մկրտիչ Չիթողյանին: Նա հրճվանքով խոսում է այն մասին, որ գործարարն իր երկու որդիներին ուղարկել է Բելգիայի Լիեժ (Լյուտիխ)՝ քաղաք կաշեգործություն և գարեջրագործություն սովորելու (1890, №93): Ի դեպ, նրանցից ավագը՝ Պողոսը, վերադառնալով, Ալեքսանդրապոլում կառուցեց կաշեգործարան: Մտավորականը ցանկություն է հայտնում, որ Չիթողյան ընտանիքի նման «միւս դրամատերերն էլ թողնէին «չարչիութիւնը», արշինը և գեազը, և հետամուտ լինէին արհեստների և արդիւնաբերութեան» (նույն տեղում):

Հողվածագիրները ցուցադրում են քաղաքի տնտեսական կյանքից իրենց բանիմացությունը, հասարակության մեջ սերմանում դրա բարեփոխման գիտակցությունը: Քաղաքային տնտեսության կազմակերպման եվրոպական փորձի տեղայնացման օրինակով նրանք նախագուշակում են Ալեքսանդրապոլի տնտեսական ապագան:

«Մշակ»-ի 1880-1890-ական թվականների ալեքսպոլյան թղթակցությունների մի ստվար խումբ վերաբերում է Ալեքսանդրապոլի շուկայում ծավալված անկանոն առևտրին: Այդ երևույթի պատճառն, ըստ դրանց, վերավաճառողներն էին՝ «մադրաբազները» («մանտրաբազ», «կինտո», «սերկճի»)<sup>4</sup>: Քաղաքացիների և քաղաք գանազան ապրանքներ բերող գյուղացիների համար նրանք չարիք էին. «Դրանք մի քանի խումբ անգործ, անարուեստ մարդիկ են, որոնք առաւօտեան արշալուսի հետ ծագում են հրապարակի վրա և ամեն մի ուտեստի պաշար խլում

<sup>2</sup> Բիրդեն (թուրք. *birden*) = հանկարծակի, անսպասելիորեն:

<sup>3</sup> Ղարաչի (թուրք. *garaci*) = անզգամ:

<sup>4</sup> Մադրաբազ (թուրք. *madrabaz*) = խարդախ, խորամանկ մարդ: Մարկջի (թուրք. *sarkçî*) = կախ ընկնող, պնդերես: Կինտո (վրաց. *კინტო*) = փողոցային վարք ու բարքի տեր, անկիրթ:

են գիւղացու ձեռքից, ծեծելով, հայհոյելով և ամեն մի կերպ խաբելով» (1881, №139: Հմմտ. 1880, №151; 1890, №96; 1891, №107; 1892, №68): Քաղաքային իշխանություններին չէր հաջողվում կարգուկանոն հաստատել շուկայում:

Ժամանակի հասարակական միտքը հատուկ գուրգուրանք էր տածում հայ գյուղի և գյուղացու նկատմամբ: Նրանց պետք էր պաշտպանել կապիտալիստական տնտեսաձևի հարվածներից: «Մշակ»-ի ալեքսանդրյան «զինվորներն» այդ ազգապահպան գործից անմասն չմնացին: «Մշակ»-ի թղթակիցների կողմից Ալեքսանդրապոլի գավառի հայկական գյուղերի ախտորոշումը բազում ցավեր է հայտնաբերում՝ վարելահողերի և խոտհարքերի սակավություն, տգիտություն, անհամերաշխություն, վաշխառու կապիտալի ավերիչ ներգործություն և այլն:

Տասնամյակների ընթացքում Ալեքսանդրապոլի գավառի բնակչության և գյուղերի թիվն ավելացել էր: Օրինակ, ինչպես գրում է «Մեր երկրագործների այժմյան վիճակը» արժեքավոր հետազոտության հեղինակ Շիրակեցին, Ալեքսանդրապոլի գավառի Հոռոմ գյուղը 1830 թվականին ուներ 45 տուն բնակիչ, իսկ 1887 թվականին՝ 247, Փոքր Ղարաքիլիսան (Ազատան) 1830 թվականին ուներ 53 տուն բնակիչ, իսկ 1887 թվականին՝ 398, Մեծ Քյափանակը (Բասեն) 1830 թվականին ուներ 77 տուն բնակիչ, իսկ 1887 թվականին՝ 206 և այլն (1890, №58): Ժողովրդագրական նման իրավիճակը լուրջ մարտահրավեր է նետում երկրի կառավարությանը, քանի որ Ալեքսանդրապոլի գավառի գյուղատնտեսական նշանակության հողերը քիչ էին: Գյուղացիների միջև հողի պատճառով հաճախակի վեճեր էին ծագում: «Մշակ»-ի ալեքսանդրյան թղթակցություններում հարցի լուծման երկու միտում է նկատվում՝ մեկն ինքնաբուխ, մյուսը պետական մակարդակով նախատեսված:

Երբ 1878 թվականին Կարս քաղաքն իր շրջակայքով անցնում է Ռուսաստանին, Ալեքսանդրապոլի գավառի հողագուրկ գյուղացիները ցանկություն են հայտնում տեղափոխվել այնտեղի հայաթափված և ամայացած վայրերը: Սակայն, կառավարությունը մերժում է մեծամասնության խնդրանքները: Կարսի մարզի ազատ հողատարածքներից շատերում արդեն բնակվում էին ռուս աղանդավորները և Ալաշկերտից գաղթած հայ ընտանիքները (1883, № 73): Իր կողմից կառավարությունն առաջարկում էր Ալեքսանդրապոլի գավառի մի քանի գյուղերի բնակիչներին վերաբնակեցնել Մև ծովի ափերին՝ Յալթայի գավառում, և միջինասիական Մերվ քաղաքի շրջակայքում (1890, №58): Այս գաղափարն ուղղակիորեն հակասում էր ազգային և տնտեսական զարգացման մասին «Մշակ»-ի պատկերացումներին: Հայրենաշինություն ու հայրենաբաղձություն քարոզող «Մշակ»-ը գործի է դնում իր «պաշտպանական» համակարգը: Թերթի թղթակից Շիրակեցին առաջ է քաշում Ախուրյան գետի ջրերով «Անիի դիմացը գտնվող ընդարձակ անապատը» ոռոգելու (1883, №81) կամ նույն գետից ջրանցք բացելու և Արևելյան Շիրակի դաշտերը ջրարբի դարձնելու խելամիտ գաղափարները (1892, №82): Ջրանցք բացելու առիթով նա գրում է. «Պէտք է Շիշթափայ (Փոքր Մեպասար) գիւղի վերնից գետի ընթացքը փոխել, դրա համար հարկաւոր է մի թումբ կառուցանել. այնուհետև Իլլի (Հողմիկ) գիւղի մօտ մի ձոր կայ, այնտեղ հարկաւոր է կամուրջ, որ գետը կամուրջի վրայից անցնի. ուրիշ մեծ դժուարութիւններ չը կան. ծախս կը գնայ մօտաւորա-

պէս 100000ր.» (1892, №109): Երկու ծրագրերի դեպքում էլ նախատեսվում էր ընկերություններ ստեղծել և համատեղ ուժերով գործել: Ի դեպ, Ախուրյան գետից ջրանցք բացելու ծրագիրն իրականացավ 1922-1925 թվականներին:

Մոսկվայի համալսարանի շրջանավարտ Գեղամ Տեր-Պետրոսյանի՝ «Կովկասի գյուղատնտեսական ընկերության» 1886 թվականի փետրվարի 7-ի նիստում կարդացած զեկուցման համաձայն, Շիրակի տնտեսական զարգացման խթան կարող էին լինել նաև անտառների ստեղծումը և «հոտաւէտ և դեղերի համար գործածվող խոտերի մշակութիւնը», մասնավորապէս, ինչպէս հիշում է գրող Ատրպետը. «Գյումրիի Ախուրյանի ձորը և Լեռան (Արագած-Գ.Ա.) դաշտերը զարդարել վարդաստաններով» (1886, №17)<sup>5</sup>: «Մշակ»-ի խմբագիր Գ. Արծրունին «Մեր գիւղացիների աղքատութիւնը» առաջնորդողի մեջ, վերլուծելով զեկուցման նյութը, իրավացի հարցեր է առաջադրում. «Ի՞նչ միջոցներով, ի՞նչ հնարներով պէտք է սովորեցնել մեր գիւղացիներին, մտցնել նրանց մեջ գիւղական մի որևէ նոր արդիւնքի մշակութիւնը» (1886, №23): Գ. Տեր-Պետրոսյանը, փաստորեն, դրանց պատասխանները չէր տվել: Արծրունու կարծիքով, տնտեսության ոլորտում իրական հաջողություններ կարող են երաշխավորել միայն գիտելիքահեն և ճիշտ հաշվարկված գործողություններ:

Լրատու Գր. Տգր.-ն<sup>6</sup> իր հերթին չափազանց մեծ հույսեր է կապում 1890 թվականին Թոփառլի (Հացիկ), Օրթաքիլիսա (Մայիսյան), Դարբանդ (Կարմրաքար) և Մարիար (Մեծ) գյուղերի մոտ հայտնաբերված լիզնիտ<sup>7</sup> տեսակի ցածր կարգի ածուխի հանքերի արդյունահանման հետ՝ ընդգծելով անտառներից գուրկ Ալեքսանդրապոլի և շրջակա գյուղերի տնտեսական զարգացման համար դրանց կարևոր նշանակությունը (1890, №99: Հմմտ. №109): Տեղեկություններ չկան այն մասին, թե հետագայում հանքերն ինչ սկզբունքով են շահագործվել:

«Մշակ»-ի էջերից քարոզվում էր կատարելագործել տնտեսվարման եղանակները՝ պարարտացնել վարելահողերը, ծառեր տնկել և այլն: Օրինակ, Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիները օգտագործում էին երկանիվ՝ ասիական սայլեր, իսկ Շիրակեցին իր վերոնշյալ հետազոտության մեջ խոսում է դրանք քառանիվ՝ ռուսական թեթև սայլերով փոխելու անհրաժեշտության մասին (1883, №81; 1890, №58): Լրագրում տպագրված նյութերը հաշվի առնելով և ժամանակի պահանջը հասկանալով՝ 1891 թվականին Երևանի նահանգապետն արգելում է Ալեքսանդրապոլի գավառի տարածքում երկանիվ սայլերի օգտագործումը: Նոր սայլերը պատրաստվում էին Ալեքսանդրապոլի 18 արհեստանոցներում (1891, №107):

Ալեքպոլցի «մշակականները» հարկ եղածն անում էին հայ գյուղացիների ինքնագիտակցությունը բարձրացնելու, գյուղացու բարոյական արժանիքները ներկայացնելու համար: Նրանցից մեկը թղթակցում է. «Գիւղացին շատ բարձր է քաղաքացուց, որ նա իր պարգութեամբ, իր ընտանեկան և հասարակական ան-

<sup>5</sup> Տե՛ս ԳԱԹ, Ատրպետի ֆոնդ, վ.95, թ.58:

<sup>6</sup> Գրիգոր Թադևոսի Տիգրանյան (1859-1930թթ.)-կարսեցի Տիգրանյան նշանավոր տոհմի ներկայացուցիչ:

<sup>7</sup> Թույլ ածխայնությամբ փայտանյութ (слабоуглефицированная древесина), գորշածուխ:

կեղծ և բնական հաւասարութեամբ կարող է բարոյական օրինակ լինել քաղաքացու համար» (1887, №51): Անգրագիտության պատճառով հայ գյուղացին սնահավատ էր, չէր հետևում անձնական հիգիենային և առողջությանը, խելապակասության հասնող շռայլ էր: Հայ գյուղի ապագայով մտահոգված մտավորականները խիստ լեզու էին բանեցնում՝ երկրագործներին բնութագրելով «նախաջրհեղեղեան վայրենի», «հնամուլ», «յիմար շինական», «ոչխարային միամտութիւն ունեցող» արտահայտություններով (1879, №143; 1883, №81; 1890, №59): «Մշակ»-ի նամակագիրները ժողովրդին առաջնորդելու և լուսավորելու գործը վերապահում էին գյուղի տանուտերին, ուսուցչին, քահանային, նորավարտ երիտասարդությանը և մամուլին, բայց \*\*\*-ի<sup>8</sup> դիտարկմամբ. «Ոչ ոք չը կայ. հայ բուրժուա-ինտելիգենտը մտած իր տաք բնակարանը՝ «նիսիա»<sup>9</sup> զգացմունքներով՝ ու ցանկութիւններով է բաւականանում: Հայասերը հօ վաղուց է կորել, անյայտացել» (1887, №73):

Պարտքերի տակ կքած գյուղացիների մեծամասնությունը հյուծվում էր վաշխատուների սահմանած բարձր տոկոսներից: Ականջալուր լինենք «Մշակ»-ի թղթակից Պ.-ի ձայնին. «Նա արդէն գիւղացուն իր ստրուկն է համարում. եթէ տուեց 100 ռուբլ, գիւղացին լաւ գիտէ որ այլ ևս ազատութիւն չունի այդ հրէշից» (1883, №49): Երկրագործներն զգալի վնասներ էին կրում նաև հայ, պարսիկ և հրեա մանրավաճառների՝ «չարհիների» գործունեությունից: Աղքատությունը նրանցից շատերին մղում էր դեպի քաղաք: Այդ գործընթացը Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման անխուսափելի հետևանքներից էր: «Մշակ»-ը մանր տնտեսություններին քայքայումից փրկելու, թշվառ գյուղացիների վիճակը բարելավելու, նրանց պրոլետարացումը կանխելու ուղի է գտնում՝ «առտնին արհեստներ» (кустарные производства): Պողոս Բերբոյանը, ինչ-որ չափով «Մշակ»-ի խմբագիր Գ. Արծրունու քիմքը շոյելով, ծանրակշիռ և համոզիչ կերպով առաջ է տանում գյուղերում արհեստների տարածման հարցը (1883, №81; 1890, №№58, 132): Մանավանդ ձմեռվա ամիսներին դա գտնված այլընտրանք էր գյուղատնտեսական զբաղմունքներին: Առաջադեմ մտածող Պ.Բերբոյանը 1880-1890-ական թվականների համար ժամանակավրէպ դատողություններ է անում: Օրինակ, նրա հետևյալ միտքը. «Ինչի՞ցն է, որ գիւղացին թողնելով իր նախորդի համազգեստները, այժմ երբ փող է ունենում, հագնում է «դրապ, մահուդ, լաստիկ» ... մինչդեռ նրա նախնիքը իրանից աւելի հող ունէին, աւելի ապահով, աւելի հարուստ էին, ու նրանք հագնում էին տան գործած շալից համազգեստ» (1883, №81): Գյուղերում արհեստների տարածումից ակնկալվող օգուտները նրան խանգարել են տեսնել նոր տնտեսակարգի զարգացման օրինաչափությունները:

Պողոս Բերբոյանն Ալեքսանդրապոլում արհեստների արդիականացման ջատագով էր. «Պէտք է հասարակութիւնը ձգտում ունենա արհեստների կատարելագործելուն, որովհետև ամեն մի ժողովրդի ճշմարիտ զարգանալը և յառաջադիմութիւնը կայանում է ուսման և արհեստի մէջ» (1883, №108): 1887 թվականից նա «Մշակ»-ին իր թղթակցություն-նամակներում խոսում է Ալեքսանդրապոլում

<sup>8</sup> «Մշակ»-ի ալեքսանդրյան թղթակիցներից մեկի ծածկանունն է:

<sup>9</sup> Նիսիա = ապագայի հույսով կատարվող, ենթադրական:

արհեստագործական դպրոց բացելու մասին (1887, №№131, 138; 1890, №47): Բեբուրյանը հիմնավոր փաստարկներով ապացուցում է, որ այդ դպրոցը կարող է նպաստել քաղաքի տնտեսական առաջադիմությանը: XIX դարի վերջերին, երբ Ալեքսանդրապոլում գրեթե չկային ժամանակակից գործարաններ ու ֆաբրիկաներ, երկաթուղու կառուցումն արդեն իրողություն էր, արհեստագործական դպրոց բացելու «Մշակ»-ի պահանջը խրախուսելի էր: Խնդիրը նոր չէր: Ալեքսանդրապոլի հայ հասարակությունը բազմիցս դիմել էր Կովկասի փոխարքայության իշխանություններին՝ քաղաքի Գավառական և Հոգևոր դպրոցներում արհեստագործական բաժիններ բացելու խնդրանքով, բայց գումար չլինելու պատճառաբանությամբ մերժվել էր: 1902 թվականին միայն ավերացիների ցանկությունը մասամբ կատարվեց, երբ քաղաքում բացվեց Առևտրական դպրոց:

«Մշակ»-ի ավերացյան թղթակիցներին լրջորեն զբաղեցրել են 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Արևմտյան Հայաստանին ու արևմտահայությանը վերաբերող հարցերը:

1877 թվականի ապրիլի 12-ին սկսվում է ռուս-թուրքական պատերազմը: Ալեքսանդրապոլում կյանքը փոխվում է. տազնապը համակում է ամենքին: Ռուսաստանի կառավարության որոշմամբ սահմանամերձ բնակավայրերի, այդ թվում Ալեքսանդրապոլի բնակիչներին անվտանգության ապահովման նկատառումով անվճար հրացաններ են բաժանվում: Նույնիսկ ավերացի երեխաներն էին պատրաստ կտրելու «Արևելեան հրեշի» գլուխը: Պահպանվել է «Մշակ»-ի անանուն մի թղթակցի հետաքրքիր հաղորդումը, թե ինչպես են նրանք, փայտյա հրացաններն ուներին, դիմավորել Կովկասի փոխարքային, երբ վերջինս տեսության էր եկել Ալեքսանդրապոլում տեղակայված ռուսական զորքերին (1877, №26):

Պարբերականի նյութերի վկայությամբ պատերազմի ընթացքում Ալեքսանդրապոլում օդը բուրում էր գարշահոտությամբ, տարածված էր տիֆ վարակիչ հիվանդությունը (1878, №№1, 4, 9): Քաղաքը լի էր գաղթական հայ մշակներով, հայ և ասորի մուրացկաններով:

Առաջին հայ գաղթականները «Թիւրքիայի անգթութիւնների» պատճառով Կարսից Ալեքսանդրապոլ էին եկել դեռևս պատերազմի նախօրյակին՝ 1877 թվականի հունվար-փետրվար ամիսներին: Կարսից, հետագայում Մուշի գավառից եկած մշակները Ալեքսանդրապոլում և համանուն գավառում ապրում և աշխատում էին սոցիալական ծանր պայմաններում, նրանց շրջանում բարձր էր մահացության տոկոսը: Նրանք ստանում էին օրական 20-30 կոպեկ աշխատավարձ: «Մշակը ստիպված է լինում պատառոտած հագուստով, հին մաշված կոշիկներով և շատ անգամ բոբիկ ման գալ քարերի և ցեխերի մեջ, որ կարելի լինի սև օրվայ համար մի քանի կօպեկ թողնել», - գրում է «Մշակ»-ի աշխատակից Պ.Բ.-ն (1882, №92): Պետք է ասել, որ գոհացուցիչ չէր նաև ավերացի բանվորների սոցիալական վիճակը, որոնք ստանում էին տարեկան 15-120 ռուբլի աշխատավարձ (1890, №40): Առևտրականների կրպակներում բանվորներն աշխատում էին նույնիսկ կիրակի օրերին: Այդ «գործակատարների» պահանջով 1891 թվականին Ալեքսանդրապոլի



գավառապետի պաշտոնակատար Ջ. Ցիգանկովը քաղաքի առևտրականներին արգելում է կիրակի օրերին կրպակները բացել (1891, №147):

Ալեքսանդրապոլում աշխատող տարբեր թերթերի լրագրողների պես «Մշակ»-ի ալեքսանդրյան թղթակից Մ. Միհրանյանցն Ալեքսանդրապոլում և Կարսում գրառում է արևմտահայ մշակների տպավորությունները: Այդ մունջիսեղականատեսների վկայությունները գավառական հարստահարությունների տիպական օրինակներ են: Հատված մշեցի մի գառամյալ ծերունու հետ Միհրանյանցի հարցազրույցից. «Անցած տարուն (1877թ.-Գ.Ա.) եմ էկած Մուշէն, ու աս վիճակիս մէջ ըլլելուս պատճառը ան անգութ, անօրէն, բարբարոս քուրդեր ու տաճիկներ են, որ տասնըհինգ տղայ զաւակներս հետզհետէ մեռուցին, կնիկս ու աղջիկս խլեցին, տուն ու տեղս քանդեցին, կործանեցին, մալս ու տաւարս կողոպտեցին, և ինձի ալ, ադ անաստուածներ սպանելու փոխանակ, որ մի անգամից իմ դարդեր հետս գերեզման տանէի, թողին սաղ որ մինչի աս օրերս տեսնեմ, մաշվեմ ու տրորվեմ անբուժելի ցաւերովս» (1878, №72: Հմմտ. 1879, №56): Թղթակցին համարյա նույնն են պատմել նաև Կարսի սրճարաններից մեկում հանգրվանած վանեցի և մշեցի գաղթական մշակները: Ավելին, կարինցի մի երիտասարդ պատմել է Կարինի հայերին ռուսական զորքերի հեռացումից հետո սպառնացող բնաջնջման մասին (1878, № 162): Ակնհայտ է, որ արևմտահայերին տարագրության դրողն Օսմանյան պետության վարած բռնապետական քաղաքականությունն էր, թուրք պաշտոնյաների անօրինությունները: Օրինակ, երբ 1883 թվականին Օսմանյան կառավարությունը խստացնում է հարկային քաղաքականությունը, մասնավորապես մի անձից սկսում է գանձել 8 ռուբլի գլխահարկ, բազում արևմտահայեր գալիս են Ալեքսանդրապոլ և Թիֆլիս՝ գումար վաստակելու (1883, №78):

Բայց հայի պայքարելու կորովը գորեղ էր: «Մշակ»-ի աշխատակից Պ.Բ.-ն Մուշի գավառի Խլադ գյուղի մի բնակչից գրառել է, թե ինչպես 1882-1883 ձմեռը քրդերը չորս անգամ հարձակվել են Խլադ գյուղի վրա, բայց ոչինչ չեն կարողացել տանել, քանի որ խլադցիները գյուղի քահանա Տեր-Գրոյի գլխավորությամբ դիմադրել են գայլաբարո ավագակներին (1883, №78): Ու սա այն դեպքում, երբ 1883 թվականի սկզբից Մուշից, Վանից, Կարինից Ալեքսանդրապոլ ու Կովկասի այլ քաղաքներ և հակառակ ուղղությամբ երթևեկող զինակիր հայերին ռուս-թուրքական սահմանի վրա «եասաուլ»-ներն սկսել էին զինաթափել՝ պատճառաբանելով, թե «հային կառավարութիւնից իրաւունք տուած չէ զէնք կրելու, իսկ թուրքին ու քիւրդին կարելի է» (1883, №29):

Ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակը, բեռլինյան հիասթափությունը ոգևորության մի նոր ալիք են բարձրացնում հայության շրջանում: 1878-1883 թվականներին հայրենասիրական կրքերի հրավառությունից լուսավորվում են Հայկյան Մշակի տիրույթները: Հայ կամավորների զենքերի վառողի հոտը պատում է հայկական երկնակամարը: Ալեքսանդրիները հաղորդակից էին ազգասիրական այդ շարժմանը: «Մշակ»-ի սրտացավ թղթակից \*\*\*-ն երգիծանքով գրում է. «...Ալեքսանդրապոլը թէ քիմիապէս և թէ ֆիզիքապէս ազգաւեր է» (1879, №103): Ազատագրական պայքարի գաղափարախոսության յուրօրին-

նակ դրսևորում էր այն, որ Ալեքսանդրապոլի Սահականուշյան իգական դպրոցի աշակերտուհիները գործել էին «հին Հայաստանի» քարտեզը (1883, № 131): Ալեքսանդրապոլի հայասիրության ցուցքն են նաև Բաֆֆու և նրա «Կայծեր» վեպի մասին գովասանական խոսքերը «Մշակ»-ում (1883, №№42, 47, 64): Միջազգային հարաբերություններում քաղաքական վերադասավորումների, հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի և Օսմանյան պետության վերաբերմունքի փոփոխության պատճառով, սակայն, «Հայաստանի աստղը» խամրում է:

Ալեքսանդրապոլի մշտապես մասնակցել են հոգուտ արևմտահայերի «Մշակ»-ի կազմակերպած հանգանակություններին, սիրով ընդունել այդ նպատակով Ալեքսանդրապոլ եկած արևմտահայ հոգևորականներին (Ն. Վարժապետյան, Ա. Ռուբինյան, Պ. Նաթանյան և այլք):

1880 թվականին Մեծ և Փոքր հայրենիքի բազմաթիվ շրջաններում թևածում էր սովոր: Համաժողովրդական բնույթ է կրում Վանի, Բայազետի և Ալաշկերտի սովյալների օգտին կազմակերպած հանգանակությունը: Այս գործը համակարգող ուսուցիչ Աբիսողոմ Հովհաննիսյանցի տվյալներով՝ Ալեքսանդրապոլում հավաքվել է մոտ 1200 ռուբլի գումար (1880, №85): Ալեքսանդրապոլում 15000 ռուբլու այլուր են բաժանում քաղաքի աղքատ ընտանիքներին (1880, №77): Օժանդակություն են ստանում նաև Ալեքսանդրապոլի գավառի չքավոր գյուղացիական տնտեսությունները: Երկրի կառավարությունը նրանց երեք փուլով 25000 փութ<sup>10</sup> սերմացու ցորեն է բաժանում: Անշուշտ, կարիքավորներին ցուցաբերած օգնությունը բավարար չէր, ու շատերի մեջ այդ հանգամանքն իրավացիորեն դժգոհություն է առաջացնում: «Մշակ»-ի թղթակից Գ. Բաղրամյանցը, ճիշտ պահը որսալով, բարձրաձայնում է ազգային-բարեսիրական գործերի համար նվիրատվության հարցում ժուժկալ վաճառականների և նրանց ցուցամոլությամբ տառապող կանանց մասին: Կանանց այդ տիպը հավաքությունների ժամանակ մեծ գումարներ էր ծախսում (200-300 արծաթ ռուբլի). «Հրաւիրվում են 40-50 կանայք, սկսվում է կերուխումը, առաջ են գալիս 9-10 տեսակ թանգագին շաքարլամաններ, 6-7 տեսակ ընտիր քաղցրաւենիք, 4-5 տեսակ նոր և թարմ մրգեր այսպէս ամեն բան իր կարգին» (1880, №175): Ազգասիրությունը և անտարբերությունը ձուլելով մի կաղապարում՝ նա կարողանում է վեր հանել հարուստ վաճառական խավի բնավորության վատ գծերից մեկը:

1880-1881 թվականներին խղճի ազատության և ազգության հատկանիշների վերաբերյալ «Մշակ» և «Մեղու Հայաստանի» թերթերի գաղափարական բանավեճում «Մշակ»-ը կարևորում էր ազգային պատկանելության գործոնը՝ մերժելով առաքելական, կաթոլիկ, բողոքական և մահմեդական հայերի միջև տարբերությունն ղնելու օգտին «Մեղու»-ի կարծիքը: «Մշակ»-ի ալեքսանդրապոլի տեսաբաններ Պետրոս Բեբուրյանը (Հայ-Հռովմեական, Հայ-Կաթոլիկ), Սմբատ Պարսամյանցը, Ա. Ափրիկյանցը, Հ. Պահլավունին գրոհում են թերթի առաջին էջերը: Չժխտելով հայ եկեղեցու ազգապահպան դերը և իրենց խոսքը համեմելով հայ ժողովրդի պատ-

<sup>10</sup> 1 փութը = 40 ֆունտի = 16 կիլոգրամ 380 գրամի:

մական ճակատագրի դառը փորձով՝ նրանք ազգության հատկանիշներից առաջնային էին համարում լեզուն և հայրենիքը: Հոգու խորքից է ասված. «Կրօնը ազգութեան հետ կապ չունի. ամենայն հասկացող մարդ այդ կրնդունի: Իսկ թէ կրօնը եղել է կամ է ազգութեան նեցուկ, - այդ բոլորովին այլ է» (1880, №171): «Մշակ»-ի ալեքսանդրյան տեսաբանների համահավաք մտածողության արգասիքը հետևյալն էր. հայ ազգի գոյության կովանը ներքին թշնամանքից, եղբայրաստացությունից հրաժարումն ու միասնաբար «ժողովրդի տնտեսական և մտաւոր շահերի մշակութեան գործն է» (1880, №168):

«Մշակ»-ը երկու տասնյակ հետաքրքիր նյութեր է մատուցում Անդրկովկասի, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի կաթոլիկ հայերի վերաբերյալ: Դրանց վկայությամբ՝ Ալեքսանդրապոլում բնակվում էին 40-50 ընտանիք կաթոլիկ հայեր, որոնք 1827 թվականին եկել էին հիմնականում Արևմտյան Հայաստանի Կարին քաղաքից (1878, №150): Նրանք զբաղվում էին արհեստագործությամբ՝ ներկարարությամբ և հացթուխությամբ, ունեին իրենց եկեղեցին ու դպրոցը: Սբ Աստվածածին եկեղեցին 1843 թվականին սկսել էին կառուցել Կապուչինյան միաբանության միսիոներ-հոգևորականները՝ «պատեր Փիլիպե և ընկերներ» (1888, №79)<sup>11</sup>: 1844 թվականին Ռուսական կայսրության տարածքում Կապուչինյան միաբանության գործունեության արգելումից հետո եկեղեցու կառուցումը հասարակության աջակցությամբ 1855 թվականին ավարտում է հայ կաթոլիկ նշանավոր հոգևորական Ալեքսանդր վրդ. Արարատյանը (1820-1888թթ.): «Մշակ»-ի թղթակիցներ Կարապետ Հովհաննջանյանի և Պետրոս Բերուրյանի դիտարկմամբ հռոմեական ոճով կառուցված եկեղեցին գուրկ էր շքեղությունից:

Ալեքսանդրապոլի և Անդրկովկասի մյուս բնակավայրերի հայ կաթոլիկ եկեղեցիներում և մատուռներում ժամերգությունները կատարվում էին հայկական ավանդությամբ, հոգևոր սպասավորները հայերենով էին քարոզում: «Առանց մայրենի լեզուի երբեք չէ կարող գոյութիւն ունենալ ոչ մի կրօնական համայնք և ոչ մի ազգութիւն», - գրում է Պ. Բերուրյանը (1882, №145): Լատին հոգևորականները ճնշումներ էին գործադրում կաթոլիկ հայերի վրա, որպեսզի նրանք մոռանան իրենց ծիսադավանական ավանդությունը, տեղական բարքերն ու սովորությունները, լեզուն, չգորակցեն ազգային կենսական խնդիրների լուծմանը: Սակայն, ի պատիվ Անդրկովկասի հայ կաթոլիկ համայնքի հոգևոր առաջնորդներ Պողոս վրդ. Շահխուլյանի, Ա. վրդ. Արարատյանի և Պողոս վրդ. Նահապետյանի, կաթոլիկ հայերի ազգային ինքնությունը չխաթարվեց:

1848 թվականից Ալեքսանդրապոլում գործում էր հայ կաթոլիկ դպրոց, բայց առաջին կանոնավոր դպրոցը (գիշերօթիկ) բացվում է 1858 թվականի հոկտեմբերի 29-ին: Հիմնադրի՝ Ա. վրդ. Արարատյանի նպատակը հայ կաթոլիկ համայնքի համար հոգևորականներ պատրաստելն էր: Դպրոցի պատերին կայցրած էին զանազան լեզուներով աշխարհագրական, փոստային և հեռագրական քարտեզներ, նաև սրբազան պատմության վերաբերյալ մոտ 240 պատկերներ (1879, №193): Դպրոց

<sup>11</sup> Տե՛ս «Նոր-Դար», Թ., 1888, №174:

կարող էին ընդունվել 15-17 տարեկան տղաները: Ուսումը վճարովի էր: Դպրոցում դասավանդվում էին հայոց և ռուսաց լեզուներ, լատիներեն, թվաբանություն, կրոնագիտություն, աստվածաբանություն, ճարտասանություն, սրբազան պատմություն, աշխարհագրություն, համաշխարհային պատմություն և երգեցողություն առարկաները (նույնը տեղը): Ուսուցիչներն էին Ա. ծ. վրդ. Արարատյանը, Սարգիս վրդ. Մխիթարյանը և Միմեոն սարկավագ Չմշկյանցը: Հայ կաթոլիկ հոգևոր դպրոցի գոյության առաջին շրջանում (1848-1853թթ.) աշակերտների ընտրության հարցում դավանական խտրականություն չէր դրվում և մեծ ուշադրություն էր դարձվում նրանց մտավոր կարողություններին (1881, №9): Հաջորդ շրջանում (1858-1888թթ.) ուսուցման հնացած մեթոդների կիրառմամբ կրթությունը ձեռք է բերում նեղ կրոնական բովանդակություն: «Մշակ»-ի թղթակից Հայ-Հռովմեականին հուզում է դպրոցի առարկայացանկից «ազգային պատմութեան, բնագիտութեան և աշխարհագրութեան» բացակայության խնդիրը (1879, №193): Նրա կարծիքով, ազգային շահերից է բխում հայոց պատմություն և հայոց աշխարհագրություն առարկաների դասավանդումը և գիտնական մանակավարժների ներգրավմամբ դպրոցի բարեփոխումը (1881, №9):

1891 թվականի սեպտեմբերի 10-ին Ալեքսանդրապոլում բացվում է կաթոլիկ հայերի միադասարանյան արական դպրոցը, որտեղ սովորում էին 30 աշակերտներ: Դպրոցի հոգաբարձուներն էին Սահակ քահ. Տեր-Աբրահամյանը, որը դասավանդում էր նաև կրոն և քրիստոնեական վարդապետություն առարկան, Պողոս Այտինյանը և Պետրոս Բեբուրյանը: Դպրոցում ուսուցչություն էին անում Կարապետ Առաքելյանը (հայոց լեզու, թվաբանություն, երգեցողություն) և Հայկ Արաբաջյանը (ռուսաց լեզու): «Մշակ»-ի նամակագիր Շիրակեցին է պատմում. «Այս դպրոցը հայ-կաթոլիկ համայնքի մեջ առաջին կանոնադր ուսումնարանն է, իսկ մինչև այժմ եղածները բոլորն էլ հին-խալիֆայական սիստեմով էին, որոնց մեջ թագաւորում էր ծեծը և հայհոյանքը» (1891, №110):

Ալեքսանդրապոլի հայ կաթոլիկ համայնքի հոգևորականները և մտավորականները բարձր էին գնահատում Մխիթարյանների կրթալուսավորական առաքելությունը և սերտ կապեր էին պահպանում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամների հետ (Ղևոնդ Ալիշան, Գաբրիել վրդ. Նահապետյան): Հայ պատանիները տեղում ուսումն ավարտելուց հետո կրթվում էին Վենետիկի և Փարիզի Մխիթարյան վարժարաններում (Ավետիք Եզեկյան, Ներսես Ճնտոյան):

Լրագրում ալեքսպոլյան թղթակիցները շրջանառել են նաև եկեղեցական, դպրոցական-մանկավարժական, մշակութային (թատրոն, հրապարակային դասախոսություն, գրադարան-ընթերցարան, գրքերի հրատարակություն) ոլորտներին, փոստին վերաբերող տեղեկություններ:

Ամփոփելով նշենք, որ ազատական «Մշակ»-ում և «Մշակ»-ի հետ հասարակական գործիչները քննարկում էին հայության համար այսօր էլ ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք էին հային հայրենիքում պահելը, ազգի միասնականությունը, աշխատատեղերի ստեղծումը, ազգի առջև ծառայած խնդիրների համակարգումն ու լուծումը:

## АЛЕКПОЛЬСКИЕ КОРРЕСПОНДЕНЦИИ «МШАК»-у В 1872-1892 ГГ.

*Резюме**Г. Айвазян*

В 1872-1892 гг. из Александрополя, под разными псевдонимами, с газетой «Мшак» сотрудничали представители свободомыслящей интеллигенции: А. Априкянц, братья Петрос и Погос Бебурияны, Г. Баграмянц, С. Парсамянц и др. В направляемых ими в газету письмах-корреспонденциях освещение многочисленных вопросов, касающихся экономической, религиозной, политической жизни Александрополя и одноименного уезда, резкие постановки вопросов о патриотизме, защите слоя мелких предпринимателей, помощи проживающих в Турции западных армян, требование от ответственных за развитие общественной жизни шагать в ногу со временем и служить с верой в свое призвание, исходили из ключевой озабоченности сохранением существования армянского народа.

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Այվազյան Գևորգ Մամվելի – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, E-mail: [AyG.84@mail.ru](mailto:AyG.84@mail.ru)*

*Владимир ФОМЕНКО*

### *СЕЛЕНИЯ ТАМБИЕВЫХ БЛИЗ ПЯТИГОРСКА И КИСЛОВОДСКА\**

Селение (хутор) Тамбиева обозначено на карте середины XIX в.<sup>1</sup> вблизи станицы Горячеводской<sup>2</sup>. У местного населения сохранилось предание о существовании здесь армянского аула, уцелело также название Армянский лес в соседней долине р. Юцы<sup>3</sup>.

Известный на Кавказских Минеральных Водах ученый и общественный деятель С.А. Смирнов в своей книге, опубликованной в 1864 г., пишет: «Верстах в 7 от Пятигорска, по ту сторону Подкумка, на извилистом берегу реки Юцы, расположен черкесский аул, называемый Армянским, преимущественно потому, что зажиточнейшая часть жителей из армян. Для посетителя, не бывшего на Кавказе, он представляет тот интерес, что в нем можно увидеть сохранившуюся внутреннюю жизнь черкесских аулов при переходе ее к более цивилизованным формам. Внутреннее расположение домов, одежда и украшение женщин, их гостеприимные обычаи и проч. переносят европейца в совершенно новый для него мир. Дорога в этот аул довольно удобна»<sup>4</sup>. Приблизительно тот же текст под названием «Прогулка в Армянский аул» повторяется позже. Только расположение этого аула на реке Юце указано уже в 4 верстах от Пятигорска<sup>5</sup>.

Сведения об этом населенном пункте сохранились в архиве краеведа Н.М. Егорова, хранящимся в Пятигорском краеведческом музее. 28.07.1933 Н.М. Егоров зафиксировал воспоминания казака станицы Горячеводской 1866 г. рождения. Этот казак сказал, что еще помнит этот аул, он был не большой и владельцем в нем являлся Тамбиев. Обстоятельств исчезновения этого аула он не помнит и не знает. Расположен он был на левом берегу р. Юцы. Станица Горячеводская уже заняла (к 30-м гг. XX в. – В.Ф.) всю его площадь и даже подвинулась еще вверх по р. Юце<sup>6</sup>.

Кроме того, осматривая в 2000 г. старое кладбище станицы Горячеводской, я обратил внимание на сохранившийся здесь массивный памятник в виде креста из серого камня с надписью «Тамбиев Макар Давыдович. Скончался 5-го января

---

\* Статья в качестве доклада была представлена на международной научной конференции «Историко-культурное наследие и современность», состоявшейся 4-6 октября 2013 г. в Гюмри.

<sup>1</sup> Карта Кабарды, Балкарии и Ставропольской губернии 30-40-х гг. XIX в. с более поздними обозначениями. Хранится в Центральном государственном архиве Кабардино-Балкарской республики (далее ЦГА КБР). Ф. 40. Оп.1. Д. 209. Л. 156.

<sup>2</sup> Ныне поселок Горячеводский, вошедший в состав города Пятигорска Ставропольского края.

<sup>3</sup> Рунич А. Поселения прошлого века на КМВ//Кавказская здравница. Пятигорск, 1978. 22 сентября; Асадов Ю.А. Дворянская история Пятигорска (очерк)//Бекский дом. Пятигорск, 1996. Вып. 3. С. 3-15; Фоменко В. Пятигорье в XV–сердине XVIII в. Пятигорск, 2002. С. 51-52.

<sup>4</sup> Смирнов С. Путеводитель к Кавказским Минеральным Водам Пятигорск, 1864. С. 39-40.

<sup>5</sup> См.: Смирнов С. Путеводитель к Кавказским Минеральным Водам. Пятигорск, 1867. Ч. 1. С.93; Владыкин М. Путеводитель и собеседник в путешествии по Кавказу. М., 1885. Ч. 1. С. 140-141.

<sup>6</sup> Архив Егорова Н. Д18. Л. 20 и об.

1881 года». Вполне возможно, что здесь похоронен владелец (или близкий родственник владельца) упомянутого селения (аула, хутора)<sup>7</sup>.

Фамилия Тамбиевых относится к наиболее значительным дворянским фамилиям Большой Кабарды. Тамбиевы относились к особому «высокостепенному» кабардинскому сословию тлакотлеш<sup>8</sup>. Какое же отношение кабардинские дворяне Тамбиевы имели к Армянскому аулу близ Пятигорска?

Почти исчерпывающий ответ на этот вопрос содержится в публикациях известного историка-архивиста С.Бейтуганова<sup>9</sup>. На основе данных архивов Сафарби Нагмановичу удалось прояснить историю, как он пишет, «армян» Тамбиевых.

Сохранившееся в документах 20-х гг. XIX в. семейное предание Тамбиевых гласит, что у Тлостанеша Тамбиева (жил в середине и второй половине XVI в.) было три сына: Бекмурза, Умахош и Бий. Младший из братьев Бий решил жениться на дочери армянского священника, жившего в те времена в Кабарде. Родственники Бия были против этого брака и Бий уехал со своей возлюбленной за Кубань. Из Закубанья, опасаясь преследования, уехал в Крым, где «приняв веру армянскую, женился» и «остался жить между тамошними армянами». При крещении Бий получил имя Иосиф. Узнав о смерти своего отца Тлостанеша Бий (Иосиф), захотел помириться с братьями и вернулся в Кабарду вместе с четырьмя сыновьями. Однако братья не стали с ним мириться и не приняли в свою среду. Кроме того, они запретили ему именоваться фамилией Тамбиевых и за «поступки его против веры и родства и по деянию его стали называть Жигат Гауром, то есть Герой Неверный»<sup>10</sup>.

В начале XIX в., приблизительно в 1804 г. согласно преданию Жигатовы-Гауровы (или просто Гауровы), «оставя Кабарду, имея на отцов их неудовольство» и опасаясь за свое спокойствие вследствие принятия... христианской веры», перешли под покровительство России и поселились со своими подданными под Лысой горой в Пятигорье<sup>11</sup>.

Представители рода Гаур-Тамбиевых, основавшие селение у Лысой горы, многократно упоминаются в документах XIX в. т.к. они пытались доказать свое знатное кабардинское происхождение и просили причислить их к дворянскому сословию<sup>12</sup>.

Командующий войсками Кавказской линии и Черномории генерал Г.А. Емануэль отмечал, что «дело Тамбиевых может иметь большое влияние и на прочих узденей азиатского происхождения, которые со временем пожелали бы воспринять христианскую религию и вступить в подданство Российского престола» В документе от 28 февраля 1830 г. Емануэль писал: «Все сие обстоятельство представлял правительствующему сенату, я имею честь присовокупить, что обитатели аула у Лысой Горы Гаур-Тамбиевы, зачисленные в Волгский казачий

<sup>7</sup> *Фоменко В.* Армянский аул или хутор Тамбиева близ Пятигорска // *Российская государственность в судьбах народов Северного Кавказа. Пятигорск, 2009.* С. 309, 315.

<sup>8</sup> *Правовые нормы адыгов и балкаро-карачаевцев XV-XIX вв. Майкоп, 1997.* С. 45,80,211-212,286.

<sup>9</sup> *Бейтуганов С.* Кабардинские фамилии: истоки и судьбы. Нальчик, 1990. С. 146-157; *Бейтуганов С.* «Армяне» Тамбиевы // *Генеалогия Северного Кавказа. Нальчик, 2006.* N 16. С. 22-36; *К истории рода Тамбиевых (лысогорские «армяне») // Там же.* С. 97-106.

<sup>10</sup> *Бейтуганов С.* «Армяне» Тамбиевы ... С. 28-29.

<sup>11</sup> *Там же,* С. 29.

<sup>12</sup> *Там же,* С. 22-36.



полк, будучи токмо армянского исповедания, но, происходя из рода кабардинских армян, не суть армяне, следовательно, и к обществу моздокских армян, пользующихся особенными привилегиями, причислены быть не могут». Однако, утверждал Емануэль, «принимая соображения, что состоящие под покровительством Российского правительства князья и уздени, сохраняющие свое вероисповедание, пользуются по службе и в отношении к их подвластным преимуществами своего рода, то несправедливо бы было стеснять или ограничить права тех из них, кои водворились в пределах России, даже приняли веру христианскую или для сохранения оной оставили своих однородцев»<sup>13</sup>. Дело Гаур-Тамбиевых получило широкий общекавказский и общероссийский резонанс и постепенно превратилось «в дело о правах вообще обитающих в России греков и мухаммедан». Этот вопрос в 1838 г. был внесен в Государственный совет, но окончательного закрепления своих сословных прав Гаур-Тамбиевы в то время не добились.

В 1846г. жители «Армянско-Лысогорской станицы Тамбиевых» 180 душ крепостных вместе со своими владельцами были переселены на Кубань выше крепости Прочно-Окопской<sup>14</sup> (окрестности современного Армавира). Причем как следует из документов Тамбиевы были христианами, а их подвластные – мусульманами. В 40-х гг. XIX в. «армяне Гауровы, по воле начальства», переселяются также в станицу Успенскую близ Армавира<sup>15</sup>.

Вместе с тем вполне определенно можно сказать, что Армянский аул у горы Лысой несмотря на переселение оставался и на прежнем месте. Так, на карте района Кавказских Минеральных Вод середины XIX в. у горы Лысой обозначен армянский аул и на «Геологической карте Пятигорского края» 1875 г. армянский аул также отмечен на левом берегу реки Подкумок к северо-западу с отклонением к западу от горы Лысой<sup>16</sup>.

Похоже, что именно в конце 20-х гг. XIX в. при командующем войсками Кавказской линии и Черномории генерале Г.Емануэле и был создан хутор Тамбиева близ города Пятигорска (до 1830 г. – селение Горячие Воды). Незадолго до этого в 1825 г. была основана станица Горячеводская, к которой видимо и относился хутор Тамбиева, обозначенный на карте. Похожая история была и с Армянским аулом (по-черкесски Ермэлхабль) на Средней Кубани, который появился только в 1837-1839 гг. у российского укрепления Прочный Окоп<sup>17</sup>. До этого времени закубанские армяне - черкесо-гаи, были разобщены по многим горским (черкесским) селениям.

Близость к Пятигорску - административному центру (уезда, а затем отдела) и известному курорту оставила в тени историю соседнего маленького горско-армянского селения Тамбиевых. Однако, опираясь на воспоминания казака станицы Горячеводской, отраженные в архиве Н.Егорова и упомянутые выше, а также на дату смерти М. Тамбиева, похороненного на кладбище станицы Горячеводской, можно предположить, что селение Тамбиевых на реке Юце близ Пятигорска и на окраине Горячеводской станицы существовало до начала 80-х гг. XIX в.

<sup>13</sup> ЦГА КБР. Ф. 2. О. 1. Д. 740. Л. 25 об., 27 об., 35, 36 об., 38, 40 об.

<sup>14</sup> ЦГА КБР. Ф. 16. О. 1. Д. 429. Л. 5, 10, 86.

<sup>15</sup> Материалы по обычному праву кабардинцев. Первая половина XIXв-Нальчик, 1956. С.151,157.

<sup>16</sup> Материалы для геологии Кавказа. Тифлис, 1876. Карта.

<sup>17</sup> Щербина Ф. История Армавира и черкесов-гаев. Екатеринодар, 1916.

В 50-х гг. XIX в. «армяне Тамбиевы» жили и в окрестностях станицы Боргустанской. Два семейства лысогорских армян Тамбиевых (Антон Емельянович и Макар Григорьевич) в 1856 г. были причислены к ст. Боргустанской «для сближения жительством с дядею их, жившим в ауле майора Хаджи Абукова». Спустя два года, они добились, чтобы их причислили к аулу Абукова<sup>18</sup>. С 60-х гг. XIX в. Встречаются сведения, что армяне Тамбиевы проживали в горских селениях, например, в верховьях Кумы в ауле князя Жантемирова<sup>19</sup>. В 60-х гг. XIX в. части Гаур-Тамбиевых удалось переселиться в Кабарду, воспользовавшись реформой укрупнения аулов. Причисленный к Прочно-Окопскому армянскому аулу и проживающий в станице Бургустанской, уздень Сергей Тамбиев в январе 1865 г. просит руководство Терской области зачислить его в число жителей Большой Кабарды, где прежде жили предки и отнести его с братьями, семейством в среду Атажукинской фамилии. Начальник Терской области разрешил узденю Сергею Тамбиеву переселиться на жительство в аул князя Хасанби Атажукина<sup>20</sup>.

Очевидно, что не все Гаур-Тамбиевы одновременно переселились в Большую Кабарду. Из документа 1866 г. следует, что «... те же из Тамбиевых, которые принадлежат к казачьему сословию, живут в настоящее время также на месте бывшего аула Абуковского» (ныне сел. Первомайское в Малокарачаевском районе Карачаево-Черкесии в окрестностях Кисловодска). В составе казаков, проживавших здесь «особым от аула поселком» (приобретен ими «покупкою у статского советника Кодзокова»), числился Макар Тамбиев, которому в 1866 г. был 81 год. Всего же в ауле жило Тамбиевых 23 человека<sup>21</sup>. Не все Тамбиевы были зачислены в казачье сословие. Сергей Тамбиев писал: «... мои дяди (Макар, Емельян, Багдасар) впоследствии перешли в казачье сословие и разделили между собой имение, отец же мой (Каспар) приписался к обществу г. Моздока»<sup>22</sup>. Крестьянам Тамбиевых, перешедших в казачье сословие, была дана свобода. Эти Тамбиевы были исключены из Терского казачьего войска в 1870 г. «с тем, чтобы в течение шести месяцев избрать другой род жизни». С 1 января 1873 г. их причислили к селению Ашабово (ныне селение Малка Зольского района Кабардино-Балкарии)<sup>23</sup>. Однако Тамбиевы приписанные к селению Ашабово были христианами и пожелали «быть причислены к приходу Свято-Георгиевской Армяно-григорианской церкви в г. Георгиевске»<sup>24</sup>.

В 80-х гг. XIX в. Тамбиевы (Гаур-Тамбиевы) стали крупными коннозаводчиками и землевладельцами. В 1886 году в селении Ашабово проживал 71-летний Тамбиев Лазарь Макарович, владевший 835 лошадьми и более чем полутора тысячами овец. Тамбиев Антон Емельянович имел 3122 десятины земли и 1621 голлову крупного и мелкого рогатого скота<sup>25</sup>.

Многие Тамбиевы (Гаур-Тамбиевы) были военными. Биографические данные о них собрал историк А.В. Казаков.

<sup>18</sup> Бейтуганов С. «Армяне» Тамбиевы ... С. 31-32.

<sup>19</sup> ЦГА КБР. Ф. 24. О. 1. Д. 295. Л. 113.

<sup>20</sup> Бейтуганов С. «Армяне» Тамбиевы ... С. 32-33.

<sup>21</sup> Бейтуганов С. «Армяне» Тамбиевы ... С. 33.

<sup>22</sup> ЦГА КБР. Ф. 2. О. 1. Д. 744. Л. 14.

<sup>23</sup> ЦГА КБР. Ф. 3. О. 1. Д. 151. Л. 109.

<sup>24</sup> Бейтуганов С. «Армяне» Тамбиевы ... С. 33.

<sup>25</sup> ЦГА КБР. Ф. 9. О. 1. Д. 46.

Тамбиев Артем Емельянович (? - не позднее 1863 г.), есаул (07.09.1855), из кабардинских узденей, вероисповедания армяно-григорианского. Служил во 2-м полку 1-й Волгской казачьей бригады. Проживал в своем хуторе (Тамбиева) близ станицы Боргустанской Пятигорского отдела. Был женат на дочери кабардинского узденя 1-й степени (в крещении Мария). Сын Емельян и брат Антон к 1907г. проживали в Кабарде в слободе Нальчик.

Тамбиев Георгий Мартиросович (26.07.1867 - не ранее 15.01.1900 г.), штабс-ротмистр (15.03.1899), из кабардинских узденей Терской области, вероисповедания - армяно-григорианского.

Тамбиев Георгий Мартиросович (06.03.1883 - не ранее 1908 г.) сын кабардинского узденя 1-й степени Терской области, вероисповедания - армяно-григорианского. Произведен в корнеты 14.06.1907 г. с зачислением в лейб-гвардии Конно-гренадерский полк. Проживал в Терской области.

Тамбиев Иван Саркисович (02.10.1867-не ранее 1914 г.), ротмистр (13.04.1912, со старшинством - с 11.06.1909 г.), из кабардинских узденей Терской области, вероисповедания армяно-григорианского. В Первую мировую войну воевал на Турецком фронте в составе Кавказской армии.

Тамбиев Сосри (? - не позднее 1864 г.), хорунжий (к 1863 г.), из кабардинских узденей, вероисповедания армяно-григорианского. Служил казаком, урядником, офицером в 1-м Волгском казачьем полку. Жена «Софья, дочь кабардинского узденя 1-й степени, православного исповедания». Проживал в Терской области.

Тамбиев (26.09.1867-18.02.1919), полковник (к 1919 г.). Из кабардинских узденей Терской области, вероисповедания армяно-григорианского. Участвовал в русско-японской войне. Ротмистр - с 1911 г. Участник Первой мировой войны. Проживал в Терской области. Предположительно, он во время Гражданской войны (с 11.12.1918 г.) командовал 3-м Черкесским (Кабардинским) полком белогвардейской Черкесской конной дивизии<sup>26</sup>.

Отдельно следует сказать о выше упоминавшемся хуторе Тамбиева близ Кисловодска. По данным С.Боглачева и С. Савенко владельцы хутора (Тамбиевы) были выходцами из-под Армавира. Земли близ абазинского аула Абуковского (современное село Первомайское) они приобрели около 1870г. Здесь у Тамбиевых был небольшой конезавод. Они поставляли в Кисловодск верховых лошадей на прокат посетителям курорта. Кроме того Тамбиевы разводили породистых овец, завели большие фруктовые сады. Под Кисловодском Емельяну Артемовичу Тамбиеву принадлежали 300 десятин земли<sup>27</sup>.

В окрестностях селения Первомайское сохранились топонимы, связанные с фамилией Тамбиевых: Тамбийланы кюнбет - урочище на левом берегу реки Подкумок (по-карачаевски- солнечная сторона, склон Тамбиевых); Тамбийланы чегет (по-карачаевски- лес, северный склон Тамбиевых)<sup>28</sup>. На окраине Первомайского сохранилось и христианское кладбище хутора Тамбиева. Этот историчес-

<sup>26</sup> Казаков А. Адыги (черкесы) на российской военной службе. Воеводы и офицеры. Середина XVI - начало XX в. Биографический справочник. Нальчик, 2006. С. 235-243.

<sup>27</sup> Боглачев С., Савенко С. Архитектура старого Кисловодска. Пятигорск, 2006.

<sup>28</sup> Хапаев С., Аджиева М., Батдыев А., Салпагарова М. Малокарачаевский район. Физическая география и топонимия. Карачаевск, 2007. С. 63.

кий памятник был осмотрен нами в 2011 г.<sup>29</sup>. Главный вход на кладбище, имеющее каменную ограду, находится с западной стороны. В стену у входа вмурованы три плиты из камня более темного цвета. В старой (досоветской) части этого небольшого кладбища сохранилось несколько старинных надгробий. На лабораторитовом памятнике имеется надпись: «Здесь покоится прах Марии Архиповны Тамбиевой, сконч. 11 июля 1913 г. 84 лет. Дорогой матери от любящих детей».

Следует сказать, что история Тамбиевых тесно связана и с историей Кисловодска, т.к. они активно занимались предпринимательской деятельностью, и в этом курортном городе им принадлежала некоторая собственность. Так, по данным С. Боглачева и С. Савенко, в конце XIX в. Е.А. Тамбиев купил в Кисловодске на Курсовой улице участок и дом майорши Свентицкой. После приобретения соседнего участка, Емельян Артемович решил построить доходный дом, по проекту архитектора Э. Ходжаева. В 1904-1905 гг. это трехэтажное здание в «кирпичном» стиле, отличающееся художественностью и рассчитанное на 120 меблированных комнат, было возведено. Немного позднее эти номера получили название - гостиница «Большая Московская». Здесь имелся водопровод, электрическое освещение, отопление, ванны и телефон. Гостиница была очень популярна. Предпринимателю Е.А. Тамбиеву постоянно помогал его сын Антон. При советской власти здание бывшей гостиницы Тамбиева перешло в собственность государства. В 1923 г. здесь был открыт санаторий имени Интернационала. При капитальном ремонте здание было немного перестроено. Ныне часть помещений этого крупного многоэтажного здания на Красноармейской улице, рядом с городской библиотекой, занимает прокуратура и частная клиника<sup>30</sup>.

В центре Кисловодска ниже рынка расположен старинный особняк с изображением на фасаде тамги Тамбиевых с датой 1915 г. Кому из Тамбиевых принадлежал этот дом, установить не удалось<sup>31</sup>.

Потомки Тамбиевых - Жигатовы ныне живут в селении Псынадаха Зольского района Кабардино-Балкарии, куда часть этого рода в 1923 г. переселилась из Кызбуруна I (Атажукино)<sup>32</sup>.

Существование селений Тамбиевых близ Пятигорска (30-80-е гг. XIX в.) и современного Кисловодска (60-е гг. XIX – начало XX в.) - это всего лишь эпизод более чем 300-летней истории Гаур-Тамбиевых.

<sup>29</sup> Пользуясь случаем, благодарю кисловодского историка и краеведа В. Яновского за экскурсию к этому историческому памятнику.

<sup>30</sup> Боглачев С., Савенко С. Архитектура старого Кисловодска. Пятигорск, 2006.

<sup>31</sup> Выражаю признательность кандидату исторических наук В. Яновскому за предоставленную информацию.

<sup>32</sup> Бейтуганов С. «Армяне» Тамбиевы ... С. 34.

**ԹԱՄԲԻԵՎՆԵՐԻ ԳՅՈՒՂԵՐԸ ՊՅԱՏԻԳՈՐՄԿԻ ԵՎ ԿԻՍԼՈՎՈՂՄԿԻ ՄՈՏԱԿԱՅՔՈՒՄ**

— *Անիտիում* —

— *Վ. Ֆոմենկո* —

Թամբին ազգանունը Մեծ Կաբարդայի ազնվական հայտնի ազգանուններից է: 19-րդ դարի 20-ական թվականների վերջերից հայտնի է ներկայիս Պյատիգորսկի Լիսայա Գորա բնակատեղիում ստեղծված հայազգի Թամբինների ավանը: Սակայն, ըստ ավանդության, ամեն ինչ սկսվել է ավելի վաղ՝ 16-րդ դարի երկրորդ կեսից, երբ «հայկական հավատք» ունեցող Բիյ Թամբինն այստեղ ամուսնացել է մի քահանայի աղջկա հետ: 19-րդ դարի սկզբին Բիյ Թամբինի հետնորդները, որոշելով լինել Ռուսաստանի պաշտպանության ներքո, հաստատվել են Պյատիգորյեյի մոտակայքում:

19-րդ դարի կեսերին Թամբինների ավան գոյություն է ունեցել նաև Աբուկովյան աուլի մոտ, որը գտնվել է Կիսլովոդսկի ծայրամասում՝ Պերվոմայսկոյեյի արվարձանում, որտեղ առայսօր պահպանվել է նաև Թամբինների քրիստոնեական գերեզմանը: Թամբինների պատմությունը սերտորեն կապվում է նաև Կիսլովոդսկի պատմությանը, որտեղ Թամբինները՝ որպես հաջողակ գործարարներ, ունեցել են բավականին խոշոր սեփականություն:

**Сведения об авторе**

*Фоменко Владимир Александрович – к. ист. н., доцент, старший научный сотрудник Кабардино-Балкарского института гуманитарных исследований РАН, E-mail: fva2005@gmail.com*

## Խաչատուր ՄՏԵՓԱՆՅԱՆ

ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ԲՈՒՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ 1921 թ.

ՓԵՏՐՎԱՆՅԱՆ ԱՊՍՏՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՆՈՒ

(1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատականը)

1920թ. հայ-թուրքական պատերազմում հայկական բանակի ծանր պարտություններից հետո Բաքվում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 1920 թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակի ուղեկցությամբ մտավ Իջևան, որտեղ հայտարարեց դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանի խորհրդայնացման մասին<sup>1</sup>: Հայեդկոմը խոստանում էր Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը և կառուցել նոր կյանք:

1920թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Համբարձում Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իշխանության խաղաղ անցումը Դաշնակցությունից բոլշևիկներին: Մահմանվում էին իշխանության փոխանցման սկզբունքները, որոնք հիմնականում հետկայներն էին. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում է ռազմահեղափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստներ և 2 ձախ-դաշնակցականներ, Դաշնակցության և մյուս ոչ բոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չէին ենթարկվելու կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, Խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր Խորհրդային Հայաստանի անկախությունը<sup>2</sup>:

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բոլշևիկյան իշխանությունը ակտիվ պայքար սկսեց, այսպես կոչված, ժողովրդի թշնամիների դեմ: Դեկտեմբերին ձերբակալվեցին ՀՀ նախկին կառավարության անդամները: Ավելի ուշ ձերբակալվեցին հայկական բանակի 1000-ից ավելի սպաներ, որոնց ուղարկեցին Բաքվի և Ռուսաստանի բանտեր: Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը:

Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921թ. փետրվարին ապստամբություն սկսվեց բոլշևիկյան իշխանությունների դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան: Բոլշևիկները և կարմիր զորամասերը հեռացան Ղամարլու (Արտաշատ):

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 1, 1 շրջ. 2:

<sup>2</sup> Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք» ամսագիր, 1926, հոկտեմբեր, էջ 101-102:

Երևանի գրավումից անմիջապես հետո Միմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց Հայրենիքի փրկության կոմիտե, որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգադրությունները<sup>3</sup>:

Բոլշևիկները Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապրիլի 2-ին մտան Երևան: Մայրաքաղաքը ավերածությունից փրկելու և ավերոդդ արյունահեղությունից խուսափելու համար որոշվեց Երևանը հանձնել առանց մարտի: Հայրենիքի փրկության կոմիտեն, զորքը և մեծ թվով բնակիչներ Բաշ-Գառնի-Ռարալագյազ ուղղությամբ բռնեցին դեպի Զանգեզուր տանող ճանապարհը, այնտեղից էլ անցան Պարսկաստան:

1920-1930-ական թվականներին սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, ի թիվս այլ հարցերի, քննարկեց նաև փետրվարյան ապստամբության պատճառները: Հարկ է նշել, որ հիմնական քննարկումները տեղի են ունեցել դաշնակցական շրջանակներում:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ կարևոր են համարվել Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների կողմից իրականացված անհարկի ձեռքակալությունները:

Հայ բոլշևիկներն իշխանությունն իրենց ձեռքը վերցնելուց անմիջապես հետո սկսեցին չհարգել Երևանի համաձայնագիրը: Խորհրդային Հայաստանի Չեկայի (արտակարգ հանձնաժողով, ռուս.-Խ.Ս.) նախագահ Գևորգ Աթաբեկյանը նույնիսկ անհեռառես է համարում Բ. Լեզրանի կողմից Դրոյի հետ համաձայնագրի կնքումը՝ ցինիկաբար գրելով, թե այդ պայմանագիրը փաստացի բոլշևիկներին հնարավորություն չի տալիս ձեռքակալություններ իրականացնելու<sup>4</sup>:

Տարագիր հայ գործիչ Գարեգին Նժդեհը նշում է, որ մինչև Հայաստանի խորհրդայնացումը բոլշևիկներն արդեն վրեժխնդրություն էին ծրագրում դաշնակցականների հանդեպ, և դեկտեմբերի 2-ի պայմանագիրը ոչինչ չէր նշանակելու իրենց համար: Բոլշևիկյան «Կարմիր Ավանգարդ» թերթն սպառնացել էր «բնաջնջել Դաշնակցական ամբողջ հակայեղափոխությունը»<sup>5</sup>: Այս հրապարակման կապակցությամբ Նժդեհը գրում է. «Ահա այն արևոտ դատավճիռը, որի հաջող գործադրության դեպքում հայ ժողովուրդը պիտի գլխատուէր, պիտի մեռներ կուտուրապես: «Գլխովին» ոչնչացնել Հ.Յ.Դաշնակցությունը, որ ասել է՝ հայ մտաւորականութեան մեծագոյն մասը և նրա մարտական բոլոր տարրերը»<sup>6</sup>: Գ. Նժդեհն անդրադառնալով բոլշևիկների գործադրած սարսափազդու կոչերին, գտնում է, որ դրանք բխում էին ոչ թե ժողովրդի հանդեպ նրանց ունեցած անկեղծ մտահոգությունից, այլ վերջիններիս քինախնդրության նենգ դրսևորումներ էին: Հակապետական գործունեության համար մի քանի կուսակցական ընկերների սպանության

<sup>3</sup> ՀԱՍ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 5, 5 շրջ.:

<sup>4</sup> ՀԱՍ, ֆ. 1438, ց. 1, գ. 10, թ. 12:

<sup>5</sup> «Կարմիր Ավանգարդ», Բաքու, 1920, 30 հոկտեմբերի:

<sup>6</sup> Նժդեհ Գ., Ազատ Միւնիք, «Հայրենիք» ամսագիր, 1925, յուլիս, էջ 84:

դիմաց ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի մտավորականությանը, Գ. Նժդեհի բնութագրմամբ, հրեշույթուն էր:

Կահիրեի «Նուսաբեր» օրաթերթի խմբագիր Վահան Նավասարդյանն էլ իր հերթին գրում է, որ «Միանգամայն բնական ձևով տերրորի սովորոյթը դարձաւ բոլշևիկի երկրորդ բնատրութիւնը,- սկզբնական շրջանին կրելով մասնակի բնոյթ եւ ուղղուած լինելով միայն որոշ հակառակորդների դէմ, յետագային նա դարձաւ ամենքի դէմ անխտիր»<sup>7</sup>: Հայ բոլշևիկները, հակառակ քաղաքական հետապնդումներ չիրականացնելու իրենց տված խոստմանը, այն դարձրեցին իրենց գործելաճի պարտադիր բաղադրիչը:

Խորհրդային իշխանությունները նախապես կազմել էին այն մարդկանց ցուցակը, որոնք պետք է ձերբակալվեին խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ ժամերին<sup>8</sup>: Ձերբակալությունների հարցում հիմնական դերակատարը Չեկան էր: Դեկտեմբերի 6-ին Չեկան կազմավորվեց և անմիջապես գործի անցավ, ու սկսվեցին ձերբակալությունները<sup>9</sup>: Ըստ Ս. Վրացյանի՝ Չեկայի համար ստեղծվեցին բոլոր պայմանները, «նրան յատկացուեցին Ռոստոմի և Կարճիկեան փողոցի անկիւնում երկու խոշոր շինութիւններ: Չեկայի նախագահութեան համար բնագրաւուեց Խորհրդարանի փոխ-նախագահ Ա. Սահակեանի բնակարանը»<sup>10</sup>: Փաստորեն, բոլշևիկները ի սկզբանէ էին ծրագրել իրենց կողմից իրականացվելիք բնագրավումների քաղաքականությունը, որը գործադրվելու էր Չեկայի ձեռամբ:

Այքի ընկնող ոչ բոլշևիկ գործիչներից առաջինը ձերբակալվում է Հայ ՄԴԿ ԿԿ անդամ Բախշի Իշխանյանը<sup>11</sup>: Ապա բանտարկվեցին խմբապետ Համագասպը, Բայազետի քաղաքագլուխ Վ. Աֆրիկյանը և ուրիշներ: Սակայն բոլորը կարծում էին, որ դրանք մասնավոր դեպքեր կարող էին լինել:

Միյուրքահայ հասարակական-քաղաքական միտքը պնդում է, որ հասարակության վրա առավել ճնշող տպավորություն թողեց Վրաստան անցնելու նպատակով Երևանից հեռացած ղեկավար կուսակցական և պետական գործիչների ձերբակալությունը (Համո Օհանջանյան, Բժ. Հակոբ Տեր-Դավթյան, Արտաշես Չիլինգարյան, Կորյուն Ղազարյան, Վ. Նավասարդյան, Արշալույս Աստվածատրյան եւ ուրիշներ)<sup>12</sup>: Առավել նվաստացուցիչ էր ձերբակալվածների մի մասին բեռնատար մեքենաներով, իսկ մյուս մասին ոտքով Երևան բերելը<sup>13</sup>:

<sup>7</sup> Նուսարդեան Վ., Հ. Յ. Դաշնակցութեան «լիկուիդացիան» (Բոլշևիկի սնանկութեան առիթով), Գահիրե, տպարան «Յուսաբեր», 1924, 187 էջ:

<sup>8</sup> Վիրաբյան Ա., Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թիվ 1 (113), էջ 107:

<sup>9</sup> Վրացեան Ս., Ինչու եւ ինչպէս խորհրդայնացաւ Հայաստանը, «Հայրենիք» ամսագիր, 1940, փետրուար, էջ 73:

<sup>10</sup> Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք» ամսագիր, 1923, դեկտեմբեր, էջ 69:

<sup>11</sup> «Коммунист», Эривань, 1921, 7 декабря.

<sup>12</sup> Դաշնակցական գործիչների ձերբակալման հրամանն իրականում ավելի շուտ է եղել: Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալության մասին հրամանը, որքան էլ զարմանալի է, արձակել էր Բ. Լեզրանը Երևանի համաձայնագիրը ստորագրած օրը՝ դեկտեմբերի 2-ին (տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մե՛ծ տերությունները 1917-1923 թթ., էջ 374): Պատմարան Վլադիմիր Ղազախեցյանի բնորոշմամբ՝ Բ. Լեզրանը ամենակոպիտ



Արմեն Սևանը<sup>14</sup> գրում է, որ Բախշի Իշխանյանի ձեռքակալությունը սկզբում համարվեց օրվա իշխանությունների թուլության և երիտասարդ կոմունիստների չափազանցված եռանդի արդյունք<sup>15</sup>: Մակայն ղեկտեմբերի 6-ի ձեռքակալությունները եկան ապացուցելու, որ սխալ էր այդպես մտածելը<sup>16</sup>:

Փաստորեն, Հայաստանի բոլշևիկ ղեկավարները երկրում առկա բազմաթիվ անհետաձգելի խնդիրները լուծելու փոխարեն, անմիջապես ձեռնամուխ եղան նախկին կառավարության անդամներին և նրանց համախոհներին ձեռքակալելու գործին: Առավել ևս, որ վերջիններս հեռանում էին Հայաստանից և հակապետական ոչինչ չէին ձեռնարկել: Բոլշևիկների կողմից ստորագրված պայմանագիրն իրենց համար որևէ արժեք չունեւ:

Միմոն Վրացյանը գրում է, որ առաջին իսկ օրերից Չեկայում խոսում էին գնդակահարությունների անհրաժեշտության մասին: Նույնիսկ հնչեցվել են գնդակահարության ենթակա թեկնածուների անուններ՝ Ռուբեն Դարբինյան, Սերգեյ Մելիք-Յուլյան, Համազասպ, Բախշի Իշխանյան և ուրիշներ<sup>17</sup>: Փաստորեն, բոլշևիկները ծրագրել էին նաև ձեռքակալվածներին սպանել:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը գրում է, որ ձեռքակալությունները բոլշևիկներն անհրաժեշտ էին համարում «հակայեղափոխությունը» արմատախիլ անելու եւ բոլոր վնասակար տարրերը չեզոքացնելու նպատակով<sup>18</sup>: Ըստ թերթի՝ այս «հիմնավորումը» ևս դժգոհություն առաջ բերեց ժողովրդի մեջ:

Տարագիր հայ գործիչներն անվերապահորեն պնդում են, որ բոլշևիկների գործողությունների գլխավոր թիրախը Դաշնակցությունն էր: «Տիզիբական մահ Դաշնակցութեան», - այս դարձաւ բոլշևիկների համար օրուայ կարգախօսը, - նշում է Ս. Վրացյանը<sup>19</sup>: Այս առումով ավելի մանրամասն գրում է Իրազեկը: Վերջինիս ներկայացմամբ «հարուածն ուղղուած էր առաւելապէս Դաշնակցութեան ու

*կերպով ոտնահարում էր իր իսկ ստորագրած համաձայնագիրը, իրեն տերուտնօրեն համարում Հայաստանում (տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Եր., 2006, էջ 39:)*

<sup>13</sup> Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք» ամսագիր, 1923, ղեկտեմբեր, էջ 69:

<sup>14</sup> Արմեն Սևանը փետրվարի 18-ի աչքի ընկնող դերակատարներից մեկն է եղել, և «Վեմ»-ում հրատարակված նրա գրությունը դեպքերի ճշգրիտ արձանագրությունն է, որ գրել է դեպքերից անմիջապես հետո, թարմ տպավորության տակ: Նա փետրվարյան ապստամբությունից հետո հաստատվել է սփյուռքում:

<sup>15</sup> Սեւան Ա., Փետրուար 18-ի յեղափոխութիւնը «Վեմ», 1936, Դ տարի, թիւ 1, էջ 91:

<sup>16</sup> Նուն տեղում, էջ 92:

<sup>17</sup> Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք» ամսագիր, 1923, նոյեմբեր, էջ 63-73, ղեկտեմբեր, էջ 70:

<sup>18</sup> «Հայրենիք» օրաթերթ, 1931, 19 փետրուարի:

<sup>19</sup> Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1922, ղեկտեմբեր, էջ 53: (Միմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետությունը» վերնագրված այս գրությունը, որը հրատարակվել է «Հայրենիք» ամսագրի 1922թ. նոյեմբերի, ղեկտեմբերի, 1923թ. հունվարի համարներում, ՀՅԴ Ամերիկայի շրջանի 29-րդ Պատգամավորական Ժողովին ներկայացված զեկույց է: 1920-ականների վերջերին և 1930-ականներին «Հայրենիք»-ի համարներում հրատարակվում է Ս. Վրացյանի նույն՝ «Հայաստանի Հանրապետությունը» վերնագրով մեծածավալ հուշագրություն-ուսումնասիրությունը, որը հետագայում հրատարակվում է առանձին հատորով):

Դաշնակցականների դեմ, որովհետև բոլշևիկ թշնամին շատ լաւ գիտէր ու հասկանում էր, որ հայութեան վրիժառու բռունցքը, նրա ազգային շահերի արթուն պահակն ու պաշտպան չՅ դաշնակցութիւնն էր իր կազմակերպուած հոծ շարքերով եւ մարտական գերազանց կարողութիւններով: Եւ ամենից աւելի տուժեցին ու չարաչար կերպով պատուհասուեցին Դաշնակցութիւնն ու Դաշնակցականները: Դաշնակցականներից քչերը միայն կարողացան դաժան ճակատագրից խուսափել՝ ոմանք հրաշքով երկրից դուրս գալ յաջողելով, ուրիշներ երկրում ապահով թագստոցներում փրկութիւն գտնելով»<sup>20</sup>:

Փետրվարյան ապստամբության ղեկավարներից Կարո Մասունին գրում է, որ ձերբակալութիւնները տեղի էին ունենում հակառակ բոլշևիկների տված խոստումների, և դրանով «սկիզբն է դրւում չՅ դաշնակցութեան դեմ մի հալածանքի, որն իր վերջին գունաւորումներով, մօտենում է Էնվեր-Թալեաթեան սիստեմին»<sup>21</sup>: Փաստորեն, ըստ Կ. Մասունու, բոլշևիկների ցուցաբերած վարքագիծն այնքան դաժան էր, որ այն համեմատում էր երիտթուրքերի գործելակերպի հետ:

Բոլշևիկների կողմից տված խոստումը մերժելու մասին է նշում նաև տարագիր հայ սպա Հակոբ Մարմանդյանը: «Հակառակ իրենց խոստման, երբեք Յեղկոմի նիստերին չհրաւիրեցին «յեղափոխութեան կողմն անցած ընկերներ» Դրոյին եւ Տերտերեանին: Վերջինս շուտով հրաժարական տուաւ եւ հեռացաւ, իսկ Դրօն դեռ շարունակում էր մնալ որպէս Սովետական Հայաստանի կարմիր բանակի հրամանատար: Եւ այդ կարմիր բանակի հրամանատարի այքի առաջ էր, որ ձերբակալեցին նախկին վարչապետ Հ. Օհանջանեանին, արդարադատութեան նախարար Ա. Զիլինգարեանին, քաղաքական եւ կուսակցական գործիչներ՝ Վ. Նուսսարդեանին, Մելիք Եօյջեանին, Վ. Բաբայեանին, Համազասպին եւ ուրիշներին», - արձանագրում է նա<sup>22</sup>:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ն անդրադառնում է ձերբակալվածների հանդեպ ցուցաբերված դաժան վերաբերմունքին<sup>23</sup>, որն առավել անտանելի դարձրեց իրավիճակը: Առանձնակի դժգոհություն առաջ եկավ, երբ արդարադատության ժողովրդական կոմիսարիատը ցրեց գործող դատարանները և ցանկացած դատերի վարման իրավունքը հանձնեց հեղափոխական տրիբունալներին<sup>24</sup>: Իսկ առավել զավեշտալին և սաղորիչն այն էր, որ հայ բոլշևիկները Խորհրդային Հայաստանի արդարադատության կոմիսար էին նշանակել Սուլէյման Նուրիին<sup>25</sup>, որն ինչպէս պարզվեց փետրվարյան ապստամբության օրերին քեմալական գործակալ էր<sup>26</sup>:

<sup>20</sup> Իրազեկ, Փետրուար 18, «Յուշամատեն Չ.Յ. Դաշնակցութեան (1890-1950), (կազմ.՝ Ս. Վրացեան)», Բոստոն, տպ «Հայրենիք», էջ 309:

<sup>21</sup> Մասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1925, հոկտեմբեր, էջ 94:

<sup>22</sup> Մարմանդեան Յ., Հայ սպաների արտորը (մի էջ հայ սպայի յուշերից), «Հայրենիք» ամսագիր, 1934, օգոստոս, էջ 102:

<sup>23</sup> «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 2 մարտի:

<sup>24</sup> «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 5 մարտի:

<sup>25</sup> Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 107:

<sup>26</sup> Աշխատունի Ջ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք» ամսագիր, 1925, յուլիս, էջ 131:

Բոլշևիկների կողմից «հակահեղափոխականների» զանգվածային ձերբակալությունները տեղի ունեցան 1921թ. հունվարին: Հունվարյան բռնությունները պայմանավորված էին նաև հակախորհրդային ելույթների նախապատրաստության մասին իշխանությունների ունեցած կասկածներով<sup>27</sup>: Կ. Սասունու վկայությամբ ձերբակալվածների թիվը հասավ 1900-ի<sup>28</sup>: «Հակայեղափոխական» անվան տակ շուրջ 2000 մարդու ձերբակալության մասին է գրում Աշոտ Թաթուր: Ընդ որում, բանտարվում էին «անմեղները առանց դասակարգի, տարիքի եւ սեռի խտրութեան»<sup>29</sup>:

Բոլշևիկյան բանտերի սարսափների մասին է գրում 1915թ. Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը՝ բանտում հայտնված Հայկակ Կոստյանը<sup>30</sup>: Նա Չեկայի և նրա ղեկավար Աթարբեկովի կիրառած բռնությունների մասին այսպես է արտահայտվում. «Գեորգ Աթարբեկովը եկել է Երեւան... Նա վերակազմելու է Չեկան և լծելու է նրան աւելի արմատական ձեռք բռնող հակայեղափոխականներին, բոլշևիկեան իրաւակարգին թշնամի եղողներին մաքրագործելու, կամ՝ ինչպէս ընդունուած էր չեկայական բացատրութեամբ՝ րասխող անելու: Այս բռնորի համար նպատակահարմար էր քաղաքացիական կռուի ճամբով ընթանալ, հետեւելով Ռուսաստանի մէջ կատարուածին»<sup>31</sup>: Բանտում հայտնված գործչի տպավորությունը թեև ոչ առարկայական կարող է ընկալվել, սակայն նույնպես վկայում է բոլշևիկյան բռնությունների մասին, որոնք համապատասխան դժգոհությունների տեղիք տվեցին:

Բոլշևիկյան բռնությունների մեջ ամենազարհուրելին թերևս մտավորականների ձերբակալությունն էր: Հայ մտավորականությանը չձերբակալելու որոշ խելամիտ հայ բոլշևիկների մոտեցումն ու պայքարը Գ. Աթարբեկովը համարում էր սխալաստիկ բանավեճ<sup>32</sup>: Նույնիսկ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի նախագահ Մերգո Օրջոնկիձեն 1921թ. փետրվարի 1-ին Բաքվից Ս. Կասյանի ուղարկված հեռագրում հորդորում է Դաշնակցության դեմ պայքարը չվերածել մտավորականության դեմ պայքարի, թեկուզ, եթե այդ մտավորականները նախկինում դաշնակցական են եղել<sup>33</sup>:

Սակայն, ինչպես բնութագրում է Գ. Նժդեհը, բոլշևիկները գիտակցաբար գնացին հայ մտավորականությանը բաբարոսաբար հալածելու և ոչնչացնելու քայլին: «Խորհրդային իշխանութիւնն էլ գիտեր, որ հանցանք է, ոճիր ամէն մի մտաւորականի «հակայեղափոխական» եւ «խափանարար» հոչակել եւ յանձնել

<sup>27</sup> *Խաչատրյան Կ.*, *Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ.*, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2007, էջ 65:

<sup>28</sup> *Սասունի Կ.*, *Փետրուարեան ապստամբութիւնը*, «Հայրենիք» ամսագիր, 1925, հոկտեմբեր, էջ 101:

<sup>29</sup> *Թաթուր Ա.*, *Փետրուար 18-ի պատմական արժէքը*, «Յառաջ» 1929, 21 փետրուարի:

<sup>30</sup> *Կոստյան Հ.*, «Բանտի քարերն էին աղաղակում»... (Փետրուարեան ապստամբութեան ընդվզումի 30-րդ տարեդարձի առթիւ, 1921-1951), Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1951, 66 էջ:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>32</sup> ՀԱԱ, ֆ. 1438, գ. 1, գ. 10, թ. 13:

<sup>33</sup> Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Պատ. խմբագիր և կազմող՝ պրոֆեսոր Վ. Ն. Ղազարյան, Եր., 1999, էջ 17:

Չեկա կոչուած գազանին: Բայց քաջ զիտեր եւ այն, որ անգլուխ և անղեկավար զանգուածներն անելի հեշտ են կառավարվում», - գրում է Գ. Նժդեհը<sup>34</sup>:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ը հիշատակում է նաև բոլշևիկների կողմից հայ հոգևորականությանը հալածելու մասին: Վերջիններիս արգելեցին դպրոցներում և մշակութային հաստատություններում որևէ պաշտոն զբաղեցնել: Դպրոցներում արգելվեց նաև Հայոց պատմության, գրականության, Հայաստանի աշխարհագրության ուսումնասիրությունը՝ մտածելով, որ դրանք կարող են ապագա սերունդներին մղել ազգայնականության և «հակայեղափոխականության»<sup>35</sup>:

Փաստորեն, բոլշևիկյան հեղափոխությունն ավելի հեշտությամբ խորացնելու «մտադրությամբ» խորհրդային իշխանությունները Հայաստանում մտավորականության զանգվածային ահաբեկում իրականացրին: Մփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ այս քայլն ամենաշատը հուզեց ժողովրդին և մեծապես ազդեց փետրվարյան ապստամբության հասունացմանը: Ի դեպ, բանտում գտնվող մտավորականության կորստի վախը նույնպես պատճառ էր ապստամբություն բարձրացնելու<sup>36</sup>:

Բոլշևիկյան ձերբակալությունների ալիքը բարձրակետին հասավ 1921թ. փետրվարին: Մփյուռքահայ հասարակական-քաղաքական մեկ այլ գործիչ գրում է, որ ապստամբությունը հասունացավ հատկապես փետրվարի 9-10-ի զանգվածային ձերբակալությունների<sup>37</sup> պատճառով<sup>38</sup>: Չեկան փետրվարի 13-ին նպատակարար էր համարել ձերբակալել նաև «բոլոր հայտնի մաուզերիստների և դաշնակցականների մոտիկ ազգականներին»<sup>39</sup>: Փաստորեն, ձերբակալությունները սահմանափակելու, ժողովրդական դժգոհությունները մեղմելու փոխարեն, բոլշևիկները ավելի զանգվածային դարձրեցին դրանք: Հատկապես վերջին ձերբակալությունները և դրանց հաջորդած գնդակահարությունները, սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ, աներկբայելիորեն հանդիսացան 1921թ. փետրվարյան ապստամբության առիթը:

<sup>34</sup> Նժդեհ Գ., նշվ. աշխ., էջ 84:

<sup>35</sup> «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 4 մարտի:

<sup>36</sup> Արշակունի Ա., Փետրուարի ապստամբությունը, «Հայրենիք» ամսագիր, 1927, փետրուար, էջ 46:

<sup>37</sup> Փետրվարի 8-ին տեղի ունեցած ձերբակալությունները խորհրդահայ պատմագրության մեջ այսպես են ներկայացվում. «Միայն 1921 թ. փետրվարի 8-ին սկսվում են հակահեղափոխական ուժերի մասսայական ձերբակալությունները: Դրանով Հայկոմկոմի ներքին դասակարգային քաղաքականության մեջ սկսվում է նոր փուլ: Դասակարգային հակառակորդի չեզոքացման, մեկուսացման քաղաքականությունից Հայկոմկոմը անցնում է նրա ոչնչացման քաղաքականությանը» (Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայաստանի ոչ պրոլետարական կուսակցությունների գաղափարական-քաղաքական և կազմակերպական կրախը (1920-1921 թթ.), «Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.), (ժողովածու)», Եր., 1987, էջ 200):

<sup>38</sup> Արշակունի Ա., Փետրուարի ապստամբությունը, «Հայրենիք» ամսագիր, 1927, փետրուար, էջ 45:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ 114, ց. 2, գ. 40, թ. 78: Հմմտ. Սուքիասյան Հ., 1921 թ. փետրվարի 18-ին նախորդած ձերբակալությունների փաստաթղթերը, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2011, թիվ 1, էջ 209:

Ինչպես նշեցինք, փետրվարին բոլշևիկյան իշխանություններն արդեն գնդակահարությունների անցան: Իրագեկը գրում է Հայաստանում գործադրության մեջ մտած մի երևույթի՝ «ռասխոդի» մասին, որը բոլշևիկյան տերմինաբանությամբ նշանակում էր Չեկայի կարգադրությամբ սպանել, ոչնչացնել<sup>40</sup>:

Փետրվարյան դեպքերի ականատես Չավեն Աշխատունին ապստամբության առիթի մասին խոսելիս անդրադառնում է փետրվարի 18-ին նախորդած օրերին տեղի ունեցած գնդակահարություններին. «Փետրուարի 16-ին առաօտեան «Օրիանտ» հիւրանոցի մուտքի դրանը փակցուած էր Չեկայի կողմից Երեւանի բանտում 22 գնդակահարուած բանտարկեալների ցանկը, որի մէջ Չեկան սպառնում էր նաեւ սպանուածների վիճակին ենթարկել այն բոլոր քաղաքացիներին, որոնք կը յանդգնին մասնակցել «հակայեղափոխական» շարժման՝ սովետական իշխանութեան դէմ»<sup>41</sup>: Գնդակահարվածների ցանկի հայտնվելը, բնականաբար ավելի է խորացնում ատելությունը տիրող կացության հանդեպ, և սկսում էին բացահայտ խոսել «ռեժիմի տապալման անհրաժեշտութեան մասին»<sup>42</sup>: Չ. Աշխատունին նաև նկարագրում է, թե ինչպես փետրվարի 18-ի առավոտյան ապստամբները կոտրելով բանտի դռները ներխուժեցին ներս՝ «ազատելու Հայաստանի ազատագրութեան գաղափարախօս մտաւորակաւորիւնն եւ միւս ընկերները, թուով 1700-2100 հոգի»<sup>43</sup>: Բանտում գտնվողների մեծ մասը ծանր հոգեվիճակի մեջ էր հայտնվել: Բոլշևիկյան իշխանությունները նախապես կազմած ծրագրի համաձայն ոչ միայն ձերբակալում էին իրենց քաղաքական հակառակորդներին, այլև բանտերում սկսեցին գնդակահարություններ իրականացնել: Բնականաբար դա ավելի խորացրեց համընդհանուր դժգոհությունը, ժողովրդի համբերության բաժակը լցվեց:

Գնդակահարված և գնդակահարման ենթակա մարդկանց խնդրին անդրադառնում է նաև Արշակ Ալպոյաճյանը: «Ամեն օր նախորդ օրը գնդակահար եղողներու ցանկը կը փակցնէին փողոցները, որպէսզի ժողովուրդը զիտնար և ահաբեկէր... Պոլշեվիքները ծրագրած էին 600 հոգի մահով պատժել, սակայն իրագործելու ժամանակ չունեցան», գրում է սփյուռքահայ ականավոր գործիչը<sup>44</sup>: Փաստորեն, բոլշևիկների վարած ձերբակալությունների և գնդակահարությունների քաղաքականությունը քննադատում էր նաև դաշնակցականներին ոչ համակիր, և խորհրդային իշխանությանը լոյալ տրամադրված հասարակական-քաղաքական գործիչը:

Այսպիսով, 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառների մեջ 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, աներկ-

<sup>40</sup> *Իրագեկ Զ.*, Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ սպրումներ (1917-1922), Պէրոյթ, 1956, տպ. «Համազգայինի», էջ 95:

<sup>41</sup> *Աշխատունի Չ.*, Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք» ամսագիր, 1925, յուլիս, էջ 135:

<sup>42</sup> Նույնը:

<sup>43</sup> Նույնը:

<sup>44</sup> *Ալպոյաճեան Ա.*, Անկախ Հայաստան, «Ամենուն տարեցոյցը» (կազմ. Թէոդիկ), ԺՁ. Տարի, տպ. Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1922, էջ 252:

բայրեն առաջնային է համարում բոլշևիկների իրականացրած անհարկի ձերբակալությունները՝ իշխանությունն իրենց փոխանցելու առաջին օրվանից սկսած: Ժողովուրդը ծանր էր տանում հատկապես մտավորականության հանդեպ հալածանքն ու ձերբակալությունը: Առավել ևս, որ այդ ձերբակալությունները «հիմնավորվում էին այսպես կոչված «հակահեղափոխական» տարրերին ասպարեզից վերացնելու անհրաժեշտությամբ: Բսկ բանտում հայտնված մտավորական և զինվորական գործիչների գնդակահարություններն ու կացնահարություններն այլևս սպասելու տեղ չթողեցին: Փետրվարյան ապստամբությունը, նշված և այլ պատճառներով պայմանավորված, դարձավ անխուսափելի:

## БОЛЬШЕВИСТСКИЕ РЕПРЕССИИ КАК ПРИЧИНА ФЕВРАЛЬСКОГО ВОССТАНИЯ 1921г. (оценки общественно-политической мысли армянской диаспоры в 1920-1930гг.)

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Х. Степанян \_\_\_

В 1920-1930 гг. общественно-политическая мысль армянской диаспоры в причинах февральского восстания 1921 г. считает приоритетным чрезмерные аресты большевиков. Народ особенно тяжело принимал преследование по отношению к интеллигенции. Аресты «мотивировались» необходимостью устранения из арены, так называемых, «антиреволюционных» элементов. Выстрелы и рубки топором интеллигенции и военных деятелей в тюрьмах не оставляли смысла более ждать. По этим и другим причинам февральское восстание стало неизбежной.

### Տեղեկություններ հեղինակի մասին

*Մտեփանյան Խաչատուր Ռոստոմի - պ. գ. թ., դոցենտ*

*Խ. Արմվյանի անվան հայկական պետական մանկավարժական*

*համալսարան, E-mail: kh.stepanyan@gmail.com, kh.stepanyan@rambler.ru*

## Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

### ՎԱՂԲՐՈՆՁԻԴԱԼՅԱՆ ՄԻ ԾԵՄԻ ՇՈՒՐՁ\*

#### (ըստ Մեծ Սեպասարի նյութերի)

Մեծ Սեպասարի մ.թ.ա. XXVIII-XXVI դդ. թվագրվող սրբարանում փաստված է հին տարվա ավարտին և նոր տարվա գալստյանը՝ գարնանը նվիրված ծիսակարգ, որն ուղեկցվել է գայլերի զոհաբերությամբ՝ մահվան միջոցով ապահովելով նորի ծնունդը, որը ընկած է տիեզերական կարգուկանոնի կայունության ապահովմանը նվիրված ծեսերի հիմքում<sup>1</sup>:

Սրբարանում, բացի զոհաբերված յոթ գայլերի գանգերից, նախնական դիրքով՝ *in situ*, պահպանվել են տարատեսակ անոթների հարյուրավոր բեկորներ և նվիրաբերված տարբեր իրեր<sup>2</sup>, այդ թվում՝ բերանքսիվայր կարասով փակված ամբողջական վեց գավաթներ<sup>3</sup>:

Հնդեվրոպացիներն ունեին կրոնական որոշ գաղափարներ, որոնք արտահայտվում էին պաշտամունքային աշխարհի վերաբերյալ ունեցած պատկերացումներով, դրանց նկատմամբ հատուկ վերաբերմունքով և համապատասխան ծիսական արարողություններով: Սրբազանը մի կողմից այն էր, ինչ լի էր աստվածային ուժով, մյուս կողմից՝ այն, ինչին մարդկանց արգելված էր դիպչել<sup>4</sup>: Տաճարը «տնային տնտեսություն էր», որը պատկանում էր միայն աստծուն<sup>5</sup>: Ծիսակարգից հետո նվիրաբերումները և օգտագործված ողջ խեցեղենը տեղում թողնելը պայմանավորված են ոչ միայն սրբազանի նման ընկալմամբ, այլ նաև՝ միայն աստծուն պատկանող իրերն աստծու տանը թողնելու անհրաժեշտությամբ:

Հողվածը նվիրված է գարնանամուտին վերաբերող ծիսակարգի մի արարողության վերհանմանը: Ո՞րն է անոթների բերանը փակելու պատճառը:

Խեթական ծիսակարգում անոթներն ամեն մի աստվածության խորհրդանիշ էին, իսկ որոշ աստվածություններ նույնացվում էին անոթի հետ<sup>6</sup>: Աստվածություններին նվիրված ծեսերում ուշադրություն է գրավում այն, որ տաճարում արարողությանը նախորդում էր ցորենով ամանների բացումը: Խեթական ծիսակարգում կար ամպրոպի աստծուն մատուցվող զոհաբերություններով ուղեկցվող անոթների բերանը բացելու և փակելու արարողություն: Առաջինը կատարվում էր

\* Հողվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2013թ. հոկտեմբերի 4-6-ը կայացած «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովում:

<sup>1</sup> **Егавян Л.** Памятник раннебронзового периода Мец Сепасар в контексте индоевропейских верований и ритуалов//Труды Маргианской археологической экспедиции, Институт этнологии и антропологии им. Миклухо-Маклая РАН, т. 4, М., 2012, С. 272.

<sup>2</sup> Նույնը:

<sup>3</sup> **Եգանյան Լ.**, Քուռարաքսյան մի կարասի զարդագոտու սիմվոլիկայի շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. XV, Եր., 2012, էջ 32:

<sup>4</sup> **Չահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Եր., 1987, էջ 84:

<sup>5</sup> *История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации, ч. I, Месопотамия, (под ред. И. Дьяконова), М., 1983, С. 174.*

<sup>6</sup> **Ардживба В.** Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982, С. 63.

գարնանը, իսկ երկրորդը՝ աշնանը: Գարնանն ամանների բացումը կատարվում էր, երբ որոտում էր ամպրոպը: Յորենով անոթները բացում էին հենց Ամպրոպի աստվածությունները, այսինքն՝ նրանք, որոնց իրավասության կամ հսկողության տակ էին անձրևները և, հավանաբար այդ հանգամանքից էլնելով, համարվում էին ցորենի խնամակալ (ամպրոպի աստծու ինկորնացիաներից մեկը կոչվում էր *Յորենի ամպրոպի աստված*): Բացում էին անոթների բերանները, զոհ էին մատուցում *անձրևի ամպրոպի աստծուն*՝ դիմելով հետևյալ խնդրանքով. «*Ամպրոպի աստված, մեր պարոն, շատացրու անձրևը, թափիր սև հողի վրա, և թող աճեն ամպրոպի աստծու հացերը*»<sup>7</sup>: Երեք օր տևող, մասնավորապես ցորենի աստվածությանը նվիրված ծեսի ժամանակ Պիսկուտունու լեռան վրա զոհաբերում էին նաև ցորենով, գինով, յուղով, մեղրով լի անոթները, որ պահվում էին տաճարում և բացվում էին միայն գարնանը, իսկ թագավորը, թագուհին... նաև խմում էին՝ կատարելով աստվածներին հաղորդակցվելու ծես<sup>8</sup>:

Ըստ խեթական պետության մայրաքաղաք Խաթուսի սեպագիր տախտակներից հայտնի «*թագավորական*» կոչվող ծեսերը նկարագրող տեքստերի՝ «*Մեծ հավաք*» տոնին բացում էին «...*Ամպրոպի աստծու ծիսական անոթը*»<sup>9</sup>: «*Անտախշում*» տոնին, երբ թագավորը ծես էր կատարում, սպասավորները բացում էին աստվածությունների տաճարների ցորենով անոթները, այդ թվում նաև ամպրոպի աստծուն պատկանող ցորենի անոթը, և ցորենն աղում էին<sup>10</sup>: Աստվածություններին նվիրված ծեսերին նախորդող՝ տաճարում հացահատիկով անոթների բերանները բացելը բնորոշ է նաև խեթական գարնանային այլ ծեսերին: «*Հասսումասը*» (*hassumas, has-ծնել*) եղանակային տոն էր, որի ժամանակ թագաժառանգը մի քանի ծառայողների հետ աղում էր ցորենը<sup>11</sup>: Գարնանային տոնին բացվող անոթների բերանները փակելու ծեսը կատարվում էր աշնանային «*Նունտարիյասիս*» (բառացի նշանակում է *աճապարել, շտապել*) տոնի ժամանակ: Վերջինս թագավորի և թագուհու այցելության օրացուցային ծես էր, և հավանաբար կատարվել է խոր աշնանը, երբ անոթը լցնում էին ցորենով ու մի ոչխար զոհ մատուցում<sup>12</sup>:

Ինչպես ցույց են տալիս խեթական գրավոր աղբյուրների վկայությունները, աստվածություններին նվիրված ծեսերին նախորդում էր տաճարում հացահատիկով անոթների բերանների բացումը, որը բնորոշ էր գարնանային ծեսերին, իսկ փակելը կատարվում էր աշնանը, և ամպրոպի աստծուն զոհաբերում էին ոչ միայն ցորեն, այլ նաև այլ սննդամթերք: Ծեսը գործողության վերածված սովորույթ է, որի նպատակը ինչ-որ գաղափար կամ զգացում արտահայտելն է:

Ամանների բերանները փակելու և բացելու խեթական ծեսին համադրելի է հայոց հետևյալ սովորույթը. Վարդավառի խաչ-փնջերը դնում էին ցորենի կամ ալ-

<sup>7</sup> Ардзынба В., նշվ. աշխ., էջ 26:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 10-17:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 18-26:



յուրի ամբարի մեջ և պահում մինչև հաջորդ Վարդավառ<sup>13</sup>: Սովորույթ կար նաև աշնան բերքից ստացված այլուրն անպայման մինչև նոր բերքը հասցնել՝ հնի և նորի միջև կապը պահելու և բնության շրջափուլի ընթացքը չխաթարելու համար: Երբ այլուրն ավարտվելուն մոտ էր, չէին օգտագործում, այլ փոխ էին առնում հարևանից, որպեսզի ամբարը դատարկ չմնար:

Համեմատական ազգագրությունից հայտնի է, որ զարգացման նախնական մակարդակի վրա գտնվող ժողովուրդների մոտ մեռնող և հարություն առնող բնության պաշտամունքին նվիրված տոնաշարը սկսվում էր գարնանը և տևում մինչև բերքահավաքի վերջը:

Նոր տարվան՝ գարնան գալստյանը նվիրված խեթական ծեսերում ամպրոպի աստծու՝ ցորենի անոթը բացելուն հաջորդում էին ցորեն աղալը (օջախի մոտ կատարվող խեթական արարողությունների ժամանակ թագածառանգը մարդկանց հետ ցորեն էր աղում) և ծիսական հերկը<sup>14</sup>: Բնության ամենամյա վերածննդին նվիրված ծիսական տարբեր գործողությունների արձագանքներ պահպանված են նաև հայոց սովորույթներում, մասնավորապես, գարնանամուտին նվիրված հայոց Բարեկենդանի տոնի ընթացակարգում: Մեծ պասի վերջին շաբաթվա երկուշաբթին ջրաղացպանների օրն էր. այդ օրը բոլորը ցորեն պիտի տանեին աղալու<sup>15</sup>: Կարնո հայերը Մեծ պասից մինչև սերմերը հողին հանձնելն ամեն կիրակի աղանձ էին անում, ինչպես որ ցանքսից մինչև հնձի ժամանակը ամեն կիրակի հատիկ էին խաշում<sup>16</sup>: Ամպրոպի աստծու հետ կապված հավատալիքները փոխանցվել են ամպրոպային ակնհայտ հատկանիշներով օժտված Սբ Մարգարիտ, որի տոնի ծիսական կերակուրն աղացած ցորենից պատրաստված փոխինդն էր: Առաջավորաց պասին, ուրբաթ օրը ցորենից փոխինդ էին ուտում<sup>17</sup>՝ ի հիշատակ այն բանի, որ Սբ Մարգարիտ այդ շաբաթվա ընթացքում սոված մնալով՝ ցորենի հասկերը փշրել ու կերել էր:

Բնության վերածնությանը նվիրված ծեսերին զուգադիր է նաև հետևյալ սովորույթը: Հարսանիքից հետո նորահարսն առաջին անգամ ջրի գնալիս աղբյուրին ցորեն էր զոհաբերում<sup>18</sup>: Չոհաբերության նպատակը նմանակման մոգությամբ մանկածնության շնորհ ստանալն է: Հարսանեկան ծեսը և բնության ամենամյա վերածնությանը նվիրված ծեսերը զուգադիրելի են. նպատակը նույնն է՝ ապահովել կյանքի հարատևումը:

Խեթական ծիսակարգում զոհաբերությունը կատարվում էր հացի վրա, ըստ ամենայնի որպեսզի աստվածությանը նվիրված զոհի արյունը ներծծվեր հացի մեջ<sup>19</sup>: Միաժամանակ խեթերը նաև ծիսական հացեր էին զոհաբերում, որոնք կոչվում էին լուսին, երկինք (վերջինիս վրա պատկերվում էին արև, լուսին և աստ-

<sup>13</sup> *Խառատյան-Առաքելյան Հ.*, *Հայ ժողովրդական տոները*, Եր., 2005, էջ 204:

<sup>14</sup> *Արժանիցա Բ.*, *նշվ. աշխ.*, էջ 42:

<sup>15</sup> *Խառատյան-Առաքելյան Հ.*, *նշվ. աշխ.*, էջ 128:

<sup>16</sup> *Բրդյան Վ.*, *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Եր., 1972, էջ 451:

<sup>17</sup> *Նույն տեղում*, էջ 444:

<sup>18</sup> *Արեղյան Մ.*, *Երկեր*, հ. Է, Եր., 1975, էջ 52:

<sup>19</sup> *Արժանիցա Բ.*, *նշվ. աշխ.*, էջ 69:

դեր), կային մարդակերպ և թեմորֆ հացեր, ինչպես նաև կենդանակերպ՝ ոչխար, խոզ, ցուլ, կամ մարմնի ինչ-որ մի մասի ձևով հացեր՝ լեզու, ատամ, աչք: Այդ հացերը տարբեր համերի էին՝ թթխմորով կամ չթթված խմորից, նաև՝ տարբեր գույներով<sup>20</sup> (հացի զոհաբերության ծեսն անցել է նաև քրիստոնեությանը և, ըստ Մբ Գրքի, միայն չթթված խմորից պատրաստված հացը կարելի է զոհաբերել աստվածությանը): Հացի զոհաբերության օրինակ է արևմտաեվրոպական դիմակահանդեսի ժամանակ իրար վրա այլուր և ընկույզ շաղ տալը: Տոնը կատարվում էր հին տարին ճանապարհելիս, և ծեսերը հավանաբար պայմանավորված են նրանով, որ բույսերը և պտուղները պատկանում էին քտոնիկ աստվածություններին: Ռուսիայում ծննդյան տոների բնորոշ հատկանիշներից մեկը հասկերի խուրձն էր<sup>21</sup>: Հացի զոհաբերության մասին են վկայում հայոց սովորույթները: Խեթականին գուգադիր են հայոց Ասիլ-բասիլ կոչվող աչքերի, բերանի և կրծքին ծալած ձեռքերի վրա չամիչներ դրած մարդակերպ հացիկները<sup>22</sup>: Հայոց սովորույթներում հացի զոհաբերության մասին են վկայում թխած առաջին հացը միշտ ճամփորդինը համարելը, ինչպես նաև լավաշը որպես մատաղ բաժանելը<sup>23</sup>: Նոր տարվան նվիրված ծեսերի ամենամեծ խորհուրդը պտղաբերություն, բերքի առատություն և լիություն ապահովելն է: Տորենը (հացահատիկը, հացը) այդ խորհրդանիշերի կրողն է, որի հետ կապված հավատալիքները, սովորույթներն ու ծեսերը պահպանված են նոր տարվա ծեսում: Լոռիում թխվող *կլկլա* կամ *դուլաճ* կոչվող կլոր, մեջը ծակ հացերը, որոնք հացի հորեր էին խորհրդանշում, նոր տարվա օրն կախում էին գումեշի և եզան եղջյուրներից, որպեսզի այդ տարի հորը լցվեր ցորենով<sup>24</sup>: Նոր տարվան գուշակությունների նպատակով թխում էին կլոր, մեջը ծակ, ցորենով և զարով զարդարված «*հացի հոր*», «*գարու հոր*» կոչվող թխվածքները<sup>25</sup>, որոնք նույնպես բերքի և բարիքի առատություն ապահովելու խորհուրդ ունեն:

Հացահատիկի ծիսական բովանդակությունը կապվում է մեռնող և հարություն առնող աստվածությունների պաշտամունքի հետ<sup>26</sup>: Երկնային ջրերով հողի պտղաբերման առասպելաբանման հնդեվրոպական հնագույն հավատալիքներն արտացոլված են մարդակերպ աստվածների՝ երկնքի տիրակալ, գերագույն աստված Ջևսի, պտղաբերության և երկրագործության աստվածուհի Դեմետրայի և նրանց դուստր Պերսեփոնեի կերպարներում: Առասպելաբանության մեջ և հավատալիքներում ամուսնության պտուղը հասկն է կամ հատիկը: Հունաստանում Ջևսի և Դեմետրայի խորհրդանշական հարսանիքին նվիրված ամենամյա տոնի կարևոր դրվագն այդ ամուսնության պտուղ հասկը դուրս բերելն էր<sup>27</sup>: Հունական դիցաբանության մեջ ստորերկրյա թագավորության տիրուհի, հացաբույսերի և

<sup>20</sup> Ардзинба В., *նշվ. աշխ.*, էջ 65-67:

<sup>21</sup> Голан А., *Миф и символ*, М., 1992, С. 202.

<sup>22</sup> Ազգագրական հանդես, 1897, հ. Բ, էջ 246:

<sup>23</sup> Եգանյան Լ., *Շիրակի անտիկ դամբարանադաշտերը//Շիրակի հնագիտական և պատմագրագրական ուսումնասիրություններ*, հ. 1, Երևան-Գյումրի, 2010, էջ 112:

<sup>24</sup> Ազգագրական հանդես, 1903, հ. X, էջ 249:

<sup>25</sup> Խառատյան-Առաքելյան Հ., *նշվ. աշխ.*, էջ 26:

<sup>26</sup> Խանգաղյան Է., *Մեծամոր*, Եր., 1973, էջ 140; Деведжян С. *Лори – Берд*, Ер., 1981, С. 39.

<sup>27</sup> Голан А., *նշվ. աշխ.*, էջ 202:

երկրային պտղաբերության աստվածուհի Պերսեփոնեին՝ Ջևսի և Դեմետրայի դստերը, հատկացված էր աշնանը ցանվող և զարնանն աճող հացի դեր<sup>28</sup>: Կատարվող ծեսերը հավանաբար պայմանավորված էին նրանով, որ բույսերը և պտուղները պատկանում են քոռնիկ աստվածություններին: Հին Ռուսիայում Օնոնյան տոների ատրիբուտներից մեկը հասկերի խուրձն էր<sup>29</sup>: Հայոց մեջ հնագույն հավատալիքի վկայությունն է Համբարձման տոնի անոթը՝ վիճակահանության փարչը, որ տիկնիկի հետ կոչվում է *վիճակ*: Անոթի անունն ինքնին բնութագրական է և բովանդակում է ծեսի խորհուրդը: Է. Պետրոսյանը ճիշտ է նկատել, որ տվյալ դեպքում անոթը դառնում է տիկնիկի իրանի ստորին մասը, նրա որովայնը (արգանդը), իսկ անոթի միջի քարերը խորհրդանշում են սերմերը<sup>30</sup>:

Հացահատիկը պաշտամունքի աստիճանի է բարձրացվել որպես մեռնող և վերստին ծլարձակող բույս, որի հատկանիշները մոգականորեն կարող էին փոխանցվել նաև մարդուն, մանավանդ եթե մաքրագործված էր կրակով: Հավանաբար այս համոզմունքով էլ կուու գնացած առաջին հացը տալիս էին չբեր կնոջը, որպեսզի ուտեր և բեղմնավորվեր<sup>31</sup>:

Հողին հանձնված հացբույսերի մեռնելն ու ծլարձակելը առասպելաբանմամբ ծիսական բովանդակություն է ստացել՝ փոխանցվելով նաև այլուրին և հացին: Մեռնել-հառնելու շրջափուլն արտացոլվել է նաև թաղման ծեսում և հացահատիկը՝ որպես մեռնող և վերստին ծլարձակող բույս, ծիսական բովանդակություն է ստանում նաև մահվան հետ կապված արարողություններում: Հացի (հացբույսերի) զոհաբերությունը փաստված է հնագիտական նյութով, վկայված է գրավոր աղբյուրներում, պահպանված է հավատալիքներում, արտացոլված է ծեսերում:

Հավանաբար նույն գաղափարն է արտացոլված ինչպես բոլոր թաղումներն այս կամ այն ձևով ծածկելու, այնպես էլ նաև թաղման ուղեկից անոթների բերանները փակելու ծեսում՝ խորհրդանշելով կյանքի մի փուլի ավարտ, որին հաջորդելու է վերածնունդը: Հացահատիկի և հացի պաշտամունքի հետ կապված հավատալիքների հենքի վրա է ձևավորվել դամբարաններում ցորեն, գարի կամ այլուր շաղ տալը, հանգուցյալի կրծքին և բերանին հաց դնելը, հոգեհացին ձավարով շիլա պատրաստելը<sup>32</sup>:

<sup>28</sup> *Лосев А., Персефона, Мифы народов мира, Энциклопедия, т. 2, М., 1992, С. 305; Դիցարանական բառարան, Եր., 1985, էջ 197:*

<sup>29</sup> *Голан А., նշվ. աշխ., էջ 202:*

<sup>30</sup> *Петросян Э., Праздники армян в контексте европейской культуры, Եր., 2011, С. 193.*

<sup>31</sup> *Մահակյան Կ., Հովհաննիսյան Ռ., Հացին անցվող ժողովրդական պատկերացումներ և հավատալիքներ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XVI, Գյումրի, 2012, էջ 83-84:*

<sup>32</sup> *Տե՛ս Ս. Պետրուխին В. Погребения знати викингов (по данным археологических и литературных памятников), Скандинавский сборник 21, Таллин, 1976, С. 160. Թումանյան Գ., Ուշբրնձի-դարյան թաղման ծեսը հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (ըստ հնագիտական տվյալների), թեկնածուական ատենախոսություն, 1997, էջ 143; Քալանթար Աշխ., Հին Վաղարշապատի պեղումները, Եր., 1935, էջ 43; Լիսիցյան Սո., Չանգեզուր ի հայերը, Եր., 1969, էջ 334; Դեվեճյան Ս., 1981, թ. 39; Եգանյան Լ., 2010, էջ 111-112:*

Մեռնող և վերստին հառնող բնության պաշտամունքին նվիրված անոթների բերանները բացելու և փակելու ծեսին զուգադիր կարող է լինել հետևյալը: Հայտնի են տաճարների դռները տարվա մեջ մեկ կամ երկու անգամ բացելու և ծես կատարելու մասին վկայություններ: Ըստ Պավսիանոսի՝ Օվկիանոսի դուստր Եվրինոմա աստվածուհու տաճարի դռները բացում էին տարին մեկ անգամ և աստվածուհու տուն էին կատարում<sup>33</sup>: Դերկետոն (Ատարգատիս) պողոպեբրության և ջրի աստվածուհին է, որի տունի երկու օրերը՝ տարին երկու անգամ Աստրիքի բուլոթ կողմերից ուխտավորներ էին գալիս, և տարին երկու անգամ ուխտագնացության ժամանակ դիցուհու արձանը ծովը կամ գետն էին տանում<sup>34</sup>: Պիտի ենթադրել, որ ծեսը կատարելուց հետո տաճարը փակ էր մնում մինչև հաջորդ տոնակատարությունը: Տարին երկու անգամ՝ գարնանը և աշնանը, Անահիտ դիցուհու տունի օրը մեծ տոնահանդեսներ էին կազմակերպվում<sup>35</sup>: Ելնելով բերված վկայություններից՝ կարելի է ենթադրել, որ ծեսը կատարելուց հետո տաճարները փակ էին մնում մինչև հաջորդ տոնակատարությունը: Տարին մեկ կամ երկու անգամ՝ Համբարձմանը կամ Զատիկին, կամ Ծննդին (Փոքր Զատիկ), կամ էլ՝ Վարդավառին, բացվում էին Վանի ժայռի մեջ փակված Մհերի քարանձավի դռները<sup>36</sup>: Մհերի առասպելը նույնպես կապված է նոր տարվա ծիսակարգին<sup>37</sup> (Որ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի, /Երբ ցորեն էղավ քանց մասուր մի, /Ու գարին էղավ քանց ընկույզ մի, /Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էղտեղեն)<sup>38</sup>: Քարանձավի բացվելը խորհրդանշում է այնտեղ փակված հերոսի վերադարձն անդրաշխարհից, և մեռածի հարության կամ գերված աստծու ազատման մասին առասպելաբանությանը ներկայացվում է բնության ամենամյա վերածնունդը:

Մահվան միջոցով նորի ծնունդն ընկած է Տիեզերքի կարգուկանոնի կայունությունն ապահովելուն նվիրված ծեսերի հիմքում: Մեռնել-հառնելու շրջափուլն արտացոլվել է նաև թաղման ծեսում: Ինչպես տաճարների դռները բացել-փակելը, այնպես էլ դամբարանները և թաղման ուղեկից անոթների բերանները փակելը հավանաբար նույն խորհուրդն են ունեցել և խորհրդանշել են կյանքի ավարտը, որին հաջորդելու էր վերածնունդը:

Այսպիսով, նոր տարվա և թաղման հետ կապված տարբեր ծեսերը միավորված են կյանք-մահ-վերածնություն շրջափուլի մեջ, այսինքն՝ նվիրված են կյանքի հարատևմանը: Ամանների բերանները բացելը հին տարվա ավարտին և նոր տարվա գալստյանը՝ գարնանամուտին նվիրված ծիսակարգի բաղադրիչներից է: Աշնանը փակված անոթների բերանը բացելով՝ ավարտվելու էր ամպրոպի աստծուն նվիրված խորհրդանշական ծեսերից վերջինը, որով ակնկալվում էր բնական շրջափուլի ապահովման, կարգուկանոնի վերականգնման համար մղած պայքարում Վիշապամարտիկի հաղթանակով երկնային ջրերի բացում՝ անձրևներ

<sup>33</sup> *Խանգաղյան Է.*, *Գառնի IV*, Եր., 1969, էջ 141:

<sup>34</sup> *Աբեղյան Մ.*, նշվ. աշխ., էջ 154-155:

<sup>35</sup> *Նույն տեղում*, էջ 156:

<sup>36</sup> *Հարությունյան Ս.*, *Հայ առասպելաբանություն*, Բեյրութ, 2000, էջ 455:

<sup>37</sup> *Նույն տեղում*, էջ 456:

<sup>38</sup> *Հայ ժողովրդական հերոսավեպ*, Սասունցի Դավիթ, Եր., 1981, էջ 315:

րի սկիզբ, բնության զարթոնք և բերքի առատություն: Նույն խորհուրդն են ունեցել ինչպես ամանների բերանները և տաճարների դռները փակելու ու բացելու ծեսերը, այնպես էլ քարանձավի մեջ Մհերի փակվելը և տարին մեկ անգամ դուրս գալը: Անոթները փակող կարասի զարդագոտու սիմվոլիկ նախշերը հավատալիքների պատկերային դրսևորումն են և համահունչ զարնան գալստյանը նվիրված պայքարի ծիսական բովանդակությանը<sup>39</sup>:

Հնագիտական նյութի, խեթական գրավոր աղբյուրների վկայությունների, հնդեվրոպական, այդ թվում նաև հայոց հավատալիքների ու սովորույթների համադրումները բերում են այն համոզման, որ Մեծ Մեպասարի սրբարանում անոթների բերանների փակ լինելը կապված է աշնանը կատարվող անոթների բերանները փակելու և զարնանը բացելու ծեսի հետ և խորհրդանշել են հնի մահ և նորի ծնունդ: Գարնանամուտին նվիրված գայլերի զոհաբերության ծեսի ժամանակ բացվելու էին աշնանը փակված, ամայրոպի աստծուն մատուցվելիք զոհաբերություններով անոթների բերանները, սակայն սրբարանի ավերումը թույլ չի տվել ծիսակարգն ավարտել:

#### ОБ ОДНОМ РИТУАЛЕ РАННЕБРОНЗОВОГО ПЕРИОДА (по материалам Мец Сепасара)

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ Л. Еганян \_\_\_

Сохранившееся святилище, относящееся к бронзовому веку и датированное XXVIII–XXVI вв. до н.э., указывают, что в определенный сезон года – весной – совершались ритуальные жертвоприношения волков, которые символизировали конец Старого года и рождение Нового.

Наряду с найденными в различных частях святилища многочисленными фрагментами керамики, было найдено шесть целых чаш, стоявших на полу у южной стены и прикрытых большим кувшином.

Из раскопок некрополей разных эпох известно, что все захоронения, не зависимо от формы и типа, всегда закрыты. Ритуал закрывания сосудов известен из археологических памятников разных эпох. В некрополях средней и поздней бронзы сосуды закрыты каменными крышками. Урартские погребальные урны без исключения закрыты чашами, обломками сосудов или камнями. Раскопанные на северо-западе кувшинные захоронения античного периода Армении закрыты перевернутыми вверх дном сосудами.

В хеттских ритуалах праздников, посвященных божествам, предшествовало открывание сосудов зерна. Ритуал открывания совершался весной, а закрывание – осенью. На осенних же праздниках совершали запечатывание сосудов. Предполагается, что акты “открытия” – “запечатывания” сосудов символизировали собой “рождение” весны, а “закрытие” – приближение холодов. Ритуалу сопоставим и армянский обычай хранить в амбаре муку или зерно, маленькую охупку колосьев пшеницы до нового урожая.

<sup>39</sup> Եգանյան Լ., *Քրոնոսիսիսյան մի կարասի զարդագոտու սիմվոլիկայի շուրջ*, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. XV, Եր., 2012, էջ 32-38:

Сопоставление археологических материалов с вышеприведенными ритуалами и верованиями позволяет утверждать, что открывание сосудов рассматривалось как один из атрибутов основного ритуала-жертвоприношения волков, как необходимый и действенный способ для достижения основной цели - поддержания естественного порядка в природе. Во время празднества должны были открывать сосуды, заполненные еще осенью.

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Եզանյան Լարիսա Գրիշայի- պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի արագատար գիտաշխատող,  
E-mail: [smuseum@web.am](mailto:smuseum@web.am)*

## Մերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### ՀԱՅԵՐԵՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ

Արդի շարահյուսագիտության մեջ այս կառույցները հայտնի են նաև կրավորաձև անունով, որպես ներգործաձև կառույցների շարահյուսական հոմանիշներ<sup>1</sup>: Օրինակներ. Մայր ծնաւ գորդի – Որդի ծնաւ ի մարէ, Քամին բացեց դուռը – Դուռը բացվեց քամուց: Ընդ որում, եթե ներգործաձև կառույցն ունի ենթակա-ստորոգյալ– ուղիղ խնդիր, ապա կրավորաձևը՝ ենթակա-ստորոգյալ– ներգործման խնդիր նույնպես եռանդամ լիակաղապարը, որում ներգործական բայ-ստորոգյալի քերականական ենթական (մայր, քամին) վերածվում է կրավորական բայի քերականական խնդրի (ի մարէ, քամուց), որ տրամաբանորեն գործողություն կատարողն է և «ցույց է տալիս մի առարկա, որի գործողությունը ենթական կրում է իր վրա, այսինքն՝ ենթական ազդվում, ներգործվում է կամ իբրև արդյունք առաջ է գալիս գործողությունից»,<sup>2</sup> իսկ ներգործական կառույցի ուղիղ խնդիրը (գորդի, դուռը) կրավորական կառույցի քերականական ենթական է (որդի, դուռը)՝ գուրկ գործող լինելու հատկանիշից, ենթակա, որից, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, «գործողությունը օտարվում է»:<sup>3</sup>

Ուղիղ խնդրի նման՝ ներգործման խնդիրը ևս «բայի ներխոսքիմասային իմաստով և սեռով պայմանավորված «ոչ ընդհանուր կամ հատուկ լրացում է»<sup>4</sup> և շնորհիվ այն կարևոր դերի, որ ունի այդպիսի նախադասությունների քերականական կառուցվածքի ավարտունության, նրանցով հաղորդվող մտքի լիարժեքության տեսակետից, կրավորական կառույցի հիմնական միավորներից մեկն է: Մա նշանակում է, որ եթե ներգործաձև կառուցվածքի նախադասություններում շարահյուսական առանցքի հիմնաբաղադրիչներ են համարվում ենթակայից և ստորոգյալից բացի նաև ուղիղ խնդիրը,<sup>5</sup> ապա դրանց հետ շարահյուսորեն համանշվող կրավորաձև կառույցներում այդպիսիք պիտի դիտվեն ենթական, կրավորական սեռի բայ-ստորոգյալը և ներգործման խնդիրը:

Ըստ այսմ՝ հայերենի կրավորաձև լրիվ կառույցներում հնարավոր ենք համարում կառուցվածքային հիմնամիավորների գծային հաջորդականության բոլոր վեց տարբերակները՝ ենթակա-ստորոգյալ-ներգործման խնդիր, ենթակա-ներգործման խնդիր-ստորոգյալ, ստորոգյալ-ենթակա-ներգործման խնդիր, ստորոգյալ-ներգործման խնդիր-ենթակա, ներգործման խնդիր-ստորոգյալ-ենթակա և

<sup>1</sup> Տե՛ս **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Եր., 1957, էջ 135: **Պառնասյան Ն.**, Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1974, էջ 118-121: **Հարությունյան Հ.**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, էջ 175 և ուրիշներ:

<sup>2</sup> **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 375:

<sup>3</sup> **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 268:

<sup>4</sup> **Հարությունյան Հ.**, նշվ. աշխ., էջ 111:

<sup>5</sup> **Հայրապետյան Մ.**, Հայերենի անցողական կառույցների շարահյուսության մի քանի հարցեր, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1, Եր., 1998, էջ 99:

ներգործման խնդիր-ենթակա-ստորոգյալ: Ի դեպ, ինչպես այլ լեզուներում, հայերենում ևս լրիվ (եռանդամ) կրավորաձև կառույցները համեմատաբար փոքրաթիվ են, դրան հակառակ՝ ակնհայտ է երկանդամ (հիմնականում ենթակա-ստորոգյալ հիմնաբաղադրիչներով) կառույցների քանակական գերազանցությունը: Մ.Ասատրյանը այս առիթով նշում է. «Կրավորական կառուցվածքի նախադասությունը՝ ի հակադրություն ներգործական կառուցվածքի նախադասության, լայն հնարավորություններ ունի միշտ կամ համարյա միշտ չհիշատակելու գործողություն կատարողին, անգամ այն դեպքում, երբ այդ գործողություն կատարողը հայտնի չէ խոսողին»:<sup>6</sup>

Թեև լիակաղապար կրավորաձև կառույցների վերոնշյալ բոլոր վեց տարբերակներն էլ մեր լեզվի հին, միջին և նոր գրական վիճակներում վկայված են, սակայն մեր կողմից նույնաձևով բնագրային հատվածների վիճակագրական ուսումնասիրության տվյալների վերլուծության հիման վրա կարելի է աներկբա պնդել, որ հայերենի բոլոր գրական վիճակներին առավել բնորոշ, ամենագործական տարբերակներն առաջին երկուսն են՝ ենթակա-ստորոգյալ-ներգործման խնդիր, ենթակա-ներգործման խնդիր-ստորոգյալ, ընդ որում՝ առաջին տարբերակն ունի գործածության ակնհայտորեն ավելի բարձր հաճախականություն:

Ներկայացնենք կրավորաձև եռանդամ կառույցների հիմնաբաղադրիչների փոխդասավորության տարբերակային դրսևորումները հայերենի գրական վիճակներում.

ա. Ենթակա- ստորոգյալ-ներգործման խնդիր գծային հաջորդականություն.

Այս տարբերակը գրաբար բնագրերում եռանդամ կրավորաձև կառույցների ամենահաճախական դրսևորումն է (մեր հաշվումներով՝ միջին հաշվով 100-ից 33 դեպքերում). օրինակներ՝ Երկիր լուսաւորեցաւ ի փառաց նորա /Յայտն.,ԺԸ/: Վեմք խորտակեցան ի նմանէ /Նաւում,Ա/: Խմորեայք եփեցցին յառաջնոց /Ղևտ.,ԻԳ/: Խորք խռովեցան ի ձայնէ ջուրց /Սաղմ.,ՀԶ/: Սոքա ծնան նմա ի դստերէն /Ա.Մնաց.,Բ/: Հոգին առաքեցաւ Հարբն և Որդւովն /Ագաթ.,665/:

Այս առումով գրաբարին բավականին հարագատ է նաև միջին գրական հայերենը, այն տարբերությամբ, որ այստեղ վերոհիշյալ եռանդամ տարբերակի գործածության հաճախականությունը գրաբարի համեմատությամբ մի փոքր թուլանում է (միջին հաշվով 100-ից 30 դեպքեր):

Օրինակներ՝ Սա ... դիւրաւ իմանի կարդացողին /ՊԱԴ, 406/: Խասան կոտորեցաւ ի Չիթաղէն /ԺԵՀԶԲ, 351/: Եւ թէ որ...տուժուի ի դարպասէն /ԴՄԻ, 23/: Բնութիւն արգիլեցաւ ի շոգերոյն /ՄՀԶՄ, 13/: Շատ զօրաւոր մարդիք խաբուին ի տկարաց /ՆՄԺԱՎ, 420/: Օձն պարարտանայ ի հոտոյն /ՆՄԺԱՎ, 235/: Որք... տանջին խաւարով /ՀԵ, 187/: Ագբաւն ... հայարտացաւ ի սուտ գովութիւնն /ՆՄԺԱՎ, 29/:

Գրական արևմտահայերենը կրավորաձև եռանդամ կառույցներում հիմնաբաղադրիչների գծային հաջորդականության սույն տարբերակի գործածական ակ-

<sup>6</sup> Ասատրյան Մ., *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, Եր., 1959, էջ 135:



տիվության տեսակետից նկատելիորեն զիջում է գրաբարին, նույնիսկ միջին գրական լեզվին: Այլ խոսքով՝ գրաբարի համեմատությամբ միջին հայերենում շարադասական այս տարբերակի գործածության նվազման գրեթե աննկատելի միտումը արևմտահայերենում ստանում է բավականին ցայտուն դրսևորում (միջին հաշվով՝ 100 օրինակներից ընդամենը 25-ը): Այնուհանդերձ, այս տարբերակը արևմտահայերենում ևս, ինչպես կտեսնենք ներքևում, շարունակում է մնալ եռանդամ կրավորաձև կառույցի հիմնական տարբերակներից մեկը:

Օրինակներ՝ Տղան հետզհետե տարուեցաւ անոնց ընկերութեանը /ԵԵ,269/: Ես արբեցած կը տարուիմ աղբիւրներուն երգեցիկ /ՄԲ, 328/: Զօրավարն գերի բռնուեցաւ Թորոսէն /ՕԵ, 203/: Ասիկա բաւ կ'լլայ, որ մանկուհին քանի մը ժամ ետքը վարակուի մահացու հիւանդութենէն /ԵՕԵԺ,4,331/: Պաշտպանեալներս կը կեղեքուին օտար տղայէ մը /ԱՕՍՉՍ,176/: Խեղճ տղան պատուհասուած էր նաև այլ հիւանդութեամբ /ն. տ., 21/: Գիւղը ամբողջովին գրաւուած էր տոբթօրով և իր շնորհալի ասպնջականուհիովը /ԵԵ,348/: Իր գրական արժանիքները կասկածի ներքեւ կ'իյնային նոր հասնող քննադատներէ ումանց կողմէ /ԶԳՀ, 85/:

Նույնը չի կարելի ասել գրական արևելահայերենի վերաբերյալ, որտեղ եռանդամ կրավորական կառույցի վերոնշյալ տարբերակը ամենագործածականն է (42 %) հայերենի բոլոր մյուս գրական վիճակների համեմատությամբ, և այդ հարցում արդի հայերենը զգալիորեն գերազանցում է նույնիսկ հին գրական լեզվին, որտեղ վերոհիշյալ տարբերակը, ինչպես ասվեց, բարձր (33 %) հաճախականություն ուներ:

Օրինակներ՝ Որքան այսպիսի դժբախտներ գոհվել են քո չար կրքերին և քո անիրավ փառասիրությանը /Ը,7,428/: Ահա պոետն էլ պատրանքով հարբած՝ Գերվեց մի անգամ ժպտուն աչքերի /ՀԹ,1,240/: Խելքս է տարվել քո ալ-վարդին /Իս.,1,239/: Սամվելը շատ սիրված էր ժողովրդից /Ը,7,70/: Այդ սրիկաները վարձված են Ղուլամյանից /Շիրվ.,4,158/: Ոչ մի գեղեցիկ կին կամ աղջիկ չազատվեցավ նրանց ձեռքից /Մուր.,4, 70/: Նրա առաքինության ու պարկեշտության զգացումը վիրավորվում էր այդ ծառաների ներկայությունից /Շիրվ.,3, 99/: Իսկ գաղթական ժողովուրդը կոտորվում էր սովից, ցրտից /Բակ.,13/: Բոլոր ռուս գրողները ներշնչված են նրանից մինչև այսօր /Իս.,4,24/: Լռությունը խանգարվում էր միայն գրքացի կիսաձայն ընթերցումով /ՆՆ,1,17/: Մենք բոլորս ... կախարդված ենք նրա Ապոլոնյան հանճարով /Իս.,4,177/: Հինավուրց ամբողջ պատասպարված էր ամեն կողմից ... ամբողջուններով /Մուր.,4,8/:

Ինչպես փաստում են վիճակագրական ուսումնասիրության տվյալները, եռանդամ կրավորաձև կառույցի ենթակա-ստորոցյալ-ներգործման խնդիր գծային հաջորդականությամբ տարբերակը գրական հայերենի բոլոր դրսևորումներում հատուկ է ամենասովորական, ոճականորեն չեզոք պատմողական խոսքին:

բ. Ենթակա- ներգործման խնդիր-ստորոցյալ գծային հաջորդականություն.

Այս տարբերակը, բացառությամբ արևմտահայերենի, հայերենի գրեթե բոլոր գրական վիճակներում դրսևորում է գործառական համարյա նույն ակտիվությունը. գրաբարում՝ 24, միջին հայերենում՝ 26, արևելահայ գրական լեզվում՝ 21%: Ու

թեն քանակապես այն զգալիորեն զիջում է նախորդին, սակայն նույնքան ակնհայտորեն էլ առանձնանում է մյուս չորս տարբերակներից իր գործառական ակտիվությամբ:

Օրինակներ՝ Տեսիլ... ոչ առ յընկերէ պատմեալ /ԿՎՄ,40/: Երբէք այսպիսի գործք յումեքէ ի վերայ երկրի ոչ գործեցան /Բուգ.,4,ԺԵ/: Մեր կեանքս քեզ նուաճեցին /Ագաթ.,39/: Այս այնչափ միայն առ ի յինէն քեզ տեսցի /ՅԴՊԷ,7/: Դու ի նմանէ ծնար /ԼՄԺԱՎ,200/: Դու ի նմանէ ընծայեցար /ն.տ.,203/: Լոյս ի լուսոյ ծնալ /ԿԵՏ,129/: Եղբայրասպանությունը աստծուց և մարդկանցից անիծված է /Մուր.,4,158/: Գութանի խոփը ժանգից էր նեղվում /ՊՄԱԶ,86/: Դաշտ ու ձոր, լեռ ու անտառ հագարացի գորքերով ու հելուզակներով էին բռնված /Մուր.,4,73/: Մինչդեռ գրական արևմտահայերենում կրավորական կառույցի հիմնաբաղադրիչների գծային հաջորդականության այս տարբերակն ընդգծված ձևով ամենագործածականն է (ավելի քան 37%) մնացածների համեմատությամբ:

Օրինակներ՝ Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանեան պօլսեցիներէն կ'անուանուի հրաշագործ / ՀՕԵ,2,236/: Աս ալ ձեր խօսքին զարնուած էր /ն.տ.,1,230/: Գիշերները դուրս ելնողներն հարբուխէ կը բռնուին /ն. տ.,4,479/: Ան քնոջն...գայլերուն կը հաղթուէր /ԹԲԱԵ,106/: Թթերուն ճամբուն վրայ Տափան Սարգար կայծակէն զարնուած էր /ՀԵԱԳԱ,17/: Աղջիկ մը շատ անգամ նոր հագուստներու կը խաբուի /ՀՊԵԺ,1,175/:

Այսպիսով, հիմնաբաղադրիչների ենթակա- ստորոգյալ-ներգործման խնդիր և ենթակա- ներգործման խնդիր-ստորոգյալ տարբերակները միասին՝ քննության առնված բնագրային հատվածներում հանդիպում են գրաբարում՝ 57, միջին գրական հայերենում՝ 56, արևմտահայերենում՝ 62 և արևելահայերենում 63 % հաճախականությամբ, ընդ որում, նկատելի է նաև, որ նոր գրական հայերենը սույն տարբերակների գործածման աճի միտում ունի (արևելահայերենը հիմնականում ի հաշիվ առաջին, իսկ արևմտահայերենը՝ երկրորդ տարբերակի):

գ. Ստորոգյալ-ենթակա-ներգործման խնդիր գծային հաջորդականություն.

Ըստ վիճակագրական տվյալների՝ այս տարբերակը հայերենի բոլոր գրական վիճակներում հանդես է գալիս գրեթե հավասարաչափ և կրկնակի (գրական արևելահայերենում՝ նույնիսկ եռակի) պակաս առաջին տարբերակից:

Օրինակներ՝ Եղիցին ամենեքեան ուսեալք Յաստուծոյ /Յովհ.,Զ/: Ի փախուստ դարձցին նոքա յերեսաց ձերոց /Յուդ.,ԺԴ/: Մկսաւ սատակումն ի ժողովրդեան /Բ. Թագ.,ԻԴ/: Ծանիցի Տեր Եգիպտացուցն /Եսայի,ԺԹ/: Որպէս վառեսցի եղեգն ի կայծականց /ն.տ.,Ե/: Աւերեցաւ աշխարհս ամեն ի անօրէն թուրքմանէ /ԺԵՀՀԱ,361/: Լուսաւորի հոգի քո կրկին լույսով սուրբ աւազանին /ԼՄԺԱՎ,263/: Եւ կը զարնուի եղբայրն եղբորէն /ՎԹԵ,231/: Կեղեքվում է իմ անտեր մնացած երկիրը թշնամիներից /Ը,7,247/: Ինչպես իզուր խաբվել ես դու Սուտ խոսքերին չար աղվեսի /ՀԹ,1,310/:

Ակներև է, որ վերոբերյալ նախադասությունների մեջ իր լրացյալից ենթակայով ընդմիջված ներգործման խնդիրն նկատելիորեն ընդգծուն վիճակ ունի՝

«իբրև անդամ, որի մասին իրազեկում է հաղորդվում»:<sup>7</sup> Ասվածը վերաբերում է ոչ միայն եռանդամ, այլև երկանդամ (առանց ենթակայի) կրավորաձև կառույցներում ներգործման խնդրի՝ իր առաջադաս լրացյալից այլ անդամներով ընդմիջված վերջադասությանը, ինչպես օրինակ՝ Որ ծածկեալն էր յամենայն յախտեանց *առ Աստուծոյ* /Ագաթ.,353/: Ի տղայութենէ սնեալ և ուսեալ ի կեսարացոց քաղաքին Գամրաց *ընդ* հաւատարիմ *վարդապետօք* /Բուզ.,4,9/: Ջինչ մեծամեծ վաստակ արի՝ տանիլ տուի զինքն *հեղեղի* /ՖՂ, 289/: Այս օրերս յաղթուեցաւ Սիմոն անուն *բեռնակրէ մը* /ՀՊԵԾ,4,478/: Ամբողջովին մտասուզվեց գիշերվա իր լսած իրադարձությունների հիշողությամբ /ԶԴՄՆ,2,378/:

դ. Ստորոգյալ-ներգործման խնդիր-ենթակա գծային հաջորդականություն.

Եռանդամ կրավորաձև կառույցում հիմնաբաղադրիչների փոխդասավորության այս տարբերակը, թեև սակավադեպ, սակայն վկայված է բոլոր գրական լեզվավիճակներում: Հասկապես այն դեպքերում, երբ քերականական ենթական եզրափակում է նման նախադասությունը, ապա վերածվում է տրամաբանորեն ընդգծված բառի:

Օրինակներ՝ Սարտեալ ի նմանէ հարձն իւր /Դատ.,ԺԹ/: Երկրորդ սիկառին հետ կը տարուի մտմտուքի Գօլօն /ՀՕԵ,125/: Չհամոզեցաւ սակայն այս ըստածներէն Էմիլիօն /ՎՄՀԲ,156/: Գրքի էջերից երազվում էր նրան տիտանային մի մարդ /Զ,431/:

Տարբերակը համեմատաբար ավելի գործածական է (մոտ 12%) արևմտահայերենում, որն ինչպես հայտնի է, մատնանշելու նպատակով ենթական հաճախ տանում է նախադասության ամենավերջը:<sup>8</sup>

ե. Ներգործման խնդիր-ենթակա-ստորոգյալ գծային հաջորդականություն.

Քիչ հանդիպող (մոտավորապես 8-10%) շարադասական տարբերակ է, գերազանցապես օգտագործվում է իր լրացյալից ենթակայով (նաև այլ անդամներով) ընդմիջված առաջադաս ներգործման խնդրի ոճական ընդգծման նպատակով:

Օրինակներ՝ Յանօրինաց մեք հալածիմք *ԼՄՀՁԶԳ,6*/: Չեմ այլոց ձեռօք ես խաբուէր /ն.տ.,303/: Մեծ ապարանքին վրայ իջնող կայծակէն կարծես ամեն մարդ շատ քիչ հարուածուած էր /ԵԵ,33/: Չափազանցութիւններէ սիրտս կը խառնուի /ՀՊԵԾ,390/: Անձրևից ծառերը լվացվել էին, մաքրվել էին /Ը,7,69/: Արկերից մեր վաշտում մարդ չէր սպանվել /ԲՀՄԶ, 74/: Սև ամպերով երկնից դեմքը քողարկվեց /ՀՀ,92/:

զ. Ներգործման խնդիր-ստորոգյալ-ենթակա գծային հաջորդականություն.

Տարբերակը գործածության գրեթե նույն ակտիվությունն է դրսևորում, ինչ նախորդը, թերևս մի փոքր ավելի հաճախադեպ է (11-12 %), նաև առանձնահատուկ է նրանով, որ տրամաբանորեն ընդգծված են ոչ միայն առաջադաս խնդիրը, այլև այսպիսի կառույցը եզրափակող ենթական:

<sup>7</sup> *Մարգարյան Ա.*, *Արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ. գուգադրա-տիպաբանական քննություն*, Եր., 1985, էջ 294:

<sup>8</sup> *Այդ մասին տե՛ս Ա. Մարգարյան Ա.*, նույն տեղում:

Օրինակներ՝ Մտաց իմանի գորութիւն նորա /Եղ.,7/: Ի սպանելոց անտի լցեալ եղեն հիմունք երկրի մերում /Ղև.,Պատմ.,276/: Ի պարարտութենէ լցցի անձն իմ /Մաղմ., ԿԲ/: ՅԱստուծոյ ուղղեսցին գնացք նորա /Առակ.,ԺԶ/: Ի տեսիլ մերձատրութեան նորա զգաստացան լկտիք /Եղ.,7/: Ձկամբ գայթակղիցի եղբայրն /Եզն.,4,ԺԲ/: Ի կարճոյ հնարեցաւ վախճանն նոցա /Բմաւ.,ԺԴ/: Ի քաղցրութենէն, եղբարք, բռնկեր է պոկունքս .../ՆՄՀԿ,112/: Այդ տեսիլքէն կը դողան դեռ հիմա միտքս ու հոգիս/ՎԹԵ,363/: Բոլորին կողմէն արհամարհուած էր փնթի Մկոն /ՀԵԱԳԱ,247/: Կաթնագոյն մի լույսով էր ողողվել երկինքն ու քաղաքը /ԳՄԼԶ,426/: Նրա ստեղծագործություններով դաստիարակվել են սերունդներ /Բս.,4,180/

Եռանդամ կրավորաձև կառույցները, ինչպես իրավացիորեն նկատվել է արդի հայ քերականագիտության մեջ,<sup>9</sup> իրենց գործածության ակտիվությամբ ակնհայտորեն զիջում են երկանդամ կառույցներին: Չնչին տարբերություններով հանդերձ՝ վերջիններս հայերենի բոլոր գրական վիճակները ներկայացնող բնագրային հատվածներում մեր հաշվումներով կազմում են դիտարկված կրավորաձև կառույցների 68-70 %: Սրանցում առկա չէ կամ ներգործման խնդիրը, կամ ենթական, կամ երբեմն՝ ստորոգյալը: Այսպիսի կառույցները հանդես են գալիս երկու հիմնաբաղադրիչների փոխդասավորության վեց տարբերակային դրսևորումներով, որոնք բոլորն էլ, իհարկե միանգամայն տարբեր հաճախականություններով, բայց վկայված են հայերենում:

ա. Ենթակա-ստորոգյալ գծային հաջորդականություն.

Կրավորական բայերը շատ ավելի հաճախ, քան ներգործականները, խոսքում հանդես են գալիս առանց իրենց սեռի խնդրի: «Կրավորական կառուցվածքի նախադասությունը...լայն հնարավորություն ունի միշտ կամ համարյա միշտ չիշատակելու գործողություն կատարողին՝ անգամ այն դեպքում, երբ այդ գործողություն կատարողը հայտնի չէ խոսողին»:<sup>10</sup> Առհասարակ նկատելի է, որ «ներգործող խնդիրը սովորաբար բառական արտահայտություն չի ստանում այն դեպքում, երբ հայտնի է խոսքաշարից կամ անկարևոր է, հարկ չկա այն շեշտելու, երբեմն էլ կարող է լինել անհայտ»:<sup>11</sup> Ի դեպ, ներգործման խնդրի բացակայությունը կրավորաձև կառույցը կազմությամբ նույնացնում է երկանդամ կրավորաձև չեզոք կառույցների հետ: Սակայն հասկանալի է, որ այդ նույնացումը զուտ ձևական է, որովհետև խնդրի չգոյության (այսպես ասած՝ զրո խնդրի) դեպքում բայը երբեք էլ չի դադարում կրավորական սեռին պատկանելուց, ուրեմն նաև ներգործման խնդիր ունենալու հնարավորությունից, բոլորովին այլ է նրա հարաբերության բնույթը իր ենթակայի հետ, որն, ի տարբերություն չեզոք կառույցի ենթակայի, «ինքը չի ստեղծում բայիմաստով դրսևորվող հատկանիշ, այլ այդ հատկանիշը կրում է իր վրա»: Այդ պատճառով էլ «մեր մեջ առաջանում է այն պատկերացումը, որ...գործողությունը կատարել է ինչ-որ մեկը, որը տվյալ նախադասության մեջ չի արտահայտ-

<sup>9</sup> Տե՛ս *Մաստրյան Մ.*, նշվ. աշխ., էջ 135: *Հարությունյան Հ.*, նշվ. աշխ., էջ 177 և ուրիշներ:

<sup>10</sup> *Մաստրյան Մ.*, նշվ. աշխ., էջ 136:

<sup>11</sup> *Հարությունյան Հ.*, նշվ. աշխ., էջ 177:

ված»,<sup>12</sup> բայց կարող է ի հայտ գալ: Այնուամենայնիվ երկանդամ՝ ենթակա-ստորոգյալ գծային հաջորդականությամբ կրավորաձև կառույցներում շատ դեպքերում ներգործման խնդիրը չի կարելի վերականգնել, որովհետև նրա պատկերացումը խիստ անորոշ և ընդհանուր է («Դրա համար մեծ ջանքեր են պահանջվում». «Երկրի հարստությունները անխղճորեն վատնվում են». «Ընդերքը լավ չի ուսումնասիրվում»):

Ենթակայով և ստորոգյալով երկանդամ կրավորաձև կառույցի այս տարբերակը գործածության բավականին լայն շրջանակներ ունի (62-64 %) մեր գրական լեզուների՝ հատկապես արտահայտչական գունավորումից գուրկ պատմողական, գործնական, պաշտոնական կամ գիտական ոճերում:

Օրինակներ՝ Կոյր գրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն գրկի ի կատարեալ կենաց /Եղ.,14/: Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ/Բուգ.,4,ԺԵ/: Բանն հաստատեցի/Եզն.,1,ԺԸ/: Երկինք շրջիցին/ն.տ.,2,ԻԵ/: Ամբողջ կյանքը նա չարչարվել է/Գ.ԲՆ.,67/: Անունը մոռացվել է, բայց գործը հիշվում է /Իս.,3,322/: Նրա հրավերը ընդունվեց ուրախությամբ /ՄԳ,54/:

բ. Ստորոգյալ-ենթակա գծային հաջորդականություն.

Տարբերակը, նախորդին հակառակ, ունի ոճաարտահայտչական նկատելի գունավորում, համեմատաբար քիչ գործածական է (մոտ 36-38 %), և նրանում հատկապես ստորոգյալի առաջադաս ու որոշ չափով նաև ենթակայի վերջադաս դիրքերը տրամաբանորեն ընդգծուն են, ինչպես օրինակ՝ Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի /Եզն.,2,Ա/: Ծածկեցի խորհուրդ ամբարշտութեանդ /Եղ.,10/: Յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն /ն.տ.,16/: Հեռու հորիզոնում նշմարվում էր Ազատ լեռաը /Գ.ԲՆ.,31/:

«Կրավորաձև կառույցը ենթական «ազատելով» «գործող լինելուց», ստեղծում է բարենպաստ շարահյուսական պայմաններ այն չարտահայտելու համար»:<sup>13</sup> Զեղչված ենթակայով կամ անենթակա երկանդամ կրավորաձև կառույցները, թեև քիչ չեն հանդիպում, սակայն առանց ներգործման խնդրի երկանդամ կրավորաձև կառույցների համեմատությամբ ավելի սակավաթիվ են: Եվ եթե վերջիններս կազմում են բնագրային հատվածներում դիտարկված այդպիսի կառույցների շուրջ 60%, ապա առաջինները, որ իրենց գույգ դիրքային տարբերակներով գրեթե հավասարաչափ են գործածական հայերենի բոլոր գրական ձևերում, միայն 36 %:

ա. Ստորոգյալ-ներգործման խնդիր գծային հաջորդականություն.

Երկու հիմնաբաղադրիչներ ունեցող այս տարբերակին հայերենի բոլոր գրական վիճակներում էլ բնորոշ է պատմողական չեզոք ոճը, հանդարտ շարադրանքը, այն երբեմն էլ ունի նախադասության վերջը տարված ներգործման խնդրի բավականին ակներև տրամաբանական ընդգծվածություն:

Օրինակներ՝ Տապալէր երկդիմի մտօք /Եղ.,16/: Ոչ զգեցցին ի գործոց ձեռաց իւրեանց /Եսայի,ԾԹ/: Օրհնեցաւ և դրուատեցաւ ի հեռաւորաց և ի մերձաւորաց /ԹԱՊՏԱ,3,ԺԳ/: Անիծած լինի սուրբ Յարութենէս /ԺԵՀՀՀԲ,449/: Ո՛ր մահու մատ-

<sup>12</sup> Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 138:

<sup>13</sup> Проблемы теории грамматического залога, Л., 1978, С. 21.

նեցաւ յիւր արարողէն /ՀԵ,192/: Կը դիմաւորուի խոշոր կնիկէ մը /ՀՊԵԾ,3,189/: Հիասթափուեցան գաւառին կեանքէն /ՇՇ,1,133/: Կբռնվեր կամուրջի գիշերային պահակներից /Ը,7,18/:

բ. Ներգործման խնդիր-ստորոգյալ գծային հաջորդականություն.

Տարբերակն իր հաճախականությամբ բնագրային հատվածներում քիչ է զիջում նախորդին: Ստեղծում է գեղարվեստական ոճ, արտահայտչական գունավորումով հարուստ խոսք՝ խնդրի հատկապես նախադասության սկիզբը զբաղեցնող դիրքի շնորհիվ, ինչպես օրինակ՝ Ի բերանոյ քումմէ դատեցայց /Ղուկ.,ԺԹ/: Յամենայն հոգմոյ շարժի և յամենայն բանէ խոռովի և յամենայն իրաց դողայ /Եղ.,14/: Հագարացոց ազգէն գերեցաք, ճաղաթայից սրէն խոցեցաք /ԽԿ,130/: Մեր ազգայիններէն մեկէն վնաս տեսած է առուտուրի մէջ /ՀՊԵԾ,4,412/: Անհաղթահարելի ուժից մղվում էր դեպի աղքատիկ բնակարանը /Շիրվ.,3,245/:

Հանդիպում են նաև երկանդամ կրավորաձև կառույցներ՝ հիմնաբաղադրիչների գծային հաջորդականության ենթակա-ներգործման խնդիր և ներգործման խնդիր-ենթակա տարբերակներով (ստորոգյալի զեղչման դեպքում): Ի տարբերություն նման կառույցներում հիմնաբաղադրիչների փոխդասավորության վերը քննված չորս տարբերակների՝ սրանցում ենթակայի և ներգործման խնդրի փոխդասավորությունը գերազանցապես որոշվում և կարգավորվում է խոսքային իրադրությամբ՝ անմիջապես նախորդող լրիվ (առանց ստորոգյալի զեղչման) եռանդամ կառույցում այդ հիմնաբաղադրիչների հաջորդականության գոյություն ունեցող ձևի պատճենմամբ:

Օրինակներ՝ Անուշուան կը տանջուէր խղճի խայթէն, հայրը՝ անորոշութեան զգացումէն: Անախորժ մտքերով էր շղթայված մարմինը, և ունայն հույսերով՝ հոգին: Նա մոռացվել էր իրեն ճանաչող մարդկանց կողմից, սրանք էլ՝ երևի իրենց աստծուց:

Բնագրային հատվածներում երբեմն կան նաև մենանդամ կրավորաձև կառույցներ, որոնցում ենթակայի և ներգործման խնդրի զեղչման պատճառով հիմնաբաղադրիչներից առկա է միայն կրավորական սեռի բայ – ստորոգյալը՝ մենակ կամ իր այլ լրացումների, երբեմն նաև նախադասության անդամ չհանդիսացող բառերի հետ:

Օրինակներ՝ Գալարէր իբրև զօձ թունաւոր /Եղ.,16/: Ձի այրիս, զի բորբոքիս /ն.տ.,7/: Յանեալ ցրուեցան /ն.տ.,119/: Կը հալածուէր անխղճորեն /ԹԲԱԵ,58/: Վերջապէս գտնվեց /ԴԴՎ,187/: Երևի պիտի կառուցվի կրկին /Շիրվ., 52 /:

Միանգամայն հասկանալի պատճառով (առկա է հիմնաբաղադրիչներից միայն մեկը) այսպիսի կրավորաձև կառույցները հիմնաբաղադրիչների փոխդասավորության տեսակետից բնականաբար որևէ հետաքրքրություն ներկայացնել չեն կարող:

Ի մի բերելով ասվածը կրավորաձև կառույցներում հիմնաբաղադրիչների տարբերակների՝ հայերենի տարբեր վիճակներում ունեցած դրսևորումների վերաբերյալ, կարելի է դրանց վիճակագրական ուսումնասիրության արդյունքների հիման վրա արձանագրել.

- Հայերենում կենսունակ են եռանդամ և երկանդամ կրավորաձև կառույցների բոլոր տասներկու տարբերակները:
- Երկանդամ կրավորաձև կառույցներն իրենց գործածությամբ ակնհայտորեն գերազանցում են եռանդամ կառույցներին. հայերենի բոլոր գրական վիճակները ներկայացնող բնագրային հատվածներում մեր հաշվումներով դրանք կազմում են դիտարկված բոլոր կրավորաձև կառույցների 68-70 %-ը: Ընդ որում, երկանդամ կառույցներում հիմնաբաղադրիչների փոխդասավորության վեց տարբերակներից առավել ակտիվը երկուսն են՝ ենթակա-ստորոգյալ և ստորոգյալ-ենթակա՝ համատեղ 60 % հաճախականությամբ:
- Եռանդամ կրավորաձև կառույցների մեջ հիմնատարբերակները երկուսն են՝ ենթակա-ստորոգյալ-ներգործման խնդիր և ենթակա-ներգործման խնդիր-ստորոգյալ՝ դրանցից առաջինի, իբրև սովորական, գերազանցապես ոճականորեն չեզոք տարբերակի, նկատելի գերակշռությամբ:

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

- Ագաթ.* - «Ագաթանգեղայ Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1914:  
*ԱՕՄՉՄ* - Ա. Օստրոկյան, Մանկություն չունեցող մարդիկ, Երևան, 1963:  
*Բակ.* - Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1975:  
*ԲՀՄԶ* - Բ. Հովսեփյան, Մերմնացանները չվերադարձան, Երևան, 1962:  
*Բուգ.* - «Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912:  
*ԳԲՆ* - Գ. Բաբկենց, Նորեկ, Երևան, 1961:  
*ԳՄԼԶ* - Գ. Մահարի, Լռության ձայնը, Երևան, 1962:  
*ԴԴՎ* - Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1988:  
*ԵԵ* - Երուխան, Երկեր, Երևան, 1980:  
*Եզն.* - Եզնկայ Կողբացոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:  
*Եղ.* - Եղիշէի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», Երևան, 1957:  
*ԶԳՀ* - Զ. Գալեմբեարյան, Հասկաքաղ, Երևան, 1965:  
*ԶԴՄՆ* - Զ. Դարյան, Մայաթ-Նովա, 1-2, Երևան, 1960-1963:  
*ԹԱՊՏԱ* - Թովմայի վրդ. Արծրունույ «Պատմութիւն տանն Արծրունեաց»:  
*ԹԲԱԵ* - Թրկատինցի, Լ. Բալաշյան, Առանձար, Երկեր, Երևան, 1982:  
*ԺԵՀԶԶԱ* - ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955:  
*ԺԵՀԶԶԲ* - ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Երևան, 1958:  
*Իս.* - Ավ. Իսահակյան, Երկեր, 1-4, Երևան, 1988:  
*ԽԿ* - Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958:  
*ՍԵ* - Սերենց, Երկեր, Երևան, 1957:  
*ԿԵՏ* - Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Երևան, 1962:  
*ԿՎՄ* - Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երևան, 1941:  
*ՀԵ* - Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958:  
*ՀԵԱ* - Համաստեղ, Երկեր, Ա, Պեյրութ, 1966:  
*ՀԹ* - Հովհ. Թումանյան, Երկեր, Երևան, 1998:  
*ՀՀ* - Հովհ. Հովհաննիսյան, Երկեր, Երևան, 1959:  
*ՀՊԵԺ* - Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, 1-10, Երևան, 1962-1979:  
*ՀՄՀԵՄ* - Հ. Մահյան, Հայաստանը երգերի մեջ, Երևան, 1962:  
*ՀՕԵ* - Հ. Օջական, Երկեր, Երևան, 1979:

- Ղև., Պատմ. – «Պատմություն Ղևոնդայ մեծի վրդ. Հայոց», Սանկտ-Պետերբուրգ, 1887:  
 ՄՀՁՄ – Մխիթարայ Հերացոյ Ջերմանց մխիթարություն, Վենետիկ, 1831:  
 Մուր. – Մուրացան, Երկերի ժողովածու, 1-7, Երևան, 1961-1965:  
 ՅՂՊՀ – Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ «Պատմություն Հայոց»,  
 Թիֆլիս, 1912:  
 ՆԴ – Նար-Ղոս, Երկերի ժողովածու, Երևան, 1989:  
 ՆՄԺԱՎ – Ն.Մառ, ժողովածոյը առակաց Վարդանայ, մաս Բ, 1894:  
 ՆՔՀԿ – Նահապետ Քուչակ, Հայրենի կարգաւ, Երևան, 1957:  
 Շիրվ. – Շիրվանզադե, Երկերի ժողովածու, Երևան, 1981:  
 ՇՇ – Շ.Շահնուր, Երկեր երկու գրքով, 1, Երևան, 1963:  
 Չ – Եղ.Չարենց, Երկեր, Երևան, 1996:  
 ՊԱԴ – Պատմություն Առաքեալ վրդ. Դավրիժեցոյ, Վաղարշապատ, 1896:  
 ՊՄԱԶ – Պ.Մակ, Անլուրի զանգակատուն, Երևան, 1969:  
 ՎԹԵ – Վ.Թեքեյան, Երկեր, Երևան, 1988:  
 ՎՄՀԸ – Վ.Մավյան, Հայու բեկորներ, Երևան, 1967:  
 Ը – Ըաֆֆի, Երկերի ժողովածու, 1-10, Երևան, 1977-1984:  
 ՅԴ – Յրիկ, Դիւան, Նյու Յորք, 1952:  
 Ս.Գրքի /Սատուածաշունչ մատեան հնոց և նորոց Կտակարանաց, Կ.Պոլիս, 1895/  
 համառոտագրություններից՝ Առակ.-Առակք Սոողոմոնի, Ա.Մակ.-Առաջին  
 Մակարայեցոց, Ա.Մնաց.-Առաջին Մնացորդաց, Բ. Թագ.- Երկրորդ Թագաւորաց,  
 Դատ. -Գիրք Դատաւորաց, Յայտն. – Յայտնություն Յոհաննու, Յովհ.-Սրբոյ Ավետա-  
 րանիս Յիսուսի Քրիստոսի ըստ Յովհաննու և այլն:

## КОНСТРУКЦИИ СО СТРАДАТЕЛЬНЫМ ЗАЛОГОМ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_\_

\_\_\_\_ *С. Айрапетян* \_\_\_\_\_

На основе статистических данных богатого материала языковых подлеников проводится сравнительный анализ всех возможных вариантов взаиморасположения основных компонентов конструкций со страдательным залогом в габаре, средневековом и современном литературных языках, проводится их классификация по стилистически нейтральной или эмоционально окрашенной значимости, фиксируется активность и частотность применения каждого типа этих конструкций.

### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Հայրապետյան Սերգո Արտուշի** – բ.գ.դ., պրոֆեսոր, ԳԱԱ Շիրակի  
 հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրու Մ.Նալբանդյանի անվան  
 պետական մանկավարժական ինստիտուտ, E-mail:serhayr@mail.ru



## Միրարփի ԴԱՎԹՅԱՆ

### ԳՐԱԲԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրաբարի բառային կազմում որոշակի շերտ են ներկայացնում ժամանականիշ բառերը, որոնք գործածության լայն շրջանակներ են ունեցել լեզվի զարգացման բոլոր փուլերում՝ գրաբարում, միջին հայերենում և աշխարհաբարում:

Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» գրքում առանձնացնում է բառերի իմաստային թեմատիկ 23 խումբ, որի 10-րդ կետը ժամանակ ցույց տվող բառերն են՝ *հին, ծեր, այժմ, միշտ, հաճախ, ստեպ, օր, զիջեր, ցերեկ, ամառ, աշուն, ձմեռ, գարուն, ամառ* և այլն<sup>1</sup>:

Լ. Հովհաննիսյանը «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն» գրքում նշում է, որ ժամանակ հասկացության նախագրաբարյան (վաղնջահայերենյան) հետքեր չկան, իսկ գրաբարում արդեն գործածում էին ժամանակ և ամանակ բառերը՝ վերջինիս ոչ հաճախ կիրառությամբ: Նա հավանական է համարում վաղնջական շրջանում ժամանակ հասկացության արտահայտումը աուր բառով<sup>2</sup>:

Ժամանակ հասկացությունն այն առանձնահատկությունն ունի, որ ճանաչելի է իր կոնկրետ դրսևորումների՝ բնության մեջ անխախտ հաջորդականությամբ միմյանց փոխարինող երևույթների շնորհիվ<sup>3</sup>: Ժամանականիշ բառերը լայն գործածություն են ունեցել թե՛ Ոսկեդարի մատյաններում, թե՛ «Աստվածաշունչ» մատյանում: Հմմտ.

Առաջի ամսույ տասնեչորսին իրիկույ դեմ զատիկ է Եհովայի համար /Ղեւ ԻԳ. 23/: Այս յիսուներորդ տարին Յոբելեան տարի լինի ձեզ համար.../Ղեւ ԻԵ.25/

Ժամ բառը գրաբարում բազմիմաստ է: ՆՀԲ-ում հանդիպում են հետևյալ իմաստները.

1. չափ շարժման արևու՝ որպես մասնիկ ամանակի՝ բաղկացեալ ի վաթսուն բոպէից, 2. որպես ժամանակ ինչ նշանակեալ, սահմանեալ, 3. ըստ ախտարաց՝ Դիտելի մասն բոպէի ի կենդանակերպս, յաստեղատունս վասն գուշակելոյ, 4. ըստ տոմարագիտաց՝ Բաժանումն բոպէից՝ ի սկզբան տուրնջեան և զիջերոյ, 5. ժամասացություն:

«Առձեռն բառարանում». 1. մասն ժամանակի, 2. ատեն, 3. մասն բոպէի յաստեղաց շարժման և վայրկեան ծննդեան ըստ առասպելաց ախտարաց, 4. բաժանումնք բոպէից ըստ տոմարագիտաց՝ արև ցաթելու և մտնելու ատենները, 5. տարւոյն եղանակները, 6. ժամերգութիւն:

<sup>1</sup> *Ջահուկյան Գ.*, «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան», Եր., 1987, էջ 204-222:

<sup>2</sup> *Հովհաննիսյան Լ.*, *Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն*, Եր., 2008, էջ 73, 79:

<sup>3</sup> *Բառնայան Ջ.*, *Ժամանականիշ բառերը բարբառներում*, Եր., 2009, էջ 115:

Հր. Աճառյանը վկայում է ժամանակ բառի վաղ գրաբարյան աղբյուրներում հաճախակի կիրառության մասին և առավել հավանական է համարում պահլավական փոխառություն լինելը՝ ժամանակ ձևով<sup>4</sup>:

Ժամանակ բառի համար տրվում են հետևյալ իմաստները. 1. ատեն, 2. Տարի, 3. հասակ, մարդու կեանք, 4. դար, 5. վախճան կենաց, 6. չորս եղանակ տարույ, 7. ներկայ վայրկեան, 8. յարմար ատեն, 9. ժամադրութիւն և այլն:

Գրաբարում գործածական են եղել նաև բոպէ, վայրկեան բառերը, որոնցից վերջինը գործածել են միայն Խորենացին և Բուզանդը՝ վայրիկ (մի) ձևով, որտեղ բառիմաստը մեկ վաթսուներորդ մասը չէ, այլ կարճ ժամանակամիջոց, պահ<sup>5</sup>: Երկուսն էլ, ի տարբերություն ժամանակի, հետին գործածություններ են: Հմմտ.

Անցաք ի սուրբ տեղիսն երկրպագել, և մնալ վայրկեան ի Պաղեստինացւոյ հրահանգս (Խոր., 344): Ջի ասէին. Վայրիկ մի ևս սակաւիկ մի ևս կալցիս ժոյժ և անա հասեալ է օգնականութիւն (Բուզ., 145):

Գրաբարի բառապաշարի քննությունից ակնհայտ է, որ այն հարուստ է ժամանականիշ բառերով, և նույն բառերը համապատասխան իմաստներով հանդիպում են տարբեր հեղինակների երկերում:

Ստորև մենք կփորձենք քննության ենթարկել գրաբարի ժամանականիշ բառերը՝ անհրաժեշտաբար կատարելով որոշակի դասակարգումներ, որպեսզի ամբողջական կերպով ներկայացնենք այդ կարգի միավորների բառաքերականական բնութագիրը: Ըստ այդմ, ժամանականիշ բառերը քննելու ենք ըստ ձևաիմաստային խմբերի՝ անհրաժեշտաբար հաշվի առնելով նաև քերականական այլ հատկանիշներ ևս:

*Ժամանակային հոմանիշներ.* Գրաբարում ժամանականիշ բառերի իմաստային խումբը հարուստ է հոմանիշներով: Հոմանիշներ են կոչվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք ունեն մոտ կամ նույն իմաստներ և միաժամանակ կարող են տարբերվել ոճական կիրառությամբ, հուզարտահայտչական գունավորմամբ, գործածականությամբ և ուրիշ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությամբ, ինչպես՝ անդադար-շարունակաբար, աներեկոյ- մշտատիւ, աղջամղջել- մթագնել, անցիկ- Ջատիկ- պասեք, հասարակօրութիւն- գուգօրութիւն, անխավար- լուսաւոր, այգ- առաւաւտ, միշտ- յաւիտեան, գարուն- գարնայնի և այլն:

Հոմանիշները դասակարգվում են նաև ըստ խոսքի մասերի պատկանելության՝ գոյականական, ածականական, բայական և այլն: Հոմանշությամբ հարաբերակցվող երկու բառեր կազմում են հոմանշային գույգ, իսկ հոմանշային տարբերի խումբը՝ հոմանշային շարք, իսկ հարաբերակցվող յուրաքանչյուր տարր՝ հոմանշային շարքի անդամ:

Երբ շարքի անդամները իմաստային-գործառական այլևայլ առնչակցություններով լիովին համընկնում են, կոչվում են բացարձակ հոմանիշներ, իսկ երբ

<sup>4</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 222:

<sup>5</sup> Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., էջ 74:

առկա է իմաստային մասնակի համընկնում, շարքի անդամները կոչվում են հարաբերական հոմանիշներ:

Այժմ դիտարկենք գրաբարի ժամանականիշ բառերի հոմանշային զույգերն ու շարքերն ըստ խոսքիմասային արժեքների:

Ա. Հոմանշային զույգեր.

1. Ածականական հոմանիշներ

Անխաւար ( միշտ լուսավոր) – լուսաւոր (լույս ունեցող). հմմտ. Լինելոց է շինութիւն... յանխաւար... քաղաքին /Ագաթ., 336/: Լուսաւոր պատմութեան օրագրացանկ /Ագաթ., 8/:

Մշտնջենական (հավերժական) – յաւիտենական (հարատև). հմմտ.

Մտունդն առաջին... մշտնջենական և յաւիտենական ծնունդ, ի մշտնջենական և յաւիտենական Հօրէն առաջ զամենայն / Ագաթ., 191/:

2. Գոյականական հոմանիշներ

Այգ (կանուխ առավոտ)- առաւաւտ (ցերեկվա սկիզբը). հմմտ. Զայգն զառաւաւտն... մատուցաներ /Ագաթ., 28/: Ի լուսանալ առաւօտուն... մատուցաներ /Ագաթ., 433/:

Տիւր և ցերեկը վկայված են հինգերորդ դարից, բայց առաջինը գործածության ավելի վաղնջական ակունքներ ունի:

Ցերեկը շատ ավելի երկար ժամանակահատված է ընդգրկում՝ ձգվելով առավոտից մինչև երեկո, այսինքն՝ օրվա ողջ լուսավոր մասը: Ցերեկը բնիկ հայերեն բառ է՝ երեկ (երեկո) բառից՝ ց նախդրով և նշանակում է «մինչև երեկո եղած ժամանակը»<sup>6</sup>:

Աղայանը «Ընդհանուր և հայկական բառագիտություն» գրքում ցերեկ ժամանականիշ բառի հետ կապված նշում է. «Բնիկ հայերեն երեկ արմատից են սերում երեկ- երեկո- ցորեկ ձևերը, որոնք իմաստային զարգացում են ապրել և բնեռացել հետևյալ կերպ. երեկ-ը, որը գրաբարում «երեկո» իմաստն ուներ, ամրակայվեց «նախորդ օրը» իմաստով, երեկո-ն ձևը բերեց օրվա վերջին լուսավոր ժամանակահատվածի իմաստը, իսկ ց նախդրով ածանցված ցերեկ բառը «մինչև երեկո ընկած ժամանակահատվածը» իմաստով սկսեց կիրառվել՝ դուրս մղելով գրաբարյան տիւր ժամանականիշը»<sup>7</sup>: Հմմտ.

Ոչ կարեր բանիցն տալ պատասխանի մինչև ցերեկոյ /Կողբ., 87/: Ջի այն ինն տիւր էր և ինն գիշեր / Ագաթ., 546/:

Ամ (տարի)- տարի (տասներկու ամսվա տևողություն). Ոսկեդարում ամ և տարի բառերը հոմանշային զույգ են: Մակայն հինգերորդ դարից տարին հիմնականում օրացուցային և տոմարական հասկացություն է դառնում, իսկ ամը բազմիմաստ է, որը պայմանավորված է նրա հնդեվրոպական ծագումով:

Հմմտ. Հնգետասան ամ է, զի ընկեցին:/ Ագաթ., 17/: Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր զերկիրն առ հասարակ իբրև տարի մի/ Բուզ., 15/:

<sup>6</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, էջ 453:

<sup>7</sup> Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 105:

### 3. Մակբայական հոմանիշներ

Միշտ (շարունակ, անդադար)- յաւիտեան (միշտ). հմմտ. Արժան է... ի վերայ քո աղօթել առ ի լինել քեզ միշտ այսպիսի /Խոր., 5/: Թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ յաւիտեան /Ագաթ., 188/:

Հոմանշային գույզի անդամները կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի, որոնք հարաբերակցվում են որոշակի ընդհանուր հատկանիշով: Այդպես հոմանշային գույզ են կազմում գոյականը և մակբայը, ածականը և մակբայը: Հմմտ.

Գարուն (տարվա առաջին եղանակը)-(գոյ.) - գարնայնի (գարուն, գարնանը)- (մկբ.) - Գարունն.. գայն կերպարանս բերէ /Ագաթ., 336/: Օտոռցն բոյսք բողբոջոյն գարնանոյն երևացին /Ագաթ., 331/:

Անժամանակ (անսկիզբն, հավիտենական)- (մկբ.) - մշտնջենաւոր (հավիտենական, հավերժ)- (ած.). Հմմտ. Բարձրացուցանէ զխոնարհս... յանկէտ և յանժամանակ / Ագաթ., 41/: Քանզի Շապուհ աղաչեաց... հաստատել զխաղաղութիւն մշտնջենաւոր /Խոր., 236/:

#### Բ. Հոմանշային շարք(եր)

Գրաբարի ժամանականիշ բառերի իմաստային խմբում համեմատաբար սակավ են հոմանշային շարքերը, թեև հանդիպում են եռաշարք և քառաշարք հոմանիշներ: Ըստ խոսքիմասային արժեքների՝ դրանք բաշխվում են մակբայի և բայի տիրույթում, ինչպես՝ անդադար- անդուլ- շարունակ, աղջամղջել-մթագնել- աղօտանալ- նսեմանալ, այգանալ- առաւօտանալ- առաւօտել- լուսանալ և այլն:

Անդադար- անդուլ- շարունակ շարքում կա նաև ձևի իմաստ, ինչպես՝ անդադար (շարունակաբար, միշտ) - անդուլ (անդադար, շարունակ)-շարունակ (չընդմիջվող, անընդհատ): Հմմտ.

Յանհնարին ուղիս սաստկութեան անկանի, անդադար հոլովմամբ գլորեալ /Խոր., 314/: Եւ խորհրդակցաց իւրոց անդուլ առնէր հարցումն վասն այսպիսւոյ պատճառի / Խոր., 74/: Այլ և շարունակ քանակն երկակի է, քանզի է որ անշար է, և որ շարժուն / Անհաղթ, 128/:

*Ժամանակային հականիշներ*. Հականիշները բառային գույզեր են, որոնք արտասանությամբ տարբեր են, իմաստով՝ հակառակ, և յուրաքանչյուր գույզ պատկանում է միևնույն խոսքի մասին:

Հականիշությունը հիմնականում տարածվում է բառերի վրա, ըստ այդմ էլ հականիշներ ասելով՝ ամենից առաջ հասկանում ենք հականիշ բառերը, որոնք ներկայանում են գույզերով: Զույգի անդամներից մեկը կարող է մյուսի հանդեպ հակադիր իմաստներ արտահայտել (հակադրական հականիշներ), կամ էլ մեկը բացասում, ժխտում է մյուսին (ժխտական հականիշներ)<sup>8</sup>:

Գրաբարում հականիշները հիմնականում գոյականներ և մակբայներ են:

Ժամանակային հականիշները, ինչպես ընդունված է, կարելի է ներկայացնել հակադրական և ժխտական տեսակներով:

<sup>8</sup> Պետրոսյան Հ., *Հայրենագիտական բառարան*, Եր., 1987, էջ 313:

### 1. Հակադրական հականիշներ.

Հակադրական հականիշների բաղադրիչները հիմնականում արտահայտվում են մակբայ խոսքի մասով, հազվադեպ գոյականով:

ա) Մակբայական արժեք ունեն միշտ (շարունակաբար)- երբեմն (մի ժամանակ, մի անգամ), այսօր (ընթացիկ՝ ներկա օրը)- երեկ (այսօրվան նախորդած օրը). հականիշների բաղադրիչները հմմտ.

Արժան է... ի վերայ քո աղոթել՝ առ ի լինել քեզ միշտ այսպիսի /Խոր., 5/: Յորում և մեք իբրև զձեռդ երբեմն զերևելիսս կարծեաք արարիչ /Եղ., 168/:

բ) Գոյականական արժեք ունեն՝

Տիւ (ցերեկ, օրվա լուսավոր ժամանակը)- երեկոյ (մութն ընկնելու ժամանակը). հմմտ. Զի այն ինն տիւ էր և ինն գիշեր / Ագաթ., 235/: Իսկ... երեկոյ եղև ժամ ընթերաց թագաւորին Պարսից /Կողբ., 142/:

Տիւ (ցերեկ, օրվա լուսավոր ժամանակը) -գիշեր (օրվա մի մասը՝ մայրամուտից մինչև լուսաբաց). հմմտ. Որ տիւ իցէ և ոչ գիշեր /Ագաթ., 235/:

Հակադրական հականիշները, ըստ իրենց ձևաբանական և բառակազմական առանձնահատկությունների, լինում են տարարմատ կառուցվածքի:

### 2. Ժխտական հականիշներ.

Ժխտական հականիշները նույնարմատ կազմություններ են, որոնց հականշությունն արտահայտվում է ժխտական նախածանցների միջոցով: Այդպիսի հականիշների բաղադրիչները հաճախ դուրս են գալիս միևնույն խոսքի մասի սահմաններից՝ պայմանավորված ածանցի բառակազմական նշանակությամբ:

Հմմտ. Ժամանակ (տևողություն, որ չափվում է ժամերով) - անժամանակ (որի համար ժամանակ չկա). հմմտ.

Զորոյ անմահութիւն ի դէպ ժամանակի հանիմանեսցուք /Կողբ., 196/: Բարձրացուցանէ զխոնարհս... յանկէտ և յայնժամանակ /Ագաթ., 41/:

Ժխտական հականիշները զգալիորեն ցածր տեսակարար կշիռ ունեն գրաբարի բառային կազմում:

Ժամանականիշ բաղադրիչով համանունական գույգեր

Համանուններ են կոչվում այն բառերը, որոնք նույնն են գրությամբ կամ արտասանությամբ և տարբերվում են միայն իմաստաբանորեն կամ քերականորեն, կամ էլ միաժամանակ թե՛ իմաստաբանորեն, թե՛ քերականորեն<sup>9</sup>:

Տվյալ դեպքում մենք դիտարկել ենք այն համանունները, որոնց բաղադրիչներից մեկն ունի ժամանակային իմաստ՝ արտահայտված գոյականով կամ մակբայով, իսկ մյուս բաղադրիչն ունի անկախ բառական արժեք: Այսպիսի համանունները համարվում են բառական համանուններ:

Ժամանականիշ համանունների բաղադրիչները արտահայտվում են՝

ա) գոյականներով. պահ<sup>1</sup>- ժամանակ- պահ<sup>2</sup> -պահեստ, շար<sup>1</sup>- 360 տարվա ժամանակաշրջան- շար<sup>2</sup> -մետաքսից թափանցիկ ու նուրբ գործվածք, դար<sup>1</sup> -հարյուր տարվա ժամանակահատված -դար<sup>2</sup> -բարձունք, բարձրադիր վայր և այլն:

<sup>9</sup> Մուրիսյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 115:

բ) գոյականով և ածականով. արբուն<sup>1</sup>- հասունություն, չափահասություն- արբուն<sup>2</sup>- ըմպելի, խմելու պիտանի, հարմար,

գ) մակբայով և դերանունով. անտի<sup>1</sup>- այն ժամանակից- անտի<sup>2</sup> –այն. հմմտ.

Անտի յայտ է թէ եւ բաւանդակ իսկ չարեացն արարիչ Աստուած/ Կողբ., 35/:

Ազատել զհոգիսն ի տանջանաց անտի/Կողբ., 273/:

դ) մակբայով և գոյականով. արդ<sup>1</sup>- այժմ, ներկայումս, հիմայ- արդ<sup>2</sup> –հար- դարանք, արդուզարդ. հմմտ.

Արդ ... կամաւ և սիրով յայն առէք / Փարսպ., 44/: Ոչ միայն արդուց և զար- դուց և կերպարանայ արարիչ /Կողբ., 27/:

Ինչպէս ցույց են տալիս լեզվական փաստերը, գրաբարի բառային կազմում որոշակիորեն շատ են գոյականական բաղադրիչներով կազմված համանունական գույգերը, որոնցից մեկը, ինչպէս նշել ենք, արտահայտում է ժամանակային իմաստ:

#### ա) Սկզբնաղբյուրներ

1. Ագաթ.- Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1957:

2. Անհաղթ-Անհաղթ Դաւիթ, Սահմանք իմաստասիրութեան, Ե., 1960:

3. Աստվածաշունչ, Աստվածաշնչի վերապատում 1896 թվականի արևելահայերեն «Արարատ» հրատարակությունից, Bible League International, 2010:

4. Բուզ.- Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1960:

5. Եղ.-Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Ե., 1957:

6. Խոր.-Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

7. Կողբ.-Երզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

#### բ) Բառարաններ

- Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ.հ. 2-4, ԵՊՀ հրատ., Երևան, 1973- 1979:
- Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1865:
- Աւետիքեան Գ., Միրմէլեան Խ., Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, ի տպարանի Սրբոյն Ղազարու, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:
- Գաբամաճեան Ս., Նոր բառգիրք հայերեն լեզուի, Տպագրութիւն Ռ. Սա- գաեան, Կ. Պօլիս, 1910:
- Խաչատրյան Լ., Գրաբարի ուսումնական բառարան, Երևան, 2013:
- Ղազարեան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Անթիլիաս, 2006:
- Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, ԵՊՀ Հրատարակչութիւն, հ.հ. Ա-Բ, Երևան, 2000:
- Պետրոսյան Հ., Հայրենագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1987:

## СМЫСЛОВОЕ ЗНАЧЕНИЕ СЛОВ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА, ПОКАЗЫВАЮЩИХ ВРЕМЯ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *С. Давтян* \_\_\_

В статье подлежат разбору древнеармянские слова, показывающие время, и выделяются их их видосмысловые группы: синонимы, антонимы, омонимы. Из омонимичных пар один член выражает временной смысл.

Синонимы, антонимы, и омонимы показывающие время, в основном являются существительными и наречиями.

	Существительные	наречия
Синоним	рассвет- утро	беспрерывно-постоянно
Антоним	время - не время	сегодня - вчера
Омоним	век - неровность поверхности	актуально-украшение

Смысловые все три группы представлены как парами, так и рядами, однако в древнеармянском языке лидируют двучленные структуры.

**Տեղեկություններ հեղինակի մասին**

Դավթրյան Միջազգային Անաստասի- ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հայցորդ,  
Երևանի Գ. Էվինի անվան թիվ 182 ավագ դպրոց, E-mail: [bubush@inbox.ru](mailto:bubush@inbox.ru)

## Մենքերիմ ՄԵԼՔՈՆՅԱՆ

### «ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ» ՊՈԵՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Իր աշխարհիկ կյանքի նախավերջին տարում (1923թ.) Հ. Թումանյանին մտահոգել է այսպիսի հարց. «Ես գիտեմ, մի օր, իհարկե, ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն ու աղմուկ է հանելու, շատ բան է պարզվելու, տեսնելու են բոլորովին ուրիշ բան... *Գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել...*»<sup>1</sup>: Գուցե Թումանյանի կողմից գույները որոշ չափով խտացված են ներկայացված, բայց գրվածքների դեռևս լավ կարդացված չլինելու մտահոգությունը ոչ միայն 1923թ., այլև այսօր էլ «ուժի մեջ է»: Եվ դա ասում ենք ոչ թե որպես մեղադրանք թումանյանագիտության հասցեին, այլ իբրև հաստատումն Թումանյանի կողմից արձանագրված այն ճշմարտության, թե, «գեղարվեստական կատարյալ գործերի մեջ միշտ մի նոր բան կարելի է գտնել, նոր բացատրություններ կարելի է տալ»<sup>2</sup>:

Այժմ մեզ հետաքրքրողն այն հարցն է, թե ինչպես է կարդացվել «Թմկաբերդի առումը» պոեմը, որ նրա «կենսագրության» մեջ մինչև օրս էլ կան համարժեք ձևով չընկալված, երկրնտրանք առաջացնող կետեր:

Հայտնի է, որ այդ պոեմը գրվել է Աբասթումանում և 1902թ. պատրաստ է եղել զետեղվելու Թումանյանի այն ժողովածուում, որը լույս աշխարհ եկավ 1903թ.: Բայց առայժմ դեռևս չհստակեցված պատճառով բանաստեղծը նպատակահարմար չի գտել պոեմը զետեղել այդ ժողովածուում: Այդ կապակցությամբ միանգամայն ուշագրավ է այն տեղեկությունը, որ տալիս է իշխանուհի Ս. Թումանյանը, որ Փ. Վարդապարյանի, Շանթի հետ ակտիվ մասնակցություն ուներ Թումանյանի 1903թ. ժողովածուի հրատարակման գործում: Նա գրում է. «Թմկաբերդի առումը» ես շատ սիրեցի և ուզում էի անպատճառ մտցնել ժողովածուի մեջ, բայց հեղինակը կտրուկ մերժեց՝ առանց բացատրության»<sup>3</sup>:

Մեր համոզմամբ՝ մերժելու պատճառի բացահայտումը միանգամայն կարևոր նշանակություն ունի պոեմի խորքային, հիմնավորապես գնահատման գործում, բայց իրողությունն այն է, որ առայժմ այդ հարցը պատշաճ ուշադրության չի արժանացել, պոեմի որոշ ուսումնասիրողներ նույնիսկ հարկ չեն համարել անդրադառնալ այդ հարցին: Էդ. Ջրբաշյանը բավական ընդհանուր ձևով է ուշադրության արժանացրել այդ հարցը, նրա կարծիքով, Թումանյանը 1902թ. վերջին պոեմը դեռ պատրաստ չէր համարել տպագրության, «դեռ ինչ-ինչ փոփոխություններ պետք է մտցնեք», «Մուրճ» ամսագրում պոեմն առաջին անգամ տպագրելուց առաջ բանաստեղծը «բարելավել է իր ստեղծագործությունը, թե ի՛նչ չափով և ի՛նչ բնույթ է ունեցել այդ աշխատանքը, այժմ դժվար է ասել՝ բոլոր ձեռագրերի բացակայու-

<sup>1</sup> Թումանյան Ն., Հուշեր և գրույցներ, Եր. 1969, էջ 307: Ընդգծումը հեղինակինն է:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 139:

<sup>3</sup> Տե՛ս «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածու, Եր., 1969, էջ 476:



թյան պատճառով»<sup>4</sup>: Դժվար չէ նկատել, որ սա ոչ թե որոշակի պատասխան է, այլ ընդամենը ենթադրություն: Ընդ որում հարգարժան հեղինակը կարծես չի նկատել, որ իր այս դատողություններն ուղղակիորեն հակասության մեջ են գտնվում իր իսկ կողմից նշված այն ճշմարիտ իրողության հետ, որ այժմ ուշադրության առարկա հանդիսացող պոեմը «միակն է Թումանյանի նշանավոր պոեմներից, որն ստեղծագործական պատմություն գրեթե չունի, որը չի անցել վերամշակումների, էական փոփոխությունների այն ուղիները, որոնք բնորոշ են նրա մյուս պոեմների համար»<sup>5</sup>: Ավելացնենք նաև, որ ոչ մի հիմք չկա ասելու, թե Թումանյանի պոեմի 1902 թվականի բնագիրը փոփոխության է ենթարկվել, բայց «բոլոր ձեռագրերի բացակայության պատճառով» չենք կարող ասել, թե այդ փոփոխություններն ինչ բնույթի են: Ի՛նչ բացակայության մասին է խոսքը. եթե իսկապես բացակա են, ինչպե՞ս կարելի է ենթադրել, թե դրանցում եղել են «Թմկաբերդի առումը» պոեմի 1902թ. տարբերակին վերաբերող փոփոխություններ:

Աբասթումանյան աշնանը՝ Թումանյանի ստեղծագործական բուն վերելքի շրջանում, երբ սովորական գեղարվեստական ստեղծագործությունը վերածեց գլուխգործոցի («Անուշ» պոեմը), գրեց անմահ «Փարվանան», ինչպե՞ս կարող էր «Թմկաբերդի առումը» այնպիսի պակասություններով ստեղծած լինել, որ նախքան լույս աշխարհ բերելը էական մշակման ենթարկելու անհրաժեշտություն զգար:

Համապատասխան հանգամանքները, որոնց մասին ստորև կխոսվի, մեզ այն համոզմանն են հանգեցրել, որ «Թմկաբերդի առումը» պոեմը 1903թ. ժողովածուի մեջ չգետեղելու բուն պատճառը ոչ այնքան դրա հետագա բարելավումն է եղել, այլ այն մտքի հետ հաշտվելը, որ այդ պոեմը պիտի՝ տպագրվի:

Ուրեմն՝ ի՞նչ հանգամանք կարող էր երկրնտրանքի պատճառ հանդիսացած լինել «Թմկաբերդի առումը» պոեմի հրատարակումը հետաձգելու հարցում: Հայտնի է, որ այդ պոեմի հիմնական աղբյուրը նույն վերնագրով ժողովրդական ավանդություն, լեգենդ է եղել: Թումանյանն իր պոեմի սյուժեն լեգենդային միջավայրից պատմական ժամանակաշրջան տեղափոխեց՝ պարսից Նադիր շահի ժամանակները: Նա այդ քայլն արեց այնպիսի պարագայում, երբ իշխողն այնպիսի մտայնություն էր, թե պատմական թեման հայրենասիրական բովանդակության սյուժեով պիտի արծածվի գեղարվեստական գրականության մեջ, և մինչև «Թմկաբերդի առումը» պոեմը հայ գրողներին չեն զբաղեցրել այնպիսի սյուժեներ, որ առնչվում են «ոչ թե հայրենասիրությանը, այլ մարդկային կրքերի աշխարհին»<sup>6</sup>:

Պոեմում սյուժեն այնպես է զարգանում, որ Թմուկ բերդի անկման պատճառ է ներկայացվում ոչ այնքան, ավելի ճիշտ՝ ոչ թե թշնամին՝ Նադիր շահը, նրա հզորությունը, այլ հենց այդ բերդի տիրոջ և տիրուհու վարքագիծը: Հայրենիքը դեպի դժբախտություն և կործանում տանող ապիկար թշվառականների, խաչագող

<sup>4</sup> *Ջրբաշյան Էդ.*, *Թումանյանի պոեմները*, 1964, էջ 357:

<sup>5</sup> *Նույն տեղում*, էջ 356:

<sup>6</sup> *Հախվերդյան Լ.*, *Թումանյանի աշխարհը*, 1966, էջ 338:

սրիկաների ու ավագակների հանդեպ Թումանյանի հոգում կուտակված բուռն զայրույթը ժայթքեց 1921թ. Ավ. Բասահայանին ուղարկված նամակում<sup>7</sup>, բայց այդ զայրույթն ու ցասումը վաղուց է սկիզբ առած եղել բանաստեղծի հոգում, որ առաջին անգամ գեղարվեստորեն մարմնավորվեց հենց «Թմկաբերդի առումը» պոեմում: Եվ դա այնպիսի հանդուգն նորարարական քայլ էր, որ, իհարկե, չէր կարող որոշակի մտահոգություն չառաջացնել պոեմի հրատարակության կապակցությամբ: Հայրենի երկրին սպառնացող վտանգի հանդեպ իրատեսական մոտեցում չցուցաբերելու «մոտիվը» Թումանյանին մտահոգել է նաև «Ջի աստուած ընդ մեզ է» լեգենդում:

Ահա եկել պաշարել են  
 Լեզգիները մեր Սևան...  
 Իսկ մենք խաղաղ, ահա էսպես  
 Երգում ենք մեր մեղեդին<sup>8</sup>...

Շատ հավանական է, որ այս ստեղծագործության հրապարակման հարցում էլ Թումանյանը երկընտրանք է ունեցել, թողել է ձեռագիր վիճակում, մանավանդ որ դրա գրության շրջանում (90-ական թվականներ) Թումանյանն արդեն որոշակի քայլեր էր կատարում նույնպիսի թեմայով «Թմկաբերդի առումը» պոեմը կերտելու հարցում:

Վերը նշված ավանդախախտությունը բանաստեղծի կողմից բավական զգուշավորությամբ, ավելի ճիշտ՝ այնպիսի եղանակով և գեղարվեստական վարպետությամբ է կատարված, որ մասամբ մինչև օրս էլ համարժեք ձևով ընկալված չէ: Մի կողմ թողնենք այն, որ պոեմում պատումը կատարվում է ոչ թե անմիջապես բանաստեղծի, այլ թափառական աշուղի անունից, և պոեմի առաջին երկու հրատարակությունները (1905, 1908թթ.) ունեցել են «Աշուղի գրույցը» ենթավերագիրը: Ավելի ուշագրավն այն է, որ Թաթուլի և Թմկա տիրուհու կերպարներն այնպես են կերտված, որ այնքան էլ հեշտ չէ նրանց բուն էության անմիջապես ընկալումը: Ուրեմն՝ անհրաժեշտ է անցնել այն հարցին, թե բանաստեղծն ինչպիսի նպատակադրումով ու կողմնորոշումով է կերտել այդ կերպարները, առայժմ դրանք ինչպես են ճանաչվել, ներկայացվել:

Պատմական միջավայր տեղափոխելով պոեմի սյուժեն՝ Թումանյանին հետաքրքրողը ոչ թե ազգային, սոցիալական բնույթի հարցեր են եղել, այլ մարդու թեման, ավելի մասնավորված ձևով ասած՝ այն հարցը, թե զգացմունքը և բանականությունը ինչ դերով և հարաբերությամբ են դրսևորվում պոեմում գործող անձանց աշխարհընկալման, նրանց վերաբերմունքի դրսևորման գործում:

«Թմկաբերդի առումը» պոեմի հրատարակումը հետաձգելու պատճառի բացահայտման հարցում հետամուտ չլինելու հետևանքով ամեննին էլ համարժեք ձևով չի ընկալվել պոեմի ոչ միայն գաղափարական բովանդակությունը, այլև կերպարների էությունը:

<sup>7</sup> Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, 1999, հ. 10, էջ 408:

<sup>8</sup> Թումանյան Հ., «Ուսումնասիրություններ և հրապարակումներ» ժողովածու, Եր. 1969, հ. 2, էջ 241:

Նախ Թաթուլի կերպարի մասին:

Թաթուլ իշխանը պատմական-իրական անձնավորություն չէ, որևէ գրավոր կամ բանահյուսական աղբյուրի մեջ նա չի հիշատակվում, նա Թումանյանի «գեղարվեստական երևակայության կերտվածքն է»<sup>9</sup>: Կերտելով այդ կերպարը՝ Թումանյանը կամեցել է գեղարվեստորեն այն միտքը մարմնավորել, որ իրատես չլինելը, զգացմունքով կողմնորոշվելն անխուսափելի են դարձնում դժբախտությունն ու աղետը իր և իր միջավայրի, հայրենի երկրի համար:

Վերհիշենք, թե «Թմկաբերդի առումը» պոեմին անդրադարձող գրականագետների կողմից ինչպես է ճանաչված Թաթուլ իշխանը: «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի մասին համապատասխան դատողություններ անելուց հետո Էդ. Ջրբաշյանը գրում է. «Բարու և չարի հակադրությունը, մեկի փառքն ու մյուսի անեծքը այնուհետև ծավալվում և գեղարվեստորեն մարմնավորվում են բուն պոեմում՝ քաջ հայրենասեր Թաթուլի, նրա դավաճան կնոջ և նենգ ու դավաճան շահի պատմության մեջ: Մեկն անմահանում է իր գեղեցիկ, անձնագոհ գործով, մյուսներն՝ իրենց գործած չարիքով»<sup>10</sup>: Հասկանալի է, որ «անմահացած մեկ» ասելով հեղինակը նկատի ունի Թաթուլ իշխանին: Թաթուլի կերպարը որպես «դրականի հաստատում» է ճանաչվում նաև Հ. Թամրազյանի կողմից<sup>11</sup>: Դժվար չէ նկատել, թե ինչքան միակողմանի է ճանաչվել Թաթուլը: Թաթուլը դրականի կրող է բացահայտորեն դրսևորվող թշնամանքի և դժբախտության դեմ մղած իր պայքարով, և այդ պայքարում նրան լիցքեր տվողը հիմնականում զգացմունքն է, իր անանուն տիրուհին, որի սերը ուժ և ավյուն է տալիս Թաթուլին, նրան դարձնում անհաղթ:

Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,

Նրբա սիրով է հարբած էն հրական,

Նրբա ժրպիտն է քաջին ուժ տալի,

Որ դաշտն է իջնում առյուծի նրման...

Զգացմունքի գերիշխանության տակ գտնվող այդ քաջը որպես անգոր է հանդես գալիս, ասես իրականությունից անջատված լինի այն դեպքում, երբ զգացմունքի հետ պիտի գործի նաև բանականությունը, ընդ որում, վերջինիս գերակայությամբ, որպեսզի կանխվեին տիրուհու այն նենգ քայլերը, որոնք ոչ միայն իր, այլև հայրենի երկրի համար աղետալի, ողբերգական հետևանք ունեցան: Թաթուլի կերպարը բոլոր դեպքերում որպես «դրականի հաստատում» ներկայացնելու մղումը Թամրազյանին անվարան է դարձրել իր դատողություններում: «Թաթուլ իշխանը,- գրում է Թամրազյանը,- հարբած է իր սիրով, երջանկությամբ, իր քաջության գործերով, չի էլ կարող զգալ, որ կինը մահու ոստայն է գործում: Դա շատ բնական է...»<sup>12</sup>:

<sup>9</sup> Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, 1991, հ. 4-րդ, էջ 549:

<sup>10</sup> Ջրբաշյան Էդ., նշվ. աշխ., էջ 365., ընդգծումը հեղինակինն է:

<sup>11</sup> Թամրազյան Հ., Հովհաննես Թումանյան. Բանաստեղծը և մտածողը, 1995, էջ 283:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 286. ընդգծումը հեղինակինն է:

Ուղղակի զարմանալի է, որ ուժեղ ու դաժան թշնամու կողմից պաշարված բերդի տերը քար անտարբերություն է ցուցաբերում այսպիսի իրողությունների նկատմամբ, և դա «շատ բնական» է համարվում. ծպտյալ թշնամի աշուղն անարգել թափանցում է Թմուկ բերդ, որ դրա տիրուհու առաջ Նադիր շահի սերը երգի, աշուղի գալուց հետո տիրուհին ոչ միայն հոգեկան, այլև նույնիսկ ֆիզիկական փոփոխությունների է ենթարկվում, և այդ ամենը աննկատ է մնում Թաթուլի համար:

Լըսում է չքնաղ Թմկա տիրուհին  
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից...  
Ու դարձավ նա լու՛ռ, դալու՛կ, մըտախո՛հ,  
Ու քունը փախավ սիրուն աչքերից...

Այդ տիկինն այսպիսի ահավոր խարդավանքի է դիմում. խնջույք է սարքել, որ հարբեցնի ամուսնուն և նրա զինվորներին, որոնք վաղը պատերազմի դաշտ են իջնելու:

-Հապա լըցրե՛ք, իմ քաջ հյուրեր,  
Բաժակներըդ լիուլի,  
Խըմենք-աստված կըտրուկ անի  
Թուրը իմ քաջ Թաթուլի:

Այս դեպքում էլ վտանգի հանդեպ անտարբեր է ու «քեֆ է անում Ջավախքի տերը»: Ընդամենը բուպեներ հետո Նադիր շահի գորքը պիտի ներխուժի Թմուկ բերդ, իսկ այդ բերդի տերը դավին բուրբուլին անտեղյակ է, անտարբեր և անհոգ քեֆ է անում, և նրան բնութագրող գրականագետներն էլ ասում են, թե դա «շատ բնական է», Թաթուլն «անմահացել է իր գեղեցիկ գործով»:

Թաթուլի մասին դրական բան չի ասում նաև նրա տեսած երազը: Նկատված իրողություն է, որ Թումանյանն իր տարբեր ստեղծագործություններում («Անուշ», «Դեպի անհունը» և այլն) տեղ է տվել երազին: Սակայն Թաթուլի երազը էսպես տարբերվում է մյուսներից նրանով, որ դրանում ոչ թե այնպիսի իրողություններ են երևան գալիս, որ պիտի կատարվեն երազը տեսնելուց հետո, այլ «լուծվում է» այնպիսի իրողության ճանաչման հարցը, որը նախքան երազ տեսնելը Թաթուլի աչքի առաջ է եղել, բայց չի նկատվել նրա կողմից, էլ ո՛ր մնաց թե համապատասխան վերաբերմունքի արժանացած լիներ: Ահա այդ երազը». Պատկած է իբրև Թաթուլ իշխանը նազելի կընոջ գըլուխն իր կըրծքին, Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ, Թո՛ղ որ սպանեմ ես էդ հըրեշին...»

Էսպես է ասում Թաթուլ իշխանը,  
Ու զարհուրանքով տեսնում է հանկարծ՝  
Իրեն սիրելի կընոջ գըլխի տեղ  
Օձի գըլուխն է կըրծքին ծանրացած...

Իրականում եղած ահավոր վտանգի միայն երազային ընկալումը, իհարկե, պիտի ողբերգական հետևանք ունենար...

Երբ մտորում ես, թե ինչու Թաթուլի կերպարն այդպես միակողմանի, միանգամայն վիճահարույց ձևով է ճանաչվել, հանգում ես այնպիսի համոզման, որ

այդ հարցում մասամբ «մեղավոր» է իրեն դրամատուրգ<sup>13</sup> համարող Հ. Թումանյանը, որ «Թմկաբերդի առումը» պոեմում հենց դրամատուրգի պես էլ բավարարվել է գործող անձանց ներկայացնել իրենց արարքներով, իրենց աշխարհընկալումով՝ բնավ իր վերաբերմունքը չցուցաբերելով այդ ամենի նկատմամբ: Թումանյանը հույս է ունեցել, որ ընթերցողը, քննադատը պիտի կարողանան թափանցել նկարագրված իրողությունների խորքերը, բայց, ինչպես վերը նշվեց, կյանքի վերջին շրջանում ցավով է արձանագրել, թե «գրվածքներս դեռ լավ չեն կարդացել»:

Նույնքան անհիմն ու վիճահարույց է փառամոլության զգացումով ներծծված, դավաճան տիրուհու այն պահի հոգեվիճակի ընկալումն ու բնութագրումը, երբ նա հանդիպում է Թմուկ բերդ ներխուժած Նադիր շահի հետ:

Տիրուհին այդ պահին ակնկալում է անհամբեր, որ շահն իրեն գուրգուրելու է, արժանացնելու է խոստացած թագին: Բայց մի պահ մարդկայնացած շահն այնպիսի վերաբերմունք է ցուցաբերում, որ թագի արժանանալու տիրուհու ակնկալությունը հողս է ցնդում:

-Պատասխան տու՛ր ինձ, մատնիչ սևաչյա,

Մի՞ թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...

Հանդուգն է ամեն ինչ արդեն կորցրած սևաչյա մատնիչի պատասխանը:

-Քաջ էր ու սիրուն քեզնից առավել,

Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.

Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,

Չէր եղել կյանքում երբեք խաբերա...

Էդ. Ջրբաշյանը տիրուհու այս պատասխան խոսքում տեսնում է «սեփական արարքի տանջալից վերագնահատում, զղջման, ինքնաձաղկման, հոգեկան բարդ ապրումների մի բուռն հորձանք»<sup>14</sup>: Ա. Տերտերյանի համոզմամբ «Թմկա տիրուհին յուր Թաթուլին կորցնելուց հետո ավելի ուժգին է սկսում նրան սիրել...»<sup>15</sup>: Հ. Թամրազյանն այն համոզմանն է հանգել, թե տիրուհուն «ցնցում է իր իսկ մատնությամբ եկած սհավոր աղետը, նրա մեջ բարձրանում է խիղճը»<sup>16</sup>: Ավելորդ էնք համարում համաբնույթ այլ անհիմն կարծիքների վկայակոչումը, մանավանդ որ այլ առիթով անդրադարձել էնք այս հարցին<sup>17</sup>: Բավարարվենք միայն այն հանգամանքի ընդգծումով, որ հոգեբանական համապատասխան «պահանջների» պատշաճորեն հաշվառման դեպքում իր «քաջ ու սիրուն» ամուսնուն, իր հայրենի երկիրը

<sup>13</sup> Իր դուստր Նվարդի հետ ունեցած առաջին գրական գրույցներից մեկում Թումանյանն ասել է. «Դու դեռ չգիտես, որ ես դրամատուրգ եմ» (Թումանյան Ն., նշվ. աշխ., էջ 26): Իր դրամատուրգ լինելու հարցին Թումանյանը նաև այլ առիթով է անդրադարձել:

<sup>14</sup> Ջրբաշյան Էդ., Թումանյանի պոեմները, Եր., 1964, էջ 390:

<sup>15</sup> Տերտերյան Ա., Հ. Թումանյան, Հայրենի երկրի քնարերգուն, Վաղարշապատ, 1911, էջ 62:

<sup>16</sup> Թամրազյան Հր., Հովհաննես Թումանյան, Բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, էջ 293:

<sup>17</sup> Տե՛ս Մելքոնյան Մ., «Անուշ» և «Թմկաբերդի առումը» պոեմների մի երկու հոգեբանական դրվագի մեկնաբանման շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, Եր., 2009, էջ 37:

թշնամու ոտքի տակ զցած փառամու կնոջը *վայրկյանների ընթացքում*<sup>18</sup> հիմնովին վերափոխված տեսնելը ոչ թե առաջին հայացքից, ինչպես Էդ. Ջրբաշյանն է նշում<sup>19</sup>, այլ իրապես տարօրինակ է և անսպասելի:

Բայց այժմ մեզ հետաքրքրող հարցն ավելի հեշտ լուծում էլ ունի. ենթադրենք, թե Նադիր շահի և տիրուհու հանդիպման այդ պահին շահը ոչ թե իր այդ «Մի թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն» հարցն ուղղած լիներ տիրուհուն, այլ իր խոստացած թագը դներ նրա գլխին. ի՛նչ է, տիրուհին Թաթուլի գովքն անելով, իր արարքը դատապարտելով կիրաժարվե՞ր թագից: Այդ պահին, երբ համոզվեց, որ շահը իրեն թագին արժանացնող չէ, տիրուհուն հուզողն այն է, որ բարոյական ապտակներ հասցնի շահին: Եվ քանի որ շահի հարցի ձևակերպումն այնպիսին է, որ անխուսափելի է դարձրել Թաթուլին անդրադառնալը, տիրուհին շահի ստոր ու խաբեբա լինելն ընդգծելու համար նրան հակադրում է Թաթուլին: Եթե նշված այդ հանգամանքները չլինեին, տիրուհին այդ պահին Թաթուլին մտաբերելու անհրաժեշտություն ամենևին էլ չէր զգա:

Հայրենի երկրին սպառնացող ահավոր վտանգի պայմաններում այդ երկրի տիրոջը, պաշտպանին, այլև նրա տիրուհուն աղետաբեր կեցվածքով ներկայացնելն այնպիսի քայլ չէր, որ երկրնտրանք չպատճառեր Թումանյանին՝ այն էլ այնպիսի իրավիճակում, երբ մինչ այդ նման նախադեպ չի եղել հայրենի գրականության մեջ:

«Թմկաբերդի առումը» պոեմի հրատարակումը հետաձգելու հիմնական պատճառն ընկալված չլինելու հետևանքով համարժեք ձևով չի ընկալվել պոեմի գաղափարական բովանդակությունը, կերպարների էությունն ու վարքագիծը: Ոչ միայն Թմկա տիրուհին, այլև Թաթուլ իշխանը արժանի չեն աշուղի երանիին. «Երնե՛կ նըրան, որ իր գործով կապրի անվերջ, անդադար...»: «Աշխարհում ամեն բան հեշտ է,- ասում է Թումանյանը,- մի բան է դժվար՝ մարդ լինելը»<sup>20</sup>: Թաթուլը, տիրուհին չկարողացան հաղթահարել այդ դժվարությունը և չկարողացան ոչ թե արտաքին անբարենպաստ հանգամանքների պատճառով, այլ հենց իրենց անիրատեսության հետևանքով. զգացմունքի և մարդուն հատկանշող բանականության դերը պիտի ճիշտ գիտակցվի:

<sup>18</sup> Ուշագրավ է հետևյալ իրողությունը. Մ.Մկրյանն այնպիսի ենթադրություն է մեջտեղ բերել, թե իբր «Թմկա տիրուհին և շահը իրար հանդիպելուց առաջ միմյանց նկատմամբ լցված էին ամենաայրող ատելությամբ» (Մ.Մկրյան, Հ.Թումանյանի ստեղծագործությունը, 1981, էջ 132): Այսպիսի ենթադրության համար պոեմը ոչ մի հիմք չի տալիս: Այդ ենթադրությունը վկայություն չէ՞ այն բանի, որ որոշ գրականագետներ իրենք էլ զգում են, որ տիրուհուն վայրկյանների ընթացքում վերափոխված տեսնելը հոգեբանորեն հիմնավոր չէ:

<sup>19</sup> Ջրբաշյան Էդ., նշվ. աշխ., էջ 390:

<sup>20</sup> Թումանյան Ն., Հուշեր և զրույցներ, Եր., 1969, էջ 306:

**ОБ ОТКЛАДЫВАНИИ ИЗДАНИЯ ПОЭМЫ “ВЗЯТИЕ  
КРЕПОСТИ ТМУК” И СВЯЗАННЫЕ С ЭТИМ ВОПРОСЫ***Резюме**С. Мелконян*

В вопросе откладывания издания поэмы “Взятие крепости Тмук”, написанной в 1902 г., по мнению автора статьи, определенную роль сыграла следующая реальность: в этом произведении, в которой представлен конкретно исторический сюжет, вопреки традиции, существующей в армянской литературе того времени, были представлены образы, не проникнутые патриотизмом, а плененные своим чувством любви, властолюбием и изменой родине. Такое восприятие действительности дала автору возможность по-новому интерпретировать вопросы, касающиеся идеологического содержания и образов поэмы.

**Տեղեկություններ հեղինակի մասին***Մելքոնյան Մենեքերիմ Արշակի – Բ.գ.թ., պրոֆեսոր,**Գյումրու Մ.Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական**ինստիտուտի հայոց լեզվի ամբիոն, E-mail: karagr@gmail.ru*

## Արմենուհի ՄԽԻԹԱՐՅԱՆ

### ՊԱՐԲԵՐՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԸ: ՆՐԱ ՀՈՒՆԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ\*

Պարբերույթը առաջացել է հնագույն ժամանակներում: Պարբերույթի մասին հիշատակել են դեռ անտիկ հույները, քանի որ դեռևս մ.թ.ա. նրանք ունեին գիր ու հարուստ գրականություն և կարողանում էին տարբերակել գրական և խոսակցական լեզուն՝ ձգտելով գրական խոսքը դարձնել գեղեցիկ, արտահայտիչ և ներազդող: Այդ նպատակին հասնելու համար հին հույներն ուսումնասիրում և բացահայտում էին անտիկ գրողների լեզվառձական յուրահատկությունները՝ աստիճանաբար մշակելով գեղեցկախոսության կանոնները: Հին հույն ճարտասանների համար պերճախոսությունը միջոց էր իրենց քարոզած սկզբունքներն ու գաղափարները տարածելու համար: Հաճախ, երբ հին Հունաստանում դատավարության ժամանակ կողմերից մեկը բավարար չափով փաստեր չէր ունենում մեղադրելու կամ արդարանալու համար, դիմում էր ամենագոր խոսքի ուժին և հռետորական արվեստի վեհաշուք խոսքի գործությամբ շահում գործը: Նախապես զուտ գործնական նպատակ հետապնդելով և առնչվելով հռետորական արվեստի հետ՝ հետագայում այդպիսի ուսումնասիրությունները ձեռք են բերում նաև գիտական արժեք և դառնում խոսքարվեստի ու քերականության առարկա: Աստիճանաբար ձևավորվում են ճարտասանությունը, խոսքարվեստագիտությունն ու քերականությունը<sup>1</sup>:

Արիստոտելը իր «Պոետիկա» աշխատության մեջ քննում է ոճի տարբեր տեսակները, դրանց յուրահատկությունները, տալիս է սահմանումներ, կատարում է դասակարգումներ՝ փաստելով գիտական ընդհանրացումներով և բնորոշ օրինակներով: «Ճարտասանության» մեջ, լեզվառձական տարբեր հարցերի քննությանը զուգահեռ, Արիստոտելն անդրադառնում է նաև պարբերույթին. Տալիս է պարբերույթի սահմանումը, դասակարգում է այն, տարբերում դրա տեսակները՝ նշելով առանձնահատկություններն ու հատկանիշները: Ըստ Արիստոտելի՝ *պարբերույթը* բառական շրջանաձև դարձված է, որն ունի սկիզբ և վերջ: Այն կարող է կազմված լինել մասերից, որոնք կոչվում են *կոլոններ* (κωλον): Մեկ կոլոնից կազմված պարբերույթը պարզ է, իսկ երկուսից կազմվածը՝ բարդ, որն էլ լինում է հակադրական, հավասար կամ նման: Հակադրական պարբերույթի մեջ կոլոններից մեկը հակադրվում է մյուսին: Հավասարության դեպքում պարբերույթի կոլոնները լեզվական միավորումներով հավասար են, իսկ նմանությունը արտահայտվում է կոլոնների նմանավանդությամբ: Նա գտնում է, որ պարբերույթի մասերը՝

\* Հոդվածն իբրև զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2013թ. հոկտեմբերի 4-6-ը կայացած «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովում:

<sup>1</sup> Առաքելյան Վ., Հայերենի պարբերույթը, Եր., 1968, էջ 5-6:



կոլոնները, չպետք է լինեն ոչ շատ կարճ, ոչ էլ շատ երկար: Պարբերությո՞րը կոլոնների շնորհիվ ունի թիվ, քանակ, հետևաբար, ի տարբերություն արձակի, հեշտ է այն հիշել: Նա նշում է նաև պարբերության հիմնական հատկանիշները՝ վերջավորվածություն, կլորացվածություն, ավարտունություն և բազմազանություն: Նշված հատկանիշներով էլ պարբերությո՞րը տարբերվում է սովորական նախադասություններից<sup>2</sup>:

Ըստ Դեմետրիոսի՝ պարբերությո՞րը կոլոններից կազմված այն խոսքն է, որն սկսվում է ինչ-որ տեղ, ձգտում վերջակետին և նման է շրջանաձև ճանապարհի: Պարբերության կոլոնները նման են կամարներն իրենց վրա պահող քարերի, իսկ սովորական խոսքի կոլոնները նման են այն քարերին, որոնք իրար մոտ են թափված, բայց ընդելուզված չեն կառույցի մեջ: Դեմետրիոսը տարբերում է պարբերության երեք տեսակ՝ հռետորական, պատմական և խոսակցական: Հռետորական պարբերությո՞րը հղկված է և կլորացված, պահանջում է հզոր ձայն և դիմախաղ: Պատմականը ո՛չ շատ կլորացված է, ո՛չ էլ շատ ազատ: Իսկ խոսակցական պարբերությո՞րը հասարակ է ու պարզ, և հազիվ թե պարբերությո՞րը համարվի<sup>3</sup>:

Հայերը անտիկ աշխարհի գիտուններից, հատկապես հին հույներից, սովորեցին ոչ միայն փիլիսոփայություն, այլ նաև քերականություն և ճարտասանություն: Հայերենի քերականությունն ստեղծեցին ոչ թե առաջին թարգմանիչները, այլ հունաբան հեղինակները՝ թարգմանելով Դ. Թրակացու քերականությունը (V կամ VI դ), որ կոչվում է «Արուեստ քերականութեան»: Մաշտոցի գրերի գյուտից հետո Մեսրոպյան դպրոցներում աշակերտներին արդեն իսկ սովորեցնում էին ճարտասանություն և երկ կառուցելու կանոններ:

Այսպիսով՝ պարբերության մասին խոսել են նաև հայ մատենագիրները՝ ցուցադրելով հայերենի օրինակներով: Հայ հին մեկնություններում պարբերությո՞րը էր համարվում այն խոսքը, որի շուրջ բառերը շարակարգվում էին շրջաբերաբար կամ բոլորակաբար այնպես, մինչև որ մի ամբողջ ասացվածք ավարտուն է դառնում<sup>4</sup>: Մինչ Աբեղյանը գործածական էին *շրջաբերություն* կամ *պարբերություն* եզրույթները<sup>5</sup>: Հայ իրականության մեջ *պարբերությո՞րը* եզրույթն առաջին անգամ գործածել է Մ.Աբեղյանը: Նա գրում է. «Բազմաբարդ խօսքերի մի առանձին տեսակն է պարբերությո՞րը. դա խօսքերի մի ամբողջական գեղեցիկ միութիւն է, որի մասերը արուեստաւոր կերպով այնպէս են կապակցուում իրար հետ, որ մի հաստ գլխաւոր միտքը, որ զարգանում է ամբողջի մեջ, մինչև վերջն առկախ է մնում»<sup>6</sup>: Նա բացահայտում և մեկնաբանում է պարբերությո՞րը և նշում վերջինիս կազմության պահանջները. «Պարբերության մասերի և անդամների փոխադարձ յարաբերութիւնը հիմնուած է նրանց տրամաբանական և շարահիսսական կապակցութեան վրայ. բայց կատարեալ և գեղեցիկ պարբերության մեջ այդ յարաբերութիւնը աչքի պիտի ընկնի նաև ներդաշնակ ու կշռական շէնքով, որ և հաճելի տպաւորու-

<sup>2</sup> *Stéu* *Античные теории языка и стиля*, Санкт-Петербург, 1996, С. 194-195.

<sup>3</sup> *Նույն տեղում*, էջ 255-256:

<sup>4</sup> *Առաքելյան Վ.*, *նշվ. աշխ.*, էջ 20:

<sup>5</sup> *Մայխասեանց Ստ.*, *Հայերեն բացատրական բառարան*, հ IV, Եր., 1945, էջ 80:

<sup>6</sup> *Աբեղյան Մ.*, *Աշխարհարարի շարահյուսություն*, Վաղարշապատ, 1912, էջ 348:

թին է թողնում: Դրա համար պետք է անդամները որոշ համաչափություն ունենան իրենց ծառայով. իսկ գլխաւոր մասերի ծառայը պետք է հարկաւ համեմատ լինի իրենց բովանդակութեան: Այսպիսի արուեստաւորութեամբ կազմուած պարբերային մէջ, կարդալու ժամանակ, ձայնն առաջին մասի սկզբում ցածրից սկսելով՝ հետզհետէ բարձրանում է և ապա դարձեալ հետզհետէ իջնում է, մինչև որ վերջում հանգստացող աւարտի տպաւորութիւն է թողնում:

Պարբերային յատուկ է առաւելապէս վսեմ, հանդիսաւոր խօսուածքին ու ճառերին»<sup>7</sup>:

*Պարբերային* (период, period, neriodus) եզրային թարգմանված է հունարեն (περίοδος) բառից և նշանակում է շրջանագիծ, շրջան, քանի որ պարբերութային խոսքը շրջանագծի նման կլորացված է: *Պարբերային* եզրային հաճախ շփոթում են *պարբերություն* (обзан) եզրային հետ, վերջինս հիմա նշանակում է նոր տողի սկիզբ: Ժամանակակից ըմբռնումով պարբերային, ըստ էության, բազմաբարդ նախադասության ոճական մի յուրահատուկ տեսակ է, որն առանձնանում է փոքրիկ ծավալուն կառուցվածքով: Պարբերային պերճախոսության կարևորագույն միջոցներից մեկն է և ավելի շատ կիրառվում է գրավոր խոսքում, հաճախ է հանդիպում գեղարվեստական գրականության մէջ՝ թե՛ չափածո, թե՛ արձակ, ինչպես նաև՝ հրապարակախոսության և ոճաբանության մէջ: Պարբերային գործածությունն ավելի շատ զգացական երանգ է հաղորդում խոսքին և ունի ոճական արժեք. ավելի երաժշտական և արտահայտիչ է դարձնում խոսքը: Պարբերային իմաստային և քերականական տեսակետից ամբողջական և ավարտուն շարահյուսական կառույց է, ունի հնչերանգային ավարտվածություն և լի է զգացական, քնարական հուզականությամբ, հռետորական և հրապարակախոսական հանդիսավորությամբ և կրթոտությամբ: Կառուցվածքային տեսակետից՝ որպես շարահյուսական ուրույն կառույց, անկախ իր բաղադրիչների քանակից, որը հաճախ կարող է շատ ծավալուն լինել, արտաբերության հնչերանգով այն միշտ բաժանվում է երկու մասի: Առաջին մասը կոչվում է *բարձրացում* (արտաբերվում է տոնը աստիճանաբար բարձրացնելով), երկրորդը՝ *իջեցում* (արտաբերվում է տոնը ցածրացնելով), որոնք իրարից բաժանվում են զգալի դադարով: Գրավոր խոսքում այդ դադարը կարող է արտահայտվել ստորակետով կամ անջատման գծիկով, իսկ մասնագիտական գրականության մէջ արտահայտվում է || պայմանական նշանով: Պարբերային մասերից մեկը համատիպ լեզվական միավորների շարք է, որի բաղադրիչներն սկսվում են կապակցական նույն բառով (եթե միավորված են գողվածով), ունեն ստորոցայի նույն ձևերը (պարզ կամ բաղադրյալ), նույն ժամանակը և ներդաշնակ ու համաչափ մի կառույց են կազմում<sup>8</sup>: Օրինակ՝ Երբ լուսափոթի զարուն է գալիս, Երբ հողն արևին իր կուրծքն է բացում,

Երբ բողբոջում են վարդեր ու նարգիզ, Երբ խնձորենիք ծաղկում են, ցնծում,

Երբ խենթ ջրերն են ընկնում իրար գիրկ, Երբ խենթանում են ծաղիկ ու մեղու,

<sup>7</sup> Արեղյան Մ., Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 350:

<sup>8</sup> Տե՛ս Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1984, էջ 356-357:

Երբ համբուրվում են երկիր ու երկինք,- || Ուզում եմ մեկին ծաղիկներ նետել... (Հովհ.Շ, 7):

Մի ողջ աշխարհիկ ողջ տեղահանվեց, Մանկանց ճիչ-ժխտրն աստղեր բերեց վար, ||

Բայց ոչ մի ազգի ականջ չթեքվեց Դեպի եղեռնի դժոխքն այսահար ... (Հովհ.ՇԴ, 227):

Հովհ. Շիրազի պոեզիան բազմաձև, բազմալար և վեհաշուք է: Նա երգիչն էր մարդու, մարդկայության, մարդկային խղճի, սիրո, բնության, հայրենիքի և դարի: Շիրազին հոգեհարազատ էին ինքնարտահայտման ամենատարբեր ձևեր՝ քառյակ, բանաստեղծություն, պոեմ, ներբող, եղերերգ և այլն: Նա քաջ գիտակցում էր. «Որ գորքից հետո Միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում, Եվ ինչ չի կարող ոչ մի գորք անել, Լեզուն է անում» և այդ սկզբունքով էլ կառուցել է իր խոսքը: Պարբերայթը, լինելով խոսքը ոճավորելու անփոխարինելի միջոց, անշուշտ իր ուրույն տեղն ունի խոսքը վարպետորեն ոճավորող բանաստեղծի՝ Հովհ.Շիրազի պոեզիայում: Եղեռնագարի ժողովրդի սևապրիլյան ողբերգությունից ծնված բանաստեղծը կարողացել է հմտորեն և տեղին գործածել շարահյուսական այս ուրույն կառույցը՝ պարբերայթը՝ խոսքին տալով ոճական նուրբ քնարականություն, հուզականություն և հանդիսավորություն:

Պարբերայթները դասակարգում են մի քանի սկզբունքով.

1. ըստ եղանակավորման,
2. ըստ կառուցվածքի:

Ըստ եղանակավորման՝ պարբերայթները լինում են՝ պատմողական, հարցական, բացականչական, հրամայական և ըղձական: Ամենից շատ գործածական են պատմողական պարբերայթները, սակայն քիչ չեն նաև մյուս տեսակները:

*Պատմողական պարբերայթ*՝ Ինձ հոգեհանգիստ կատարեք միայն Մասիսի վրա, ||

Երբ հանեք բանտից նոր շունչ տվող հովերն էլ նրա,

Երբ հանեք բանտից իմ Վանն ու Անին իմ Վանա ծովով,

Երբ ելնեն բանտից Մայր Հայաստանիս երկունքի ցավով,

Հավերժամանուկ իմ հայ Մասիսներն հայրենամոռուս ... (Հովհ.ՇԵ, 68):

*Հարցական պարբերայթ*: Հարցական պարբերայթները իրական հարց ու պատասխանի բնույթ չունեն, դրանք ճարտասանական հարցում են:

Օրինակ՝ Երջանկությունը թե անանց լիներ՝ || Ինչո՞ւ չէիր գա իմ գիրկը նորից, Ինչո՞ւ ինձ սիրող մտքից կհաներ, Ինչո՞ւ չէր պոկվի սիրտս հուշերից ... (Հովհ.Շ, 106):

-Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք. || Էն, որ ունի կարմիր արև՝ Յուր կապուտակ գլխի վերև.

Էն, որ ունի լեռն Ալազյազ՝ Հավքերն՝ անուշ, ջրերը՝ սազ (Հովհ.Շ, 60):

*Բացականչական պարբերայթ*՝ Ու սիրտը դող՝ Խջեզարեն արագ իջավ դարն ի վար,

Տեսավ որսը՝ տեզը կրծքին, || Բայց ա՛յն, որսկանը չկար ... (Հովհ.ՇԸ, 95):

*Ընդհանրական պարբերային*՝ Ա՛խ, չգայիր գիրկս դեռ, Դեռ հանելուկ լինեիր,  
Ես՝ հույսերիս ծովափին, Դու ծովում ձուկ լինեիր, Երազեի քեզ անվերջ,  
Բայց երբ հանկարծ հանեի, Երանի թե ինձ նման Մի մեծ մանուկ  
լինեիր... (Հովհ.Շ, 51):

*Հրամայական պարբերային*՝ Չէ՛, բալիկիս հագուստը՝ գառ,  
Արևն՝ երես, լուսինն՝ աստառ, Ծիածանը գոտիկն արեք,  
Աչքերս իբրև կոճակ դրեք, Միրտս դրեք ծոցն ու կարեք, ||  
Միրտս սրտին պատվաստ լինի, Որ ինձ աստղե թռոններ ծնի (Հովհ.Շ, 50):

Ըստ պարբերայինի բաղադրիչ մասերի քանակի՝ այն կարող է լինել երկ-  
անդամ, եռանդամ, քառանդամ և բազմանդամ, որոնք կարող են կապակցված լի-  
նել թե՛ շաղկապներով, թե՛ շաղկապական կամ ընդհանրացնող բառերով, թե՛ ա-  
ռանց դրանց՝ շարահարությամբ (գրավոր խոսքում՝ ստորակետերով կամ միջա-  
կետերով):

Եթե առկա է բազմաբարդ նախադասություն, որի յուրաքանչյուր բաղա-  
դրիչ սկսվում է կապակցական միևնույն բառով, սակայն այն կառուցվածքային  
տեսակետից արտաբերության հնչերանգով բաժանված չէ երկու մասի, ապա  
պարբերային լինել չի կարող: Այդպիսին է Հովհ. Շիրազի «Մայրս» բանաստեղծու-  
թյունն ամբողջությամբ:

Ըստ կառուցվածքի պարբերայինները կարող են լինել *պարզ* կամ *բարդ*:

*Պարզ պարբերային*: Պարզ նախադասության բազմակի (համագոր) ան-  
դամները, շղթայակցվելով միևնույն համադասական շաղկապի կրկնությամբ,  
խոսքին կարող են հաղորդել դանդաղ ընթացք, ռիթմ և երաժշտականություն,  
ինչն էլ հատուկ է պարբերայինի: Պարզ պարբերային են համարվում բառակա-  
պակցություններով արտահայտված բազմակի անդամներ ունեցող այն պարզ  
նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող բազմակի անդամները կա-  
պակցված են միևնույն համադասական շաղկապով. «Քերականագիտության մեջ  
ընդունված է պարբերային համարել նաև այն պարզ նախադասությունները, որոնց  
կազմում ներդաշնակ և համատիպ ձևավորմամբ թվարկվում են համագոր բառա-  
կապակցություններ, գերազանցապես առաջադաս դիրքով»<sup>9</sup>:

Օրինակ՝ Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,

Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,

Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,

Ու աղբյուրները լեզվիս՝ || սարից իջա ես քաղաք ... (Հովհ.Շ, 5):

Հովհ. Շիրազը, հետևելով անտիկ ճարտասանների օրինակին, վերոհիշյալ  
պարզ նախադասության բազմակի անդամները շղթայակցելով ու շաղկապի  
կրկնությամբ, բանաստեղծական խոսքին հաղորդել է դանդաղ ընթացք, ռիթմ և  
երաժշտականություն:

Հաճախ դերբայական դարձվածները ևս կարող են կազմել պարբերայինի  
մաս, քանի որ «... քերականական համասեռության հետևանքով ունենում են հա-

<sup>9</sup> *Գարեգինյան Գ.*, նշվ. աշխ., էջ 361:

մաչափ ու ներդաշնակ կառույց, բառերի զուգահեռ շարադասություն, արտաբերական նույնանմանություն, իմաստային մոտիկություն և այս ամենի հետևանքով կանոնավոր կշռույթ»<sup>10</sup>:

Օրինակ՝ Ազգեր ու ցեղեր սրի քաշելով, Իր սրի բերանն անգամ մաշելով, ||  
Դեռ չէր հագնում այնպես, որ սարսեց ... (Հովհ.ՇԵ,110):

*Բարդ պարբերույթ*: Բարդ պարբերությունների պարագայում երկու մասերն էլ կազմվում են նախադասություններից, որոնք կարող են կապակցվել թե՛ համադասական, թե՛ ստորադասական հարաբերությամբ: Ստորադասական պարբերույթի *գերադաս* մասը կարող է արտահայտված լինել պարզ, բարդ համադասական կամ ստորադասական նախադասություններով, որին լրացնում է համատիպ կառույցներից կազմված *ստորադաս* մասը: Ստորադաս մասն էլ իր հերթին կարող է լինել պարզ կամ բարդ: Երբ պարբերույթի անդամները, իրենց հերթին, լրացումներ են ունենում, հնչերանգային հաջորդականությունը դանդաղում է, իսկ պարբերույթը՝ երկարում: Հանդիպում են նաև *գերադաս* և *ստորադաս* մասերի տարբեր զուգակցումներով կազմված պարբերություններ, որոնք կարող են արտահայտել իմաստային տարբեր հարաբերություններ:

Օրինակ՝ Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների՝ Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,

Գնամ ետևից ծիծեռնակների՝ Նրանց հետ ետ գամ՝ գարունը բերեմ,-

Բարձրանամ կապույտ գահը լեռների՝ Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,-

Հագնեմ ծիրանին արշալույսների,- Գարնան թագավոր ինձ թագադրեմ,

Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ, || Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,

Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ, Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,

Որ գարունները գան ու չգնան, Որ հավերժանան գմբուխս դրախտով,

Որ բեկվի իմ դեմ խորհուրդ մահվան, Որ մարդը ցնձա հավերժի բախտով  
(Հովհ.Շ,9):

Ըստ կապակցման բնույթի և արտահայտած հարաբերությունների՝ բարդ պարբերությունները լինում են համադասական և ստորադասական:

*Համադասական պարբերություններ*: Համադասական պարբերությունները, ըստ էության, բազմաբարդ համադասական նախադասության ոճական մի յուրահատուկ տեսակ են: Համադասական պարբերույթ կազմող բաղադրիչ մասերը քերականորեն համասեռ են և երկուսից պակաս չեն կարող լինել: Համադասական պարբերույթի բաղադրիչ մասերը իրար հետ կարող են կապակցվել չորս կարգի հարաբերությամբ՝ միավորիչ, հակադրական կամ ներհակական, տրոհական և հավելական կամ մեկնական: Ամենից հաճախ գործածվում են հակադրական հարաբերությամբ կապակցված պարբերությունները:

Օրինակ՝ Բայց ես երգեցի այքերդ միայն, Մեկ էլ այքերիդ երկինքները խոր,  
Բայց ես երգեցի հոնքերդ միայն, Մեկ էլ հոնքերիդ կամարները վեհ,

<sup>10</sup> Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 44:

Բայց ես երգեցի մարմինդ միայն, Մեկ էլ քո մարմնիդ մարմարներն հրե,  
Բայց ես երգեցի ոտքերդ միայն, Մեկ էլ ոտքերիդ հետքերն՝ իմ սրտին,  
Ախ, ես երգեցի քո սերը միայն, (Որ կամուրջ քանդեց իմ բախտի ճամփին) ||  
Ու պարտք մնացինք բոլոր ճամփեքին, Դու ինձ, ես՝ ներող մեր հայրենիքին  
(Հովհ.Շ,12):

*Ստորադասական պարբերություններ:* Պարբերային ստորադաս նախադասությունները, ըստ էության, բազմաբարդ՝ համաստորադասական նախադասության ոճական մի յուրահատուկ տեսակ են: Կառուցվածքային տեսակետից ստորադասական պարբերային կազմված է լինում գերադաս և ստորադաս բաղադրիչ մասերից: Ստորադաս մասը կարող է կազմված լինել տարբեր բնույթի լրացական միավորներից՝ նախադասություններից, որոնք թվարկվում են իբրև միասեռ անդամներ և լրացնում գերադաս մասին:

Օրինակ՝ Ես կվառեմ իմ երգերը, || Թե չբուժեն մեր վերքերը,  
Թե չդառնան մեծամրմուռ Հայ սփյուռքին՝ ներգաղթի դուռ,  
Թե սուրբ հացի պես չբուրեն՝ Թե ողջ ազգը տուն չբերեն,  
Թե չհանեն հայոց լեզուն Մինչև Միփան, Միմ ու Մասուն,  
Մինչև Արմանց, Վանանդ ու Միս, Թե չհանեն մինչև Մասիս (Հովհ.ՇԵ, 41):

Չնայած որ սովորաբար պարբերային հիմնական իմաստը արտահայտում է գերադաս մասը, այնուամենայնիվ, այն կներկայացնի թվարկվող անդամների անավարտ շարք, եթե չլինի ստորադաս մասը, որը եզրափակում, իմաստային և կառուցվածքային առումով ավարտուն է դարձնում շարահյուսական այս ուրույն կառույցը՝ միասնաբար կազմելով պարբերային:

Պարբերային ստորադաս մասը գերադասի նկատմամբ կարող է լինել նախադաս կամ հետադաս, ըստ այդմ էլ կարող է արտաբերվել *բարձրացող* կամ *իջնող* հնչերանգով:

Օրինակ՝ Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ, Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ, ||

Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ, Երբ գարունները ողջ թագավորեմ...(Հովհ.Շ, 9):

Երբ մանկությունս հավիտյան չվեց Թիթեռների հետ իմ թիթեռ գարնան,  
Երբ մանուկ կյանքիս կոկոնից բացվեց Ծաղիկն իմ անհոգ պատանեկության, ||

Չգիտեմ ինչո՞ւ պատանի ոգիս Երանի տվեց մանուկ անցյալիս (Հովհ.ՇԵ, 24): Շարահարական (անշաղկապ) պարբերություններ: Տարածված են նաև շարահարական պարբերությունները, որոնց բնույթը հաճախ հնարավոր չէ հստակ տարրորոշել:

Օրինակ՝ Ծնվածս օրը ինձ մի հարցնի, || Հայր ծննդյան լուկ մի օր չունի,  
Հայր մեռցվել, ծնվել է նորից, Մեռցվել նորից, նորից է ծնվել,  
Նորից է ծնվել, մեռցվել նորից, Ծնվել է նորից, նորից մեռցվել,  
Նորից մեռցվել, ծնվել է նորից (Հովհ.Շ, 59):

Ուտից գլուխ մայր էր մայրս, Հիսուսի պես սրբո բերան,

Մի տուն որք տան հայր էր մայրս, || Ա՛խ, ո՞նց տարավ մահը նրան (Հովհ.ՇՀՄ, 209):

Ինչպես տեսանք, պարբերությո՞րն առաջացել է հնագույն ժամանակներում: Պարբերության մասին հիշատակել են դեռ անտիկ հույները՝ Արիստոտելը, Դեմետրիոս և ուրիշներ, ինչպես նաև հայ մատենագիրները, սակայն հայ իրականության մեջ պարբերությո՞րն եզրույթն առաջին անգամ գործածել է Մ. Աբեղյանը: Պարբերությո՞րն բազմաբարդ նախադասություն է, դրա գործածությունն ավելի շատ զգացական երանգ է հաղորդում խոսքին և ունի ոճական արժեք. ավելի երաժշտական և արտահայտիչ է դարձնում խոսքը, իսկ իմաստային և քերականական տեսակետից այն ամբողջական և ավարտուն շարահյուսական կառույց է: Պարբերությո՞րն, լինելով խոսքը ոճավորելու անփոխարինելի միջոց, անշուշտ իր ուրույն տեղն ունի խոսքը վարպետորեն ոճավորող բանաստեղծի՝ Հովհ.Շիրազի պոեզիայում:

#### Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

*Հովհ.Շ – Հովհաննես Շիրազ, Հատընտիր, Եր., 1992:*

*Հովհ.ՇԴ – Հովհաննես Շիրազ, Հայրոց Դանթեականը, Եր., 1990:*

*Հովհ.ՇԵ – Հովհաննես Շիրազ, Երկեր, Գիրք առաջին, Եր., 1981:*

*Հովհ.ՇՀՄ – Հովհաննես Շիրազ, Հուշարձան մայրիկիս, Եր., 1971:*

*Հովհ.ՇՄ – Հովհաննես Շիրազ, Միամանթոն և Խջեզարե, Եր., 1970:*

### ПЕРИОД , КАК ЭЛЕМЕНТ РИТОРИКИ, ЕГО ГРЕЧЕСКИЕ ИСТОКИ И ОТРАЖЕНИЕ В ПОЭЗИИ ОВ. ШИРАЗА

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *А. Мхитарян* \_\_\_

В современном представлении период – это особый стилистический вид сложного предложения, имеющий характерно большой объем. Период – важный инструмент ораторского искусства. Использование периода в речи придает ей чувственность и стилистическую ценность. С точки зрения синтаксиса период всегда делится на две части с помощью интонации, независимо от того из скольких частей он состоит синтаксически. Одна из частей периода – это ряд однородных синтаксических единиц, составляющие части которого начинаются с одного и того же связывающего слова, имеют одинаковые формы сказуемого и составляют гармоничное целое.

Периоды классифицируются: 1. По цели высказывания (повествовательное, вопросительное и т. д.), 2. По типу строения предложения (сложное, простое).

В армянской литературе мастерски и к месту использовал периоды Ов.Шираз. С их помощью он смог придать своему поэтическому слову больше лиризма, эмоциональности и пафоса.

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Մխիթարյան Արմենուհի Մնացականի – ք. գ. թ., դրոշմատ, Խ. Արուսյանի անվան*

*Հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի*

*և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,*

*E-mail: [mkhitaryanarmenuhi@mail.ru](mailto:mkhitaryanarmenuhi@mail.ru)*

Тамара МЕЛИКЯН

## РОЛЬ ЛИЧНОСТИ И ПОЭТА В ИСТОРИИ: Л. ТОЛСТОЙ И Б. ПАСТЕРНАК \*

Лев Толстой отрицал созидательную и положительную роль сильной личности в истории, так как, по его мнению, гуманизм, христианское милосердие и власть несовместимы. Великий писатель Л. Толстой к этому выводу, определившему его отношение к власти и государству, пришел в процессе создания исторической эпопеи “Войны и мира” и после казни народовольцев, ставшей для него весомым доказательством данного вывода.

Писатель свои исторические и философские вставки романа считал “Откровениями Толстого” и ставил некий знак равенства между своими Откровениями и Откровениями Иоанна Богослова и Исповедью Блаженного Августина. Упрекать Л.Толстого в гордыне мы не будем: масштаб его личности столь велик, что можно соглашаться или не соглашаться с ним.

Естественно, мыслитель не мог не задуматься и над тем, что способен сделать человек, вовлеченный властью в исторический процесс? Он признавал право личности, сильной личности на поступок, но считал, что власть умаляет личность, что личность во власти деградирует.

Право на поступок – это право выбора, право на свободу. Такое право имели Платон Каратаев, утешавший своих товарищей по плену, и Пьер Безухов, спасший девочку в горящей Москве.

Так же поступает в позднем рассказе Толстого “Ходынка” его герой Емельян: “равный прежде вместе со всеми вперед к гостиницам, он выходит из общего движения, спасая мальчика, попавшего под ноги толпе, и лишившуюся сознания женщину”<sup>1</sup>. Право на любовь, на подвиг – это право человека, право, дарованное Богом, считал Л.Толстой. Но “нет права на власть, власть берется чаще всего силой, что уже далеко от гуманизма”<sup>2</sup>.

В романе-эпопее “Война и мир” Л.Толстой отвергал мнение историков, полагавших, что “Общественный договор” Жан-Жака Руссо породил Великую Французскую революцию. Но могла ли проповедь Л.Толстого вызвать революцию в России?!

Проповедь Толстого имела широчайшее распространение и резонанс, но последствия ее были совсем не такими, к каким стремился писатель. В июне 1910г. Лев Толстой записал в дневнике: “Страшно сказать, но что же делать, если это так, а именно, что со всем желанием жить только для души, для Бога, перед многими и

---

\* Статья в качестве доклада была представлена на международной научной конференции “Историко-культурное наследие и современность”, состоявшейся 4-6 октября 2013 г. в Гюмри.

<sup>1</sup> Лурье Я. Исторические воззрения Толстого и проблемы XX века. М., 1993, С. 34.

<sup>2</sup> Там же, С. 42.



многими вопросами остаешься в сомнениях, в нерешительности”<sup>3</sup>. Писатель настороженно относился ко всем революциям, равно как и к революции 1905г.

“С Россией произошла страшная катастрофа. Она ниспала в темную бездну. И многим начинает казаться, что единая и великая Россия была лишь призраком, что не было в ней подлинной реальности. Нелегко улавливается связь нашего настоящего с нашим прошлым. Слишком изменилось выражение лиц русских людей, за несколько месяцев оно сделалось неузнаваемым. При поверхностном взгляде кажется, что в России произошел небывалый по радикализму переворот. Но более углубленное и проникновенное познание должно открыть в России революционный образ старой России, духов, давно уже обнаруженных в творчестве наших великих писателей”,-писал в работе “Духи русской революции” Н.Бердяев<sup>4</sup>.

“Толстой не видит лица человеческого, не знает лица, он весь погружен в природный коллективизм, который представляется ему жизнью божественной. Жизнь личности не представляется ему истинной, божественной жизнью, это- ложная жизнь этого мира. Истинная, божественная жизнь есть жизнь безличная, Личность, качественность есть уже грех и зло... Толстой хотел бы последовательно искоренить все, что связано с личностью и качественностью... Толстой сумел привить русской интеллигенции ненависть ко всему исторически-индивидуальному... Толстовство в широком смысле этого слова-русская внутренняя опасность, принявшая обличье высочайшего добра”,-таков взгляд Н.Бердяева на отношение Л.Толстого к сильной личности<sup>5</sup>.

Парадоксальным можно считать тот факт, что правоту Л.Толстого подтверждает А. Солженицын, сосланный карающим государством сначала в тюрьму, затем на каторгу. В противовес Л.Толстому, А.Солженицын, как известно, весьма большое значение придавал роли личности, значению правильности выбора каждого конкретного человека в “узловой момент” своей судьбы и судьбы страны. По мнению А.Солженицына, от каждой личности зависит многое, а потому велика ответственность каждого за правильный выбор всего общества в узловой момент истории.

В 1945 г. В Бутырской тюрьме А. Солженицын услышал от своих сокамерников речь лейтенанта Шмидта судьям в переложении Б.Пастернака:

“Я тридцать лет вынашивал  
Любовь к родном краю  
И снисхожденья вашего  
Не жду и не желаю”,-  
И речь эта “проняла” его, ибо “так подходила к нам”<sup>6</sup>.

<sup>3</sup> Толстой Л. Письма, Полное собрание сочинений, М., 1958, т. 58, С. 65.

<sup>4</sup> Бердяев Н. Духи русской революции. М., АСТ, 2011, С. 78.

<sup>5</sup> Там же.

<sup>6</sup> Солженицын А. Архипелаг Гулаг, 1973, т. I, С. 226.

Прежде чем понять, как же Б. Пастернак относился к роли личности в истории, вчитаемся в строки книги Д. Быкова “Борис Леонидович Пастернак”: “Каждый биограф Пастернака задается вопросом: почему его все –таки не репрессировали?

На этот вопрос есть множество рациональных ответов и один иррациональный, но, кажется, единственно верный. Рациональные мы уже разбирали, и все они не универсальны: Сталин губил людей куда более популярных и несравненно более лояльных, чем Пастернак. И более смелых. И никак не менее талантливых. Не говоря уж о том, что евреев, выбравших ассимиляцию, “попутчиков”, воевавших с РАППом, и литературных знаменитостей, олицетворявших для заграницы советский либерализм и культурный ренессанс, среди арестованных тоже было довольно.

Заболоцкий был похож на провинциального бухгалтера, Мандельштам суетливостью напоминал еврейского портного. Пастернак был похож на поэта –слишком похож, как и Ахматова; этим, и только этим, можно объяснить их неприкосновенность. Обоих травили, у Ахматовой погубили двух мужей и едва не погубили сына; но взять их не смогли – потому что в крови у всех без исключения людей живет первобытный трепет перед жрецом, а у архаичных натур этот рудимент еще сильнее. Через это переступить не мог никто – даже Хрущев, которому вообще не было свойственно уважение к печатному слову. Травить – да, но уничтожать – нет. Даже Мандельштама Сталин предполагал вначале “изолировать, но сохранить”<sup>7</sup>.

Есть версия, что И. Сталин, как “всякий профессиональный властитель”, отлично понимал пределы своей власти и не посягал “на самые древние запреты”<sup>8</sup>, то есть на настоящую поэзию. Во всяком случае на мнение Б.Пастернака о роли личности в истории влияли взаимоотношения поэта с властью и властью имущими. В 1939 г., когда репрессии шли полным ходом, то есть реализовывалась мысль Толстого о власти и антигуманизме, Пастернак написал стихотворение “Глухая пора листопада”. Процитируем его:

“Глухая пора листопада.

Последних гусей косяки.

Расстраиваться не надо,

У страха глаза велики.

И белому мертвому царству,

Бросавшему мысленно в дрожь,

Я тихо шепчу: “Благодарствуй,

Ты больше, чем просят, даешь”<sup>9</sup>. (“Глухая пора листопада”)<sup>9</sup>.

<sup>7</sup> Быков Д. Пастернак Б.Л., М., 2009, С. 309.

<sup>8</sup> Там же.

<sup>9</sup> Пастернак Б. Собрание сочинений в 5 томах, М., 1989, т. 2, С. 67.

Это стихи чрезвычайно прозрачны. В них вера в жизнь, счастливую и красивую – это обманчивая сказка с хорошим концом. Но в этой Жизни воплощено все христианство Пастернака, о котором Д. Быков пишет так: “Счастливое разрешение долгого страха и недоверия: оказывается, отчаиваться не надо! Оказывается, мир только пугает – но за поворотом нас ждут прощение, разрешение всех обид, разгадка загадок, чудесное преображение! Этот свет, доходящий из-за горизонта, пронизывает и военные стихи. “Но почему нет страха в душе моей?” Потому что есть подспудная догадка о чудесном спасении. Религия Пастернака – вера чудесно спасенного”<sup>10</sup>. Словом, “Каторга, какая благодать!”<sup>11</sup>.

Однако вера в чудесное спасение невозможна без веры в единую Личность – Бога. Многие, так называемые сильные личности, по мнению Б.Пастернака, весьма сходному с мнением Л.Толстого, –это всего лишь фетиши, поскольку:

“... жизнь проходит под знаком  
Клеветы столько лет,  
В свете сплетни двойкой,  
С жаждой смерти в ответ” (“Молодежь по записке”).

Современники Пастернака существовали в условиях советской полуподпольной веры и поневоле склонялись к бескомпромиссной диссидентской этике – вера становилась фанатичной, нерассуждающей, сектантской”<sup>12</sup>. Такая вера была чужда Пастернаку хотя бы потому, что полуподпольная вера была огосударственной, то есть дозволенной государством, лишенным гуманизма. К официальной церкви Пастернак был холоден. Есть воспоминания о том, что он наизусть знал заупокойную службу и, присутствуя на похоронах близких ему людей, вторил священнику. Но из людей, выросших в добольшевиcтской России, мало кто не знал на память тексты церковных служб.

Можно предположить, что для Б.Пастернака религия была выходом из тупика, в который попала его страна. Поэт писал Ольге Фрейндберг 4 февраля 1941 г.: “Благодетелю нашему кажется, что до сих пор были слишком сентиментальны и пора одуматься. Петр Первый уже оказывается параллелью не подходящей. Новое увлечение, открыто исповедуемое, – Грозный, опричнина, жестокость”<sup>13</sup>.

В годы войны, когда государство отвело наконец свой взгляд от частной жизни граждан, можно было домыслить причины той страшной катастрофы, которая произошла в России в 1930-е гг. Никто не мог ответить, что будет завтра. Возникло ощущение странной свободы, паузы, выпадения из времени, дающей возможность отстраненно рассуждать на вечные темы.

Говоря об отношении Б. Пастернака к советской власти, Д. Баков пишет: “... все советское заслуживает у Пастернака оправдания лишь постольку, поскольку

<sup>10</sup> Быков Д. Пастернак Б.Л., М., 2009, С. 310.

<sup>11</sup> Пастернак Б. Собрание сочинений в 5 томах, М., 1989, т. 2, С. 578.

<sup>12</sup> Быков Д. Пастернак Б.Л., М., 2009, С. 47.

<sup>13</sup> Пастернак Б. Собрание сочинений в 5 томах, М., 1989, т. 5, С. 482.

укрепляет и помогает сохранить все русское. Прежде таким хранителем русского казался Пастернаку Сталин, но он в нем разочаровался”.

Разочарование в Сталине пришло к Пастернаку еще в середине 1930-х гг., затем Сталин казался писателю олицетворением мертвой буквы, символом догмата, а уже в “Докторе Живаго”, – символом диктатора государства и губителем всего живого и мыслящего.

ԱՆՁԻ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԴԵՐՈՂ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ .  
Լ.ՏՈՂԱՏՈՅ ԵՎ Բ.ՊԱՍՏԵՐՆԱԿ

— *Անփոփում* —

— *Թ. Մելիքյան* —

Լև Տոլստոյը չէր ընդունում «մեծ մարդկանց» պաշտամունքը, պնդելով, որ ուժեղ կառավարիչներն ընդամենը «պիտակ են, որոնք իրադարձություններին անվանումներ են տալիս»: Որպես քրիստոնյա՝ նա մերժում, ավելի ճիշտ՝ ժխտում էր ուժեղ անձի ստեղծարար, բացառիկ դերը պատմության մեջ, որովհետև համոզված էր, որ մարդասիրությունը, քրիստոնեական բարեսրտությունը և իշխանությունը անհամատեղելի են: Այդպես էլ՝ մեծ գրողը տագնապահույզ էր բոլոր հեղափոխությունների նկատմամբ, այդ թվում՝ և 1905թ. հեղափոխության, որը, ըստ նրա, «Ռուսաստանին զցել է մուրճ անդունդ, և շատերին սկսել է թվալ, որ միասնական և մեծ Ռուսաստանը այլևս միայն պատրանք է»:

Հասկանալու համար, թե ինչպես էր Բ. Պաստերնակը վերաբերվում պատմության մեջ ուժեղ անձի դերին, պիտի ընթերցել Դ.Բիկովի համանուն վեպի տողերը. «Պաստերնակի յուրաքանչյուր կենսագիր մտահոգված է այն հարցով, թե ինչու՞ նրան չձերբակալեցին»: Վարկած կա, որի համաձայն՝ Ստալինը, ինչպես «ամեն մի արհեստավարժ տիրակալ», ոտնձգություն չէր անում իսկական քնարերգության նկատմամբ: Ինքը՝ Պաստերնակը, գտնում է, որ հրաշքով փրկության հավատն անհնար է առանց Աստծու հավատի: Հետևաբար Լ.Տոլստոյի նման՝ Բ.Պաստերնակի համար էլ ուժեղ անձն ընդամենը ֆետիշ է:

Մեծ Հայրենականի տարիներին հաճախ այցելելով ռազմաճակատ՝ Պաստերնակը համոզվում է, որ ստալինիզմը այնքան չի օգնել, ինչքան խանգարել է պատերազմը շահելուն: Այստեղից էլ գրողի համոզմունքը. ինչը նախկինում բռնի և ստոր էր թվում, բայց պատմականորեն արդարացված, իրականում Ռուսաստանը հեռացրեց իր իսկական պատմական ուղուց:

**Сведения об авторе**

*Меликян Тамара Амаяковна – к. пед. н., доцент,  
декан факультета иностранных языков Гюмрийского  
педагогического института им. М. Налбандяна,  
E-mail: [tamara.melikyan@mail.ru](mailto:tamara.melikyan@mail.ru)*

## Գագիկ ԽԱՉԻԿՅԱՆ

### ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԺԵՎՈՐՈՒՄՆԵՐ\*

Անվանի գրողների փոխհարաբերությունների, համախոհ գրչակիցների հանդեպ վերաբերմունքի, նրանց ստեղծագործությունների մասին արտահայտած կարծիքների բացահայտման հետ կապված հարցերը հետաքրքիր ու կարևոր գրականագիտական թեմաներ են: Այս ասպարեզում կատարված որոնումների և ուսումնասիրությունների շնորհիվ պարզվում են գրողների աշխարհայացքի, կենսամիտությունների և գեղագիտության տարբեր կողմերի, գեղարվեստական ստեղծագործությունների հանդեպ նախասիրությունների, գրական ճաշակի մի շարք առանձնահատկությունները:

Այս հոդվածում նախևառաջ մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում գրական ու կենսական առնչությունների ու արժևորումների այն դրվագները, որոնք կապված են Ավետիս Ահարոնյանի և հայ գրողների, մտավորականների, մասնավորապես, իր ժամանակակիցներ Ավետիք Բահակյանի, Դանիել Վարուժանի, Կոստան Զարյանի հետ: Մատնանշել ենք նաև գերմանացի նշանավոր փիլիսոփա և գրող Ֆ.Նիցշեի որոշ գաղափարների ազդեցության արձագանքները ակնհայտորեն հայ արձակագրի ստեղծագործություններում:

Ա.Ահարոնյանի և Ավ.Բահակյանի միջև կայացած կենսական ու գրական շփումների առիթով ուզում ենք ասել հետևյալը: Նախ նշանակալի է եղել արդեն այն, որ 1904 թ. Ահարոնյանը, Ալեքսանդրապոլում հանդիպելով ճանաչված բանաստեղծ Ավետիք Բահակյանին, միասին գնացել են դիտելու Անիի ավերակները: Այցելության տպավորությունների մասին նա գրել է «Դեպի Անի» ուղեգրության մեջ, որը տպագրվել է «Մուրճ»-ում (այս ուղեգրության մասին ավելի հանգամանորեն տե՛ս մեր «Անիի ճարտարապետության արժևորումը Ավետիս Ահարոնյանի «Դեպի Անի» ուղեգրության մեջ» հոդվածը<sup>1</sup>): Ժամանակի ճանաչված երկու հայ գրողների հետաքրքրությունների ու ստեղծագործական նախասիրությունների միջև ընդհանրություններ են դրսևորվել հատկապես հայրենիքի նվիրյալների՝ հայդուկ-ֆիդայիների Արևմտյան Հայաստանում մղած ազատագրական-պարտիզանական պայքարը, դրա մասնակիցների հերոսական անձնվիրությունն ու ողբերգական նահատակությունը գեղարվեստորեն պատկերելու, իմաստավորելու ու գովերգելու ասպարեզում:

Հայտնի է, որ 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին ցարական Ռուսաստանի տիրապետության պայմաններում հայ ազգային-ազատագրական պայքարի հետ առնչվող թեմաների արժարժումները գրականության մեջ իշխանությունների կողմից ոչ միայն չէին խրախուսվում, այլև արգելված էին: 1890-ական թվականներից սկսած՝ խիզախ հայորդիների մասին իրենց ստեղծագործությունները Ավ.Բահակյանն ու Ա.Ահարոնյանը տպագրում էին Ժնևում լույս տեսնող դաշնակցության «Դրոշակ» պաշտոնաթերթում: «Հայ-գուսան» ծածկանունով Բահակյանը թերթում լույս է ընծայում «Հայդուկի երգեր» շարքի բանաստեղծությունները: Դրանց մի մասը շուտով լայն տարածում են գտնում ժողովրդի մեջ, հետագայում վերածվում սիրված երգերի: «Դրոշակի» էջերում տպագրված բանաստեղծություններից են «Էն

\* Հոդվածն իրրել գեկուցում ներկայացվել է Գյումրիում 2013թ. հոկտեմբերի 4-6-ը կայացած «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտաժողովում:

<sup>1</sup> Տե՛ս «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտական նստաշրջանի նյութեր /Գյումրի, հոկտեմբեր 22-24/, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, Եր, 2010, էջ 43-48:

արծի՞ վն էր թըռավ, զընաց...»/1896/, «Ազիզ մերիկ, քեզի թողի...»/1898/, «Լուռ գիշերին մտքիս դիմաց...»/1898/, «Գըլզըլալով ջուրն է իջնում...»/1900/, «Հազար բարով հայարտ սարեր...»/1900/, «Ինձ տեղ տվեք, Միփան սարե՛ր...», «Մուրբ հայրենիքս երգել կուզեի...» և այլն: Ուսումնասիրելով ու գնահատելով մեծ բանաստեղծի վերոհիշյալ շարքը գրականագետ Ավիկ Իսահակյանը եզրակացնում է, որ իր այդ ստեղծագործություններով «Իսահակյանը դարձավ ֆիդայական պայքարի առաջին երգիչը հայ պոեզիայի պատմության մեջ»<sup>2</sup>:

Եվ ասեա 1898 թվականից Շվեյցարիայի Լոզան քաղաքի համալսարանում սովորող Ավետիս Ահարոնյանի (հիմնականում արձակ ստեղծագործություններից բաղկացած) «Ազատության ճանապարհին» շարքի երկերը ևս այդ տարիներին տպագրվում են «Դրոշակի» էջերում: Ֆիդայական պայքարը պատկերելու գործում նրան խրախուսել էր պարբերականի խմբագիր, ՀՅԴ առաջնորդ Ք.Միքայելյանը: Վերջինս նաև հայդուկների՝ իրեն գրած նամակներն ու այլ վավերական նյութեր էր տրամադրում Ահարոնյանին: Այս շարքը նույն վերնագրով, առանձին գրքով 1906 թվականին տպագրվում է Թիֆլիսում: Ժողովածուի պատմվածքներում, այլաբանական, քնարական, հրապարակախոսական տարրեր պարունակող պատումներում Ահարոնյանը հրատապորեն արձագանքում էր Արևմտյան Հայաստանում ընթացող իրադարձություններին: Նա գեղարվեստորեն վերստեղծում էր ֆիդայական պայքարի զանազան հերոսական ու ողբերգական դրվագները, ներկայացնում հայ գեղջուկների ընդվզումը թուրք ու քուրդ բարբարոսների դեմ (Խայր», «Արտը» և այլն): Պատմվածքներում ընդգծվում է ֆիդայական-պարտիզանական կռիվներում հայդուկապետերի ու հայդուկների մարտավարության կազմակերպված բնույթը, միաժամանակ, ռեալիստական ու ռոմանտիկական գրական հնարաններով ու խտացումներով գեղարվեստորեն բացահայտվում են շարքային հայդուկների բարոյահոգեբանական բարդույթները («Լուսաբացին», «Կովի դաշտում»): Ֆիդայական պայքարին յուրովի են մասնակցում կանայք ու պատանիները, որոնք աչքի են ընկնում հայդուկներին արժանի խիզախությամբ, համարձակությամբ («Հազրեն», «Ջավոն», «Վազրիկ»): Իր այս ստեղծագործությունները գրելիս ու հրապարակելիս արձակագիրն առաջնորդվում էր օտար տերությունների տիրապետության տակ գտնվող իր ժողովրդին բարոյահոգեբանական նեցուկներ ստեղծելու և ազատագրական պայքարի ջիղը չթուլացնելու սկզբունքով: Այստեղ նկատենք նաև, որ նա իր ստեղծագործական գործունեության ընթացքում ազդակներ էր ստանում թե՛ հայ դասական գրողների (Ռ.Պատկանյան, Բաֆֆի) ավանդած, թե՛ Ք.Միքայելյանի արժարժած ազգային-ազատագրական պայքարի և թե՛ հզոր անհատի ու ճակատագրի ընդդիմանալու մասին գերմանացի հանրաճանաչ փիլիսոփա ու գրող Ֆ.Նիցցեի ժամանակին լայն տարածում ստացած գաղափարներից:

Իր թեմատիկայով Ա.Ահարոնյանի «Ազատության ճանապարհին» ժողովածուն ևս նորություն էր: Գաղափարական ու գեղարվեստական արժանիքներով այս գրքում զետեղված ստեղծագործությունները նշանակալի էին ոչ միայն գրողի գրական ժառանգության մեջ, այլև ըստ էության թուրք և քուրդ բարբարոսների դեմ կազմակերպված ֆիդայական պայքարը պատկերող հայ գեղարվեստական արձակի ակունքում են կանգնած: Ա.Ահարոնյանն էլ, փաստորեն, հայ գրականության մեջ առաջին անգամ պատմվածքի ժանրում պատկերեց 19-րդ դարի վերջի և 20-րդ

<sup>2</sup> *Իսահակյան Ա., Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունը, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2003, 3, էջ 49:*

դարի սկզբի հայ հայդուկ-ֆիդայիների պայքարը Արևմտյան Հայաստանի գավառներում:

Հայտնի է, որ Ա.Ահարոնյանն ստեղծագործել է հիմնականում նեոռոմանտիզմի մեթոդով: Մեր կարծիքով, գրականագետ Ա.Շղիագարյանը հիմքեր ունի կարծելու, որ ազգային պայքարի, քաղաքական ռոմանտիզմի, անհատի ազատության մասին գաղափարների գեղարվեստական ինքնատիպ դրսևորումները Ավ. Իսահակյանի ստեղծագործություններում «իրավունք են տալիս խոսել Իսահակյանի նեոռոմանտիզմի մասին»<sup>3</sup>: Այս հանգամանքը մղում է գաղափարագեղարվեստական նախասիրությունների ասպարեզում հոգեհարազատության այլ դրսևորումներ ևս տեսնել նրանց ստեղծագործությունների մեջ: Այսպես, օրինակ, մենք ուշագրավ առնչություններ ենք նկատել նաև Ահարոնյանի «Օովր» /1908/ արձակ պոեմի և Ավ.Իսահակյանի հանրահայտ «Աբու-Լալա Մահարի» /1908-1909/ պոեմի թեմատիկ-գաղափարական արձարձումների միջև: Կյանքում եղած մարդկային անհատական ու հասարակական բազմատեսակ արատների ու մեղքերի դեմ ընդվզող անհատի, գաղափարական հերոսի բնավորության գծեր ունեցող կերպարներ են և՛ Ահարոնյանի՝ Եվրոպայում կրթված անանուն երիտասարդ հերոսը, և՛ Աբու-Լալա Մահարին:

Հայրենիքի ծանր վիճակը, նրանում իշխող անարդարությունները, հասարակ ժողովրդի, ազնիվ ու աշխատասեր մարդկանց տառապանքը երկու գրողներին էլ մղել են այդ ամենը տեսնել համաշխարհային չարիքի ու արժեքների աղճատումների հետ ունեցած ընդհանրությունների մեջ: Եթե Իսահակյանի հերոսը կյանքում, այնուամենայնիվ, տեսնում էր դրական արժեքներ (բնության գեղեցկությունը, մայրական սերը, ռոմանտիկ բանաստեղծի ընկալումները), ապա Ահարոնյանի հերոսը կարծում էր, որ երկրի վրա ապրող մարդկության այս տեսակը չի արդարացնում իրեն: Ժխտելու համար արատների մեջ թաղված ողջ մարդկության գոյությունը և արտահայտելու համար կատարյալ մարդկային հասարակության մասին իր երազանքը՝ արձակ պոեմում հեղինակն օգտագործել է ջրհեղեղի արքետիպի մասին պատկերացումը: Այդ նպատակով էլ նա իր երկն ավարտում է «Ջրհեղեղ՝ առանց տապանի...»<sup>4</sup> արտահայտությամբ: Այսինքն՝ ինչպես որ Աստվածաշնչում մարդկությունն իր մեղքերի համար ջրհեղեղով է պատժվել, պոեմի հերոսը ցանկանում է մի անգամ ևս մարդկությանը պատժել նույն կերպ, սակայն առաց որևէ փրկության միջոցի:

Այս ստեղծագործությունները, ինչպես նաև այլ երկեր նկատի ունենալով, կարելի է ասել, որ թե՛ Իսահակյանի և թե՛ Ահարոնյանի աշխարհայացքի ու գեղարվեստական մտածողության վրա նկատելի ազդեցություն են գործել Ֆ.Նիցշեի գաղափարները, մասնավորապես նրա «Այսպես խոսեց Ջրադաշտը» երկը: Ավ.Իսահակյանի ու Ֆ.Նիցշեի հայացքների առնչությունների մասին շատ է գրվել, մինչդեռ Ա.Ահարոնյանի և Ֆ.Նիցշեի կապակցությամբ թեման ուրիշների կողմից խորությամբ չի արծարծվել: Այստեղ պարզապես ուզում ենք նշել հետևյալը. եթե իր արձակ պոեմում քննադատելով կենսական զանազան երևույթները՝ Նիցշեն առաջադրում է գերմարդու իդեալը, ապա նեոռոմանտիկ Ահարոնյանը ավելի է սրում մարդկության մեղքերի համար նրան պատժելու թեման: Եվ անհա նրա «Օովր» անանուն հերոսը, մաքսիմալիստական պատկերացումների դիտակետից մարդու գոյություն ունեցող տեսակը ժխտելով, հաստատում էր իր նեոռոմանտի-

<sup>3</sup> Շղիագարյան Ա., 20-րդ դարի հայ գրականություն, դեմքեր և խնդիրներ, Եր., 2002, էջ 78:

<sup>4</sup> Ահարոնյան Ա., Ժողովածու երկերի, Բնասոն, 1948, հ. 6, էջ 352:

կական իդեալի անհասանելիությունը՝ յուրովի արտահայտելով վախճանաբանական այն զգացողությունները, որոնք դրսևորվում էին գրողների ստեղծագործություններում շրջադարձային ժամանակաշրջաններում:

Գրական առնչությունների և արժևորումների տեսանկյունից նշանակալի շփման եզրեր ու հոգեկցություն է նկատելի նաև Ավետիս Ահարոնյանի և Դանիել Վարուժանի միջև: Ի տարբերություն Ահարոնյանին «լակն» ու հոռետես գրող համարողների՝ Դ.Վարուժանի համար նա առավել նշանակալի էր իբրև ազատագրական պայքարի երգիչ, ինչպես բանաստեղծն է արտահայտվել՝ պայքարի առաքյալ: 1909 թ. Թիֆլիսի Մետեխի բանտում Ահարոնյանի բանտարկվելու կապակցությամբ Վարուժանը գրում է «Պատգամավորներս» բանաստեղծությունը, որն ուներ «Ա.Ահարոնյանին» ընծայականը<sup>5</sup>: 1910թ. «Ազատամարտում» առաջին անգամ տպագրված այս բանաստեղծության մեջ, իրեն բնորոշ պատկերավորությամբ Վարուժանը բանտարկված գրողին հուսադրել է, գոտեպնդել՝ գրելով.

Ա՛խ, գընա՛, ծիծա՛ռ, երգը կըսուցիդ:

Միայնության մեջ մեծ Եղբայր մ՛ ունինք մենք հոն կալանված.

Թեզաններն ի վար կը հոսեն թոքերն արյուն մ՛ անձնուրաց,

Հաց մ՛են դրեր իր քով, մոխիրո՛վ թըրուն, դառնահամ բըլիթ,

Եվ կուժ մ՛ որուն մեջ ծրռած կ՛ արտասվեն մողեզներ դեղին:

Ծիծա՛ռ, շող մը տար լուսնեն՝ որ օծե բիբերն անժըպիտ,

Երգ մ՛որ ըսփոփե հոգին՝ ուր տրոփեց հողը մայր Երկրին:

Ա՛խ, գընա՛, ծիծա՛ռ, համբույրըս կտուցիդ:

Այլ այնտեղ Պայքարն Առաքյալ մ՛ ունի բանտի մեջ կրանիթ.

Թներովդ հուժկու գա՛րկ, փըշրե՛ խախսամն իր լուսամուտին,

Եվ շանթը կտուցիդ՝ Հույսն երգե՛՛ թառած իր ուսին վրճիս:

Ըսե՛ թե շուտով մենք պիտի կանգնենք արձանն իր փառքին:

Ա՛խ, գընա՛, բազե՛, դափնի՛ մը կտուցիդ <sup>6</sup>:

Հիշարժան է նաև այն, որ բանաստեղծն իր ավելի վաղ լույս տեսած «Ցեղին սիրտը»/1909/ ժողովածուի «Դյուցազնավեպեր» բաժնի «Հովիվը» պոեմը ևս ընծայագրել է Ա.Ահարոնյանին<sup>7</sup>: Ակներն է, որ Վարուժանը այս ստեղծագործության և, ընդհանրապես, ազգային-ազատագրական պայքարի ոգին արծարծելու իր նախասիրության ու Ահարոնյանի հայդուկների կռիվները պատկերող երկերում արտահայտված համանման գաղափարների ու կերպարների հոգեհարազատությունը նկատի ուներ: Եվ իրոք, Վարուժանի պոեմի քնարական հերոսի /հեղինակի/ պապը սպիտակափառ, սակայն առնական ու պարթև հովիվ է: Նրա հոգին ընդվզում է՝ տեսնելով թուրքերի կատարած ավերածությունն ու ջարդը հայրենի գյուղում: Նա ցանկանում է զենք վերցնել, բարձրանալ լեռները և կովել թուրք բարբարոսների դեմ:

Ես լեռ կ'ելլեմ. ա՛լ կուզեմ ըլլալ հովիվ գայլերու.

Ժանիքի դեմ ես ժանիք, թաթի դեմ թաթ վրիժառու.

Թող այդ թուրքերը գիտնան՝ որ խաշնարածն այս երկրին

<sup>5</sup> Տե՛ս *Վարուժան Դ.*, *Երկերի լիակատար ժողովածու, 3 հատորով*, հ.2, Եր., 1986, էջ116:

<sup>6</sup> *Նույն տեղում*, էջ 116-118:

<sup>7</sup> Տե՛ս *Վարուժան Դ.*, *Երկերի լիակատար ժողովածու, 3 հատորով*, հ.1, Եր., 1986, էջ 204:



Պիտ: չըթողու որ հանգիստ ուտեն խըլած ոսկորնին<sup>8</sup>:

Այստեղ նկատենք, որ խորհրդային տարիներին մեծ բանաստեղծի երկերի մասսայական հրատարակություններում վերոհիշյալ ստեղծագործությունների «Ա.Ահարոնյանին» ընծայականները հրատարակիչները միտումնավոր կերպով չեն պահպանել: Ա.Ահարոնյանի անվան առաջին տառը և ազգանունը տպագրվել են միայն Դ.Վարուժանի՝ 1986 թվականին Երևանում լույս տեսած գիտական կամ ակադեմիական հրատարակության 1-ին և 2-րդ հատորներում զետեղված վերոհիշյալ ստեղծագործություններին կից: Այս ամենից բացի, Դ.Վարուժանին հետաքրքրել է նաև Ա.Ահարոնյանի «Արցունքի հովիտ» դրաման: Դեռևս Սեբաստիայում ուսուցիչ աշխատելիս «Վարուժանի ղեկավարությամբ մի խումբ օրիորդներ ներկայացնում են Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտը»՝ ի նպաստ Գորգի բանվորուհիների միության: Ներկայացումից առաջ Վարուժանը հանդես է գալիս բանախոսությամբ /չի պահպանվել/»<sup>9</sup>:

Ավետիս Ահարոնյանին է նվիրված նաև Կոստան Զարյանի «Տատրագոմի հարսը», պոեմը: Այն առաջին անգամ տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում 1930 թվականին (նույն թվականին Բոստոնում տպագրվել է առանձին գրքով) «Նվեր՝ Ա.Ահարոնյանին» ընծայագրով<sup>10</sup>, որը ևս խորհրդային տարիներին Երևանում տպագրված պոեմի երկու հրատարակությունների վրա միտումնավոր կերպով չի պահպանվել: Ինչևէ, կարելի է ասել, որ Կոստան Զարյանը և Ավետիս Ահարոնյանը մտերիմներ են եղել, գրական համախոհներ: Մենք չգիտենք, թե ուղղակիորեն ինչն է Կ.Զարյանի համար շարժառիթ հանդիսացել պոեմը Ա.Ահարոնյանին նվիրելու համար: Կարող ենք ենթադրել միայն, որ դրա համար թերևս նախադրյալ են հանդիսացել գրական ճաշակների ու գեղագիտական-գաղափարական հետաքրքրությունների մի քանի ընդհանուր կողմերը: Իսկ ավելի որոշակի այն, որ Ա.Ահարոնյանի նախասիրությունները հաճախ ու տևականորեն են սևեռվել Արևմտյան Հայաստանում հայ ֆիդայի-հայդուկների մղած ազատագրական կռիվների գեղարվեստական պատկերման վրա: Դրա հայտնի ապացույցը, ինչպես արդեն նշել ենք, նրա «Ազատության ճանապարհին»/1906/ նշանավոր ժողովածուն է, ինչպես նաև բազմաթիվ այլ գեղարվեստական ստեղծագործություններ: Կ.Զարյանի համար թերևս սրտամոտ են եղել Ա.Ահարոնյանի ոչ միայն հետաքրքրությունն արևմտահայության ճակատագրի ու ազատագրական պայքարի նկատմամբ, այլև հայ մարդու կերպարը հոգեբանական ու գեղագիտական նրբերանգներով պատկերելու կարողությունները, մասնավորապես հայդուկի՝ որպես գրական հերոսի կյանքն ու ներաշխարհը իրատեսական ու ռոմանտիկական հայեցակետերից զննելու ունակությունը:

Կ.Զարյանի պոեմը լույս տեսնելուց հետո ընթերցողների ու ժամանակի քննադատների որոշ շրջաններում տարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց: Ոմանք կարդացել և համակողմանիորեն չէին ընկալել պոեմում նկարագրվածը, ոմանք կարծում էին, որ հեղինակն իր չտեսած և չճանաչած միջավայրն ու մարդկանց է նկարագրել, ուստի պատկերվածը չէր կարող ճշմարտացի լինել, իսկ ոմանց էլ անհամոզիչ էր թվացել հատկապես գլխավոր հերոսուհու՝ Սանայի կերպարը: Եվ, սհա, պոեմի ընթերցման տպավորության ու այն ըմբռնելու մասին իր

<sup>8</sup> Տե՛ս Վարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, 3 հատորով, հ.1, Եր., 1986, էջ 211:

<sup>9</sup> Զարյան Ա., Դանիել Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Եր., 1984, էջ 154:

<sup>10</sup> Զարյան Կ., Տատրագոմի հարսը: Նվեր՝ Ա.Ահարոնյանին, Բոստոն, «Հայրենիք», 1930, թիվ 6, էջ 1-44:

պատկերացումների ինքնատիպ բացահայտմամբ նույն ամսագրի էջերում «Կոստան Չարյան, «Տատրագովի հարսը» վերնագրով հոդվածաշարով հանդես է գալիս Ա.Ահարոնյանը: «Գրելիքս քննադատություն չէ,-նշել է նա,-այլ գրական նախապաշարումներից և նախասիրություններից ազատ մի ընթերցողի խոհեր և զգացումներ»<sup>11</sup>: Թվում է՝ իր գրական բարեկամին բարոյապես վարձահատույց լինելուց բացի, Ա.Ահարոնյանը ցանկացել է նաև պոեմն իր գեղարվեստական առանձնահատկություններով ու բովանդակությամբ հասկանալի դարձնել այն ընթերցողի համար, որը, ինչպես ինքն է նշել նույն հոդվածում, կարդացել ու չի հասկացել: Եվ, իրոք, հոդվածաշարը գրված է այնքան անմիջականորեն, որ Ահարոնյան քննադատին ասես տեսնում ենք և՛ ընթերցելիս, և՛ մեկնաբանելիս, և՛ ընթերցողի հետ զրուցելու ընթացքում տպավորություններ արտահայտելիս ու խորհրդածելիս: Նման համադրական եղանակով գրական երկը վերլուծելու այս ուրույն մոտեցումը պայմանավորված էր թերևս նրանով, որ մեկնաբանողը եվրոպական կրթությամբ, ճանաչված նշանավոր հայ գրող էր, իսկ այս ուղղությամբ նրա կատարած փորձը՝ հաջողված: Բացի այդ, նա գրական-քննադատական հոդվածներ գրելու իր ձիրքը արդեն անցյալում էր բացահայտել:

Մեկնաբանելով պոեմը՝ Ա.Ահարոնյանն արժևորում է նախ Կ.Չարյանի կողմից թեմայի մշակման ինքնատիպությունը: Շեշտվում է, որ պոեմի հեղինակը խորհրդապաշտ է և «ոյուցազներգակ», այսինքն՝ կյանքի հերոսական կողմերը գեղակերտող: Ու այս ամենը համադրելով՝ կարողացել է ազգային /Մասունի/ կենցաղին բնորոշ տարրերի պատկերմամբ ներկայացնել իրականն ու գեղարվեստական հնարանքով ստեղծվածը, սովորականն ու արտասովորը, ի վերջո անհատի ու միջավայրի բախումը: Ինչպես հոդվածագիրն է ընդգծում. «Միաժամանակ մարդ էակը ապրելու, տենչալու, սեր և արև վայելելու իր անհեղի իրավունքով բարձրանում է մինչև աստղերը և աստվածների հետ հաշվի նստում:

«Ես սիրեցի, մե՞ դք է սիրել»...

Հին բախումն է այս անհատականության և հասարակական կազմակերպված զանգվածի»<sup>12</sup>: Չխորանալով մանրամասների մեջ՝ այստեղ նկատենք միայն, որ Ահարոնյան քննադատը, վերլուծելով գլխավոր հերոսների՝ Մանայի ու Հովանի կերպարները, միանշանակ կերպով Մանային դավաճան չի համարում, ինչպես հետո հայդուկի կնոջը բնութագրում են Ա.Չոպանյանն ու Գ. Սևանը: Ահարոնյանի պատկերացմամբ սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայ բնակչության բազում ներկայացուցիչների նման հերթական զոհեր են երկուսն էլ թե՛ հայդուկ Հովանը և թե՛ նրա կինը: Պոեմի գաղափարական բովանդակության նման մեկնաբանությունն ավելի է մերձենում պոեմի արդի ընկալումներին:

Այսպիսով՝ վերոհիշյալ հայ գրողների՝ 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին իրենց ժողովրդի ճակատագրի հանդեպ դրսևորած մտահոգությունը, հատկապես խիզախ հայդուկների՝ ֆիդայի-հայդուկների ազատագրական պայքարը պատկերելու ձգտումը ուրույն հոգեհարազատություն է ի հայտ բերել նրանց տարբեր ժանրերով գրված ստեղծագործություններում: Ուշագրավն այն է, որ նրանց երկերի կերպարների ազատասիրությունն ու հերոսությունը պատկերված են գեղարվեստական ինքնատիպությամբ, հոգեբանական բազմերանգությամբ: Կարծում ենք, որ Ավ.Իսահակյանի, Դ.Վարուժանի, Կ.Չարյանի Ավ.Ահարոնյանի միջև գրական վերոհիշյալ առնչությունների ու արժևորումների բացահայտումն ու մեկնա-

<sup>11</sup> *Ահարոնյան Ա.*, *Կոստան Չարյան, «Տատրագովի հարսը», Բոստոն, «Հայրենիք», 1930, թիվ 10, 2-րդ մաս, էջ 109:*

<sup>12</sup> *Նույն տեղում, էջ 110:*

բանությունը ուշագրավ գրական իրողություններ են: Մեր զեկուցման մեջ նորություն են հատկապես Ա.Ահարոնյանի և նրա գրավոր ժառանգության հետ կապված գրական երևույթների արձարծումները:

## ЛИТЕРАТУРНЫЕ СВЯЗИ И ОЦЕНКИ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *Г. Хачикян* \_\_\_

В статье трактовались литературные связи и оценка тех эпизодов, которые связаны с А.Агароняном, армянскими писателями, интеллигенцией, в частности, с его современниками А.Исаакяном, Д.Варужаном, К.Заряном. А также подчеркнуто влияние идей знаменитого немецкого философа и писателя Ф.Ницше на творчество выдающегося армянского прозаика. Тематика и идеи сочинений вышеупомянутых писателей-значительные литературно-исторические явления в армянской литературе 20-ого века. Новизна связана особенно с трактовкой письменного наследия А.Агароняна.

### Տեղեկություններ հեղինակի մասին

*Խաչիկյան Գագիկ Վահենի - ք.գ.դ., դոցենտ, Գրումբու*

*Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական*

*ինստիտուտի հայ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ,*

*E-mail: gagikkhachikyan@gmail.ru*

ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ  
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ազգային ինքնությունը, ինչպես և ինքնության մյուս ձևերը, ձևավորվում են հիմնականում տարերայնորեն անձի սոցիալականացման գործընթացների արդյունքում, մինևույն ժամանակ կոնկրետ էթնիկ ընդհանրության պատկանելու գիտակցումը դառնում է մարդու հանրային էության առաջնային դրսևորումներից մեկը: Մշակույթի զարգացման որոշակի փուլում ազգային ինքնությունը մատնանշող առանձնահատկությունները կարևոր են դառնում ոչ միայն ինքնաճանաչման, այլև աշխարհի հետ փոխհարաբերությունների կառուցման պարագայում:

Հայոց ինքնության ձևավորման գործում մեծ նշանակություն ունի ազգային հոգևոր և նյութական մշակույթների ամբողջության ընկալումն ու դրա գիտակցված յուրացումը: Սա ուղղակիորեն պայմանավորված է մեր հանրության մաս կազմող յուրաքանչյուր անհատին իր հնարավորությունների չափով հասու ազգային արժեքների, սկզբունքների, նպատակների, ձգտումների, պատմական հիշողության, բարոյական նորմերի, հասարակական վարքագծի, ավանդական պահվածքի, զբաղմունքի և էթնիկական այլ առանձնահատկությունների ընդունման, գիտակցման և իրացման աստիճանով:<sup>1</sup> Երբ որևէ մեկն ասում է. «Ես հայ եմ», ապա դա նշանակում է, որ նա գիտակցում է իր ազգային պատկանելությունը, ընկալում, որ այն իր մի շարք առանձնահատկություններով տարբերվում է մյուսներից, և ինքն էլ նրա ամրամներից (էթնոկիրներից) մեկն է: Անձի էթնիկական «ես»-ը ձևավորվում է կոնկրետ էթնոսին իր ինքնանույնականացման արդյունքում:<sup>2</sup> Ինչից հետո նա կարող է այս կամ այն չափով ընկալել և մեկնաբանել նաև «Ես հայ եմ» դատողության բովանդակությունը և թվարկել հայ էթնիկականության հոգեբանական մի շարք գծեր:<sup>3</sup>

Ինչպես էթնոսը, էթնիկական ինքնագիտակցությունն աստիճանական զարգացման արդյունքում տեղայնականից (լոկալից) վերաճում է համազգայինի:<sup>4</sup>

Էթնիկական ինքնագիտակցության և ինքնության բաղկացուցիչն են ներէթնիկական ինքնագիտակցությունը և ինքնությունը: Այդպես. «Ես հայ եմ» ազգային ինքնագիտակցության համար երբեմն էական են նաև դրա բաղկացուցիչ մասերը. «Ես լռեցի եմ, գյումրեցի եմ, սյունեցի եմ, արցախցի եմ» և այլն: Ըստ որում, այսօր այդ ինքնագիտակցության ձևավորումը կապված է ոչ միայն և ոչ այդքան ծննդավայրի գաղափարի հետ:

Հայոց ինքնության հավաքական պատկերի ձևավորման գործում որոշակի դեր ունի նաև ներէթնիկական ինքնության գործոնը, որն առարկայորեն արտահայտվում է «Ես .... ցի եմ» ինքնագիտակցությամբ: Այս խնդրի մատուցման որոշակի պատկերացումների ձևավորման գործը իրենց վրա են վերցնում երկրագիտական թանգարանները, այդ թվում նաև մարզային այն թանգարանները, որոնց

<sup>1</sup> *Мазур Е. Идентичность: сознание – самосознание – образ я. Университетские исследования, 2010 տև. և [www.uresearch.psu.ru/files/articles/179\\_26524.doc](http://www.uresearch.psu.ru/files/articles/179_26524.doc)*

<sup>2</sup> *Ուլախյան Ա. ՕսնոՎԵՏՆՈՍԻԿՈԼՈԳԻԱ, Երեւան, 2003, Շ. 308.*

<sup>3</sup> *Նալչաձյան Ա., Ինչ է էթնիկական ինքնությունը, տև. և [www.article.diplomat.am/publ/authors/albert\\_nalchajyan/](http://www.article.diplomat.am/publ/authors/albert_nalchajyan/)*

<sup>4</sup> *Ուլախյան Ա., նշվ. աշխ., էջ 327-328:*

հավաքածուն և ցուցադրությունը ներկայացնում են տեղի բնակչության պատմությունը, կենցաղն ու մշակույթը:

